Сельское хозяйство	1	0,1	0,5	0,1	0,5	0,1
Горнорудная	10,5	1,3	0,1	—	10,4	2,9
Пищевая	49,4	6,1	12,4	2,8	37	10,2
Текстильная	2,3	0,3	1,3	0,3	1	0,3
Химия	49	6,1	7,8	1,8	41,2	11,3
Резиновая	181,6	22,6	70,3	15,9	111,3	30,7
Металлические изделия	241,8	30,1	233,2	52,9	8,5	2,4
Металл	51,5	6,4	25,5	5,9	26	7,2
Машины	11,4	1,4	0,6	0,1	10,8	2,9
Электромашинны	74,2	9,3	32,1	7,3	42,1	11,5
Монтажные работы	52,8	6,6	41,5	9,4	11,9	3,1
Туризм	9,1	1,1	0,8	0,2	8,9	2,3
Обслуживание	69,3	8,6	14,5	3,3	54,7	15,1
Всего	804	100	440,8	100	363,2	100

мышленности, где установилось господство иностранных инвесторов. Таким образом, несмотря на перевес местного капитала, во всей сумме инвестиций важнейших отраслей промышленности установилось господство иностранцев.

Иностранный капитал отказался от вложений в важные отрасли машиностроения. В течение 15 лет не было основано ни одного иностранного машиностроительного предприятия. Что касается нескольких предприятий по производству электрических машин, то они по преимуществу сборочные. Многие иностранные предприятия, пользуясь низкими ввозными пошлинами на сырье (5—15%), работают в основном на базе импортируемого сырья и сковывают дальнейшее развитие ряда отраслей промышленности.

Односторонность иностранных вложений наблюдается также в их географическом распределении. Согласно опубликованным Стамбульской промышленной палатой данным, 82% иностранных вложений (348 млн. лир⁴⁴) пришлось на долю Стамбула; причем 120,6 млн. — американского капитала, 60 млн. — голландского, 55 млн. — английского, 52 млн. — швейцарского, 35 млн. — германского и т. д. Эти вложения были в следующие области экономики: 128 млн. лир в производство лекарственных средств и химию, 107

⁴⁴ „Ekonomi gazetesi“, 2.VII.1965.

млн. — в производство автопокрышек и автосборку, 37 млн. — в производство пищевых продуктов, а остальное — в различные отрасли⁴⁵. До 1961 г. в «стамбульских» инвестициях первое место принадлежало голландскому капиталу, который равнялся 58,6 млн. лир, или 47% всех иностранных вложений. Что же касается распределения этих вложений в этот период по отраслям, то первое место занимала пищевая промышленность — 49,3 млн. лир, или 40% общих вложений⁴⁶. Как видно, в течение нескольких последних лет в «стамбульских» инвестициях изменилась роль вкладчиков отдельных стран.

По объему капиталов, вложенных в Турцию в 1951—1964 гг. (по закону № 6224), первое место принадлежит американским инвесторам. При этом, если различные страны в разное время меняли занимаемое положение (по величине вложенного капитала), то США никогда не уступали своего места и все больше закрепляют свои позиции⁴⁷.

Таблица 5.

Принадлежность капиталов инвеститоров (млн. лир)

Страны	1951—1960 гг.		1961—1964 гг.		Кол-во фирм (в 1963 г.)
	Одобрено к вложен.	Фактич. приток	Одобрено к вложен.	Фактич. приток	
США	172,6	25,5	282,2	142,1	27
Швейцария	44,5	5,3	164,4	66,7	14
Голландия	43	17,5	91,1	42,8	6
ФРГ	133	12,6	152,3	34,3	19
Италия	133,3	1,7	137,5	13,5	3
Англия	30,6	5,2	64,4	9,6	8
Франция	19,5	3,4	22,6	6,2	8
Финляндия	0,8	0,1	74,5	6,1	
Австрия	13,3	0,1	16,6	4,9	3
Швеция	4,4	1,7	3,8	2,5	5
Бельгия	10,7	2,3	3,8	2,5	4
Панама	0,9	0,1	2,5	1,5	1
Дания	6	0,2	7,3	1,1	1
Канада	1,3	—	2,2	0,06	1
Ливан	2,7	0,6	2,2	0,06	
Израиль	10,5	0,1	1,9	0,03	
Смешанные	115	7,5	160,2	6,8	
Прочие	14,2	28,8	26,2	30,2	
Всего	663,4	112,4	1226,5	341,4	

⁴⁵ Ibid.

⁴⁶ „Ekonomi gazetesi“, 2.II. 1963.

⁴⁷ Таблица составлена на основании данных „Ekonomi gazetesi“, 29.VI. 1961 г. и 12.V.1966 г.

В 1962 г. вложения американского частного капитала были направлены в следующие отрасли экономики: 5 млн. долл. в промышленность, 10 млн. долл. в торговлю, а 4 млн. долл. в остальные области экономики⁴⁸. В настоящее время большая часть американского капитала направляется в различные отрасли промышленности.

Все сказанное выше свидетельствует о том, что иностранный капитал не дал ожидаемых официальными турецкими кругами результатов. Он не способствовал росту накопления капиталов в стране, не инвестировался в важные области экономики. В то же время иностранный капитал, несмотря на малую величину, занял господствующее положение в тех отраслях, куда он был вложен. Иностранный частный капитал активизировал деятельность лишь верхушечных слоев турецкой буржуазии, которая смогла получить, хотя и на кабальных для себя условиях, технический и практический опыт организации крупного предпринимательства, патенты, лицензии. Однако все это привело к росту зависимости страны от империалистических монополий, к диспропорциям развития отдельных отраслей промышленности и, самое главное, к росту угнетения трудящихся.

* * *

Основными стимулами вывоза капитала являются как расширение политэкономических сфер влияния, так и возможность получения высоких прибылей. В зависимости от их характера (и, в частности, от характера получаемой прибыли) иностранные инвестиции делятся на экспорт ссудного капитала, который приносит ссудный процент, экспорт предпринимательского капитала, приносящий прибыль в виде дивидендов и «дары», приносящие невидимые прибыли, которые, в конечном счете, прибавляются к прибылям от других видов инвестиций.

Официальная турецкая статистика не публикует данные о прибылях иностранного капитала и их вывозе. Однако многочисленные косвенные сведения (в том числе и иностранные) позволяют выявить картину жестокой эксплуатации Турции иностранными монополиями.

Самые высокие прибыли на ввозимый капитал падают, как правило, на долю иностранных вкладчиков. За последнее десятилетие как во многих слаборазвитых странах, так и в Турции, иностранные вкладчики под вывеской сотрудничества с местным капиталом и организации «национального производства» основывают смешанные общества. Это дает иностранным фирмам возможность беспрепятственно разворачивать их деятельность. Как вид-

⁴⁸ „Overseas business report“, November, 1963, p. 1.

но из табл. 6, которая составлена по данным Турецкой государственной организации планирования⁴⁹, доходы, получаемые иностранными фирмами, весьма велики.

Таблица 6

Годы	Капитал компании (млн. лир)	Валовый доход (млн. лир)
1960	129,1	629,2
1961	154,5	624,2
1962	295	769,9
1963	350,8	1033,9
1964	441,1	1392,8

Для выявления размеров получаемых иностранными фирмами доходов в отдельных отраслях промышленности, здесь приводятся также данные⁵⁰, опубликованные Турецким налоговым управлением (табл. 7).

Таблица 7.

Наименование фирм	Год основания	Капитал млн. лир	Валовой доход	
			период	млн. лир
«Дженерал электрик ТАШ» — американо-турецкий капитал (производство электрических лампочек, электромоторов и деталей для холодильников)	1948	5	1959—1961	12,2
«Скуиб энд санс илачлар АШ» — американо-турецкий капитал (производство химикалий по борьбе с сельскохозяйственными вредителями)	1951	1,4	1955—1959	21,5
«Тюрк филипс санай» — голландский капитал (производство электроприборов)	1955	4,6	1960—1962	28,6
«Арго-Мерк зияри мюджадоле илачлар АШ» — западногермано-турецкий капитал (производство химикалий для с/х)	1958	1	1959—1960	5
«Юнилевер-иш тюрк тиджарет ве санай ИШ» — турецко-англо-голландский капитал (производство мыльного порошка и растительного пищевого масла)	1952	5	1952—1962	141,6
«Манесман АШ» — западногермано-турецкий капитал (производство сварных труб)	1956	3,6	1957—1962	45

⁴⁹ „İktisat gazetesi“, 12.V.1966.

⁵⁰ „İKA haberler ajansı“, 22.VI.1966.

Как видно из данных двух вышеназванных организаций, иностранный капитал направлен в такие отрасли промышленности, где оборот совершается очень быстро. Нет сомнения, что такая быстрая оборачиваемость капитала, при дешевой в стране рабочей силе и низких тарифных налогах, создает благоприятные условия для получения высоких прибылей.

Иностранный частный капитал получает особенно высокие прибыли от вложений в такие отрасли промышленности, как нефтяная, химическая, производство автопокрышек, лекарственных средств, электрооборудования, искусственных волокон, монтажные работы, пищевая промышленность и др.

По сведениям соответствующей плановой организации, прибыли иностранных компаний (по закону № 6224) в 1959 г. составили 42,9% на вложенный ими капитал, в 1961 г. — 46,4%, а в 1964 г. — 28%, что соответственно составляет 51, 48; 72,6 и 123, 5 млн. лир⁵¹. Как видно, иностранные компании возвращают вложенный капитал в течение 2—3 лет.

Только в 1968 г. вывоз прибылей иностранного частного капитала составил 32 млн. долл., тогда как приток капитала в том же году — 18 млн. долл.

Нам не известны общие прибыли иностранного частного капитала в Турции. Однако о них нетрудно догадаться по имеющимся данным о прибыльности отдельных областей экономики и отдельных фирм. Мы произвели в этом направлении некоторые расчеты по состоянию на 1965 г. Так, вложенный в 1965 г. по закону № 6224 капитал равнялся 424,7 млн. лир. Если принять, что годовая прибыль иностранных вкладчиков равна 1/4 суммы вложенного капитала (в действительности, в некоторых отраслях она значительно выше), то их годовая прибыль составит 106 млн. лир.

Далее, прибыли иностранных компаний от нефти в 1965 г. могут составить 290,25 млн. лир (110,25 млн. лир от добычи и переработки 680 тыс. тонн местной нефти и 180 млн. лир от переработки 2,8 млн. тонн импортируемой нефти).

Конечно, прибыли иностранных нефтяных монополий этим не ограничиваются, поскольку нефтяные магнаты проводят крупные спекулятивные операции с импортируемой нефтью Ближнего Востока.

Что касается иностранных вложений в металлургический комбинат в Эрегли, то акционерная компания, в соответствии с соглашением, имеет право в течение 10 лет вернуть амортизационный капитал. Следовательно, вложения иностранных акционеров, исчисляемые в 1530 млн. лир, будут приносить ежегодно 153 млн. лир прибыли.

⁵¹ «Jöп», 4. III. 1966.

Таким образом, минимальный размер дохода иностранного частного капитала от вложения 2134,7 млн. лир составляет, по нашим подсчетам, 549,25 млн. лир, т. е. 26% на вложенный капитал.

Важное место в системе эксплуатации Турции иностранным капиталом занимают иностранные банки, действующие в стране. По данным турецкой печати, доходы лишь англо-французского «Оттоманского банка» в 1963 г. составили 58,6 млн. лир, тогда как капитал банка равнялся всего 8 млн. лир⁵².

Турция является источником высоких прибылей и для ссудного капитала империалистических держав и международных финансовых и экономических организаций. Ярким свидетельством этого является в конечном счете систематический рост размеров «помощи», предоставляемой Турции. Так, в 1955 г. внешние долги страны равнялись 968 млн. лир. В конце 1964 г., согласно данным совета министров Турции, они уже равнялись 1252,6 млн. долл. и процент по их погашению — 306,7 млн., а всего 1559,3 млн. долл. (14 млрд. лир)⁵³. Как видно, в течение 9 лет (1956—1964 гг.) внешние долги Турции выросли примерно в 17 раз. А в 1968 г. долги ее по сравнению с 1964 г. выросли почти вдвое.

Четвертую часть внешних долгов Турции составляют проценты на предоставленные кредиты. Если в кредитной системе США обычный процент прибыли равен 2,5, то Турции, как правило, предоставлялись краткосрочные кредиты из расчета 5,75% (только часть американских кредитов предоставлялась из расчета 4%). Западные страны путем кредитования осуществляют крупные спекуляции. Финансируя импорт или экономические проекты стран, получающих помощь, они вывозят туда устаревшее машинное оборудование по ценам, которые на 40—100% выше международных цен. Не трудно заключить, что прибыли империалистических держав в несколько раз превышают суммы предоставленной «помощи», которая истощает экономику Турции, способствует росту ее зависимости и, практически, является одной из главных причин падения уровня жизни турецкого народа.

Тяжелое экономическое положение Турции усугубляется растущим дефицитом платежного баланса. Как явствует из табл. 8, составленной на основании официальных турецких данных и сведений ОЭСР⁵⁴, 40—50% дефицита платежного баланса, который возник за последние годы, обусловлено прямым переводом валюты за границу.

Указанные в таблице данные о вывозе прибылей иностранных компаний касаются только инвестиций, сделанных в соответствии

⁵² „Cumhuriyet“, 3.IV.1964.

⁵³ «Jbп», 7. X. 1965.

⁵⁴ Таблица составлена на основании данных „Economic survey by the OECD—Turkey“, 1964, p. 24, „İKA haberler ajansı“ 24.VII, 1964.

Таблица 8.

Годы	Дефицит платежного баланса	Внешние долги		Вывезенные прибыли иностранного частного капитала	Валюта, введенная по каналам иностранного капитала
		Основные	Проценты		
1960	—204	65	29	2,7	96,7
1961	—254	84	36	2,4	122,4
1962	—361	97	38	2,6	132,6
1963	—371	114	31,5	2,8	148,3

с законом № 6224; тем не менее уровень вывоза прибылей не удовлетворяет иностранных инвесторов, поскольку большая часть прибыли остается временно в стране (достигая — в 1965 г. — 19,5 млн. долл.) из-за недостатка валюты. Что касается прибылей иностранных нефтяных компаний, достигающих в год 30—35 млн. долл., то вывоз их не включается в платежный баланс, так как механизм вывоза этих прибылей совершенно отличен.

* * *

Анализ проблем, рассмотренных в настоящей работе, дает возможность сделать следующие краткие обобщения.

Проникновение иностранного капитала в экономику Турции тесно связано с развитием турецкого национального крупного капитала. Крупная буржуазия, руководствуясь узкоклассовыми интересами, проявляет большую заинтересованность в сотрудничестве с иностранными монополиями. Турецкие правящие круги, в свою очередь, учитывая экономическую слабость национальной буржуазии и трудности в финансировании экономики страны, пытаются разрешить проблему развития национальной промышленности путем активизации частного капитала, расширения сферы его влияния и привлечения в страну иностранных инвестиций (во всех его формах). Однако, как показывает опыт многих экономически слаборазвитых стран и самой Турции, путь к индустриализации с использованием кабальных кредитов и субсидий империалистических держав означает замедленное и одностороннее промышленное развитие, выгодное прежде всего иностранным монополиям. Одностороннее развитие ослабляет борьбу народов слаборазвитых стран против колониализма и дает возможность империалистам оказывать давление на эти страны и диктовать им свою волю. Проблема индустриализации является в сегодняшней Турции одной из важнейших проблем ее будущего социально-экономического развития.

Основными формами ввозимого в Турцию капитала являются кредиты, займы и субсидии (на условиях), предоставляемых под видом «помощи» и прямые вложения, осуществляемые, как правило, совместно с турецким частным и государственным капиталом. Однако империалистические монополии в целях маскировки своих экспансионистских устремлений и использования более выгодных средств давления постоянно меняют формы и методы проникновения. Лучшим свидетельством этого является организованный в 1962 г. консорциум по оказанию помощи Турции.

В 1950—1965 гг. сумма иностранных частных капиталовложений составляла менее 10,5% всех сумм вложений в турецкой промышленности. Тем не менее влияние иностранных монополий сравнительно велико. Оно определяется не только объемом иностранных инвестиций, но и общей экономической зависимостью страны от империалистических монополий, военной, политической и экономической поддержкой Турции со стороны империалистических держав, союзом местного крупного капитала с иностранными кругами.

Все факты, связанные с деятельностью иностранного капитала в Турции, говорят о том, что чем больше развитие экономики основано на базе иностранных вложений, тем более значительная доля национального дохода безвозвратно взимается из сферы производства под видом вывоза прибылей иностранных предприятий. Подобное положение не только из года в год увеличивает дефицит внешних платежей страны, но и сильно тормозит процесс накопления и развитие внутреннего рынка.

Несомненно, что иностранные капиталовложения в промышленность в известной мере способствуют ускорению промышленного развития Турции, дают возможность быстрее осваивать некоторые современные формы производства, налаживать выпуск дефицитной продукции и т. д. Однако эти же вложения создают болезненную диспропорцию развития отдельных отраслей турецкой промышленности, что, в конечном счете, влечет к практической невозможности подлинной индустриализации страны. Это верно тем более, чем более иностранный капитал настаивает на ликвидации государственного сектора.

Разнообразные формы иностранных вложений в Турции доказывают, что они не способствуют развитию экономики слаборазвитых стран и являются замаскированным средством ограбления и угнетения страны.

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿԱՊԻՏԱԼԻ ԹՈՒՐԺԻԱ ՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ
ՁԵՎԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՆԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Ա մ փ ո փ ու մ

Հոգւածի զգալի մասը նվիրւած է օտարերկրյա պետական կապիտալի ռազմական և տնտեսական ճանապարհներով կատարվող ներթափանցման, ինչպես նաև Թուրքիայի տնտեսության տարբեր ոլորտներում օտարերկրյա մասնավոր կապիտալի ակտիվության խնդիրների հետազոտմանը:

Պարզաբանված են Թուրքիայում օտարերկրյա կապիտալի ներթափանցումը պայմանավորող օբյեկտիվ և սուբյեկտիվ դրդապատճառները և այդ ֆոնի վրա՝ ամերիկյան կապիտալի գործունեությունը:

Հանգամանորեն լուսաբանված են «օգնություն» անվան տակ Թուրքիա ներթափանցող օտարերկրյա պետական կապիտալի նկրտումները, առանձին երկրների ունեցած տեսակարար կշիռը, օտարերկրյա պետական և մասնավոր կապիտալների փոխհարաբերությունները, օտարերկրյա կապիտալի նկատմամբ թուրքական կառավարող շրջանների վերաբերմունքի մեջ կատարվող բոլոր կարգի փոփոխությունները:

Հոգւածում բերված են օտարերկրյա կապիտալի գործունեության վերաբերյալ աղյուսակներ, որոնք կազմված են ինչպես թուրքական և արևմտյան երկրների պաշտոնական վիճակագրությունների, այնպես էլ առանձին տնտեսական կազմակերպությունների հաշվետվությունների հիման վրա:

Օտարերկրյա կապիտալի էքսպանսիան Թուրքիայում ունի որոշակի նպատակներ: Նրա գլխավոր խնդիրն է Թուրքիան անքակտելիորեն կապել ազրեսիվ ռազմական բլոկների հետ և երկիրը տնտեսապես կախման մեջ դնել Արևմուտքից:

2. 2. ԳԱԼՍՏԱՆ

ԹՈՒՐԳԻԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎԻԼԱՅԵԹՆԵՐԻ ԴԵՄՈԳՐԱՖԻԱՅԻ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ (Առաջին համաշխարհային պատերազմից հետո)

Առաջին համաշխարհային պատերազմը մեծ վնաս պատճառեց Թուրքիային, այդ թվում նաև արևելյան վիլայեթներին։ Սակայն արեւելյան վիլայեթներում (Արեւմտյան Հայաստանի և մերձակա շրջանների տարածքում) բնաջնջելով, հրով ու սրով դուրս մղելով տեղի դարավոր բնակիչներին՝ հայերին, հույներին, ասորիներին, մասամբ էլ քրդերին, երիտթուրքերը ամայացրին երկիրը, ոչնչացրին այդ շրջանների տնտեսական զարգացման համար առկա գրեթե բոլոր նախադրյալները։

Ըստ 1927 թ. մարդահամարի տվյալների, Թուրքիան ինչ-որ չափով համալրել էր արևելյան վիլայեթների բնակչության թիվը։ Կոտորածների ու բռնագաղթների հետևանքով առաջացած մարդկային պակասի մեծ մասը լրացվել էր Կարսը, Արդվինը և հարակից շրջանները զավթելու, Ռուսաստանից, բալկանյան երկրներից եկած թուրք գաղթականների և բնական աճի միջոցով։ Ինչպես երևում է ստորև բերվող աղյուսակից, 1927 թ. նախկինում հայաբնակ վեց վիլայեթների սահմաններում բնակվում էր նախապատերազմյան բնակչության 78%-ը՝ 3527 հազար բնակչության փոխարեն՝ 2515 հազար։ Ըստ այդ մարդահամարի տվյալների, 13 և ավելի տարիք ունեցողները, այսինքն՝ մինչև համաշխարհային պատերազմը ծնվածները, ներառյալ գաղթականները, կազմում են 1594 հազար մարդ՝, այսինքն՝ նախկին բնակչության 45%-ը։

Բնակչության «համալրումը» արևելյան վիլայեթներում միատեսակ չլինեցավ։ Այսպես, օրինակ, առավելագույն հայաբնակ Վանի և Բիթլիսի շրջանները, ուր թուրք գյուղացիություն գրեթե չկար, բնակչության

¹ „İstatistik yillığı“, 1934—1935, Ankara, 1935, s. 142.

Արևմտյան Հայաստանի բնակչությունը նախքան առաջին համաշխարհային պատերազմը և 1927թ.

Վիլայեթներ	Նախքան առաջին համաշխարհային պատերազմը*			1927 թվական**			1927 թ. բնակչության հարաբերությունը նախապատերազմյան բնակչությանը (տոկոսներով)***
	Տարածությունը (քառակուսի կմ)	Բնակչությունը	Բնակչության խտությունը	Տարածությունը (քառակուսի կմ)	Բնակչությունը	Բնակչության խտությունը	
Վան	39300	379800	9,66	37110	100309	2,70	28
Բիթլիս	27100	398000	14,69	27827	193064	6,94	47
Էրզրում	4970	645700	12,99	53856	507337	9,42	73
Խարբերդ	32900	575200	17,48	33543	520659	15,52	89
Սվազ	62100	1057000	17,02	48305	816233	16,40	99
Դիարբեքիր	37500	471500	12,57	27920	377787	13,53	108
Ընդամենը	248600	3527200	14,19	228561	2515389	11,01	78

աճով խիստ ետ էին մնացել: Նույն պատկերն էր տիրում նաև Հեքյարիում՝ նեստորականների հեռանալուց հետո: Իսկ այն շրջանները, որտեղ հայերը համեմատաբար փոքրաթիվ էին, կամ համեմատյալ դեպ

* «Ընդարձակ օրացույց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց», Կ. Պոլիս, 1906, էջ 249—250:

** Նախքան առաջին համաշխարհային պատերազմը վիլայեթը վարչական խոշոր միավոր էր, որը ստորաբաժանվում էր ավելի փոքր վարչական շրջանների՝ տանջակներ: Հանրապետության ժամանակ վարչական բաժանումը կրեց մի շարք փոփոխություններ, որոնցից զխավորն այն էր, որ, որոշ բացառություններով, նախկին սանջակները դարձան ինքնուրույն վիլայեթներ: Արևմտյան Հայաստանի նախկին 6 վիլայեթները 1927 թ. բաժանված էին 15 վիլայեթի: Աղյուսակի այս մասը կազմված է այդ 15 վիլայեթի վերախմբավորումով: Ըստ մինչև առաջին համաշխարհային պատերազմը գոյություն ունեցող վարչական բաժանման, Վանի մեջ մտնում են Վանը, Հեքյարին, Բիթլիսի մեջ՝ Բիթլիսը, Մուշը և Սղերդը, Էրզրումի մեջ՝ Էրզրումը, Էրզինյանը (Երզնկան), Բայազեդը, Խարբերդի մեջ՝ Խարբերդը, Դերսիմը և Մավաթիան, Սվազի մեջ՝ Սվազը, Շարին-Կարահիսարը, Ամասիան, Քոքառը, Դիարբեքիրի մեջ՝ Դիարբեքիրն ու Մարդինը, Հաշվի լեն առնվել վիլայեթների միջև կատարված փոքրիկ վարչական փոփոխությունները (Türkiye Cumhuriyeti devlet yıllığı*, 1929—1930, İstanbul, 1930, s. 205—693):

*** Նկատի է առնված, որ վարչական բաժանման փոփոխությունների հետևանքով փոխվել են նաև վիլայեթների տարածությունները, Հաշվումները կատարելիս հարաբերության մեջ են դրվել մեկ քառակուսի կիլոմետրին ընկնող բնակչության թվաքանակը:

կային բավական մեծ թվով թուրքեր և այլ մահմեդական նակլություն, արդեն 1927 թ. սակավաբնակ չէին:

№ 1 աղյուսակից երևում է, որ Վանի վիլայեթում յուրաքանչյուր քառակուսի կիլոմետրին պատերազմի նախօրյակին ընկնում էր 9,66, իսկ 1927 թ.² 2,70 մարդ, այսինքն՝ բնակչությունը 72%-ով պակասել է: Դա ամենևին էլ զարմանալի չէ: Պատրիարքարանի տվյալների հիման վրա Ն. Սարգսյանի կազմած աղյուսակի համաձայն³, միայն հայերը կազմում էին բնակչության 52,8%-ը, հայերի հետ հեռանալու հարկադրված եզիդի քրդերը՝ 7,1, նեստորականները, հակոբյանները և քաղդեացիները՝ 5,1, իսկ բոլորը միասին՝ 65%-ը: Սակայն կարելի է ընդունել, որ նեստորականներն ու մյուս քրիստոնյաներն ավելի մեծ թիվ էին կազմում Հեքյարիի սանջակում, քան երևում է այդ աղյուսակում: Հետաքրքիր է, որ նվազել է թուրքերի թիվը ևս: Ըստ նույն աղյուսակի, առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Վանի վիլայեթում ապրել է 47000 թուրք, այսինչ՝ 1927 թ. նրանց թիվն ընդամենը 18443 էր (17399-ը՝ Վանում, 1044-ը՝ Հեքյարիում): Ուրեմն, թուրքերի մի մասը, մեր կարծիքով, հիմնականում քաղաքաբնակները, պատերազմի ընթացքում հեռանալով իր բնակավայրից, Վանի ամայացումից հետո այդտեղ այլևս գործունեության ոլորտ չգտնելով, չվերադարձավ և բնակություն հաստատեց համեմատաբար նպաստավոր վայրերում:

Վիճակը նույնն էր նաև նախկին Բիթլիսի վիլայեթում, որտեղ նախապատերազմյան 14,7-ի փոխարեն, մեկ քառակուսի կիլոմետրին ընկնում էր 6,9 մարդ, կամ բնակչությունը նախկինի համեմատությամբ 53%-ով պակասել էր: Մինչև պատերազմը հայերը վիլայեթում կազմում էին բնակչության 47,1%-ը, նեստորականները՝ 3,9, եզիդի քրդերը՝ 1,3, իսկ բոլորը միասին՝ 52,3%-ը, մոտավորապես այնքան, որքան համաշխարհային պատերազմից հետո նվազել էր բնակչությունը: Այստեղ նույնպես նվազել էր թուրքերի թիվը. 40 հազարից⁴ 1927 թ.-ին իջել է 26168-ի (20689՝ Բիթլիսում և Մուշում, 5479՝ Սղերդում): Բնականաբար, վիլայեթի առավել հայաբնակ շրջանները ամայացել էին: Սա երևում է նրանից, որ համեմատաբար նվազ հայաբնակ Սղերդում մեկ քառակուսի կիլոմետրին ընկնում էր 9 մարդ, իսկ Բիթլիսում և Մու-

² «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ. V, Երևան, 1970, էջ 378:

³ „Istatistik yilligi“, 1934—1935, s. 160—161.

⁴ «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ. V, էջ 378:

շում, որտեղ բնակվում էր վիլայեթի հայության հիմնական մասը, 5,4 մարդ⁵։

Էրզրումի վիլայեթում նախապատերազմյան 13-ի փոխարեն 1927 թ. մեկ քառակուսի կիլոմետրին ընկնում էր 9,4 մարդ։ Բնակչությունը նախկինի համեմատությամբ միայն 27%-ով էր պակաս, և, եթե նկատի ունենանք, որ հայերը կազմում էին վիլայեթի բնակչության 34,1%-ը⁶, ապա պարզ կդառնա, որ Էրզրումի վիլայեթը ոչ միայն համալրել էր իր զուտ պատերազմական կորուստները, այլև մասամբ հայերի և այլ տարրերի հեռացումով առաջացած մարդկային պակասը։ Դրությունը համեմատաբար լավ էր նախկին հարբերդի (Մամուրեթ-ու-Աղիզի) վիլայեթում։ Նախապատերազմյան 17,5-ի փոխարեն 1927 թ. մեկ քառակուսի կիլոմետրին ընկնում էր 15,5 մարդ, այսինքն՝ պակասը կազմում էր 11%։ Այնուամենայնիվ, նկատելի է, որ բարձր խտություն ուներ նրա կազմի մեջ մտնող Մալաթիան՝ 19,5, ուր հայերը համեմատաբար փոքրաթիվ էին, իսկ Էլազիզը (հարբերդը), որտեղ բնակվում էր վիլայեթի հայության հիմնական մասը, ուներ զգալիորեն ցածր խտություն՝ 12⁷։

Իր բնակչությունը համալրել էր նաև նախկին Սվազի վիլայեթը, քանի որ մեկ քառակուսի կիլոմետրին 1927 թ. նախապատերազմյան 17-ի փոխարեն ընկնում էր 16,9 մարդ։ Սակայն այստեղ ևս նկատելի է, որ բարձր խտություն են ունեցել այն շրջանները, ուր հայերը համեմատաբար փոքրաթիվ էին։ Շաբին-Կարահիսարում մեկ քառակուսի կիլոմետրին ընկնում էր 20 մարդ, Ամասիայում՝ 21,7, Թոքատում՝ 25,2, իսկ Սվազում, որտեղ բնակվում էր Սվազի հայության հիմնական մասը՝ 12,2։

Դիարբեքիի վիլայեթում, որտեղ հայերը համեմատաբար փոքրաթիվ էին և ավելի սակավաթիվ նրա Մարդինի սանջակում, 1927 թ. մեկ քառակուսի կիլոմետրին նախկին 12,6-ի փոխարեն ընկնում էր արդեն 13,5 մարդ։

⁵ Սանջակների 1927 թ. տարածության, բնակչության թվաքանակի, բնակչության խտության վերաբերյալ տվյալները վերցրել ենք հետևյալ աղբյուրից. «Türkiye Cumhuriyeti devlet yillığı», 1929—1930, İstanbul, 1930, s. 205—693.

⁶ «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ. V, էջ 378.

⁷ Էլազիզի (հարբերդի) բնակչության ցածր խտությունը չի կարելի բացատրել վարչական փոփոխություններով։ Թեև 1927 թ. Էլազիզի կազմում գտնվում էր նաև բնակչության համեմատաբար ցածր խտություն ունեցող Դերսիմը, սակայն կազանների մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խտության նվազումը վերաբերում է հարբերդին։

Այնուամենայնիվ, պետք է ենթադրել, որ իրական պատկերը որոշորովին այլ էր, քան ցույց են տալիս այս համեմատությունները, որովհետև՝ ա) պատերազմի նախօրյակի վիճակագրական տվյալները մոտավոր թվեր են: Դրանք աննշան փոփոխություններով կրկնում են Վիտալ Քինսկի 1891 թ. հրապարակած տվյալները, որոնց մեջ հաշվի չի առնվել բնակչության աճը մինչև առաջին համաշխարհային պատերազմը ընկած ժամանակաշրջանը, բ) ի տարբերություն պատերազմի նախօրյակի, 1927 թ. վիճակագրությունում վիլայեթների տարածություն մեջ չեն մտցված լճերն ու ճահճուտները: Նույն սկզբունքը նախապատերազմյան վիճակագրության մեջ կիրառելու դեպքում կստացվեր ավելի բարձր խտություն, քան երևում է մեր կազմած աղյուսակում: Դա մասնավորաբար վերաբերում է Վանի վիլայեթին, որտեղ լճերի ընդհանուր տարածությունը հասնում է 3834 քառակուսի կիլոմետրի: Ուստի, ջրային տարածությունը դուրս թողնելու դեպքում Վանի վիլայեթի նախապատերազմյան խտությունը 9,66-ի փոխարեն կլինի 11:

Շատ ավելի նոսր բնակեցված էին նախկինում առավել հայաբնակ շրջանները: Դա ավելի ակնհայտ է դառնում, երբ խմբավորում ենք վիլայեթները՝ նախապատերազմյան հայ ազգաբնակչության քանակի համաձայն: Հիմք ընդունելով Լեփսիուսի տվյալները⁸, ստորև բերվող № 2 աղյուսակում վիլայեթները (նախկին սանջակները) բաժանել ենք չորս խմբի: Առաջինի՝ առավել հայաբնակ սանջակների խմբի մեջ մտնում են Վանը, Բիթլիսը (Մուշի հետ միասին), երկրորդի մեջ՝ Կարսը, Սվազը, էրզրումը, էլազիզը. երրորդի մեջ՝ Մարաշը, էրզինջանը, Դիարբեքիրը, Մալաթիան. իսկ չորրորդի մեջ՝ Այնթապը, Ամասիան, Ուրֆան, Շարին-Կարահիսարը, Թոքատը, Մարզինը: Համեմատության համար որպես հինգերորդ խումբ վերցրել ենք Թուրքիայի մնացյալ մասը:

Ինչպես երևում է աղյուսակից, հայաբնակ վիլայեթների առաջին խումբն իր տարածության համեմատությամբ 1927 թ. ուներ չափազանց քիչ բնակչություն: Նրան բաժին էր ընկնում Թուրքիայի տարածության 5%-ը, իսկ բնակչության՝ 1,22%-ը: Նկատելի է, որ խմբերի հայաբնակության աստիճանի նվազման հետ նվազում է նաև տարածության ու բնակչության միջև գոյություն ունեցող անհամապատասխանությունը, այլ խոսքով՝ աճում է բնակչության հարաբերական հագեցվածությունը: Դա առավել հստակ երևում է աղյուսակի վերջին սյունակից, որտեղ

⁸ «Геноцид армян в Османской империи», сборник документов и материалов, под редакцией проф. М. Г. Нерсисяна, Ереван, 1966, стр. 346—349.

տրված են բնակչության և տարածության տոկոսային հարաբերությունները: Ինքնին հասկանալի է, որ ինչքան փոքր է տոկոսային հարաբերությունը, այնքան ցածր է բնակչությամբ հագեցվածության աստիճանը. 100-ը համապատասխանում է Թուրքիայի միջին հագեցվածությանը, իսկ 100-ից ավելին՝ հարաբերական գերհագեցվածությանը: Հեշտությամբ կարելի է նկատել, որ խմբերի հայաբնակության աստիճանի նվազելու հետ մեկտեղ աճում է բնակչությամբ հագեցվածության աստիճանը (առաջին խմբում՝ 24, երկրորդում՝ 67, երրորդում՝ 79, չորրորդում՝ 99, իսկ Թուրքիայի մնացյալ մասում՝ 114):

Աղյուսակ 2

Արևելյան վիլայեթների խմբեր*	Տարածությունը (տոկոսներով) Ա	Բնակչությունը (տոկոսներով) Բ	Բնակչության տոկոսային հարաբերությունները (տարածության հարաբերությանը) $\left(\frac{Բ}{Ա} \times 100\right)$
Առաջին խումբ	5,00	1,22	24
Երկրորդ խումբ	11,21	7,46	67
Երրորդ խումբ	7,65	6,01	79
Չորրորդ խումբ	8,06	7,98	99
Ընդամենը	31,92	22,67	71
Թուրքիայի մնացյալ մասում	68,08	77,33	114
Ամբողջ Թուրքիայում	100,0	100,0	100,0

Աղյուսակից հետևում է նաև, որ հայաբնակ վիլայեթների չորրորդ խումբն ամբողջությամբ վերցրած ունեի իր տարածությանը համապատասխան բնակչություն, անշուշտ հարաբերական իմաստով: Թուրքիայի մնացյալ մասին բաժին էր ընկնում տարածության համեմատությամբ զգալիորեն ավելի բնակչություն:

Ուշադրության արժանի է այն, որ բնակչության հագեցվածության տեսակետից խմբերի միջև գոյություն ունեցող տարբերությունները փոքր չեն: Դա նշանակում է, որ ինչպիսին էլ լինեն աշխարհագրական գործոնի ազդեցությունը, տարածության և բնակչության քանակի անհամապատասխանությունը հիմնականում կապված էր «էթնիկական»

* Հաշվումները կատարված են մեր կողմից (հմտ. «Türkiye Cumhuriyeti devlet yil'ligi», 1929—1930, Istanbul, 1930, s. 205—693);

գործոնի հետ: Իհարկե, աշխարհագրական գործոնները ազդում էին նաև նախքան առաջին համաշխարհային պատերազմը, սակայն տարածութ-
յան և բնակչության քանակի անհամապատասխանությունն այդքան
մեծ չէր և բնակչության տեղաբաշխումն էլ այլ էր: Այսպես, օրինակ,
Բիթլիսի վիլայեթը ավելի բարձր խտություն ուներ 1927 թ. ավելի բարձր
վիճակում գտնվող Դիարբեքիից, էրզրումից և Փոքր Ասիայի մի քանի
վիլայեթներից՝ Քոնիայից, Անկարայից, Ադանայից⁹: Վիտալ Քինեի
տվյալներով, բարձր խտություն ուներ նաև Սվազի սանջակը 1927 թ.
համեմատաբար լավ վիճակում գտնվող Շարին-Կարահիսարից, Ամա-
սիայից, Դիարբեքիից, Մարդինից¹⁰: Իսկ Խարբերդի սանջակի բնակչու-
թյան խտությունը Մալաթիայի կրկնապատիկն էր¹¹: Նույնիսկ տվյալ կա,
որ Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների մեջ Վանը բնակչության
խտությամբ Բիթլիսից հետո գրավում էր երկրորդ տեղը և գերազան-
ցում նույնիսկ Փոքր Ասիայի՝ Ադանայի, Անկարայի վիլայեթներին¹²:

Որքան էլ վիճելի լինեն այդ տվյալները, սխալներ ու չափազան-
ցություններ պարունակեն, այնուամենայնիվ դրանք վկայում են այն
մասին, որ տարածության և բնակչության անհամապատասխանությու-
նը այնքան էլ մեծ չէր, և բնակչության տեղաբաշխումը այլ պատկեր էր
ներկայացնում:

⁹ «Ընդարձակ օրացույց Ս. Փրկեան հիւանդանոցի հայոց», Կ. Պոլիս, 1906, էջ
249—250: П. И. Аверьянов, Этнографический и военно-политический обзор
азиатских владений Оттоманской империи, СПб., 1912, стр. 58.

¹⁰ Վ. Քինեի տվյալներն են.

Սանջակներ	Տարածություն (քառակուսի կմ)	Բնակչություն	Խտություն
Սվազ	39450	547015	13,9
Շարին-Կարահիսար	9800	77000	7,9
Ամասիա	24450	259600	10,6
Դիարբեքի	17530	143923	8,2
Մարդին	20740	193022	9,3

(Vital Cuinet, La Turquie d'Asie, Paris, 1891—1892, հատ. 1, էջ 613 և 618, հատ.
2, էջ 408, 412):

¹¹ Վ. Քինեի տվյալներն են.

Սանջակներ	Տարածություն (քառակուսի կմ)	Բնակչություն	Խտություն
Խարբերդ	10000	295704	29,6
Մալաթիա	14600	216280	14,8

(Նույն տեղում, հատ. 2, էջ 318, 322, 369):

¹² П. И. Аверьянов, 2-й. աշխ., էջ 58.

Տնտեսության անկումով, մասնավորապես արդյունաբերության և արհեստների անհետացման հետևանքով կրճատվեց նաև քաղաքային բնակչությունը, որի հետագա աճը ևս ընթացավ խիստ դանդաղ: Շատ քաղաքներ մի քանի տասնամյակ հետո միայն իրենց բնակչության քանակով հասան նախապատերազմյան մակարդակին: Մի շարք քաղաքներ էլ մինչև օրս ունեն ավելի քիչ բնակչություն, քան նախկինում, մինչդեռ Թուրքիայի բնակչությունն այդ ընթացքում աճել է մոտ 2,5 անգամ:

Նախքան քաղաքային բնակչությանը վերաբերող վիճակագրական տվյալների հետ ծանոթանալը, մի քանի օրինակով տեսնենք, թե առաջին համաշխարհային պատերազմից հետո որքանով էր կրճատվել քաղաքային բնակչությունը, որի հետևանքով նախկինում առավել կամ նվազ հայտնի մի շարք քաղաքներ վերածվեցին գյուղաքաղաքների և նույնիսկ գյուղերի:

Նախկինում ավելի քան 40 հազար բնակչություն ունեցող վան քաղաքը 1927 թ. ուներ ընդամենը 6981 բնակիչ¹³, Այն մինչև 1935 թ. մնաց որպես 10 հազարից քիչ բնակչություն ունեցող մի գյուղաքաղաք (9302 մարդ)¹⁴: 1950-ական թվականներին միայն վանի բնակչությունը մոտեցավ 20 հազարի: Սակայն դա տակավին նախկին վանը չէր, այլ նրա մի թաղամասը¹⁵: Միայն 1960 թ. վիլայեթի մյուս յոթ «գյուղաքաղաքների» (կազանների վարչական կենտրոնների) հետ միասին վանը ունեցավ մոտավորապես այնքան բնակչություն (42881 մարդ)¹⁶, որքան ուներ 1915 թ.: 1965 թ. վանի բնակչությունը հասավ 31 հազարի¹⁷:

¹³ Քաղաքների 1927 թ. բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները տե՛ս „Genel nüfus sayımı“. 20 ilkteşrin 1940, cilt II. Ankara, 1944. s. XL—XLVI:

¹⁴ „Vatan“, Van ilâvesti, 12.XI.1952, s. 9.

¹⁵ վանի Թուրք բնակչությունը լքել է լճափին ավելի մոտ գտնվող Շրուն քաղաքը՝ կոչված մասը և բնակություն է հաստատել Այդինստանում՝ հայկական թաղամասում: Տե՛ս „Vatan“, նույն տեղում, էջ 3:

¹⁶ վան՝ 22043 մարդ, Արճնշ՝ 9927, Գեվաշ՝ 3580, Բաշկալն՝ 2383, Ցոզալի (Մահ-մուդի)՝ 1930, Մուրադիյե՝ 1864, Շատախ՝ 688, Գյուրփնար (կազա՝ կազմված նախկին Հայոց ձորի, Խոշաբի, Նորդուզի դավառներից)՝ 466: (Քաղաքների 1960 թ. բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները վերցված են հետևյալ աղբյուրից. İstatistik yillığı*, 1960—1962, Ankara, 1962, s. 56—59):

¹⁷ „Türkiye İstatistik yillığı“, 1968, Ankara, 1969, s. 33.

Բիթլիսը նախապատերազմյան 40 հազարի փոխարեն 1927 թ. ուներ ընդամենը 9050 բնակիչ: Նրա հետագա զարգացումը ևս ընթացավ խիստ դանդաղ: 1960 թ. Բիթլիսը վիլայեթի հինգ գյուղաքաղաքների հետ միասին ունեցավ մոտավորապես այնքան բնակչություն (34270 մարդ)¹⁸, որքան 1915 թ.: 1965 թ. Բիթլիսի բնակչությունը հասավ 19 հազարի¹⁹:

Մուշը, որը մինչև առաջին համաշխարհային պատերազմն ուներ մոտավորապես 25 հազար բնակիչ, 1927 թ. ուներ ընդամենը 4277 մարդ: Այն մինչև 1955 թ. մնաց 10 հազարից քիչ բնակչություն ունեցող գյուղաքաղաք²⁰: Միայն 1960 թ. Մուշը նույն վիլայեթի մյուս երեք գյուղաքաղաքների հետ միասին ունեցավ մոտավորապես այնքան բնակչություն (23954 մարդ)²¹, որքան ուներ առաջին աշխարհամարտի նախօրյակին: 1965 թ. Մուշի բնակչությունը հասավ 16 հազարի²²:

Այլ կերպ ընթացավ 20 հազարանոց հարբերդ քաղաքի ռաիստիկական անկումը: Այն որպես քաղաք բոլորովին ջնջվեց քարտեզից: Հայկական հարբերդը «անցավ պատմության գիրկը»²³: Մնացին համարյա միայն ավերակներ և ընդամենը 10—20 տուն բնակիչ²⁴:

Թուրքական բուրժուական պատմագրությունը հարբերդի այս ողբերգությունը ներկայացնում է խեղաթյուրված կերպով: Ըստ պատմության թուրք կեղծարարների, իբր լեռնային հարբերդից երեք մղոն հեռավորության վրա՝ նրա դաշտային մասում, 1834 թվից հետո վարչական կարգադրությամբ հիմնադրված նորակառույց ավանը, 1876 թ. ստանալով Մամուրեթ-ոյ-Ադիդ անունը և դառնալով վարչական կենտրոն, անընդհատ իրեն է ձգել հարբերդի բնակչությանը, և այս արտահոսքն է՛լ ավելի ուժեղանալով առաջին համաշխարհային պատերազմից հետո, դառարկել է հարբերդը²⁵:

¹⁸ Բիթլիս՝ 16636, Դատվան՝ 6533, Ահլաթ (Խլաթ)՝ 5080, Ադիլչեվազ (Ալշավազ)՝ 4615, Խիզան՝ 1102, Մուսկի (Մոսկան)՝ 304 (ավանը կոչվում է Միրթազ կամ Մերեթազ):

¹⁹ „Türkiye İstatistik yillığı“, 1968, s. 34.

²⁰ 1955 թ. 10888 մարդ: „İstatistik yillığı“, 1960—1962. s. 56—59.

²¹ Մուշ՝ 11965, Մալազկիրտ (Մանազկիրտ)՝ 5060, Բուլանըխ՝ 4900, Վարդո՝ 2029:

²² „Türkiye İstatistik yillığı“, 1968, s. 34.

²³ „Vatan“, Elâzığ İlâvesi, 4.11.1953, s. 5.

²⁴ «Vatan», նույն տեղում, էջ 5—6: «հարբերդը և անոր ոսկեղեն դաշտը», Տուշա-մատեան պատմական, մշակութային և ազգագրական, աշխատասիրեց և կազմեց Վահէ Հայկ. Նիւ-Յորք, 1959, էջ 753:

²⁵ „Vatan“, նույն տեղում, „Türk Ansiklopedisi“, cilt XVIII. Ankara, 1970, s. 511: „Türkiye Ansiklopedisi“, Ankara, 1956—1957, cilt II, s. 232—233.

Անկասկած, բուն պատճառը՝ հայերի բնաշնչումը, թաքցնելու համար թուրք բուրժուական մտավորականությանը մնում էր ոչ այլ ինչ, քան հայտնագործել «սոցիոլոգիական» սնոտի պատճառներ: Սակայն նույնիսկ այդ դեպքում տրամաբանությունը պահանջում է պահպանել շափի զգացումը: Պատմության մեջ, կարծում ենք, դեռևս չի արձանագրվել, որ ընդամենը 10—15 հազար բնակչություն ունեցող, այն էլ ասիական թույլ զարգացած մի քաղաք²⁶ ունենա այնպիսի հզոր ձգողություն, որ ընդամենը մի տասնամյակի ընթացքում (1915—1925) ամայացնի դարավոր ավանդույթներով հարուստ ավելի մի մեծ քաղաք, որի բնակիչները ինքնակամ թողնեն հայրենի վայրը իր բնակելի հոյակապ շենքերով, դպրոցներով, հարյուրավոր խանութներով, բաղնիքներով, պարտեզներով, այգիներով, գերեզմանոցներով: Մանավանդ մյուս կողմից էլ՝ «ձգող» քաղաքը չապրելով ոչ մի առաջադիմություն, ավելի է անշքանում²⁷:

Խարբերդի օրինակը ցայտուն կերպով ցույց է տալիս, որ նախկինում հայաշատ մի շարք քաղաքներում՝ Վանում, Մուշում և Բիթլիսում, հայերի բնաշնչումից կամ աքսորվելուց հետո տեղի թուրք բնակչության զգալի մասը տնտեսական գործունեության ոլորտ չգտնելով, հեռանում էր այդ վայրերից, գնում տնտեսապես համեմատաբար «նվազ տուժված» քաղաքներ: Այդպիսի քաղաքներից էր հավանաբար Մամուրեթ-ուլ-Աղիզը (Էլազիզ), որը 1927 թ. ուներ 20 հազար բնակչություն:

Արևելյան վիլայեթներում 1927 թ. կար հինգ հազար և ավելի բնակիչ ունեցող 33 քաղաք՝ 499 հազար ընդհանուր բնակչությամբ: Այդ քաղաքներն էին (բնակչության նվազման հաշորդականությամբ). 1. Այնթապ՝ 39998, 2. Էրզրում՝ 31357, 3. Դիարբեքիր՝ 30700, 4. Ուրֆա՝

²⁶ Մամուրեթ-ուլ-Աղիզը ուներ 16 հազար բնակչություն, մտավորապես կեսառկես հայ և թուրք («Խարբերդը և անոր ոսկեղէն դաշտը», էջ 42): Այլ տվյալի համաձայն՝ 2763 բնակիչ («Annuaire Oriental», Constantinople, 1912, p. 1700):

²⁷ Խարբերդը և Մամուրեթ-ուլ-Աղիզը արհեստների, արդյունագործության, առևտրի կարևոր կենտրոններ էին: Առևտրական ալյազան կապեր ունեին մի շարք վայրերի, այդ թվում Կ. Պոլսի, Հալեբի և արտասահմանի հետ: Արտադրությունից մասնավորապես հայտնի էին մետաքսյա գործվածքները: Շնախքան համաշխարհային պատերազմը այդ շրջանում լայն տարածում գտած շիրամապահությունից ստացված մետաքսը գործում էին Խարբերդում և Էլազիզում (Մամուրեթ-ուլ-Աղիզ): Արտադրված մետաքսյա կերպասները, վարագույրները, կտավները, կարպետները ամենուրեք մեծ ընդունելություն էին գտնում... ներկայումս այստեղ (Էլազիզում—ձ. Գ.) երկաթագործության, կլայեկագործության նման սովորական և նախնական արհեստներից բացի ուրիշ ոչինչ չի երևում» (Hüseyin Saraçoğlu, Dogu Anadolu, cilt I, Istanbul, 1956, s. 383):

29098, 5. Սվազ` 28498, 6. Մարաշ` 25982, 7. Մարդին` 23252, 8. Քիլիս` 22668, 9. Բոքատ` 22390, 10. Մալաթիա` 20737, 11. էլազիզ` 20052, 12. էրզինջան` 16092, 13. Զիլե` 15377, 14. Սղերդ` 15099, 15. Սիվերեկ (Սևերեկ)` 14962, 16. Կարս` 13901, 17. Ամասիա` 12824, 18. Մարզվան` 11334, 19. Բիրեջիկ` 9100, 20. Բիթլիս` 9050, 21. Ադըյաման (Հյուան-ը-Մանսուր)` 8644, 22. Շաբին-Կարահիսար` 7091, 23. Նիդիր` 7041, 24. Բեսնի (Բեհեսնի)` 7014, 25. Վան` 6981, 26. Լիջե (Լջե)` 6846, 27. Արաբկիր` 6782, 28. էլբիստան (Ալբստան)` 6456, 29. Նիկսար` 6373, 30. Գյումուշ-Հաջի գյուղ` 6939, 31. Դարենդե` 6006, 32. էրբաա` 5625, 33. Զիզրե` 5348²⁸.

Դժվար չէ նկատել, որ բացառությամբ մի քանի քաղաքների, քաղաքային բնակչությունը խիստ նվազել էր: Այսպես՝ նախկինում մոտավորապես 40 հազար և ավելի բնակիչ ունեցող մի շարք քաղաքների՝ Այնթապի, Վանի, Բիթլիսի, Մարաշի, Ամասիայի, Դիարբեքի, Ուրֆայի, Սվազի, էրզրումի փոխարեն 1927 թ. 40 հազար բնակչություն ունեցող միայն մեկ քաղաք կար՝ Այնթապը: Քաղաքային բնակչության խիստ նվազման հետևանքով կրճատվել էր նաև քաղաքների թիվը: Իսկայն վայրերը, որոնք չեն հիշատակված քաղաքների վերոհիշյալ ցուցակում, նույնիսկ 1960 թ. չէին վերականգնել մինչև առաջին համաշխարհային պատերազմն ունեցած իրենց բնակչության թվաքանակը: Այսպես, օրինակ, Կյուրինում, որը մինչև պատերազմն ուներ 12 հազար բնակիչ²⁹, 1960 թ. բնակվում էր ընդամենը 5691 մարդ: Դիվրիկը նախապատերազմյան 10—12 հազարի³⁰ փոխարեն 1960 թ. ուներ ընդամենը 8829 բնակիչ, Ակնը (Քեմալիյե) 10 հազարի³¹ փոխարեն՝ 2652, Բալուռն 8—9 հազարի³² փոխարեն՝ 3995, Խնուսը (Հընըս) 5—6 հազարի³³, փոխարեն՝ 4117, Գեմերեկը (Գամրակ) 7 հազարի³⁴ փոխարեն՝ 4312, Չնքուշը 5 հազարի³⁵ փոխարեն՝ 1546: Կարելի է հիշատակել նաև բա-

²⁸ „Genel nüfus sayımı“, 20 ilkteşrin 1940, cilt II, s. XL—XLVI.

²⁹ «Շայ ազգադրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ», հատ. 1, Երևան, 1970, էջ 37: „Annuaire oriental“, 1912, p. 1622.

³⁰ «Շայ ազգադրություն և բանահյուսություն», հատ. 1, էջ 39: „Annuaire Oriental“, 1912, p. 1570.

³¹ Ս. Էփրիկեան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հատ. 1, Վենետիկ, 1903—1905, էջ 38:

³² Նույն տեղում, էջ 373:

³³ Ա-Պ, Վանի, Բիթլիսի և էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 184, 226:

³⁴ Ս. Էփրիկեան, Նշվ. աշխ., հատ. 2, էջ 387:

³⁵ «Խարբերիչը և անոր ոսկեղէն դաշտը», էջ 44:

ցառապես հայաբնակ նախկին 18 հազարանոց Զեյթունը, որը վերածվել էր անշուք մի գյուղի: Այդ պատճառով էլ այժմ նրա անունը չի հիշվում քաղաքների և գյուղաքաղաքների վերաբերյալ վիճակագրությունների ցուցակներում: Զեյթունը (Սյուլեյմանը) 1950 թ. ուներ ընդամենը 992 բնակիչ³⁶:

Քաղաքների տնտեսական անկումը և քաղաքային բնակչության կրճատումը տեղի ունեցավ ոչ հավասարաչափ: Ամենից շատ տուժեցին այն քաղաքները, որտեղ մեծամասնությունը հայեր ու հայերի հետ տարագրված այլ ժողովուրդներ էին, որոնց ձեռքին էր արդյունաբերությունն ու առևտուրը: Զերծ չմնացին նաև Վանը, Բիթլիսը, Մուշը, Կարսը, Սվազը, որոնց տնտեսական կյանքին իրենց գյուղատնտեսական ու արհեստագործական արտադրանքով տոն էին տալիս շրջապատի առավելապես հայաբնակ գյուղերը: Տնտեսական անկումն ավելի մեղմ եղավ այն վայրերում (Ուրֆա, Մարդին, Սղերդ, Այնթապ), որոնք շրջապատված էին ավելի շատ մահմեդական տարրերով: Դրա հետևանքով նախկինում համեմատաբար հայտնի քաղաքներ կորցրին իրենց նշանակությունը՝ զիջելով համեմատաբար քիչ տուժած քաղաքներին:

Արդարև, վերոհիշյալ ցուցակում կարելի է տեսնել, որ առավել փոքր վարչական կենտրոնների Քիլիսը, Մարզվանը, Սիվերեկը, Զիլեն ավելի շատ բնակչություն ունեն, քան նախկինում հայտնի ավելի խոշոր վարչական կենտրոնները՝ Վանը, Բիթլիսը, Մուշը: Սիվերեկը և Զիլեն բնակչության աճով անցել են նաև Կարսից ու Ամասիայից, իսկ Քիլիսը՝ անցյալում շատ հայտնի Մալաթիա, էլյազիզ, Նրզնկա քաղաքներից: Սակայն հայտնի է, որ քաղաքներն իրենց շրջապատող տնտեսական միջավայրից անկախ միավորներ չեն: Հետևաբար, դրանք խմբավորելով ըստ վարչատնտեսական շրջանների՝ վիլայեթների, նկատում ենք, որ քաղաքների վերոհիշյալ շարքում առաջանում են փոփոխություններ, որոնք պատահական չեն: Այսպիսի նոր խմբավորումից հստակորեն երևում է նախկինում համեմատաբար նվազ հայաբնակ շրջանների գերակշիռ դիրքը: Օրինակ, առաջին տեղերն են զբաղեցնում Այնթապի վիլայեթն իր չորս քաղաքներով (Այնթապ, Քիլիս, Նիզիբ, Բեսնի)՝ 78 հազար ընդհանուր քաղաքային բնակչությամբ, Ուրֆայի վիլայեթն իր երեք քաղաքներով (Ուրֆա, Սիվերեկ, Բիրեջիկ)՝ 53 հազար բնակչությամբ, Թոքատի վիլայեթն իր չորս քաղաքներով (Թոքատ, Զիլե, Նիկսար, էրբաս)՝ 50 հազար բնակչությամբ: Իսկ ավելի ստորին տեղերից

³⁶ „Türkiye Ansiklopedisi“, cilt V, s. 184.

մեկը կգրավի էրզրոմի վիլայեթը, որն ըստ առանձին քաղաքների, զբաղեցնում էր երկրորդ տեղը:

Վիլայեթների (նախկին սանջակների) ըստ հայաբնակության աստիճանի խմբավորումը ցույց է տալիս, որ 1927 թ. տարածություն և բնակչության համեմատությամբ խիստ քիչ քաղաքային բնակչություն ունեին, մասնավորապես նախկինում առավել հայաբնակ շրջանները:

Աղյուսակ 3

Արեւելյան վիլայեթների խմբեր*	Տարածու- թյունը (առ- կոսներով) Ա	Բնակչու- թյունը (առ- կոսներով) Բ	Քաղաքային բնակչու- թյունը (առ- կոսներով) Փ	Քաղաքային բնակչու- թյան տոկոսային հարա- բերությունները	
				տարածու- թյան հարա- բերությամբ $\left(\frac{\Phi}{A} \times 100\right)$	բնակչու- թյան հարա- բերությամբ $\left(\frac{\Phi}{B} \times 100\right)$
Առաջին խումբ	5,07	1,22	0,58	12	47
Երկրորդ խումբ	11,21	7,46	3,59	32	48
Երրորդ խումբ	7,65	6,01	4,39	58	73
Չորրորդ խումբ	8,06	7,98	8,83	109	111
Ընդամենը	31,92	22,67	17,39	55	77
Թուրքիայի մնացյալ մասում	68,08	77,33	82,61	121	107
Ամբողջ Թուրքիայում	100,0	100,0	100,0	100	100

Ինչպես երևում է № 3 աղյուսակից, իր տարածության համեմատությամբ խիստ սակավ քաղաքային բնակչություն ունի առաջին աստիճանի հայաբնակ վիլայեթների խումբը, և խմբերի հայաբնակության աստիճանը նվազելու հետ աճում է դրանց քաղաքային բնակչությամբ հազնցվածությունը: Դա առավել հստակ է երևում քաղաքային բնակչության և տարածության տոկոսային հարաբերություններից՝ առավել հայաբնակ առաջին խմբում (Վան, Բիթլիս ու Մուշ)՝ 12, երկրորդ աստիճանի հայաբնակ վիլայեթների խմբում (Կարս, Սվազ, էրզրոմ, էլա-

* Հաշվումները կատարված են մեր կողմից (հմտ. „Türkiye Cumhuriyeti devlet yillığı“, 1929—1930, İstanbul, 1939, s. 205—693; „Genel nüfus sayımı“, 20 İkteşrin 1940, cilt II, 1944 Ankara, s. XL—XLVI):

զիզ)՝ 32, երրորդ խմբում (Մարաշ, էրզինջան, Դիարբեքիր, Մալաթիա)՝ 58, չորրորդում (Այնթապ, Ամասիա, Ուրֆա, Շաբին-Կարահիսար, Թոքատ, Մարդին)՝ 109, Թուրքիայի մնացյալ մասում՝ 121:

Հակառակ խմբերի միջև գոյություն ունեցող մեծ տարբերություններին, նկատելի է, որ առաջին երեք խմբերի քաղաքային բնակչության մեծ հագեցվածությունը խիստ ցածր է Թուրքիայի միջինից: Միայն հայաբնակ վիլայեթների չորրորդ խմբին բաժին է ընկնում մի քիչ ավելի քաղաքային բնակչություն, քան միջին հաշվով Թուրքիայում: Նկատվում է նաև, որ արևելյան վիլայեթները, ամբողջությամբ վերցրած, ունեն նոսր քաղաքային բնակչություն ոչ միայն իրենց տարածության, այլև բնակչության քանակի համեմատությամբ: Դա երևում է քաղաքային և ընդհանուր բնակչության տոկոսների հարաբերությունից: Ըստ բնույթի և մեծության դրանք տարբեր ցուցանիշներ են, որոնք նույնպես հաստատում են քաղաքային բնակչության տեղաբաշխման և հայաբնակության աստիճանի միջև գոյություն ունեցող հակադարձ կապը:

Իհարկե, քաղաքային բնակչությանը վերաբերող տվյալները ինչու որ չափով, թեկուզև անուղղակիորեն, արտահայտում են առանձին շրջանների տնտեսական դարգացման մակարդակը: Բայց դրանք այն ցույց են տալիս յուրովի, հաճախ ավելի բարձր, քան իրականում կա: Այդ երևույթը պայմանավորված է մի շարք գործոններով: Մենք կանգ կառնենք դրանցից երկու առավել կարևորների վրա:

Առաջին գործոնը վարչադատական ապարատի և բանակի կենտրոնացումն է մի շարք շրջաններում: Այս տեսակետից աչքի են ընկնում մի շարք արևելյան վիլայեթներ, որտեղ վարչադատական ապարատի ծառայողները և զինվորականությունը վիլայեթի բնակչության համեմատությամբ ավելի մեծ մասն են կազմում, քան այլ վիլայեթներում: Օրինակ, ըստ 1927 թ. բնակչության պրոֆեսիոնալ կազմի տվյալների, Բայազետի վիլայեթում կային ավելի շատ զինվորականներ (6602) և դատավորներ (820), քան արդյունագործությամբ (752) կամ առևտրով (619) զբաղվողներ: Զինվորականությունը գերակշռում էր նաև Վանի, Սվազի, Սղերդի, Հեյլարի, էրզրումի, էրզինջանի, էլազիզի, Դիարբեքիրի, Մարդինի, Կարսի, Բիթլիսի վիլայեթներում³⁷: Եվ եթե նկատի ունենանք, որ զինվորականության մեծամասնությունը ապրում էր քաղաքներում, ապա պարզ կդառնա, թե ինչու արևելյան վիլայեթների մի շարք քաղաքներում տղամարդկանց տեսակարար կշիռը բարձր էր, քան միջին

³⁷ „İstatistik yillığı“, 1934—1935, s. 156—157:

հաշվով Թուրքիայի քաղաքներում: Եթե Թուրքիայի քաղաքներում տղամարդիկ միջին հաշվով կազմում էին քաղաքային բնակչության 51,8 %-ը, այլ կերպ ասած, եթե յուրաքանչյուր հազար կնոջ ընկնում էր 1076 տղամարդ, ապա Ջիլդրեում՝ 1108, էրզրումում՝ 1111, Թոքատում՝ 1175, Ամասիայում՝ 1204, Մարդինում՝ 1205, Էլազիզում՝ 1224, Ալբրստանում՝ 1293, Վանում՝ 1319, Դիարբեքիրում՝ 1352, էրզինջանում՝ 1481, Սղերդում՝ 1516, Բիթլիսում՝ 1793, Լիջեում՝ 1839, Կարսում՝ 1915³⁷: Սակայն, մյուս կողմից, երկրի արևելյան շատ քաղաքներում տղամարդկանց տեսակարար կշիռը զգալիորեն ցածր էր, քան ողջ Թուրքիայում: Եթե Թուրքիայում յուրաքանչյուր հազար կնոջ ընկնում էր 927 տղամարդ, ապա Շարին-Կարահիսարում՝ 921, Ջիլեում՝ 909, Բհանիում՝ 907, Սիվերեկում՝ 903, Գյումուշ-Հաջի գյուղում՝ 849, Դարենդեում՝ 827, Արաբկիրում՝ 713³⁸: Այդ նշանակում է, որ հիշյալ քաղաքները, չունենալով իրենց բնակչության քանակին համապատասխան տնտեսություն, դառնում են արտագնաց բանվորներ մատակարարող կենտրոններ: Սակայն, քանի որ շատ քաղաքներում մի կողմից վարչական ապարատի և զինվորականների կենտրոնացումը, մյուս կողմից՝ աշխատուժի արտահոսքը միահյուսվում են և բոլորովին հակառակ ուղղությամբ են ազդում տղամարդկանց տեսակարար կշռի վրա, ապա այդ երկու միտումները երևում են շատ ավելի մեղմ, քան իրականում գրսևորվում են:

Երկրորդ գործոնը, որին հարկ ենք համարում թեթևակի անդրադառնալ, վերաբերում է արևելյան վիլայեթների շատ քաղաքներում բնակչության մի մասի գյուղատնտեսությամբ զբաղվելուն: Դա բոլորովին էլ նոր երևույթ չէր: Արդյունաբերության և աբհեստների համարյա ամբողջովին անհետացման հետևանքով բնակչության համար գյուղատնտեսությունը դառնում է առավել հիմնական զբաղմունք: Ընդհանրապես Թուրքիայի բոլոր փոքր քաղաքներում, որոնք ունեն տաս հազարից պակաս բնակչություն, ոչ միայն 1920-ական թվականներին, այլև մինչև օրս գյուղատնտեսությունը մնում է գոյության հիմնական աղբյուրը³⁹: Նույնիսկ մինչև 25 հազար բնակչություն ունեցող քաղաքներում, պետական ծառայողներից բացի, բնակչությունը, այդ թվում նաև արհեստավորներն ու խանութպանները, զբաղվում են գյուղատնտես-

³⁷ Հաշվումները կատարված են մեր կողմից (հմտ. „Cenel nüfus sayımı“, 20 ilkteşrin 1940, cilt II, s. XL—XLVI):

³⁸ Халюк Джиллов, Экономика Турция, М., 1971, стр. 54.

տեսությունը⁴⁰։ Անկասկած, երկրի արեւելյան վիլայիթների քաղաքներում, անկախ բնակչության քանակից, գյուղատնտեսությունն ինչ-որ չափով բնակչության զգալի մասի հիմնական զբաղմունքն է։ Այսպես, օրինակ, Մարաշի 44 հազար բնակչության (1955 թ.) 25%-ը զբաղվում է երկրագործությամբ և անասնապահությամբ⁴¹։ Նույնիսկ էրզրումի նման մեծ քաղաքում գյուղատնտեսությունը եկամուտի օժանդակ աղբյուր է։ «Վաթան» թերթի աշխատակիցները էրզրում այցելելուց հետո, գանգատվելով քաղաքի կեղտոտությունից, գրում են. «Արեւելյան վիլայիթների մեծագույն քաղաք էրզրումում 60 հազարի հասնող բնակչության կողքին ապրում է 20 հազարի չափ անասուն։ Մոտավորապես ամեն տուն պահում է 3—5 անասուն։ Սրանք առավոտյան հոտերով անցնում են քաղաքի միջով, պողոտաներով ու փողոցներով, գնում մերձակա արոտավայրերը և երեկոյան վերադառնում իրենց տեղերը»⁴²։



Քաղաքային բնակչության կրճատումը խիստ նեղացրեց Թուրքիայի արեւելյան վիլայիթների ներքին շուկան և արգելակեց արդյունաբերության ու գյուղատնտեսության հետագա զարգացումը։ Տնտեսագետ Իսմայիլ Հուսրեկի կարծիքով, արեւելյան վիլայիթների գյուղատնտեսությանը չհաջողվեց շուկա գտնել «անգամ փայտե արորով արտադրված բերքի համար»⁴³։ Իսկ տնտեսագետ Գյուլթեն Կազգանը, որն ուսումնասիրության առարկա է դարձրել մի շարք գործոնների (հաղորդակցության դժվարությունների, բնակլիմայական պայմանների, ագրարային հարաբերությունների և այլն) ազդեցությունը արեւելյան վիլայիթների տեղական զարգացման վրա, ընդգծում է, որ քաղաքային բնակչության սակավությունը, ներքին շուկայի սահմանափակությունը արեւելյան վիլայիթների արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացումը արգելակող գործոններից են⁴⁴։ Այնուամենայնիվ, պետք է ընդգծել, որ այդ գործոնների ազդեցությունը բացարձակ չէ, որովհետեւ, վերջին հաշվով, ավելի շատ քաղաքային բնակչության քանակն է պայմանավոր-

⁴⁰ „Türkiye Ansiklopedisi“, cilt IV, s. 317.

⁴¹ Նույն տեղում, էջ 98։

⁴² „Vatan“, Erzurum ilâvesi, 7. I. 1953, s. 5.

⁴³ İsmail Hüsrev, Türkiye köy iktisadiyatı, Ankara, s. 193.

⁴⁴ „İstanbul Üniversitesi İktisat fakültesi mecmuası“, cilt 24, Ekim 1963—Mart 1964, s. 120—144.

ված արդյունաբերությունն ու գյուղատնտեսության զարգացման մակարդակով:

Սակայն արևելյան վիլայեթներում առաջին համաշխարհային պատերազմից հետո քաղաքային բնակչության սակավությունը պարզապես հայաջնջման արդյունք էր: Նույն քաղաքականության հետևանքով անկում ապրեցին նաև արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը: Եվ արտադրողական ուժերի զարգացման մակարդակի ու քաղաքային բնակչության քանակի միջև առաջացավ ինչ-որ նոր «համապատասխանություն»:

Հանրահայտ փաստ է, ինչպես ամբողջ Օսմանյան կայսրության մեջ, այնպես էլ Արևմտյան Հայաստանում չի եղել զարգացած արդյունաբերություն: Սակայն թուրքական պատմագրությունը փորձում է բուրժուական նեմեացնել անցյալում գոյություն ունեցած՝ բացահայտորեն գունազարդելով այն, ինչ ստեղծվել է հետագայում: Միտումնավորությունը թերազնահատվում է հայերի, հույների և այլ ժողովուրդների դերը Թուրքիայի տնտեսական կյանքում:

Թուրք պատմագիրներն այդ նպատակով լայնորեն օգտագործում են 1913 թ. արդյունաբերական անավարտ հաշվառման արդյունքները: Հաշվառման է ենթարկվել մասամբ պետական և օտարերկրյա կապիտալին պատկանող ընդամենը 269 ձեռնարկություն՝ յուրաքանչյուրում միջին հաշվով 63 բանվոր-ծառայող:

Հայտնի է, որ Արևմտյան Հայաստանում արդյունաբերական առավել տարածված ճյուղը տեքստիլագործությունն էր: Սակայն ամբողջ Օսմանյան կայսրությունից վիճակագրական ցուցակների մեջ հիշատակվում է մետաքսյա գործվածքներ արտադրող միայն 6 ձեռնարկություն՝ 134 աշխատողով, բրդյա գործվածքներ արտադրող 13 ձեռնարկություն՝ 185 աշխատողով, բամբակյա գործվածքներ արտադրող միայն 3 ձեռնարկություն՝ 204 աշխատողով⁴⁵: Նման խոշոր ձեռնարկություններ կային հիմնականում Ստամբուլում և արևմտյան մի շարք քաղաքներում (Իզմիր, Մանիսա, Բուրսա, Իզմիթ, Կարամուրսել, Բանդերմա, Ուշաք), իսկ արդյունաբերական հաշվառումը տարածվել է միայն այդ շրջանների վրա: Իսկ Օսմանյան կայսրության մնացյալ մասում, առևտրի և գյուղատնտեսության միևնույնության կարծիքով, կար միայն մի քանի բրնձահան գործարան ու խաղախորդարան, իսկ Ադա-

⁴⁵ А. Д. Новичев, Очерки экономики Турции до мировой войны, М.—Л., 1937, стр. 273.

նայում՝ չորս բամբակամանարան⁴⁶։ Այստեղից արվել է համապատասխան հետևություն, որ նախքան առաջին համաշխարհային պատերազմը Օսմանյան կայսրությունում (ավելացնենք՝ առավել ևս Արևմտյան Հայաստանում) համարյա ոչինչ չի եղել, հետևաբար, հետագայում ոչինչ էլ չի կորել։ Ինչպես տեսնում ենք, հաշվառման հիմքում դրված է միջավայրին ու ժամանակին համապատասխանող մի այնպիսի չափանիշ, որն ավելի շուտ ցույց է տալիս շեղածը։

Եթե հաշվի առնենք, որ 1913 թ. արդյունաբերական հաշվառումը այսպիսով ամբողջովին անտեսել է Արևմտյան Հայաստանի արդյունաբերությունը, մանուֆակտուրան և մանր ապրանքային արտադրությունը, ապա պետք է ասել, որ արևելյան վիլայեթները կորցրել են շատ ավելին, քան ցույց կտան մեր կողմից բերվող օրինակները։

Դիարբեքիի վիլայեթի 1936 թ. տարեգրքում վիլայեթի գյուղատնտեսական գործերի տնօրեն Հալիլ բեյը Դիարբեքիում շերամապահության անկման մասին խոսելիս «բազմաթիվ» պատճառների թվում հիշատակում է նաև այն, որ «պակասում են մեծ կապիտալներ՝ բանեցնելու համար առկա մետաքսամշակման և մետաքսյա գործվածքների գործարանները»⁴⁷։ Անկասկած, այդ գործարանները հիմնադրելիս առկա է եղել նաև կապիտալը։ Սակայն ի՞նչ պատահեց այդ հարևատությամբ, ո՞ւր գնացին եղած կապիտալները։ Իրոք պակասում էր միա՞յն կապիտալը։ Զե՞ր զգացվում արդյոք նախաձեռնող հայ բուրժուազիայի և որոշակի հմտություն ունեցող հայ արհեստավորների ու բանվորների բացակայությունը⁴⁸։

Հանրապետական Թուրքիայի ղեկավարները տեսնելով, որ հակառակ իրենց բոլոր ջանքերին, չեն կարողանում լուծել բուրժուազիայի ձեռներեցության և կապիտալի պակասի հարցը, 1930-ական թվականներից սկսած վարեցին պետական կապիտալիզմի քաղաքականություն։ Եվ թեև պետության նյութական միջոցները խիստ սահմանափակ էին, և շատ մեծ առաջընթաց չարձանագրվեց, այնուամենայնիվ ամեն անգամ զգացվեց «պատրաստի» պրոլետարիատի, արհեստավորության բացակայությունը։ Ինչպես գրում է սոցիոլոգ Նիյազի Բերբեսը, «երկ-

⁴⁶ Orhan Conker, Redressement économique de l'industrialisation de la Nouvelle Turquie, Paris, 1937, p. 55.

⁴⁷ Basri Konyar, Diyarbakır yillığı, cilt III, Ulus basımevi, 1936, s. 150.

⁴⁸ Դիարբեքիում մետաքսի և մետաքսեղենի արտադրությամբ զբաղվում էր նվազագույնը տասը հայկական ձեռնարկություն («Annuaire Oriental», 1912, p. 1564)։

րում այն ժամանակ (երկու աշխարհամարտերի միջև ընկած ժամանակամիջոցում—Հ. Գ.) բացակայում էր ոչ միայն մասնավոր նախաձեռնությունը, այլև արդյունաբերական բանվորը⁴⁹:

Կյուրինում մինչև առաջին համաշխարհային պատերազմը խիստ զարգացած էր նախազարդ շալագործությունը, որն իր հարակից ճյուղերով կազմում էր բնակչության հիմնական զբաղմունքը: Հնադարյան գործիքներին մեծ մասամբ փոխարինել էին Նվրոպայից ներմուծված գործող մեքենաները: Բացի դրանից, Կյուրինի արհեստավորներն ու Սվադի երկաթագործները մեծ հմտությամբ փայտից և երկաթից պատրաստում էին գործող մեքենաների տեղական նմուշներ, որոնք զնի տեսակետից ավելի մատչելի էին տնայնագործ արհեստավորին: Թեև շալագործությունը դեռևս չէր գտնվում գործարանային աստիճանում, բայց արտադրվում էր մեծ քանակությամբ բարձրորակ շալ: Համաձայն Սվադի ֆրանսիական փոխհյուպատոսի 1911 թ. տեղեկագրի, Կյուրինում հյուսվածքեղենի տարեկան արտադրությունը հասնում էր երեք միլիոն ոսկի ֆրանկի⁵⁰: Ուշագրավ է, որ կյուրինցի հայ արհեստավորները նպաստում էին նաև այլ շրջանների տնտեսական զարգացմանը: Օրինակ, մի քանի կյուրինցի հայեր Այնթապում տեղացի հայերի հետ փոխաշահավետության սկզբունքով ձեռնարկեցին Կյուրինի շալի արտադրությունը: Վերջինիցից ինքնուրույն ու սպառումը շատ քաջալերական էր, մեծ ապագա կիսոստանար»⁵¹:

Սակայն ներկայումս շալագործությունը Կյուրինում համարյա անհետացել է: Քաղաքի բնակչության մեծամասնությունն այժմ զբաղվում է հացահատիկի մշակմամբ, պտղաբուծությամբ և արհեստներով⁵²: Իսկ եթե արտադրվում էլ է Կյուրինի շալը, ապա այն խիստ ետ է մնում նախկին որակից: Շալագործությունը կորցրել է իր նշանակությունը⁵³:

Ըստ 1927 թ. արդյունաբերական հաշվառման, ամբողջ Վանի վիլայեթում կար 80 «արդյունաբերական» ձեռնարկություն, ավելի ճիշտ կլինի ասել՝ արհեստանոց, ընդամենը 179 աշխատողով⁵⁴: Դա չափա-

⁴⁹ Niyazi Berk's, İkiyüzyildir neden bocalıyorus?, Yönetim Yayınları, I, s. 123.

⁵⁰ Կյուրինի շալագործության մասին մանրամասն տե՛ս Վալա լազագործություն և բանահյուսություն, հատ. 1, էջ 56—60:

⁵¹ «Պատմություն Անթեպի հայոց», հատ. Բ, աշխատասիրեց ու խմբագրեց Գեորգ Ա. Սարաֆեան, Լոս Անճելես, Գալիֆորնիա, 1953, էջ 302:

⁵² „Türkiye Ansiklopedisi“, cilt II, s. 470.

⁵³ „Hayat Ansiklopedisi“, cilt III, İstanbul, 1962.

⁵⁴ „İstatistik yılı“, 1930—1931, Ankara, 1931, s. 201.

ղանց տխուր պատկեր էր անցյալի համեմատությամբ: Հիշենք, որ Վանում նախկինում կար ավելի քան 200 ոսկերիչ ու արծաթագործ, որոնք աշխատում էին 60 արհեստանոցներում⁵⁵: Վանը կ. Պոլսից հետո սակերչության և արծաթագործության հայտնի կենտրոններից էր: Ինչպես նշում է «Վաթան» թերթը, Վանը «ունենր իր սեփական համբավը: Այնտեղ պատրաստվում էին արծաթյա սևանախշ եղակի իրեր: Արտադրանքն ուղարկվում էր երկրի բոլոր կողմերը և արտասահման: Նույնիսկ մեր օրերում Սպահանի մի շարք արծաթագործներ արծաթյա սևանախշ արտադրանքի վրա դրոշմում են Վանի անունը»⁵⁶: Սակայն ներկայումս «ոչ մի հետք չի մնացել Վանի արծաթագործությունից»⁵⁷:

Վանը հայտնի էր նաև իր այլազան գործվածքներով: Ավելի քան 1000 բանվոր էր աշխատում 152 կտավագործական ձեռնարկությունում⁵⁸: Սակայն մեծ թիվ էին կազմում նաև տնայնագործական սկզբունքով աշխատողները: Օրինակ, Շատախ կամ Թաղ ավանում, որը Շատախի գավառի վարչական կենտրոնն էր և ուներ 200 տուն (1200 շունչ) ղուտ հայ բնակչություն⁵⁹, ավելի քան 200 մարդ ղբաղված էր շալագործության հետ կապված առանձին աշխատանքներով՝ թել հիենկով, գործեկով, շալ ներկեկով և այլն: Իսկ բուրդը զգում ու մանում էին կանայք: Թաղում չկար մի կին, որ այդ աշխատանքով չզբաղվեր: «Վանի շալերի» ամենաբնիկ տեսակը պատրաստվում էր Թաղում⁶⁰: Մեծ պահանջարկ էին վայելում Վանի գործվածքների առանձին տեսակներ՝ «Վանի շալը» կամ «Շատախու շալը», «մանուսան», ինչպես նաև «նամազլիկ»-ը, որն օգտագործում էին մուսուլմանները աղոթելու ժամա-

⁵⁵ С. М. Акопян, Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны, Ереван, 1967, стр. 14.

⁵⁶ „Vatan“, Van 11 şevsi, 12 XI. 1952, s. 5.

⁵⁷ Նույն տեղում: Իհարկե, «Վաթան» թերթն ասոսոսում է ոչ այն պատճառով, որ հրով ու սրով դուրս էին մղվել արծաթագործությունը զարգացնողները, այլ այն պատճառով, որ Վանի թուրքերը մինչ այդ նրանցից չեն սովորել այդ արհեստը: Կարծում ենք, այլ կերպ չի կարելի հասկանալ հետևյալ տողերը. «Երա (Վանում արծաթագործության անհետացման—Լ. Գ.) պատճառն այն է, որ առաջին համաշխարհային պատերազմից առաջ շնայած ամենուրեք թուրքերի ու հայերի միջև բարդորացիական և գործընկերության նման հարաբերություններ կային, Վանում թուրքական և հայկական թաղամասերը բոլորովին միմյանցից անջատ էին, և արծաթագործությունը կենտրոնացած էր հայկական թաղամասերում»:

⁵⁸ С. М. Акопян, Զշվ. աշխ., էջ 13.

⁵⁹ Ա-ԴՊ, նշվ. աշխ., էջ 78:

⁶⁰ Նույն տեղում, էջ 66—67:

նակ⁶¹։ Սակայն «Վանում առաջին աշխարհամարտի թոշուրոհի մեջ,— ասվում է «Վաթան» թերթի Վանին հատկացված հավելվածում,— անհետացան ոչ միայն արծաթագործությունը, այլ նաև կտավագործությանն առնչվող մի քանի դարգացած արհեստներ»⁶²։ 1972 թ. արդյունաբերական վիճակագրության համաձայն, ամբողջ Վանի վիլայեթում կար 16 կտավագործական ձեռնարկություն, ընդամենը 38 աշխատողով⁶³։ Պետք է ավելացնել, որ առաջին աշխարհամարտի այդ «թոշուրոհ» մեջ անհետացան նաև արդյունագործության մյուս նյութերը։ «Թուրքական հանրազնության»-ում կարդում ենք, որ Վանի կազայում «անհետացավ Վանի փայլուն ժամանակներում գոյություն ունեցող մանր ապրանքային արտադրության կարևոր մի մասը, և բնակչության ապրուստը կապվեց հողի և անասունի հետ»⁶⁴։ «Բնակչությունը բացառապես անասնապահությամբ է զբաղվում» նաև Շատախ ավանում⁶⁵։

Բիթլիսը (Բաղեշ) մոտիկ անցյալում արևելյան վիլայեթների առավել բարեկարգ քաղաքներից էր⁶⁶, և իբրև վաճառականական կենտրոն բարձր էր կանգնած ասիական Թուրքիայի շատ քաղաքներից⁶⁷։ Բիթլիսի համբավավոր շուկայում կար հազարից ավելի մեծ ու փոքր խանութ։ Քաղաքի առևտրական փայլուն վիճակն իր վրա էր հրավիրում բոլորի ուշադրությունը։

Բիթլիսն ուներ նաև սեփական արդյունաբերություն։ Զարգացած էին կտավագործությունը, ներկարարությունը, ոսկերչությունը, պղնձագործությունը, օճառագործությունը, ատաղձագործությունը, բրուտագործությունը։ Հատկապես հայտնի էր «Բաղեշի շիլա» կոչվող ալ-կարմիր կտավը, որն իր դիմացկունությամբ վաճելում էր մեծ հռչակ⁶⁸։

Պատերազմից հետո քաղաքը տասնամյակներ շարունակ մնաց կիսավեր վիճակում⁶⁹, այդ թվում՝ Բիթլիսի հայկական շուկան⁷⁰։ Բիթլիսում

⁶¹ С. М. Акопян, նշվ. աշխ., էջ 14.

⁶² „Vatan“, Van l'avesi, 12 XI.1952, s. 5.

⁶³ „İstatistik yillığı“, 1930—1931, s. 201.

⁶⁴ „Türkiye Ansiklopedisi“, cilt VI, s. 181.

⁶⁵ Նույն տեղում, հատ. 2, էջ 28։

⁶⁶ Նույն տեղում, հատ. 1, էջ 479։

⁶⁷ ԱՊԾ, նշվ. աշխ., էջ 82—83։

⁶⁸ Նույն տեղում։

⁶⁹ „Türkiye Ansiklopedisi“, cilt I, s. 479.

⁷⁰ Lord Kinross, Within the Taurus, A Journey in Asiatic Turkey, London, 1954, p. 139.

միայն աննշան չափով պահպանվեցին բրուտագործությունն ու կտավագործությունը: Քաղաքում շմանց նախկին արհեստներից համարյա ոչ մեկը, անկում ապրեց նաև կտավագործությունը⁷¹: Բնականաբար, որպես առևտրական կենտրոն, քաղաքը կորցրեց իր նախկին նշանակությունը: Սկսում են,—գրում էր «Ջումհուրիյեթ» թերթի թղթակիցը,— Բիթլիսը առաջին համաշխարհային պատերազմից հետո չի կարողացել գտնել իրեն, չի գտել իր նախկին բնակչությունն ու տնտեսական պայմանները և անշքացել է»⁷²:

Մուշը արդյունաբերության և առևտրի տեսակետից շատ էր հտմնում արևելյան վիլայեթների մյուս հայտնի քաղաքներից: Սակայն տեղական կարիքները հոգալու համար կային զանազան մասնագիտության արհեստավորներ՝ սկսած ոսկերիչներից մինչև բրուտագործները: Քաղաքի 800 մանր ու մեծ տարբեր խանութներից 500-ը պատկանում էր հայերին: Հայ խանութպաններից 300-ը միաժամանակ զբաղվում էր արհեստով⁷³: Մեծ թիվ էին կազմում բրուտագործները, որոնք ապրում էին առանձին թաղամասում: Իհարկե, 1927 թ. Մուշում պատկերը ավելի ողբալի էր, քան Բիթլիսում: Այդ է վկայում Մուշի ավելի նոսր բնակեցվածությունը: «Միայն 1955 թ. երկաթուղու՝ Մուշ հասնելուց հետո Մուշը սկսել է վերականգնվել»⁷⁴: Ըստ 1927 թ. տվյալների, Բիթլիսի վիլայեթում (ներառյալ Մուշը) արդյունագործությամբ զբաղվող 535, առևտրով զբաղվող 893 մարդ կար⁷⁵:

Բերված օրինակները ցույց են տալիս, որ արևելյան վիլայեթների տնտեսական անկումը չի վերաբերում արհեստների և արդյունաբերության կոնկրետ այս կամ այն ճյուղին, կամ առանձին քաղաքների, այլ կրում է համընդհանուր բնույթ: Ուստի այժմ կփորձենք նաև ցույց տալ, թե վիճակագրական տվյալների համաձայն ինչ պատկեր էր ներկայացնում արդյունաբերության տեղաբաշխումն արևելյան վիլայեթներում:

Ըստ 1927 թ. արդյունաբերական հաշվառման, արևելյան վիլայեթներում կար 11355 «արդյունաբերական» ձեռնարկություն, ընդամենը 33289 աշխատողով: Այդ ձեռնարկությունները հիմնականում փոքրիկ

⁷¹ „Türkiye Ansiklopedisi“, նույն տեղում,

⁷² „Cumhuriyet“, 26. IX. 1951.

⁷³ Ա-ՊՕ, նշվ. աշխ., էջ 110:

⁷⁴ „Hayat“, Tarih mecmuası, 1968 Nisan ilâvesi, s. 315.

⁷⁵ „İstatistik yillığı“, 1934—1935, s. 157.

արհեստանոցներ էին, քանի որ մեկ ձեռնարկությունը միշին թվով ընկ-
նում էր մոտ 3 աշխատող: Այդ ձեռնարկություններից միայն 7485-ն
էին գտնվում Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթի սահմաններում,
ընդամենը 20566 աշխատողով⁷⁶: Դա թվապես զգալիորեն զիջում էր
նուլնիսկ նախկին Սվազի վիլայեթի արդյունագործների քանակությա-
նը⁷⁷, իսկ որակով ոչ մի կերպ չէր կարող համեմատվել անցյալի հետ:
Արդյունագործության մեջ աշխատողների այդ փոքրիկ քանակի զգալի
մասը զբաղվում էր գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ձեռ-
նարկություններում, մեծ մասամբ ալրադացներում: Նույն պատկերն
էր տիրում նաև Թուրքիայի մնացյալ մասերում:

Իսկ երբ արդյունաբերության տեղաբաշխումը քննարկում ենք ըստ
վիլայեթների նախկին հայաբնակության աստիճանի խմբավորման (դա
երևում է ստորև բերվող № 4 ամփոփիչ աղյուսակից), ապա ստացվում է,
որ իր տարածության հարաբերությամբ ամենաքիչ արդյունագործողներ
ունի հայաբնակ վիլայեթների առաջին խումբը, և խմբերի հայաբնակու-
թյան աստիճանը նվազելու հետ մեղմանում է նաև տարածության և
արդյունագործողների քանակի անհամապատասխանությունը:

Դա առավել հստակ երևում է արդյունաբերության մեջ աշխատող-
ների և վիլայեթների խմբի տարածության տոկոսների հարաբերությու-
նից. հայաբնակ վիլայեթների առաջին խմբում (Վան, Բիթլիս, Մուշ)⁴,
երկրորդ խմբում (Կարս, Սվազ, էրզրում, էլազիզ)²⁴, երրորդում (Մա-
րաշ, էրզինջան, Դիարբեքիր, Մալաթիա)⁴², չորրորդում (Ալեքսադ, Ամասիա, Ուրֆա, Շարին-Կարահիսար, Թոքատ, Մարդին)⁸⁷, Թուր-
քիայի մնացյալ մասում¹²⁸: Ինչպես երևում է, հակառակ խմբերի մի-
ջև գոյություն ունեցող մեծ տարբերություններին, բոլորն էլ իրենց տա-
րածության համեմատությամբ ունեն զգալիորեն քիչ արդյունագործող-
ներ, քան միջին հաշվով ողջ Թուրքիայում: Նույն վիճակում է գտնվում
հայաբնակ վիլայեթների չորրորդ խումբը, որը, ինչպես տեսանք, քա-
ղաքային բնակչության քանակով փոքր-ինչ բարձր էր կանգնած Թուր-
քիայի միջինից: Աղյուսակը ցույց է տալիս, որ արևելյան վիլայեթ-
ները ոչ միայն իրենց տարածության, այլև բնակչության համեմատու-
թյամբ զգալիորեն քիչ արդյունագործողներ ունեն: Բնակչության ու

⁷⁶ Հաշվումները կատարված են մեր կողմից (հմմտ. „İstatistik yillığı“, 1930—
1931, s. 197—201):

⁷⁷ Սվազի վիլայեթում կար 17700 բանվոր, որոնք հիմնականում կենտրոնացված էին
153 ֆաբրիկայում և ջրաղացում (С. М. АКОПЯН, նշվ. աշխ., էջ 13): Բացի դրանից մեծ
թիվ էին կազմում նաև բազմաթիվ մանր արհեստանոցներում աշխատողները:

Արևելյան վիլայեթների խմբեր*	Տարածութիւնը (տոկոսներով)	Բնակչու- թիւնը (տոկոսներով)	Արդյու- նագոր- ծողները (տոկոսներով)	Արդյունագործողների տոկոսա- յին հարաբերութիւնները	
	Ա	Բ	Գ	տարածութիւն հարաբերու- թյամբ $\left(\frac{\text{Գ}}{\text{Ա}} \times 100\right)$	բնակչութիւն հարաբերու- թյամբ $\left(\frac{\text{Գ}}{\text{Բ}} \times 100\right)$
Առաջին խումբ	5,00	1,22	0,22	4	18
Երկրորդ խումբ	11,21	7,46	2,72	24	36
Երրորդ խումբ	7,65	6,01	3,20	42	53
Չորրորդ խումբ	8,06	7,98	7,01	87	85
Ընդամենը	31,92	22,67	13,15	41	58
Թուրքիայի միաց- յալ մասում	68,08	77,33	86,85	128	112
Ամբողջ Թուրքիա- յում	100,0	100,0	100,0	100,0	100,0

արդյունագործողների քանակների միջև գոյութիւն ունեցող այդ անհամապատասխանութիւնը սուր կերպով դրսևորվում է հայաբնակ վիլայեթների առաջին խմբում և խմբերի հայաբնակութիւն աստիճանը նվազելու հետ մեկտեղ աստիճանաբար մեղմանում է:

* * *

Անկում ապրեց նաև գյուղատնտեսութիւնը, հատկապես երկրագործութիւնը: Դա երևում է առաջին հերթին մշակվող տարածութիւն խիստ կրճատումից: Այդ մասին մոտավոր գաղափար է տալիս աղյուսակ № 5, ըստ որի, Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթի սահմաններում, առանց հաշվի առնելու այգեգործութիւնը, 1927 թ. մշակվող տարածութիւնը կազմում էր հողային տարածութիւն 2,55%-ը, նախապատերազմյան 6%-ի փոխարեն: Իսկ ըստ վիլայեթների, պատկերն այսպիսին էր. Վանում նախապատերազմյան 1,89%-ի փոխարեն՝ 0,25%, Բիթլիսում՝ համապատասխանաբար 9,19%—0,84%, էրզրումում՝

* Հաշվումները կատարված են մեր կողմից (հմտ. «Türkiye Cuhuriyeti devlet yilligi», 1929—1930, İstanbul, 1930, s. 205—693; «İstatistik yilligi», 1930—1931, Ankara, 1931, s. 197—201):

6,79%—2,85%, Խարբերդում՝ 4,73%—3,40%, Սվազում՝ 6,56%—4,18%, Դիարբերքիում՝ 7,18%—3,03%:

Հասկանալի է, որ առանձին շրջանների երկրագործության վերականգնումն ինչ-որ չափով կապված էր բնակչության համալրման հետ: Սակայն մի շարք պատճառներով (այդ թվում նաև վիճակագրական անճշտությունների) դրանք ունեն անհամապատասխանություններ: Նախկինի համեմատությամբ, մշակվող տարածությունը և բնակչությունը խիստ կրճատված էին Վանի և Բիթլիսի վիլայեթներում: Դիարբերքիի վիլայեթում, որտեղ 1927 թ. մեկ քառակուսի կիլոմետրին ընկնում էր ոչ պակաս թվով մարդ, քան առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, մշակվող տարածությունն ավելի էր կրճատված Խարբերդի վիլայեթի համեմատությամբ, որի բնակչությունը համալրման տեսակետից զգալիորեն զիջում էր Դիարբերքիին: Հետաքրքիր է, որ բոլոր դեպքերում երկրագործության վերականգնումը ետ էր մնում բնակչության համալրումից: 1927 թ. առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակի համեմատությամբ Վանում բնակչությունը կազմում էր 28%, իսկ մշակվող տարածությունը՝ 18%, Բիթլիսում համապատասխանաբար՝ 47%—9%, էրզրումում՝ 73%—42%, Խարբերդում՝ 89%—72%, Սվազում՝ 99%—64%, Դիարբերքիում՝ 108%—42%: Ամբողջությամբ վերցրած Արևմտյան Հայաստանում, պատերազմի նախօրյակի համեմատությամբ, 1927 թ. բնակչությունը կազմում էր 77, իսկ մշակվող տարածությունը՝ 42%: Նկատելի է, որ բնակչության համալրման և երկրագործության վերականգնման միջև եղած տարբերությունները բավականին մեծ են: Սա խոսում է այն մասին, որ ինչպիսին էլ լինեն վիճակագրական անճշտությունները, կասկածի տակ չեն կարող առնվել կատարված հետևություններ:

Հայտնի է, որ ավելի շատ տուժեցին արևելյան վիլայեթների այն շրջանները, որոնք մեծ մասամբ հայաբնակ էին: Դա ակնհայտ է Վանի, ինչպես նաև Բիթլիսի վիլայեթում: Վերջինս նախքան առաջին համաշխարհային պատերազմը իր մշակվող տարածության տոկոսներով, ներառյալ այգեգործությունը (9,52), գրավում էր առաջին տեղը ոչ միայն Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթի մեջ, այլև գերազանցում էր Թուրքիայի մի քանի վիլայեթներին՝ Փոնիային (6,21), Կաստամունուին (6,69), Ստամբուլին (7,94), Անկարային (8,06) և ոչ մեծ տարբերություններով զիջում էր Իզմիրի (10,02), էդիրնեի (10,30), Բուրսայի (10,84), Տրապիզոնի (11,31) և վերջապես Ադանայի (11,71) վի-

Արևմտյան Հայաստանում մշակվող տարածությունը նախքան առաջին համաշխարհային պատերազմը և 1927 թ.

Վիլայեթներ	Նախքան առաջին համաշխարհային պատերազմը		1927 թվական				1927 թ. մշակվող տարածության հարաբերությունը նախպատերազմյան մշակվող տարածությանը (տոկոսներով)
	Վիլայեթի տարածությունը (քառակուսի կմ)*	Մշակվող տարածությունը	Վիլայեթի տարածությունը (քառակուսի կմ)*	Մշակվող տարածությունը	հեկտարներով***	տոկոսներով	
Վան	39300	74461	1,89	37110	9414	0,25	13
Բիթլիս	27100	249071	9,19	27827	23427	0,84	9
Էրզրում	49700	337535	6,74	40603	115787	2,85	42
Պարսերդ	32900	155722	4,73	33003	112188	3,40	72
Սվազ	62100	407119	6,56	48307	202019	4,18	64
Դիարբեքիր	37500	269186	7,18	27920	84546	3,03	42
Ընդամենը	248600	1493094	6,01	214771	547371	2,55	42

լայեթներին⁷⁸։ Սակայն 1927 թ. Բիթլիսի վիլայեթը զբաղեցնում էր նախավերջին տեղը Թուրքիայի վիլայեթների մեջ։

Նախկին սանջակների (հետագայում վիլայեթների) ըստ հայա-

* «Ընդարձակ օրացույց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց», 1906, Կ. Պոլիս, էջ 249—250։

** 1909—1910 թթ. գյուղատնտեսական կուլտուրաների (հատիկաբույսեր, բանջարեղեններ, տեխնիկական ու յուղատու) զբաղեցրած տարածությունը։ Հաշվի չենք առել այդնորոշական տարածությունները (Վանում՝ 1131 հեկտար, Բիթլիսում՝ 8834, Էրզրումում՝ 254, Պարսերդում՝ 26553, Սվազում՝ 17309, Դիարբեքիրում՝ 38437), նկատի ունենալով, որ 1927 թ. վիճակագրության մեջ այդնորոշությունը չի մտել (А. Д. Новичев, Очерки экономики Турции до мировой войны, М.—Л., 1937, стр. 266—267)։

*** Էրզրումի վիլայեթի Բայազետի սանջակը և Պարսերդի վիլայեթի Օվաշլեկի կազան գուրս են մնացել 1927 թ. գյուղատնտեսական հաշվառումից, ուստի չեն մտցվում այդ շրջանների տարածության մեջ «Türkiye Cumhuriyeti devlet yilligi, 1929—1930. İstanbul, 1930, s. 205—693)։

**** Մշակվող տարածությունների հաշվված են մեր կողմից՝ տնտեսությունների թիվը թաղմապատկելով միջին հաշվով մեկ տնտեսության մշակած տարածության վրա՝ գյուղումներով, ապա վերածված հեկտարի, գյուղումը ընդունելով 919,3 քառակուսի մետր («İstatistik yillığı». 1934—1935, Ankara, 1935, s. 309—312)։

⁷⁸ А. Д. Новичев, նշվ. աշխ., էջ 266—267։

րնակության աստիճանի խմբավորումը ևս ցույց է տալիս, որ 1927 թ. մշակվող տարածությամբ ընդհանրապես ավելի վատ վիճակում էին պտնվում նախկին առավել հայաբնակ շրջանները:

Ինչպես երևում է ստորև բերված № 6 աղյուսակից, հիմնականում հայաբնակ վիլայեթներին խմբին (Վան, Բիթլիս ու Մուշ) բաժին է ընկնում Թուրքիայի տարածության 5, իսկ մշակվող տարածության 0,49%-ը: Այսինքն՝ մշակվում էր տարածության համեմատությամբ շատ քիչ հող, բան միջին հաշվով Թուրքիայում:

Կարելի է ասել, որ վիլայեթների հայաբնակության աստիճանի նվազման հետ մեկտեղ մեղմանում է նաև մշակվող տարածության և ընդհանուր տարածության միջև գոյություն ունեցող անհամապատասխանությունը: Դա երևում է մշակվող տարածության և ընդհանուր տարածության տոկոսային հարաբերություններից. առաջին խմբի հայաբնակ վիլայեթներում՝ 10, երկրորդ խմբում (Կարս, Սվազ, էրզրում, էլազիզ)՝ 64, երրորդում (Մարաշ, էրզինջան, Դիարբեքիր, Մալաթիա)՝ 55, չորրորդում (Այնթապ, Ամասիա, Ուրֆա, Շաբին-Կարահիսար, Թոքատ, Մարդին)՝ 81, Թուրքիայի մնացյալ մասում՝ 120: Այսուհանդերձ, հակառակ տիրող միտումին, հանդիպում ենք նաև բացառության: Երկրորդ խմբի հայաբնակ վիլայեթները ներկայացնում են ակնկալվածից քիչ բարձր, իսկ երրորդ խմբի հայաբնակ վիլայեթները՝ ակնկալվածից ցածր ցուցանիշ: Թեև տիրող օրինաչափությունը չի բացառում նման «բացառության» առկայությունը⁷⁹, այնուամենայնիվ կարծում ենք, որ դա հետևանք է վիճակագրական անճշտությունների և պայմանավորված է գյուղատնտեսական որոշ կուլտուրաների, մասնավորապես այգեգործությանը հատկացված տարածությունները հաշվի չառնելու հանգամանքով: Հայտնի է, որ այգեգործական համեմատաբար ընդարձակ տարածություններ են եղել հայաբնակ վիլայեթների ոչ թե երկրորդ, այլ երրորդ և չորրորդ խմբերում:

Ուշադրավ է նաև այն, որ ինչպես երևում է մշակվող և ընդհանուր տարածության տոկոսային հարաբերություններից, արևելյան վիլայեթ-

⁷⁹ Տեսականորեն ընդունված է, որ միայն մեծ թվով միավորներ կամ ամբողջություններ պարունակող խմբերում տարբեր ուղղություն ունեցող պատահական շեղումները, այդ թվում վիճակագրական անճշտությունները, չեղքացնում են միմյանց: Նույնը կրկին նաև խմբերը մեծացնելու դեպքում: Սակայն մենք պահպանեցինք վիլայեթների քառաստիճան խմբավորումը, քանի որ դա պատշաճում է ռաումալստիկող երևույթների մեծ մասին՝ շնորհիվ «էթնիկական գործոնի» և «արդյունաբար հատկանիշի» միջև գոյություն ունեցող սերտ կապի:

Արևելյան վիլայեթ ների խմբեր*	Տարա- ծությու- նը (տո- կոսնե- րով)	Բնակչու- թյունը (տոկոս- ներով)	Մշակվող տարա- ծությու- նը (տո- կոսնե- րով)	Մշակվող տարածության տոկո- սային հարաբերությունները	
	Ա	Բ	Գ	տարածու- թյան հարաբե- րումը $\left(\frac{\text{Գ}}{\text{Ա}}\right) \times 100$	բնակչու- թյան հարաբե- րումը $\left(\frac{\text{Գ}}{\text{Բ}}\right) \times 100$
Առաջին խումբ	5,00	1,22	0,49	10	40
Երկրորդ խումբ	11,21	7,46	7,21	64	97
Երրորդ խումբ	7,65	6,01	4,18	55	70
Չորրորդ խումբ	8,06	7,98	6,54	81	82
Ընդամենը	31,92	22,67	18,42	58	81
Թուրքիայի մնաց- յալ մասում	68,08	77,33	81,58	120	105
Ամբողջ Թուրքիա- յում	100,0	100,0	100,0	100	100

ների շորս խմբերում էլ, ամբողջությամբ վերցրած, տարածության համեմատությամբ զգալի չափով քիչ հող էր մշակվում, քան միջին հաշվով Թուրքիայում: Ավելի մեղմ արտահայտությամբ նույնը հաստատվում է նաև մշակվող տարածության և բնակչության տոկոսային հարաբերություններով: Այսինքն՝ շնայած նրան, որ արևելյան վիլայեթներում առավել չափով, քան Թուրքիայի մնացյալ մասում, գյուղատնտեսությունը բնակչության հիմնական զբաղմունքն էր, բնակչության քանակի համեմատությամբ քիչ հող էր մշակվում: Դա նշանակում է, որ բնակչության համալրումը միայն որոշ չափով էր օգնում երկրագործության վերականգնմանը, քանի որ արևելյան վիլայեթների գյուղատնտեսական բնակչության զգալի մասը զբաղվում էր անասնապահությամբ և հայերի ու այլ երկրագործ տարրերի հեռանալուց հետո չէր կարող անմիջապես լցնել այդ վիլայեթների գյուղատնտեսության մեջ առաջացած դատարկությունը:

Այդ երևում է նաև 1927 թ. գյուղատնտեսական հաշվառման տար-

* Հաշվումները կատարված են մեր կողմից (Համառ. „Türkiye Cumhuriyeti devlet yıllığı“, 1920—1930, İstanbul, 1930, s. 205—693; „İstatistik yıllığı, 1934—1935, Ankara, s. 309—312):

բեր նյութերից, որոնք բավականին խճճված են և հստակ պատկերացում չեն տալիս ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ ագրարային հարաբերությունների մասին:

Հայտնի է, որ արեւելյան վիլայեթներում բնակչությունը հիմնականում զբաղվում էր գյուղատնտեսությամբ: Հակառակ դրան, ըստ 1927 թ. պաշտոնական վիճակագրության, գյուղատնտեսությամբ զբաղվողները բավականին փոքր տոկոս էին կազմում վիլայեթներում: Գյուղատնտեսությամբ զբաղվող բնակչության ցածր տոկոսներով աչքի էին ընկնում Ալեքսապը՝ 41,1, Ուրֆան՝ 45,9, Դիարբեքիրը՝ 48,2, Սղերդը՝ 48,9, Մարգինը՝ 49,2, Մարաշը՝ 50,9, Վանը՝ 53,9, Մալաթիան, 58,7%: Դրությունը մյուս վիլայեթներում համեմատաբար «լավ էր», որտեղ «գյուղատնտեսական բնակչության» տոկոսները տատանվում էին 74,4-ի (Ամասիա) և 93,7-ի (Հեքյարի) միջև⁸⁰: Այնուամենայնիվ, այդ վիճակագրությունը էական թերություններ ունի: Մեր կարծիքով, հաշվառումից դուրս են մնացել այգեգործները, առանձին շրջանների քոչվոր անասնապահները, ինչպես նաև գյուղական չբավորության այն մասը, որը թեկուզև կիսարարության, մարաբաշխության ձևերով ինքնուրույն տնտեսություն չէր վարում: Գյուղացիության այդ մասն աշխատում էր որպես բատրակ, կամ մշակելով տնամերձ փոքրիկ հողամասը և պահելով մի քանի մանր եղջերավոր անասուն, քարշ էր տալիս իր գոյությունը: Դա վերաբերում է մասնավորապես լեռնաբնակներին, որոնք երբեմն իրենց ապրուստի լրացուցիչ միջոցները հայթայթում էին մերձակա քաղաքներում՝ կատարելով պատահական և ժամանակավոր սև աշխատանք:

Պարզվում է, որ հաշվառումից դուրս մնացած գյուղական բնակչությունը տիրող ագրարային հարաբերությունների պայմաններում մեծ դեր չէր խաղում երկրագործության վերականգնման մեջ: Պետք է ավելացնել, որ այդ առումով միատեսակ չէր նաև վիճակագրական հաշվառման ենթարկված, այսպես կոչված, «գյուղատնտեսական ընտանիքների» դերը, որովհետև նրանց մի մասը անասնապահներ էին կամ մասամբ զբաղվում էին երկրագործությամբ:

1927 թ. վիճակագրությունը ոչ մի տեղեկություն չի տալիս անասնապահական տնտեսությունների քանակի մասին: Երկրագործական և անասնապահական տնտեսությունները միասին հաշվառելը բնականաբար անդրադառնում է միջին թվերի վրա: Որքան շատ են անասնապահական

⁸⁰ „İstatistik yillığı“, 1934—1935, s. 309.

տնտեսությունները առանձին մի վիլայեթում, միջին հաշվով այնքան քիչ հողատարածություն և արևքան շատ անասուն է ընկնում մեկ ընտանիքին, քան ընկնում է իրականում երկրագործական մի տնտեսությանը: Եթե 1927 թ. տվյալների համաձայն, Թուրքիայում գյուղատնտեսական մեկ ընտանիքը միջին հաշվով մշակում էր 24,9 դյոնում տարածություն և պահում էր 14,5 ընտանի անասուն, այլ խոսքով՝ մշակվող հողի յուրաքանչյուր դյոնումին (մոտավորապես 0,1 հեկտարին) ընկնում էր 0,58 ընտանի անասուն, ապա Հեքյարիում մշակվող հողի մեկ դյոնումին ընկնում էր 2,86 ընտանի անասուն, Վանում՝ 2,26, Բիթլիսում՝ 1,46, Սղերդում՝ 1,39, Ուրֆայում՝ 0,95, Մարաշում՝ 0,84 և այլն: Այսինքն՝ բացառությամբ էրզրումի և Կարսի, բոլոր արևելյան վիլայեթներում մշակվող հողի յուրաքանչյուր դյոնումին ընկնում էր ավելի շատ անասուն, քան միջին հաշվով Թուրքիայում⁸¹:

Ուշագրավ է այն փաստը, որ արևելյան վիլայեթներում տնտեսությունների քանակի համեմատությամբ շատ քիչ թվով երկրագործական գործիքներ կային: Այսպես, օրինակ, Հեքյարիում 4765 տնտեսություններ ունեին 1227 գործիք, որից 1225-ը արոր էր. Սղերդում՝ համապատասխանաբար 9832—5040—4212, Վանում՝ 7847—4242—3831, Դիարբեքիում՝ 18671—11350—11185, Մարդինում՝ 18109—11726—10708, էլազիզում (Նարբեք և Դերսիմ)՝ 30900—19305—17987, Բիթլիսում՝ 12005—8103—7952, Մալաթիայում՝ 33783—21317—20603⁸²: Նույն անհամապատասխանությունը երևում է նաև տնտեսությունների թվի և բանող անասունների քանակի միջև: Իր հերթին դա վկայում է, որ տնտեսությունների զգալի մասը անասնապահական էր: Ուշագրավ է, որ հատկապես այն վիլայեթներում, որտեղ 1927 թ. գերիշխում էր անասնապահությունը, ավելի փոքր հողատարածություն էր մշակվում նույնիսկ գոյություն ունեցող երկրագործական գործիքների և բանող անասունների համեմատությամբ: Օրինակ, ամբողջ Թուրքիայի համեմատությամբ Հեքյարիին բաժին էր ընկնում երկրագործական գործիքների 0,09, բանող անասունների 0,13, մշակվող տարածության 0,05%-ը, Վանում՝ համապատասխանաբար 0,30—0,35—0,18%-ը, Սղերդում՝ 0,36—0,43—0,28%-ը, Բիթլիսում՝ 0,57—0,64—0,31%-ը, էրզինջանում՝ 0,98—0,87—0,60%-ը⁸³:

⁸¹ „İstatistik yillığı“, 1934—1935, s. 312 (հաշվումները կատարված են մեր կողմից):

⁸² Նույն տեղում, էջ 309—312:

⁸³ Նույն տեղում (հաշվումները կատարված են մեր կողմից):

Հետագայում, իհարկե, տեղի ունեցան որոշ փոփոխություններ: Հետադահմա ընդարձակվեցին մշակվող տարածությունները՝ բնակչության աճի և քոչվորների նստակյացության անցնելու հետևանքով: Այնուամենայնիվ, արևելյան վիլայեթների մեծ մասում դեռևս երկար ժամանակ անմշակ մնացին ընդարձակ տարածություններ կամ լավագույն դեպքում օգտագործվեցին որպես արոտավայրեր: Անասնապահությունը շարունակեց մնալ տնտեսության գերիշխող ճյուղը:

«Միլլիյեթ» թերթի թղթակից Գյունայ էրենալը, որ 1962 թ. վերջերին այցելել է մի շարք արևելյան վիլայեթներ, գրում է. «Արևելքի մեջ տեսա չհերկված հողեր: Ալշավազեն մինչև Վան, Վանեն՝ Հեքյարի, շատ են անմշակ ձգված նման հողեր: Այդ անմշակ հողերուն վրա գոնե անասուններ պահվեին, բայց ոչ հնձելիք խոտ կար, ոչ ալ աչքիս տեսած հեռավորության վրա անասուն»⁸⁴:

«Թուրքական հանրագիտարան»-ի համաձայն, 1950-ական թվականներին Վանի կաղայում (Վանի, Արտամեոտի, Արջակի, Թիմարի գյուղախմբեր՝ 98 գյուղերով), չնայած ընդարձակ տարածություններին, բնակչության խտության անբավարարության պատճառով ավելի մեծ կարևորություն է տրվել անասնապահությանը, քան երկրագործությանը: Ընդհանրապես ամբողջ վիլայեթում բնակչության մեծամասնությունը զբաղվել է անասնապահությամբ⁸⁵:

Հեքյարիում գյուղացիները «Միլլիյեթ» թերթի թղթակցին պատմել են, որ հայերը Զավի ձորի մեջ ծառախիտ այգիներ տնկել ու խաղող են աճեցրել, մինչդեռ հայերի մեկնելուց հետո իրենք անտառբերության են մատենել նրանց տնկած այգիները⁸⁶: Հեքյարիի մի շարք շրջաններում, օրինակ, Շամդինանում, անմշակ մնացել են նաև նետտրակառուցների մշակած ընդարձակ այգեստանները⁸⁷:

Երկար ժամանակ հողի միայն փոքր տոկոսն էր մշակվում նաև Մուշի դաշտում⁸⁸: «Վաթան» թերթի թղթակիցները 1953 թ. Մուշ այցելելուց հետո գրել են. «80 կմ երկարությամբ ձգվող Մուշի դաշտը բնականից ոռոգվում է Մուրատի և Կարասուի նման կարևոր գետերով: Հողը խիստ բարեբեր է: Հակառակ դրան, չի կարելի ասել, որ այսօր

⁸⁴ «Նոր կեանք», 25. I. 1963:

⁸⁵ „Türkiye Ansiklopedisi“, cilt VI, s. 181.

⁸⁶ «Նոր կեանք», 25. I. 1963:

⁸⁷ „Yön“, 16. IX. 1966, s. 3.

⁸⁸ 1950 թ. 1119, 1951 թ. 1162, 1952 թ. 1417 հեկտար („Vatan“, Muş ilâvesti, I.VII.1953, s. 6):

երկրագործությամբ են զբաղվում: Դաշտն օգտագործվում է պարզապես որպես արոտավայր: Այնինչ նախկինում այստեղ զբաղվում էին այգեգործությամբ, գինեգործությամբ, ձկնորսությամբ: Մշակվում էին բրինձ, ճակնդեղ, բարձրորակ ծխախոտ⁸⁰: Նախկինում մի շարք գյուղատնտեսական մթերքներ՝ մեղր, մեղրամամ, գխտոր, խեժ, շրեշ արտածող Մուշը այսօր արտածում է միայն յուղ⁸⁰:

1940-ական թվականների վերջերին «Ուլուս» թերթի թղթակից Քերիմ Օմեր Չաղլարը գրում է. «Վերջերս այցելելով էլազիզ, ցավով տեսանք, թե ինչպես մարդկային կյանքի տևողության մեկ շորրորդից բիշ ավելի ժամանակի ընթացքում Ուլու-Օվայի⁸¹ մի ընդարձակ մասը խոպանացել էր⁸²: Իսկ 1960-ական թվականների տվյալներով, էլազիզում (Խարբերդ) մշակելի հողերը կազմում էին գյուղապատկան տարածության 84,1%-ը, որի 50,4%-ն օգտագործվում էր որպես արոտավայր⁸³:

Կարսում նույնպես, տեղի «Կարս» թերթի վկայությամբ, թեև կային ընդարձակ արոտավայրեր, բայց արոտավայրի վերածվեցին նաև առաջնորդում մշակովի լայնարձակ տարածությունները⁸⁴:

Կարծում ենք, բերված փաստերը բավարար են հզրակացնելու, որ երկրագործությունն անկում էր ապրում գրեթե բոլոր արևելյան վիլայեթներում: Նույնիսկ այն շրջաններում, որտեղ երկրագործության վիճակը թվում էր, թե արագ կերպով բարելավվել էր, դեռևս խիստ շոշափելի էին ճառաջին համաշխարհային պատերազմի պատճառած ավերումների հետքերը: Օրինակ, Արաբկիրից (Մալաթիայի վիլայեթ), ուր արհեստները կորցրել էին իրենց երբեմնի նշանակությունը, միրգ, արմտիք, գինի այլևս չէր արտահանվում⁸⁵: Ուլաշում (Սվազի վիլայեթ) 1914—1918 թթ. հայերի հեռանալուց հետո դատարկ մնացած բնակարաններն ու հողերը տրվեցին նույն թվերին արևելյան վիլայեթներին

⁸⁰ Նույն տեղում:

⁸⁰ „Türkiye Ansiklopedisi“, cilt IV, s. 254.

⁸¹ Խարբերդի դաշտը հիմնականում բաղկացած է երկու դաշտից. Ուլու-Օվայից և Քուլ-Օվայից, որոնցից Ուլու-Օվան ավելի ընդարձակ է ու ջրաբերի: Երկու դաշտում էլ հիմնական բնակչությունը կազմում էին հայերը (Խարբերդը և անոր ոսկեղէն դաշտը, էջ 27 և 295):

⁸² „Ulus“, 13. VII. 1949.

⁸³ „Cumhuriyet“, 30. IX. 1969.

⁸⁴ Д. С. Завриев, К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тбилиси, 1947, стр. 185.

⁸⁵ „Türkiye Ansiklopedisi“, cilt I, s. 239.

եկած գաղթական թուրքերին, որոնք սկսեցին դբաղվել երկրագործությամբ: Երկրագործության համար անբարենպաստ կլիմայի պատճառով նրանք դբաղվեցին միայն ցորենի և դարու ցանքսով, սակայն չկարողացան նյութապես բարելավել իրենց վիճակը և բավարարվեցին մշակելով տարածության հազիվ մեկ տասներորդը, և մոտավորապես 4—5 հազար հեկտար տարածությունը տարիններով անմշակ մնաց⁹⁶:

Հետպատերազմյան Թուրքիայի գյուղատնտեսությունը զարգացավ ավելի շատ էքստենսիվ ձևով՝ ցանքատարածությունները ավելացնելու միջոցով⁹⁷: Սակայն բերքատվության տեսակետից Թուրքիայի գյուղատնտեսությունն ամբողջությամբ վերցրած մինչև օրս էլ դեռ չի հասել ցանքատարածությունների հիմնական մասը զբաղեցնող մի շարք գյուղատնտեսական կուլտուրաների, ինչպես ցորենի, դարու, եգիպտացորենի, հաճարի բերքատվության նախկին մակարդակին⁹⁸: Անկասկած, բերքատվությունն ավելի շատ նվազեց արևելյան վիլայիթներում⁹⁹: Դա մեծ անհանգստություն պատճառեց թուրք պետական-քաղաքական գործիչներին, տնտեսագետներին, գյուղատնտեսներին, սոցիոլոգներին և լրագրողներին: Ըստ «Դիարբեքիի վիլայիթի տարեգրքի», Դիարբեքիում շնայած կան հացահատիկների մշակման համար ձեռնառու, արժեքավոր հողեր, սակայն դարերից ի վեր նախնական միջոցներով մշակվող այդ հողերում չի կիրառվում երկրագործության առավել արդյունավետ համակարգերից մեկը ու ամեն տարի ֆոսֆորի և պոտաշի նման սնուցիչ նյութեր չեն վերադարձվում հողին: Օրեցօր նվազում է հողի սնուցիչ ուժը¹⁰⁰: Իսկ թուրք հայտնի վիպագիր և լրագրող Յաշար Քեմա-

⁹⁶ Նույն տեղում, հատ. 6, էջ 115: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում առաջացած «ցորենի ճգնաժամին» վերջ տալու նպատակով ինչպես մի շարք վայրերում, այնպես էլ Ուլաշի անմշակ մնացած հողերում 1945 թ. ապրիլին հիմնվեց պետական խոշոր տնտեսություն:

⁹⁷ Халюк Джилов, №24. աշխ., էջ 108:

⁹⁸ „Milliyet“, 20. IX. 1970.

⁹⁹ Արևելյան վիլայիթների վերաբերյալ երկար տարիների միջին բերքատվությունը արտահայտող ցուցանիշներ չկան, իսկ մզմոմղի դոմթախտոմզմզ մզղվմոտ զվղոտոյալ ցուցանիշները խառնակ են, քանի որ երկրագործությունը Թուրքիայում համարյա ամբողջովին կախված է կլիմայական պայմաններից, առաջին հերթին տեղումներից, և բերքատվությունը մեծ տատանումներ է ունենում: Օրինակ, Դիարբեքիի վիլայիթում 1928 թ. (տեղումներ 294 մմ)՝ հեկտարից ստացվել էր 290 կգ ցորեն, իսկ 1936 թ. (տեղումներ 435 մմ)՝ ավելի քան եռապատիկը՝ 930 կգ (Халюк Джилов, №24. աշխ., էջ 107—108):

¹⁰⁰ Basri Konyar, №24. աշխ., էջ 124:

լը, որը բազմիցս շրջագայել է արևելյան վիլայեթներում, գրում է. «Արևելքում հողը բերքատուլության տեսակետից փշացել է քոչվորական շահագործման հետևանքով: Հողը գուրգուրանք է պահանջում, աղը և ջուր»¹⁰¹: Անկասկած, այդ բոլորը սերտորեն առնչություն ունեն շրջանում տիրող ագրարային հարաբերությունների հետ, մասամբ էլ հետևյալնք են այն բանի, որ երկրագործության մեջ մեծ փորձ ունեցող հայերին և այլ քրիստոնյաների փոխարինեցին ավելի անփորձ, զարգացման ավելի ցածր մակարդակում գտնվող տարրեր, որոնք անզոր էին մշակելու այդ շրջանների բնակչիմայական պայմաններով թելադրված գյուղատնտեսական կուլտուրաներ:

Փաստերը ցույց են տալիս, որ այնտեղ, որտեղ տեղի է ունեցել այդ փոխարինումը, նորեկները ոչ միայն չեն պահպանել այն, ինչ գտել են պատրաստի վիճակում, այլ ժամանակի ընթացքում «վերափոխել են», հարմարեցրել իրենց ճաշակին, սովորություններին, զարգացման աստիճանին: Դա հաճախ աղետալի հետևանքներ է ունեցել եկվորի համար: Թեև մեզ հայտնի փաստերը անմիջականորեն չեն վերաբերում արևելյան վիլայեթներին, այնուամենայնիվ ցցուն վկայություններ են արմատական բնակչությանը բնօրրանից բռնի հեռացնելու և նորերով փոխարինելու տխուր հետևանքների մասին:

Այսպես, օրինակ, պրոֆ. Մումթազ Թուրհանը Կարսում Զլավուզի գյուղական ինստիտուտն այցելելուց հետո քաղաք վերադառնալիս, երբ ավտոբուսը կանգնում է ճանապարհի վրա գտնվող գյուղերից մեկում՝ երկհարկանի խարխված շենքից քիչ այն կողմ, ինստիտուտի ուսուցիչներին՝ պրոֆեսորի նախկին ուսանողներից Ռեզա Կարդեշը, որը նստել է նրա կողքին, դիմելով նրան, ասում է. «Ուսուցիչ, պատմում են, որ այս գյուղի բոլոր տները ձեր տեսած այս շենքի նման երկհարկանի էին, խնամքով կրածնիված: Կարսը մեզ անցնելուց հետո, այստեղ բնակեցրել են զանազան տեղերից եկած գաղթականների, որոնք սովոր են եղել բնակվել միհարկանի և պարզ շենքերում: Հիմա, ինչպես տեսնում եք, երկհարկանի շենքերից մնացել է միայն մեկը, այն էլ օգտագործվում է որպես զավառապետի պաշտոնատուն և ժանդարմերիայի պահականոց»: «Մեր հետագա ուսումնասիրությունների ժամանակ,—շարունակում է Մումթազ Թուրհանը,—վիլայեթի սահմաններում հանդիպեցինք նաև մի քանի այլ դեպքերի»¹⁰²:

¹⁰¹ „Cumhuriyet“, 4.II.1962.

¹⁰² Mümtaz Turhan, Garplılaşmanın neresindeyiz?, İstanbul, 1961, s. 75.

Երբեմնի ամենաբարեկարգ շրջաններից մեկը հանդիսացող և ամենարևոտի խաղողն աճեցնող Քափը-Դաղի թերակղզու և Բանդրմալի ծովամերձ գյուղերում¹⁰³ «նախքան Թուրքիա գալը լեռնային սովորական հյուղականներում մի քանի այծով բնակվելու սովոր գաղթականները երկհարկանի առանձնատների երկրորդ հարկը հատկացրել են անասուններին: Թողել են, որ անասունները կրծեն խաղողի այգիները, և ապա մնացածը արմատից հանելով, օգտագործել են որպես վառելանյութ: Հարկ չկա ավելացնելու, որ նույն վախճանն են ունեցել նաև ձիթատանները»¹⁰⁴:

Եվրոպական Թուրքիայի լեռնային գոտում գտնվող Ենիչե գյուղի թուրք բնակիչները «Աքլամ» թերթի թղթակցին պատմել են, որ գյուղը նախկինում եղել է այգեգործության և գինեգործության կարևոր կենտրոն: Գինին արտահանվել է Եվրոպա և Պոլիս: Գյուղը ունեցել է անտառ, որից փայտ ստանալով՝ նախկին բնակիչները պատրաստել են գյուղատնտեսական գործիքներ և վաճառել: Սակայն իրենք կոտրատել են ծառերը, իսկ այծերը կրծել են նորարձակ ընձյուղները, ոչնչացել է անտառը, քայքայվել այգեգործությունը: Եվ հիմա, ուր մի ժամանակ քրիստոնյաները բարեկեցիկ կյանք են վարել, իրենք դժվարությամբ են հայթայթում ապրուստի միջոցներ¹⁰⁵, Հաջնում հայերի օրոք խաղողն ու գինին առատ են եղել, սակայն նոր բնակիչները, գինի պատրաստելը մեղք համարելով, ոչնչացրել են այգիները: Անգործության են մատնվել հայերից մնացած գինու կարասները: Քանգվել է նաև Հունու գետի վրա գտնվող ամբարտակը, որը գոյություն ուներ հայերի օրոք, և երբի շնորհիվ ջուրի նեղություն չէր քաշվեր»¹⁰⁶:

Սույն հոդվածի նպատակը չէ՝ տալ արևելյան վիլայեթների գյուղատնտեսության ամբողջական պատկերը: Սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ այդ վիլայեթների անասնապահության ծավալուն բնույթը կապված է տնտեսության անկման՝ արդյունաբերության ու մանուֆակտուրայի համարյա անհետացման, երկրագործության տեսակարար կշռի խիստ նվազման հետ: Հետևաբար, սխալ է այն կարծիքը, թե իբր արևելյան վիլայեթները ունեն զարգացած ու «մասնագիտացված» անասնապահություն:

¹⁰³ Քափը-Դաղի թերակղզին և Բանդրմալ գտնվում են Մարմարայի ծովի հարավում:

¹⁰⁴ Mûmtaz Turhan, նշվ. աշխ., էջ 75—76:

¹⁰⁵ «Akşam», 26 II. 1970.

¹⁰⁶ «Նոր կեսնք», 25. I. 1963:

Ամփոփելով վերլուծված փաստական նյութը, կարելի է եզրակացնել, որ Թուրքիայի արևելյան վիլայեթներում ավելի անմխիթար վիճակում էին գտնվում նախկինում առավելապես հայաբնակ շրջանները: Զհերքելով արևելյան վիլայեթների դեմոգրաֆիական և տնտեսական վիճակի վրա նաև տարբեր գործոնների ազդեցությունը, մեր ուսումնասիրության արդյունքները հաստատում են, որ արևելյան վիլայեթներում հետպատերազմյան ժամանակամիջոցում առաջացած փոփոխություններն ու տնտեսական անկումը հիմնականում կապվում են առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում բնակչության ազգային կազմում կատարված «փոփոխությունների» հետ: Եվ սխալ է արևելյան վիլայեթների հետամնացությունը բացատրել ընդհանրապես «պատերազմի պատճառած ավերներով», տեսակետ, որը որդեգրել է Թուրք պատմագրությունը թաքցնելու համար երիտթուրքերի կատարած դարիս առաջին մեծագույն ոճրագործությունն ու քեմալականների ձեռնարկած հալածանքը հայերի, ասորիների և քրդերի նկատմամբ: Անժխտելի է, որ հայերի և այլ ժողովուրդների զանգվածային բնաջնջման ու բռնազաղթի հետևանքով է՛լ ավելի խորացան արևելյան վիլայեթների և Թուրքիայի մնացյալ մասի միջև գոյություն ունեցող դեմոգրաֆիական ու տնտեսական անհամաչափությունները:

А. А. ГАЛСТЯН

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ДЕМОГРАФИИ И ЭКОНОМИКИ ВОСТОЧНЫХ ВИЛАЙЕТОВ ТУРЦИИ (ПОСЛЕ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ)

Р е з ю м е

В статье анализируются изменения в демографии и экономике восточных вилайетов Турции после первой мировой войны.

Исследование фактов показывает, что восточные вилайеты Турции в демографическом и экономическом отношении значительно отстали от довоенного уровня развития, что рассматривается турецкими историками лишь как результат последствий первой мировой войны. Между тем, приведенный в статье фактический материал свидетельствует, что послевоенное отставание восточных вилайетов связано с поголовным выселением и физическим уничтожением коренного армянского и вообще христианского населения.

Е. К. САРКИСЯН

ТУРЕЦКАЯ АГРЕССИЯ В АРМЕНИИ ОСЕНЬЮ 1920 ГОДА И ПОЗИЦИЯ СОВЕТСКОЙ РОССИИ

Вопрос турецкой агрессии в Армении и позиции Советской России в нашей исторической литературе специально не изучен, хотя об этом говорится в общих чертах в работах, освещающих национальную войну в Турции в 1918—1922 гг., советско-турецкие отношения, установление Советской власти в Армении др.

Мы ставим перед собой задачу, насколько это возможно в рамках данной статьи, раскрыть агрессивную политику турецких националистов в отношении Закавказья, антисоветскую направленность турецкой агрессии и роль дипломатической миссии РСФСР в Армении в 1920 г., стремление советской делегации на московских переговорах летом 1920 г. справедливо решить территориальные вопросы между Турцией и Закавказскими республиками.

* * *

В ходе национально-освободительной войны турецкого народа в 1918—1923 гг. его руководящая верхушка, большая часть которой состояла из бывших иттихатистов, продолжая агрессивную политику последних в отношении Закавказья, придала захватнический характер этой войне на Восточном фронте.

Экспансионистская политика турецких националистов в отношении Армении и всего Закавказья выявилась еще в начале национальной войны на Эрзерумском (с 23 июля по 6 августа) и на Сивасском (с 4 по 12 сентября) 1919 г. конгрессах. В документах этих конгрессов в качестве важного принципа выдвигалось требование лишить армян права на территорию Западной Армении и вести решительную борьбу против всякой попытки создания независимой Армении в Закавказье, т. е. в Восточной Армении. «Как следует из решений Сивасского и Эрзерумского конгрессов,—говорил Мустафа Кемаль,—нация не уступит ни пяди земли Армении»¹.

¹ М. Кемаль. Путь новой Турции, т. 2, стр. 120.

В начале 1920 г. на заседании представительного комитета было принято решение: «На Восточном фронте провести официальную или неофициальную мобилизацию и начать концентрацию войск для ликвидации с тыла Кавказской преграды»². Об этом решении М. Кемаль 6 февраля 1920 г. писал командующему Восточным фронтом Кязиму Карабекиру. Последний весной того же года закончил мобилизацию войск и их перевооружение для нападения на Армению. В середине апреля Кязим Карабек-паша телеграфировал анкарским руководящим кругам: «В ближайшие дни я должен известить о том, что Армения стерта с карты мира»³.

По признанию Али Фуад Джебесоя, войска Карабек-пашы были готовы напасть на Армению еще в мае 1920 г.⁴

Но анкарское правительство все еще надеялось вступить в сговор с империалистами стран Антанты и поэтому на некоторое время отложило нападение на Армению. «До тех пор, пока принятые в отношении нас на мировой конференции решения окончательно не будут выяснены,—телеграфировал М. Кемаль 30 мая 1920 г. Кязиму Карабекиру,—нам не выгодно, исходя из внутренней и внешней обстановки, лишаться возможности соглашения с союзными державами... Нападение на Армению послужит поводом для объявления войны союзными державами и Америкой...»⁵.

Правительство Анкары не могло предпринять поход на Армению и без выяснения позиции Советской России. С этой целью и с целью установления дипломатических отношений с правительством РСФСР М. Кемаль послал в конце октября 1919 г. бывшего младотурецкого генерала, командующего турецкими войсками во время похода в Закавказье в 1918 г. Халил-пашу в Москву.

В период усиленной подготовки войск Карабек-пашы против Закавказья, Халил-паша, беседовавший с Чичериным и Караханом 4 июня 1920 г., писал из Москвы Мустафе Кемалю: «Нас поставили в известность, что необходимо отказаться от операций против Армении»⁶.

Кемаль-паша в своем ответе от 20 июня 1920 г. на ноту Чичерина от 3 июня подчеркнул, что «его правительство принимает посредничество Российской Советской республики и откладывает военные операции в районах Карса, Ардагана и Батума»⁷. Об этой ноте М. Кемаль профессор Института международных отношений

² Там же, т. 3, стр. 313.

³ См. С. Kutay. Karabekir Ermenistanı nasıl yok etti? İstanbul, 1956, s. 36.

⁴ А. F. Cebesoy. Milli Mücadele Hatıraları, İstanbul, 1960, s. 481—482.

⁵ См. там же, с. 482.

⁶ См. К. Karabekir. İstiklal Harbimiz, İstanbul, 1960, s. 799—800.

⁷ См. „Die Welt des Islam“ Vol. XVI, Berlin, 1934, s. 23—28.

в Женеве, специалист по проблеме «Советский Союз и страны Востока» Гариш Капур пишет: «Нота была написана в довольно резком тоне и намекала на вмешательство в этот вопрос Советского правительства. Кемаль-паша подтвердил, что его правительство по получении Советской ноты отложило военные операции в районах Карса, Ардагана и Батума»⁸.

О том, что Советское правительство противостояло агрессивным планам турецких националистов в отношении Закавказья, свидетельствует также доклад Чичерина на заседании ВЦИК 17 июня 1920 г. Говоря об установлении дружественных отношений с кемалистской Турцией, Чичерин подчеркивал: «Но мы только на тех условиях вступаем с Турцией в дружественные отношения, чтобы между Турцией и соседними народами, как армянским, было установлено взаимное разграничение, прекратилась взаимная резня»⁹.

После получения ответа Чичерина правители новой Турции вынуждены были отложить военные действия против Армении, уже назначенные ими на 25 июня. «Правительство Советской России, — говорил в своей речи Кемаль на заседании ВНСТ, — было против нашего наступления на Армению...»¹⁰.

В телеграмме Г. В. Чичерина от 19 июля 1920 г. министру иностранных дел дашнакского правительства прямо сказано, что «исключительно под влиянием миролюбивых стремлений Советского правительства турецкие националисты приостановили начатую ими мобилизацию, имевшую целью нанесение нового удара армянскому народу»¹¹.

Анкарское правительство надеялось осуществить свои захватнические планы в отношении Армении и Закавказья мирным путем. В своей ноте от 8 июля 1920 г. дашнакскому правительству оно подчеркивало, что в основе взаимоотношений между двумя правительствами лежат Брест-Литовский и Батумский договоры¹². Об этом же говорилось и в ответе Бекир Сами-бея на письмо Г. В. Чичерина от 3 июня 1920 г.¹³.

Это означало, что еще до начала московских переговоров анкарское правительство давало понять правительствам Советской России и дашнакской Армении, что по территориальным вопросам

⁸ Н. Kapur, *Soviet Russia and Asia, 1917—1927*, Geneva, 1966, p. 96.

⁹ «Документы внешней политики СССР», т. II, стр. 658.

¹⁰ „Atatürk ün Söylev Ve Demeçleri“ с. I. Т. В. М. ve С. Н. Р. Kurultay-larında (1919—1938), İstanbul, 1945, s. 65.

¹¹ «Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении (сб. документов), Ереван, 1957, док. № 262.

¹² См. ЦГИА Арм. ССР, ф. 200, д. 402, л. 18.

¹³ См. «Документы внешней политики СССР», т. II, № 372.

оно будет руководствоваться установками Брестского и Батумского договоров. Между тем известно, что эти договоры не имели юридической силы, так как Брестский договор по части Турции был аннулирован правительством РСФСР еще 20 сентября 1918 г., а Батумский договор не был ратифицирован ни меджлисом Османской империи, ни парламентом Армянской республики. Однако анкарское правительство, преследуя свои захватнические цели в отношении Закавказья, цепляясь за мертвые пункты указанных договоров, хотело и во время московских переговоров (проходивших в июле-августе 1920 г. между делегациями кемалистской Турции и РСФСР) узаконить свои территориальные претензии.

Система цеховых монополий нашла свое яркое отражение в законодательстве и в отдельных постановлениях XVII в., касающихся ремесленного производства и связанной с ним торговли. В основном цеховая монополия имела двоякий характер. С одной стороны, она выражалась в исключительном праве данного цеха производить и сбывать определенный вид изделий, а с другой — в преимущественном праве пользоваться необходимым для данного производства сырьем. Примером первого рода может служить указ 1018 г. (1609), изданный по жалобе цеха уксусников и адресованный кади Стамбула. Указ этот гласит: «Моему счастливому двору прислали заявление о том, что цех уксусников Стамбула обратился в меджлис-и-шерийе (с жалобой на то, что) издавна производство уксуса было исключительной специальностью вышеупомянутого цеха и никто другой не мог заниматься уксусничеством. Вышеупомянутый (цех) торгуя, выполнял существующие военные и другие повинности (*ordu-yı hımtayın ve sair tekâlifı*). Несмотря на это, некоторые лица из цехов карамельщиков, бакалейщиков, изготавливающих халву..., в противоречие с существующими правилами, также производят и продают уксус. Они уклонялись от выполнения установленного моего военного и других повинностей под тем предлогом, что мы-де не уксусники, не оказывают помощи и наносят ущерб (группе) уксусников. Ввиду того, что они (уксусники) заявили просьбу о выдаче им моего высочайшего указа (*hüküm — i şerif*) относительно того, чтобы военные и другие повинности взимались и с тех, кто производит уксус, таким образом (т. е. без права на то) или же, чтобы производство и торговлю уксусом, являющимися, по существующим исстари правилам, исключительной специальностью уксусников, закрепить за уксусниками и запретить другим производителям, то приказываю: по получении сего, ты должен незамедлительно позаботиться об этом. Рассмотря, если (действительно) в упомянутом городе производ-

ство и торговля уксусом исстари является исключительной специальностью цеха уксусников, а карамельщики, бакалейщики и изготовляющие халву в противоречии с существующими правилами производят и торгуют уксусом, то прикажи всем указанным цехам принять участие в выполнении военных и других повинностей и не позволяй уклоняться от них под разными предложениями. Так что, если они, упорствуя, не окажут помощи и содействия в выполнении военных и других повинностей, то отныне ты не позволяй никому из других (подразумевается — цехов) производить уксус вопреки обычаю, запрети и изгони. Запиши и представь имена и приметы противодействующих моему приказу, чтобы (в отношении их) действовать согласно моему приказу, который будет издан после 1018 г. (1609)»⁶⁰.

Таким образом, этот указ показывает, что как производство, так и продажа отдельных товаров, составляли исключительное право соответствующих цехов: цех уксусников, разумеется, не является исключением. В другом указе от 1115 г. (1703) говорится: «Находящиеся в городе Стамбуле пекари чистого и простого хлеба явились к моему высокому двору (и заявили), что находящиеся в вышеназванном городе пироженики, которые исстари делали пироги, холка, а иногда сухари, и вовсе не пекли хлеба (теперь) в противоречии с прошлым, выпекая двойные и четверные хлеба, стали причиной закрытия хлебопекарни и недостатка прибылей в них. Согласно имеющемуся у них хюджети-и-шерийе пироженикам запрещалось печение хлеба и разрешалось, в согласии с прошлым, выпекать только пироги и иногда сухари. На основании этого был издан мой высочайший указ..., который устанавливал запрет и законный порядок. (Однако) они все еще не удовлетворяясь (этим), просят моего султанского указа о запрещении их (пирожеников) насилий, в соответствии с изложенным хюджет-и-шерийе и моим (прежним высочайшим указом). Предписывается, чтобы ты, вышеупомянутый везир и вышеупомянутый мевлана, установили законный порядок...»⁶¹.

Экономическая борьба между цехами, как уже указывалось, не ограничивалась сферой производства и сбыта готовых изделий. Она происходила также и в области приобретения сырья, причем и здесь господствовала (в некоторых отраслях производства, во всяком случае), та же самая система монополий. Ярким примером для характеристики последней может служить султанский указ 1013 г. хиджры (1605 г.), адресованный кади Стамбула. Он гласит: «Представитель цеха свечников-неверных, явившись, заявил, что с древних времен свечье и коровье сало, добывавшееся в бойнях Едикюле, сдавалось им, а они, делая свечи, про-

⁶⁰ A. Refik, Hic. on birinci asırda İstanbul hayatı, ук. 86, стр. 45

⁶¹ A. Refik, Hic. on ikinci asırda İstanbul hayatı, ук. 56, стр. 37

давали их по установленной таксе янычарам моей Высокой Порты и другим (лицам). Так как никто извне не покупал сала и не делал свеч, то в Стамбуле никогда не бывало недостатка в свечах. Затем известил о возникшей большой нужде в свечах, сдаваемых различными путями бойням и городу. Они просят утверждения в настоящее время выданного им в царствование моего покойного отца султана Мехмед Хакана, высочайшего указа о том, чтобы сало для свеч, добываемое, как в бойнях, так и вне их, в соответствии с вышеизложенным способом, сдавалось бы свечникам-христианам и не давалось бы никому извне, а сало, находимое не у свечников, отбиралось бы от них и они были бы подвергнуты наказанию. Ввиду этого приказываю: по получении сего рассмотри, если при моем вышеупомянутом покойном отце действительно был выдан относительно изложенного способа высочайший указ, то согласно этому и действуй. 1013»⁶².

Надо отметить, что как бы зорко не охранялись цеховые привилегии и монополии, как бы жестоко не преследовались их нарушители, все же они постоянно нарушались. Особенно сильных противников против себя система монополий нашла в лице янычар и войск других видов армии, которые, не удовлетворившись государственным содержанием, с конца XVI века массовым образом начали заниматься ремеслами и торговлей. В свою очередь, ремесленники и торговцы, чтобы не быть подведомственными городским властям, начали записываться в янычары. По словам Кочибея Гемюрджинского, «ко всякой корпорации примешались неизвестного закона и религии горожане, турки, цыгане, персиане, лазы, бродяги, погонщики мулов, верблюжьих вожак, дятли, разбойники, мошенники и другие разного рода люди»⁶³.

Выше было отмечено, что государственные органы всячески поддерживали цеховые организации в их привилегиях и монополиях. Во всех тех случаях, когда один цех вторгался в сферу производства или торговли другого цеха, и когда они не могли силой и авторитетом цеховых учреждений урегулировать широко и мирно происходящую на этой почве борьбу, то они всегда обращались к государственным органам для восстановления нарушенных прав. Было бы, конечно, наивным думать, что государственная власть в случае конфликтов между цехами выступала в роли беспристрастного судьи, восстанавливавшего поправленные права и устанавливавшего истину и справедливость. На самом деле, если цеха имели возможность оказания давления на государственную власть, а последняя была вынуждена подчиниться им в своих мероприятиях, то

⁶² А. Refik, Нис. on birinci asırda İstanbul hayatı, ук. 58, стр. 28—29.

⁶³ В. Д. Смирнов. Кочибей Гемюрджинский и другие. Османские писатели XVII в. о причинах упадка Турции, СПб., 1878, стр. 135—136.

здесь основное значение имели вовсе не древние традиции, на которые так часто в султанских указах ссылались и которые восставали в качестве законных норм справедливости и истины, а более реальные и экономически обоснованные причины, среди которых наиболее важное значение имела зависимость государственной власти от ремесленного производства, изделия которых она получала в форме той или иной повинности.

Все торгово-ремесленные цеха Стамбула обязаны были выполнять по отношению к государству целый ряд повинностей и выплачивать разнообразные подати как в натуральной, так и в денежной форме. Без преувеличения можно утверждать, что каждый вид товара, а следовательно, и каждый вид ремесла и торговли подвергались обложению особым налогом⁶⁴.

Одной из наиболее тяжелых форм повинностей было выделение ремесленников на нужды действующей армии. Турецкие правящие круги этим стремились, с одной стороны, обеспечить снабжение армии необходимыми товарами, а с другой — не предоставлять войскам повода заниматься торговлей или ремеслом.

В случае необходимости ремесленники цеха выставляли огромное количество лиц для обживающего лагеря. По преувеличенными данным Эвлии Челеби, кожевники Едикюле выставляли 5000 человек⁶⁵. Помимо этого, торгово-ремесленные цеха выполняли еще целый ряд других повинностей. О некоторых из них можно составить представление по указу 1018 г. (1619), в котором изложена жалоба ремесленников Скутари о незаконном взимании с них ряда повинностей⁶⁶.

Не менее обременительной повинностью для ремесленников были те подарки, которые они обязаны были делать султану во время различных торжеств, о которых так часто свидетельствуют источники.

Таким образом, защита со стороны государства, монопольные права и привилегии слишком дорого обходились цеховым организациям. Ведь цех не был неким отвлеченным понятием, а являлся организацией живых производителей, для которых каждая форма подати, каждая повинность означала степень эксплуатации со стороны класса феодалов Турции. Всякая монополия или привилегия какого-либо цеха, поддерживаемая и охраняемая государственными органами, имела своей обратной стороной обязанность или повинность данного цеха по отношению к государственной власти.

⁶⁴ О налогах, взимаемых от торговли и городского населения. См. Эвлия Челеби, т. I, стр. 391. O. L. Barkan, XV ve XVI inçî asırlarda osmanlı İmparatorlugunda zirâî ekonominin hukukî ve mâlî esasları, kanunlar.

⁶⁵ См. Эвлия Челеби, там же.

⁶⁶ A. Refik, Hicrî on birinci asırda İstanbul hayatı, ук. 68, стр. 35—36.

Вмешательство государственных органов в сферу производства и торговли преследовало не только фискальные цели, но и стремление подчинить все производство военной бюрократии. Была разработана целая система регламентаций, включавших в себе принудительную таксацию цен; контроль над качеством производимых изделий ремесла, строгий надзор за правильностью мер и весов; регулирование торговой прибыли; запрещение заниматься в определенных частях города ремеслами, распространяющими грязь, зловоние и т. д. О системе государственной регламентации торгово-ремесленной жизни в Стамбуле дает яркое представление один законодательный документ, по одним данным, относящийся к эпохе Сулеймана Кануни, а по другим — кодифицированный при Ахмеди I. Текст документа переведен на немецкий язык И. Хаммером⁶⁷.

Это государственное постановление до мелочей регламентировало условия торговли и производства целого ряда отраслей ремесленного производства, хотя и не охватывало все стороны производства и торговли. В этом постановлении отсутствует такая важная сторона государственной регламентации, как, например, установление определенных форм и размеров ремесленных изделий, именно той стороны, которая была особенно стеснительной для развития ремесленного производства.

Другой формой регламентации, также не нашедшей своего отражения в указанном постановлении, было принудительное распространение товаров среди торговцев и ремесленников. Для каждого района Стамбула была установлена определенная часть из поступивших в город товаров. Независимо от того, нуждались или нет в нем в этой части города, торговцы и ремесленники обязаны были его брать. Об этом свидетельствует следующий султанский указ от 1018 г. (1609 г.), который гласит: Находящиеся в городе Стамбуле бакалейщики заявили моему счастливому двору следующее: привозимое в упомянутый город продовольствие издревле делилось на пять частей, из которых посредством базарбаши 3 части распределялись среди бакалейщиков Стамбула, а 2 части — среди бакалейщиков Галаты, Скутари и Эюба. Когда бывало необходимо среди бакалеев распределить предметы из казенных продуктов, не имевшие сбыта, то бакалеи Стамбула, по старому обычаю, без колебания, брали приходящую на их долю 3 части и не оказывали никакого сопротивления. Но большинство бакалеев Галаты, Скутари и Эюба не брали относящиеся к ним две части. Когда стало известно об их отказе и противодействии, то был выдан мой высочайший указ о том, чтобы они также, согласно

⁶⁷ J. Hammer, Des osmanischen Reiches Staatsverfassung und Staatsverwaltung, Wien 1812, стр. 154—155.

обычаю, распределяли среди своих относящиеся к ним части и чтобы им не было позволено уклоняться, отказываться. Приказываю, по получении сего, согласно моему священной ферману, позаботиться о том, чтобы все казенные продукты были разложены на всех бакалеев для распределения среди них, чтобы незамедлительно, согласно старому обычаю (правилу), из пяти частей, после того, как 3 части возьмут стамбульские бакалеи, 2 части также были распределены среди бакалеев Галаты, Скутари и Эюба. Не позволяй никому брать меньше и отказываться»⁶⁸.

Этот указ показывает, что государство в распределении невыгодных для торговцев товаров, как и в большей части своих мероприятий, применяло открытое принуждение, для осуществления, которого имелся действенный аппарат — базарные эмины, которые нередко строго наказывали нарушителей государственного порядка. Существовали разные формы наказания, преследовавшие, в конечном итоге, одну-единственную цель — внеэкономическим принуждением заставить ремесленников Стамбула подчиниться системе цеховых монополий и государственной регламентации, потому что все расширяющийся рынок, рост производительных сил вынуждали ремесленников, торговцев выходить за ее пределы, постепенно ее нарушать.

Государственная регламентация имела пагубные последствия для развития ремесленного производства. В своей экономической политике османское государство руководствовалось прежде всего потребностями и запросами феодального класса и в целях удовлетворения его нужд не думало о перспективе и не только не устраняло препятствий, стоящих на пути развития производства, как это случилось в это время в Европе, но самым варварским способом задерживало развитие производительных сил.

Государственная регламентация, с одной стороны, и система капитуляции, в результате которой турецкий рынок стал доступен торговому капиталу европейских государств — с другой, привели турецкое ремесленное производство к резкому упадку.

⁶⁸ A. Refik, *Hicri on birinci asırda İstanbul hayatı*, ук. 74, стр. 38—39.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Ա մ փ ո փ ո մ

Հոգւածում առաջին անգամ արեւելագիտական գրականության մեջ հատուկ ուշադրանք ստացան եւս հետազոտողները Կ. Պոլսի արհեստագործական արտադրութիւնը XVII դ. առաջին կեսում եւ այնտեղ գոյութիւն ունեցող համաքարական կազմակերպութիւնները: Աշխատութեան հիմքում ընկած են եմքրուպցի միսիոներներ, առեւտրականներ, դիվանագիտական գործակալների նոթագրութիւնները, դիտողութիւնները Օսմանյան կայսրութեան ներքին կյանքի մասին ընդհանրապէս, ու Կ. Պոլսի մասին մասնավորապէս: Հատուկ ուշադրութիւն է դարձւած XVII դ. թուրք ճանապարհորդ եւ հասարակական գործիչ էմլիա Զելբու «Սեյահեթնամե» («Ճանապարհորդութեան գիրք») աշխատութեան տրււած լայն շարունակութիւնը: Աշխատութիւնը գիտական արժեք է ստանում առանձնապէս Ահմեդ Ռեֆիկի կողմից հրատարակւած XVII դ. պետական պաշտոնական վավերագրերի (սուլթանական հրամանագրերի) լայն ընդգրկումով:

Աշխատութեան մեջ շոշափւած են հետեւյալ առանցքային հարցերը՝ արհեստավորական արտադրութեան ընդհանուր վիճակը, Կ. Պոլսի արհեստագործների ազգային կազմը, արհեստագործական արտադրութեան հասարակական-տնտեսական կառուցւածքը, արհեստավորների տեխնիկական զարգացման մակարդակը եւ արհեստագործական արտադրութեան մեջ աշխատանքի բաժանման խնդիրը եւ այլն: Այնուհետեւ մանրամասն տրւած են արհեստների ու առեւտրի համաքարային (համաարհեստավորական) կազմակերպութիւնների պաշտոնական ղեկավար անձանց բնութագրման, համարհեստագործական կազմակերպութիւնների արտոնութիւնների ու մեծաշնորհների, պետական ռեզլամենտի հետ կապւած բազմաթիւ խնդիրներ ու հարակից այլ հարցեր:

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
СООБЩЕНИЯ

Ժ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՔՅԱԹԻՐ ՉԵԼՆԲԻԻ «ՅԵՋԼԵՔԵ»-Ն ԵՐԵՄԻԱ ՔՅՈՄՈՒՐՃՅԱՆԻ
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՈՏ ԴՃ (400) ՏԱՐԻՈՅ ՕՍՄԱՆՑՈՑ
ԹԱԳԱՒՈՐԱՑ»-Ի ԱՂԲՅՈՒՐ

Երեմիա Քյոմուրճյանը (1637—1695) XVII դ. հայ մշակույթի երախտավորներից է՝ Մեզ հասած նրա ստեղծագործական ժառանգությունը ժանրային առումով բազմազան մի հավաքածու է՝ ողբեր, ներբողներ, դանձեր, հիշատակագրություններ, թղթեր, երկլեզվյան բանաստեղծություններ, աշխարհագրական ու պատմական բնույթի գործեր, թարգմանություններ։

Գրական այս հարուստ ժառանգությունը մեզ է ներկայացնում մի քանի լեզուների ծանոթ, իր հարազատ ժողովրդի հին ու ժամանակակից մատենագրությանը, նրա, ինչպես և թուրքերի պատմությանը քաջատեղյակ Ե. Քյոմուրճյան պատմիչին, բանաստեղծին, մտավորականին ու հասարակական գործչին, որը, ինչպես նկատել է Լեոն, «Էրեւ է իր մեջ նոր ժամանակների, հմրուպական հասկացողությանը, գրական ճաշակ և պահանջներ» և որի «ստեղծագործությունների մեջ կարելի է փնտրել ապագա հայ առօրյա հրապարակախոսության բողբոջները»¹։

Այս բազմազանատակ մշակի պատմական ստեղծագործություններից առանձնապես արժեքավոր է «Պատմութիւն համառօտ ԴՃ (400) տար-

¹ Ե. Քյոմուրճյանի կենսագրության մասին մանրամասնությունները տե՛ս հետևյալ աշխատություններում՝ Զ. Սահակյան, Երեմիա Քյոմուրճյան, Երևան, 1964; Վ. Թորգոմեան, Երեմիա Չէլչէի Փռօմիւրճեան, «Մտամպօյոյ պատմութիւն», Ա, Վիեննա, 1913; Ե. Ակիմեան, Երեմիա Չելչէի Քյոմուրճեան, Կիսնքն ու գործունեութիւնը, Վիեննա, 1933; Ս. Նշանեան, Օրագրութիւն Երեմիա Չէլչէի Քէօմիւրճեանի, Երուսաղէմ, 1939 և այլն։

² Լեո, Հայոց պատմություն, հատ. 3, Ա գիրք, Երևան, 1969, էջ 358—359։

ւոյ օսմանցոց թագաւորաց» երկը³, որը դեռևս ձեռագիր վիճակում է և Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում ունի № 1675 գրանցումը⁴: Հիշյալ ձեռագիրը Քյոմուրճյանի «Պատմութիւն համառօտ...»-ի միակ ընդօրինականութիւնն է⁵, կատարված 1731—1732 թթ. Գալիպոլցի հաշվողի կողմից: Գրիչ հաշվոն այդ առթիվ ձեռագրի 13ա և 17ա էջերում թողել է երկու հիշատակարան:

Քյոմուրճյանը «Պատմութիւն համառօտը...»-ը սկսել է գրել 1675 թ.⁶ և ավարտել է 1678 թ. Զատիկի տոներին⁷: Այն շարադրված է շափածո և բաղկացած է 1810 քառյակից: Ցուրաբանյուր քառյակ կազմով է երկու խառը՝ 7—8 (15) և 8—8 (16) վանկանի երկատողերից: Քառյակում որպէս կանոն հանգավորվում են երկատողերը, այսինքն քառյակի զույգ տողերը՝ 2-րդը և 4-րդը: Հազվադեպ են 1-ին, 2-րդ,

³ Ձեռագիրը երբեմն գրավել է ուսումնասիրողների ուշադրութիւնը: Լ. Անասյանը «Հայկական աղբյուրները Քյուզանդիայի մասին» գրքի հավելվածում հրատարակել է «Պատմութիւն համառօտ...»-ի 4. Պոյի անկումը նկարագրող հատվածը (37ա—41ա), որպէս մի առանձին ողբ (Լ. Անասյան, Հայկական աղբյուրները Քյուզանդիայի մասին, Երևան, 1957, էջ 82—84): Մ. Զուպլյանը շալալիների շարժմանը նվիրված իր աշխատւթւթյամբ «Պատմութիւն համառօտ...»-ի որոշ նյութեր գրել է գիտական շրջանառութիւն մեջ (Մ. Զուպլյան, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրութիւն մեջ, Երևան, 1966, էջ 165, 185): Լ. Սահակյանը գնահատել է Ե. Քյոմուրճյանի պատմութիւնը գրական ու գեղարվեստական արժանիքները (Լ. Սահակյան, Երեմիա Քյոմուրճյան, էջ 45—51):

⁴ Ձեռագիրը իր 227 թերթերում («Պատմութիւն համառօտ...»-ը 3ա—174ա էջերում է) բովանդակում է նաև Քյոմուրճյանի «Պատմութիւն Ստամպոլու», «Այլ իմն բան հրէի կնոջն Քէրային» գործերը, Քյոմուրճյանի եղբոր՝ Կոմիտասի, հիշատակարանը՝ գրված 1697 թ., ու հայատառ թուրքերեն մի վիճակախաղ:

⁵ «Պատմութիւն համառօտ...»-ի հեղինակային ինքնագիրը կորել է: Լ. Սահակյանը թյուրիմացաբար որպէս նրա երկրորդ օրինակ է հիշատակել Ս. Սյուրմեյանի ձեռագրացուցակից № 14 ձեռագրի «Պատմութիւն օսմաննեան թագաւորաց» յօրինուած Հաճի հաւֆա կոչուած Քեմաթի Զէլլաիէն» գործը (տես Լ. Սահակյան, Նշվ. աշխ., էջ 46, 167): Սակայն հիշյալ երկը, ինչպէս խորագիրն է հուշում և Սյուրմեյանի ձեռագրացուցակում բերված գրչի հիշատակարանն է հաստատում, XVII դ. թուրք պատմագիր Քյաթիր Զեյնեբիի «Թէօհֆէթ իւլ քուպար ֆի էֆսար իւլ պուհար» (Ընծայ մեծամեծաց յօրում են ծանուցմունք ծովոց) աշխատութիւնն է, որը 1765 թ. Երուսաղեմի Հակոբյանց վանքի միաբան Հովհաննես վրդ. Կեսարացիին հայատառի է փոխարկել եզի մերայնոց գիրին լիցի ընթերցումն» (տես Ն. Էպ. Պաղարեան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Ցակորեանց, Երուսաղէմ, հ. 1, № 14, էջ 92—95; Հմմտ. Ս. Սյուրմեյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի Ս. Ցակորեանց վանքի, հատ. 1, № 14, էջ 101—103):

⁶ Ձեռ., էջ 171ա:

⁷ Ձեռ., էջ 174ա:

4-րդ⁸ և 2-րդ, 3-րդ, 4-րդ⁹ տողերով հանգավորված քառյակները: Հանգ է կազմում «եալ» դերբայական վերջավորությունը:

Պատմության ժամանակագրությունը տրվում է հայկական և հիշ-րեթի թվարկությամբ: Այսպես. 1. Օսման I-ից մինչև սուլթան Սելիմ I-ի զահակալությունը (1512) գրված է հիշրի թվարկությամբ (4ա—56ա), 2. Սելիմ I-ից մինչև սուլթան Մուհամմեդ III-ի զահակալության տարին (1595)՝ հայկական թվարկությամբ (56ա—83ա), 3. սուլթան Մուհամմեդ III-ից մինչև սուլթան Մուհամմեդ IV-ի զահակալությունը (1648) հիշրի թվարկությամբ (83ա—139բ), 4. 1648—1678 թթ. երեսուն տարվա պատմությունը՝ հայկական թվարկությամբ:

Քյոմուրճյանի «Պատմութիւն համառօտ...»-ը իր 19 գլուխներում ընդգրկում է օսմանյան 19 սուլթանների՝ Օսման I-ից (XIII դ.) մինչև սուլթան Մուհամմեդ IV-ի (1648—1687 թթ.) զահակալության երեսուն-երորդ տարին (1678) հասնող, «մերձ շրս հարիւր ամաց» օսմանյան Թուրքիայի պատմությունը: Օսման I-ից մինչև 1648 թ. ժամանակաշրջանի պատմությունը Քյոմուրճյանը գրել է հայկական և առավելապես թուրքական սկզբնաղբյուրների օգնությամբ, իսկ 1648 թ.—1678 թ. երեսուն տարվա պատմությունը նա շարագրել է որպես ականատես, նկարագրել է իր տեսածն ու լսածը: Հետևաբար, խնդրո առարկա պատմությունը բաժանվում է տարարժեք երկու ընդհանուր մասերի:

Մենք նպատակ չունենք այստեղ համակողմանիորեն նկարագրել կամ արժեքավորել «Պատմութիւն համառօտ»-ը, այլ մեր խնդիրն է մասնակիորեն անդրադառնալ այդ ստեղծագործության թուրքական սկզբնաղբյուրների հարցին և բացահայտել Քյաթիբ Չելեբիի «Ֆեզլեթե» պատմական գործի հետ Քյոմուրճյանի «Պատմութիւն համառօտ...»-ի ունեցած առնչությունը:

Քյոմուրճյանը, ինչպես նշեցինք վերևում, իր երկի առաջին բաժինը շարագրելիս օգտագործել է թուրքական սկզբնաղբյուրներ, սակայն չի վկայակոչել օգտագործված և ոչ մեկ աղբյուր հանվանն: Մերթընդմերթ միայն նա նշում է, որ օգտագործել է թուրքալեզու հեղինակներից՝

Հակիրճ ճառիւք զորս ի տաճկաց
Ըստ կարի իմում եմ թարգմանեալ¹⁰:

⁸ Ձեռ., էջ 163ա:

¹⁰ Ձեռ., էջ 5ա:

⁹ Ձեռ., էջ 167ա:

կամ՝

Ըզտաճկաց վիպօղս հարցի,
Պայազիտիս սուլթան կոչեալ¹¹:

1402 թ. Անկարայի ճակատամարտից հետո գերեվարված սուլթան Բայազիդ I-ի և հաղթական Հենկ-Թեմուրի միջև հայտնի երկխոսությունը հյուանիս Քյոմուրճյանը գրում է՝

Թումայ բարունն զորմէ պատմէ
Զայլ իմն զգործիսն ոչ է լուեալ.
Պարսիկ տաճիկ մարք արաբիկ,
Իւրաքանչիւր ըստ ուրոյն այնմ վիպեալ¹²:

Իսկ մեկ այլ առիթով ընթերցողի ներողամտությունը հայցելով, հիշում է՝

Ըզպատմագիրս որպէս գտի,
Հիբար ըստ իմում շափութեբեալ.
Որ զյաճախից փոյթ ոչ կալայ,
Զայսքան վաստակն իմ դու ընկալ¹³:

Քյոմուրճյանը մեկ անգամ էլ, թուրքական աղբյուրները նկատի ունենալով, օգտագործել է «ըստ ոմանց ասի» արտահայտությունը¹⁴:

Այսպիսով, վերոհիշյալ ակնկալությունները, պատմության մեջ եղած հայատառ թուրքերեն հատվածները՝ տարագիր Ճեմ Սուլթանի նամակը ուղղված եղբորը՝ Բայազիդ II-ին (42 քառյակ)¹⁵, Շահ-Աբբասի արշավանքի պատճառով Ստամբուլում բանտարկված նրա պատգամավոր Ահմեդ խանի «սրտի գանգատը»¹⁶, 33ա, 39ա, 95բ, 131բ էջերի թուրքերեն քառյակները, թուրքերեն բառերի անսահման առատությունը, ինչպես և ուսումնասիրությունը հաստատում են, որ Քյոմուրճյանը «Պատմութիւն համառօտ...»-ը գրելիս օգտագործել է մեծ մասամբ թուրքալեզու աղբյուրներ:

Սկզբնաղբյուրների մասին ուղեցույց տեղեկություն է տալիս երկի խորագրին անմիջապես հաջորդող հետևյալ հիշատակությունը. «Հա-

¹¹ Զեռ., էջ 13բ:

¹² Զեռ., էջ 21ա—21բ:

¹³ Զեռ., էջ 33ա:

¹⁴ Զեռ., էջ 50բ:

¹⁵ Զեռ., էջ 47բ—50բ:

¹⁶ Զեռ., էջ 90ա—90բ:

մառոտեալ ի սուլթան Օսմանայ մինչև սուլթան Սէլիմ (Սելիմ I, 1512—1520) տաճիկ թուականօք, ի սուլթան Սէլիմէ մինչև ցսուլթան Մուհամէտ (Մուհամմեդ III, 1595—1603) հայոց թուականօք, ի սուլթան Մուհամէտէ մինչև այս սուլթան Մուհամէտիս (Մուհամմեդ IV, 1648—1687 թթ.) ճուլուան¹⁷ տաճիկ թուականօք¹⁸։ Հիշատակարանի «Յելադրանքով» «տաճիկ թուականօք» գրված մասերի աղբյուրները փնտրեցինք թուրքալեզու պատմական գրականության մեջ, «հայոց թուականօք» մասերի աղբյուրները՝ հայկական։ Թուրքական աղբյուրների հետ կատարված համեմատությունները հանգեցրին այն փաստին, որ Քյոմուրճյանի «Պատմութիւն համառօտ...»-ի բազմաթիվ թուրքական սկզբնաղբյուրների թվում է նաև XVII դ. թուրքական պատմագրության ամենահեղինակավոր ներկայացուցիչ՝ Քյաթիր Չելերիի «Յեզլերե» երկհատոր պատմական երկը¹⁹։

Քյաթիր Չելերիի «Յեզլերե»-ն ամփոփում է 1592—1654 թթ. Թուրքիայի պատմությունը։ Նրա առաջին հատորն ընդգրկում է 1592—1621 թթ. ժամանակաշրջանի իրադարձությունները և շարադրված է թուրք պատմագիրների Հասան Բեյլադեի, Իբրահիմ Փեչեկի և ուրիշների պատմական երկերի հիմքի վրա²⁰։ Երկրորդ հատորը ամփոփում է 1621—1654 թթ. պատմությունը, որտեղ հեղինակը նկարագրված իրադարձությունների անմիջական մասնակիցն է։

Եվ որպեսզի տեսնենք, թե ինչ աստիճանի սերտություն ունեն այս երկու պատմական գործերը, ինչ կերպ, ինչ երանգով է օգտագործված «Յեզլերե»-ն Քյոմուրճյանի կողմից «Պատմութիւն համառօտի...» մեջ, դիմենք համեմատվող օրինակներին²¹։

¹⁷ Գահակալությունը

¹⁸ Ձեռ., էջ 3ա։

¹⁹ Kâtip Çelebi, Fezleke-i Kâtip Çelebi, İstanbul, mat. Ceride-i Havadis, cilt-1, 1869s, (412s); cilt-2, 1870s, (338s).

²⁰ А. А. Папазян, «Джихан Нюма» и «Фезлеке» Кятиба Челеби как источник по истории Армени (XVII в.), Ереван, 1973, стр. 42.

²¹ Քյոմուրճյանը Յեզլերեից օգտվելիս պահպանել է տեղմիներին և անուններին թուրքական ձևերը։ Մենք ևս երկու գործերի կապն ու սերտությունն ընդգծելու համար, համապատասխանող տեքստերը թարգմանելիս, պահպանեցինք անունների, բառերի թուրքերեն արտահայտությունները՝ տողատակ տալով դրանց հայերեն թարգմանությունը կամ բացատրությունը։

Յեզլեքե

Նույն տարվա (1008—1599 թ.) Շեվվալ ամսին սիփահինների մի խումբ խմբվելով և բռնելով որդու հետ Քերա անունով մի կնոջ, իբրև խառնակչի, տարան կայմակամ հալիլ փաշայի պալատը, և, այնտեղ դաշունահարելով, սպանեցին նրանց։ Այդ օրերին բազմաթիվ բանաստեղծներ երգեք հորինեցին։

հ. 1 էջ 128

«Պատմութիւն համառօտ...»

Սիփահիք եէնիշէրիք,
Գայմագամին դարպասն
խմբեալ.
Հրէի կին մի հանդըգնեալ էր,
Ի սովթանաթն լինէր խառնեալ:
Ի տիւան անդ խանչեօք,
Զորդին ընդ Քերան
ծակոտեցեալ.

Երգեցօղբ և գրելով զերգս,
Հազար և յութ թուականն

հասեալ:

էջ 84 բ

Այս տարվա Զեմագիյել Խսըր (ամսին) նորին մեծություն փադիշահը հրամայեց իսլամական երկրից բոլորովին վերացնելու օղին ու գինին՝ պատճառը հավատացյալների պառակտումների և շարիքների։

Kálb-i aşak gıblı,

Viran it'diler mēyxanēi,

Bivēfaler ahdanē,

Deawderdiler p'ēymanēi²⁵;

Հարեցողներին կոտորեցին, շատերին էլ վտարեցին։ Գինատները ավերեցին և հարյուր բեռ ակշի²⁶ հասնող

Զպատճառ շարեաց գինի
օղւով,

Սուղ պատճառէ որ ցնա
յիշեալ.

Վընասուցն և շարութեան,
Նըկատեցին և հրամաեալ:

Մուգադա և էմանէթ,
Եւ թէ որքան այլ դրամ եկեալ.

Ըզկեօմրուկն²² և զայլ կէլուրս²³,
Ոչ հոգային՝ չի բաց բարձեալ:

Մէմալիքի իսլամիէ²⁴,
Գինի ընդ ցաւ մի երեւալ.

Կոտորեն զբըղուղս ֆուշովք,
Եւ աւարէ զծախօղան առեալ:

Գալպ աշըք կիպի,
Վիրան իթտիլէր մէյխանէի,

²² keawmruk (geawmruk) — մաքս:

²³ kelur (gelur) — հասույթ, եկամուտ:

²⁴ mēmalik-i islamie — իսլամական երկիր:

²⁵ Սիրահարի սրտի նման,

Ավեր դարձրին գինատները,

Ու պայմանին ուխտադրութ,

Շուտ տվեցին գինու զավք:

²⁶ akčē — արծաթյա մանրադրամ:

մութադդան²⁷ ու էմանեթը²⁸ վերացնելու հրաման տվեցին...

հ. 1, էջ 352

Աթ մեյդանում²⁹ յոթ տարի շարունակ մեծ ջանախնդրությամբ կառուցվող սուլթան Ահմեդ խանի փառավոր շամիի³⁰ գմբեթի շինությունը ավարտվեց և, երբ եկավ շամիի դռները կախելու ժամանակը, Զեմադլիյե խնրը (ամսի) շորորդ օրը շամիի հրապարակում օթաքներ³¹ խփվեցին, և թահիշահը³² դրվեց: Ամբողջ ուլեմայությունը³³, էրքյանի դեկեթը³⁴ և այլանի սուլթանաթը³⁵ հրավիրվեցին: Խնջույքը ավարտվելուց հետո, բոլորը գնացին սուլթանական պալատ, զգեստավորվեցին և փադիշահին առաջնորդեցին իր հարկաբաժինը: Նախ մեծ վեզիր Խալիլ փաշան յուր վեզիրներով մտավ փադիշահի առանձնասենյակը և շնորհավորեց շինության ավարտը, ապա շեյխուլիսլամը³⁶, բազմաթիվ ուլեմներ և պաշտոնյաներ մտնելով (ներս) համբուրեցին փադիշահի քղանցքը և, ստանալով

Պիվեֆալէր ահտընէ,
Տեօնտէրտիլէր փէյմանէի:
էջ 95ա—95բ

Իստամպուլ հմուտ արքայն,
Իւր նոր ճամին կամիւր գընաւ:
Ձոր եօթն ամօք շինեալ էին,
Որ յաթմէյտան լինի հըմեալ:
Երբ ասացին թէ թըմեցաւ,
Ձկուպղայսն ի դուռն կախել
գնալ
Հանդէպ ճամոյն զօթաղս
կազմեն,
Եւ թահիշահ անդ
բարձրացեալ,
Համայն ուլէմա քաղաքին,
Եւ էրքեանի տէվլէթն խըմբեալ:
Եւ այլանի սատէթ պատրաստ,
Հստ կարգի պատուոյ
տեղատրեալ:
Եւ համայնք ի ներքս մըտին,
Եւ յարքայէ զխիլաթ զգեցեալ:
Հազարաց շափու արանց,
Ձկապայս և զսօֆըս
վերարկեալ:

²⁷ muk'adda—գինու և օգու առևտրով զբաղվողներից միանվագ գանձվող հարկ:

²⁸ emanet'—գինու և օգու վրա դրված հարկը գանձող վարչություն:

²⁹ Al'meydan!—ընդարձակ տարածություն էր, որտեղ օսմանյան սուլթանները օրը օրը հավաքվում էին խոսվարար ենիչերիներն ու սիփահիները:

³⁰ Jami'—մուսուլման հավատացյալների ազդեցական վրան:

³¹ o'tak'—սենյակ, այստեղ՝ արքայական վրան:

³² t'axi'—šahl—արքայական աթոռ, գահաթոռ:

³³ ulema—կրոնավոր, գիտնական, իմաստուն անձնավորություն:

³⁴ erk'ean-i devlet'—«Պետության սյուները», պետության բարձրատեման պաշտոններ:

³⁵ aynan-i sult'anat', պալատականներ:

³⁶ ševxultslam—կրոնական բարձրաստիճան պաշտոնյա:

հաղարի շահի խիլաթ³⁷ և սոֆա³⁸, մեծարվեցին: Այնտեղ, նորին մեծության աջ կողմում, երկու շահադեններ³⁹ մուճեվեղով⁴⁰ կանգնած էին:

Ճ. 1, էջ 383

Նորքումբե յօթաղ արքային
գան,

Երեկով երկրպագեալ,
Նախ վէզիրն վուզէրայիւր,
Ըզննորհաւոր նմա ասացեալ:
Եւ մուֆդին գուղաթ գնդովք,
Նախարարք որք կարգ կարգ
մըտեալ:

Ուր տեսին մուճէվէղովք,
Զերկ շահապետէսն ընթեր

կանգնեալ:

էջ 101բ—102ա

Ինչպես տեսնում ենք, օսմանյան կայսրության ներքին կյանքին առնչվող այս համադրված փոքրիկ հատվածներն ունեն գրեթե բառացի նմանություններ: Հանդիպում են նաև ավելի ընդարձակ համընկնող, քաղաքոված կամ համառոտաբար վերաշարադրված, «շահիու բերեալ» հատվածներ՝ կոնկրետ պատմական փաստերով, զերծ սկզբնաղբյուրի հեղինակի խոսքի զարդարանքներից ու ավելորդ թվացող մանրամասնություններից: Բերենք երկու ընդարձակ օրինակ:

Քանի որ Կարսի բերդը (աջեմի) շահի կողմից քանդվել էր, նպատակահարմար գտնվեց վեդանորոգել այն և զինվորներ պահել: Կափուկուլիներին⁴¹ և բնյլերբեյերին⁴² տրամադրեցին զինվորներ, որոնք և մեկ շաբաթվա ընթացքում բերդը վերանորոգեցին այնքանով, որ հնարավոր լինի մի կերպ բնակվել: Բերդի պահպանություն հա-

Նաև զՂարս քաղաք շինեն,
Ի պահպանումն զօրս անդ
ածեալ.

Հասին ի դաշտն և Բէվանու,
Եւ զհող կուտելըն

պատրաստեալ:

Ի ցերեկի երբ զհող քըշեն,

Ըզհողն ի ցայգ ի ներքս

քարշեալ.

³⁷ xilat' (xalat')—արժեքավոր վերարկու, սրով սուլթանը կամ մեծ վեզիրը մեծարում էին կայսրության հավատարիմ հպատակներին:

³⁸ sawf—բրդյա թանկագին կտոր:

³⁹ šahzade—շահի որդիներ, արքայորդի, թագաժառանգ:

⁴⁰ mučeveze—հագած-կապած, հանդերձավորված:

⁴¹ kap'ukull — դռան ծառա, օսմանյան կանոնավոր բանակի զորամասերից, խաղաղ ժամանակ սուլթանին և մեծ վեզիրին ուղեկցող զորախումբ:

⁴² beylerbeyi—նահանգների կառավարիչ, որն օժտված էր վարչական ու զինվորական իշխանություններով:

մար դինվորներ առանձնացնելով և
[պարիսպների վրա] թնդանոթներ տե-
ղադրելուց հետո, [բանակը] առաջ
շարժվեց և Ջեմադիյե-ախըր ամսի
կեսերին իշալ Երևանի դաշտավայրը:
Գիշերով խրամատներ փորվեցին, և
բերդը պաշարվեց⁴³: էմիր Գյումեհ խա-
նը նախապես այն ամրացրել էր և
լցրել վիլայեթի դինվորներով ու ռազ-
մամթերքով: Շահ Աբբասն էլ բանա-
կով նախիջևանում էր: Ռումելիական
թևում տեղադրելով՝ 4, ենիչերիների
թևում՝ 2, իսկ բերդի դարբասների դի-
մաց՝ 2 թնդանոթներ, թուրքերը քսան
օր բերդը ապարդյուն ռմբակոծեցին:
Սկսեցին հող քշել և կուտակել: Ցե-
րեկը քշված և կուտակված հողը գի-
շերը (պաշարվածների կողմից) ներս
քաշվելով անհայտանում էր: Կեռերով
ներս էին քաշում նույնպես խանդակ-
ներ⁴⁴ նետված պարկերն ու դարարնե-
րը⁴⁵: Ի վերջո, իսլամական դինվորնե-
րը [օսմանյան բանակը] թաքին⁴⁶
հիմնեցին և թնդանոթներով պարիսպ-
ներում անցքեր բացելով բոլոր կողմե-
րից սկսեցին հարձակվել բերդի վրա:
Մազանդարանի թյուֆենկենտազները⁴⁷

եւ քսան աւուրբք շատ ծեծէին,
եւ անօգուտ էին խոնջեալ:
Շինեն օսմանցիք թապիէ,
եւ մեծ թօփովք զայն

ծակոտեալ.

Ի ծակոտեալ տեղոց հնարութ,
Բազում կողմանց ի ներքս

վազեալ:

Սուսերամերքքըն օսմանցիք,

Սէրտէնկէշտիս⁴⁸ ի մահ

դիմեալ.

Թուֆէնկէնտազ մազանտա-
րանք,

Սուրխիսէրանքըն⁴⁹ ճակատեալ:

Ու բազումք կոտորեցան,

Ենիշէրուց ազայն անկեալ.

Եւ խոցեալ Թիւրքէ պիւմէզն,

Եւ ալլքն անդուտ յետս

փախեալ:

էջ 100բ

⁴³ serdengeç-di-«գլխից ձեռք քաշած», այսպես էին տեղանում օսմանյան բանա-
կում այն առաջատար խմբերը, որոնք առաջինն էին գործում թշնամու վրա:

⁴⁴ surx-i seran — տկարմրագլուխներ», ճիւղըլըրաշներս:

⁴⁵ Իրան արշավող օսմանյան բանակը 1615 թ. պաշարում է Երևանի բերդը՝ շուրջ
երկու ամիս: Երևանի պաշտպանների հերոսական դիմադրությունը և վրա հասնող ձմռան
ցրտերը ստիպում են մեծ վեզիր Մուհամմեդ փաշային վերացնել պաշարումը և ծանր
կորուստներով նահանջել: (Ձեռ., էջ 100բ):

⁴⁶ xandak'—պառանջ, խրամ:

⁴⁷ țarar—քուրձ, պարկ:

⁴⁸ l'able—մարտկոց:

⁴⁹ l'ufenk'endaz—հրացանաձիգներ, հրացանավորներ:

պարսպի հետևում թաքնվելով մարտըն-
չեցին, և նրանցից շատերը զոհվեցին:
Եվ երբ Ենիշեր աղա⁵⁰ Մուլի աղան
մարտում սպանվեց, Թուրքչէ Բիւմեզն⁵¹
էլ վիրավորվեց, իսլամի զինվորները
նահանջեցին:

Գ. 1, էջ 375

Սաֆեր ամսի 22-ին (9 օգոստոս,
1635 թ.)⁵² երկուշաբթի էր: Մուրադ
քեթիսուղան⁵³ դուրս եկավ բերդից և
[հայտարարեց] Երևանը հանձնե-
լու մասին: Որոշվեց, որ էմիր Գյու-
նե օղլի Թահմասը Կուլի խանը իջնի
բերդից: Վսեմաշուք փադիշահը ստո-
րագրեց պայմանագիրը և իր մարդ-
կանցից մեկի հետ ուղարկեց [բերդ],
իսկ քեթիսուղա Մուրադը մնաց այս-
տեղ: Հաջորդ օրը սիփահինների գնդերը
վրաններից դուրս եկան և զորակար-
գով շարվեցին [բերդի] դռան առջև:
Հիշյալ խանը դուրս եկավ բերդից, մո-
տենալով սուլթանին, համբուրեց աս-
պանդակը և բերդը հանձնեց: Այսպի-
սով նա արժանացավ սուլթանի ուշա-
դրությանը: Մեկ օր հետո սուլթանին
ծառայելու նրա խնդրանքին բավա-

Ձանձրացան պարսիկք ընդ այն,
Եւ ըզբաղաքն տալ յօժարեալ:
Ձի քէտխուտայ խանին

Մուրատ,

Ել ի կլայէն⁵⁴ ցարքայ եկեալ:
Ի խանէն զպատգամ բերէ,
Խօստացայ քեզ զԵրևան տալ:
Ընդ որ զահտնամէ⁵⁵ գրեաց

արքայ,

Հրաման խանին յըղէ ի գալ:
Էմիր Կիւնէ խան օղլոյ խանն,
Առ թագաւորն ելնու ի գալ:
ՂԵրևան յանձնեալ ի նայ,
Ձոտս արքային անդ

համբուրեալ:

Որոյ զգեցոյց արքայ զխիւաթս,
Խանչէր⁵⁶ կամար սօրդու⁵⁷
տուեալ:

Ընդ առաջ արքային հետեակ,

⁵⁰ yeniçeri atası—հնիշերիների պետ, հրամանատար:

⁵¹ i'urk'ê'e bilmez—Թուրքեզեն չիմացող: Քյոմուլեճյանը նրան հիշատակել է
շալալիների ցուցակում (Պատմութիւն..., էջ 89ա):

⁵² Այս անգամ Երևանի բերդը պաշարում է Մուրադ VI-ը դեպի Իրան արշավելիս:
Տասնօրյա ահեղ մարտերից հետո, Երևանի պաշտպանները, հետագա դիմադրությունը
գտնելով անիմաստ, հանձնում են բերդը:

⁵³ k'et'xuda—գործերի կառավարիչ, տնտեսավար:

⁵⁴ k'al'e—բերդ, ամրութիւն:

⁵⁵ ahdname—պայմանագիր, համաձայնագիր:

⁵⁶ xanç'er—գաշուկ:

⁵⁷ sawrîu—ձիու մագերից պատրաստված խուպուներ, որոնք զրկելով ուսա-
ղիքների եզրին, նշում էին կրողի բարձրաստիճանութիւնը:

բարութիւն տրվեց: Նրան [սուլթանը] նվիրեց թանկագին խիլաթ, դաշույն և ականակոտ սուր, բազմաթիվ նվերներ: Այնուհետև ենիշերինները մտան բերդ: Գիշերը հակառակորդի 5—6 հազար հրաձիգները Երևանի պաշտպան Միր Ֆեթթահ օղլու հրամանատարութեամբ դուրս եկան բերդից և, իրենց հետ վերցնելով հնարավորության սահմաններում զենք ու կայք, հետիոտն և հեծյալ ուղևորվեցին դեպի Արդերիլ... Այնուհետև սուլթանի վրան հրավիրվեց Մուրթազա փաշան և սուլթանի հրամանով ստացավ Երևանի մուհաֆեզին⁵⁸ պաշտոնը:

Գ. 2, էջ 173

Համապատասխանաբար առաջարկում ենք համեմատել նաև Ք. Չելերիի «Ֆեզլեբեի» առաջին հատորի 136—138, 174—175, 188—192, 192—201, 211—219, 222—225, 292—294, 304—315, 382, 334—335, 339—340, 351—352, 355—356, 356—359, 361—362, 385—386, 390, 402—403, 403—412 և երկրորդ հատորի 3—14, 22—23, 24—28, 33—34, 38—47, 52—53, 66—69, 74—76, 79, 108—109, 114—116, 128—133, 139—144, 151, 154—156, 159—160, 162—163, 169, 170—176, 179—181, 187—188, 195—198, 214—215 էջերը Ե. Քյոմուրճյանի «Պատմութիւն համառօտ...»-ի՝ 83ա, 87ա, 84ա—84բ, 90բ, 92ա, 92բ, 94ա, 94բ, 95բ—96ա, 95ա, 101ա—101բ, 96ա, 101ա, 97ա—98բ, 96բ, 102ա—102բ, 104ա—104բ, 106ա—106բ, 107ա—110ա, 110ա—115բ, 115բ, 116ա, 116բ, 117ա—119բ, 120ա—120բ, 120բ, 120բ, 121ա, 121ա—121բ, 122ա—122բ, 122բ—123բ, 122բ—124ա, 125ա, 125ա, 126ա—126բ, 127ա, 127բ—126բ, 128բ, 129ա, 129բ—131բ, 131բ էջերի հետ:

Բերված համադրությունները, հղված էջերն, ինչպես և երկու գործերում նկարագրված իրադարձությունների հաջորդականության նույնությունն անառարկելիորեն վկայում են, որ «Ֆեզլեբեին» Ե. Քյոմուրճյանի երկի հիմնական աղբյուրներից մեկն է, որից նա օգտվել է լայնորեն: Սակայն Քյոմուրճյանը պատմական դեպքերը, փաստերը նկա-

նմիր Կինէ օղլին անկեալ:
Ի քաղաքն ըզնա հմոյծ,
Եւ ի տուն իւր զընթրիս
առեալ.
Հինգ վեց հազար պարսիկ
զօրօք,
Միր Ֆեթահ օղլին եկեալ:
Ընդ կարօղացեալսըն
կապուտից,
Բստնան 'ւ յԱրտաիլ
զընացեալ.
Եւ Մուրթազայ փաշային տայ,
Մուհաֆէզէդէ Րէվան նըստեալ:
էջ 127բ—128ա

⁵⁸ muxafeze — պահպան, բերդապահ, կայազորի հրամանատար:

բազմելիս, սկզբնաղբյուրին հարազատ մնալով հանգերձ, սկզբունքային հետևողականություն է ցուցաբերել նյութերի ընտրության հարցում, որտեղ և դրսևորվել է նրա հեղինակային ինքնուրույնությունը:

Քյոմուրճյանին հետաքրքրել է առավելապես Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքական կյանքը: Նա սկզբնաղբյուրից օգտագործել է այն նյութերը, որոնք վերաբերում են ենիշերիների և սիփահիների խռովություններին, կայսրությունը հիմքից ցնցող ջալալիական շարժումներին, պալատական երկպառակություններին և հեղաշրջումներին, դիվանագիտական հարաբերություններին, Թուրքիայի ռազմական գործողություններին, թուրք-իրանական փոխհարաբերություններին և նրանց միջև մղվող երկարատև պատերազմներին, արևմուտք և արևելք արշավող թուրքական բանակներին օգնության շտապող Ղրիմի թաթար խաների ասպատակություններին: Քյոմուրճյանը ուշադրություն է դարձրել նաև լեհ-թուրքական փոխհարաբերությունների վրա: Նա սկզբնաղբյուրի հետևողությամբ շարադրել է 1621 թ., Թուռլայի (Դենեստրի) ափին գտնվող Խոտին ավանի շրջանում լեհերի ու թուրքերի միջև սկսված, այսպես կոչված, «Խոտինի պատերազմը»⁵⁰:

Ե. Քյոմուրճյանը, ի դեպ, չի օգտագործել սկզբնաղբյուրում հղած քաղաքական կարևոր փաստաթղթերն ու պայմանագրերը, որոնց մասին թեև ակնարկում է: Քյոմուրճյանը չի օգտագործել նույնպես, իհարկե, Թուրքիայի քաղաքական պատմության համար կարևորություն չներկայացնող, սկզբնաղբյուրի՝ թուրք պետական պաշտոնյաների, հասարակական նշանավոր գործիչների մասին կենսագրական նյութերը:

Քյոմուրճյանը սկզբնաղբյուրից օգտվելիս, ընդհանուր առմամբ, դիմել է քաղաքություն մեթոդին: Հետևաբար, նա երբեմն սկզբնաղբյուրի նյութերը այնպիսի սեղմությամբ է համառոտագրել կամ խումբագրել, որ անհասկանալի և չպատճառաբանված են մնացել բազմաթիվ հետաքրքիր և արժեքավոր իրադարձություններ ու փաստեր: Այդպիսի դեպքերում Քյոմուրճյանը հանդես է եկել իրրև լուկ փաստն արձանագրող հեղինակ:

Ընդհանրապես ամբողջ աշխատության մեջ այս երևույթն իշխող է, և դա հավանաբար պետք է բացատրել հետևյալ հանգամանքով: «Պատմութիւն համառօտ...»-ը գրելով չափածո, հեղինակը, բնականաբար, չէր կարող հարցներին անդրադառնալ և քննարկել ամինայն մանրամաս-

⁵⁰ Տե՛ս Խոտինի պատերազմի մասին Ք. Ձեյբի, Ֆելլեթ, հ. 1, էջ 404—422, հ. 2, էջ 3—5 և «Պատմութիւն համառօտ...», էջ 107ա—110ր:

նությամբ և խորությամբ, որովհետև երկի շափածո շարադրվածքը նրան այդպիսի հնարավորություն էր կարող ընձեռել:

Հաճախ Քյոմուրճյանը, սկզբնաղբյուրին հետևելով հանդերձ, հեռացել է նրանից և լրացրել այն: Ջալալիների շարժման մասին խոսելիս, նա «ղշարան շարեօք» հիշատակում է ավելի քան 60 ջալալի ղեկավարների⁶⁰, որոնց մեկը ամբողջությամբ ընթ հանդիպում «Ֆեզլեքեհում»: Եթե Կալենդեր օղլուի, Ջանփուլադի, Բավլիլի և շատ ուրիշների մասին մանրամասնությունները «Ֆեզլեքեհում» և «Պատմութիւն համառօտ...»-ի մեջ համապատասխանում են՝ նույնիսկ բառացի, ապա Դելի-Հասանի՝ Թոխաթի վրա կատարած հարձակման մանրամասնությունները որոշակիորեն տարբերվում են⁶¹: Այս և այսպիսի բազմաթիվ փաստերից դժվար չէ նկատել, որ թուրք պատմագրությանը քաջածանոթ Ե. Քյոմուրճյանը տվյալ ժամանակաշրջանի համար իր հիմնական սկզբնաղբյուրից բացի օգտագործել է այլ աղբյուրներ ևս:

Այսպիսով, ակնհայտ է «Ֆեզլեքեհի» և «Պատմութիւն համառօտ...»-ի սերտ կապը, և ընդունելի է առաջինի ազդեցությունը: Այս անժխտելի իրողությունը, որը հաճախ է հանդիպում և՛ հայ, և՛ թուրք պատմագրության էջերում⁶², չի արժեքազրկում Ե. Քյոմուրճյանի աշխատությունը: Ե. Քյոմուրճյանը, հետևելով սկզբնաղբյուրին, այնուամենայնիվ պահպանել է պատմիչի իր ինքնուրույնությունը, որը դրսևորվել է հատկապես թուրք-իրանական պատերազմների, Հայաստանում դրանց հետևյալների մասին սկզբնաղբյուրի ծավալուն նկարագրությունները համառոտագրելիս:

Եվ վերջապես, պետք է նշել, որ, «Պատմութիւն համառօտ ԴՃ (400) տարւոյ օսմանցոց թաղաւորաց» երկի համար սկզբնաղբյուր ընտրելով և օգտագործելով Ք. Չելեբիի «Ֆեզլեքեհ» երկհատոր պատմական աշխատությունը, Ե. Քյոմուրճյանը հանդիսանում է Թուրքիայի միջնա-

⁶⁰ Ձեռ., էջ 88ա—90ա:

⁶¹ Ձեռ., էջ 87ա—87բ:

⁶² Հայտնի է, որ Ք. Չելեբիի «Ֆեզլեքեհ» գրելիս ազատորեն օգտվել է իրեն նախորդող պատմիչների աշխատություններից (տե՛ս А. А. Папазян, „Джиханниюма“ и „Фезелеке“ Кятиба Челеби как источник по истории Армений Ереван, 1973, стр. 42), իսկ հետագայում, պատմագիր Նաիման, իր հերթին, «Ֆեզլեքեհ» է օգտագործել իր պատմության („Tarihi Naima“) մեջ՝ դույզն լրացումներով միայն (տե՛ս В. Д. Смирнов, Кучибей Гёчюрджинский и другие османские писатели XVII в. о причинах упадка Турции, Спб., 1873, стр. 13; նաև А. С. Тверитинова, Восстание Кара Языджи, Дели Хасана в Турции, Л., 1946, стр. 18.

գարյան պատմութեան այս ամենահաւաստի և կարևոր սկզբնաղբյուրն
արժեքաւորող ու գնահատող մեզ հայտնի առաջին հեղինակը:

Ж. М. АВЕТИСЯН

«ФЕЗЛЕКЕ» КЯТИБА ЧЕЛЕБИ ОДИН ИЗ ИСТОЧНИКОВ
«КРАТКОЙ ЧЕТЫРЕХСОТЛЕТНЕЙ ИСТОРИИ ОСМАНСКИХ
ЦАРЕЙ» ЕРЕМИЯ КЕМУРДЖИЯНА


Резюме

Сочинение армянского историка XVII века Еремия Кёмурджияна «Краткая четырехсотлетняя история османских царей» является ценным первоисточником по средневековой истории Турции.

В статье впервые обсуждается вопрос об источниках, упомянутых в сочинении Еремия Кёмурджияна. Сличением текстов выясняется, что исторический труд летописца Кятиба Челеби являлся одним из основных источников Е. Кёмурджияна за период 1595—1648 гг. Хотя Е. Кёмурджиян проявляет большую последовательность в отношении описанных в «Фезлеке» событий, тем не менее при этом ему удается сохранить самостоятельность историка.

Е. Кёмурджиян также является первым автором, который использовал в качестве источника «Фезлеке» Кятиба Челеби.

ՀԱՅ ԹՈՒՐԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ
ТУРКОЛОГИИ



ՀԱՅ ՊԱՏՄԻՋՆԵՐԸ ՍԵԼՋՈՒԿ-ԹՈՒՐԿԵՐԻ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (XI—XVIII ԴԴ.)

Օսմանյան կայսրության միջնադարի պատմությանը վերաբերող թուրքական աղբյուրների բացակայության և պատմական դեպքերի նկատմամբ թուրք պատմագիրների միտումնավոր վերաբերմունքի պայմաններում առաջնակարգ նշանակություն են ստանում այլ ժողովուրդների պատմագրության մեջ Թուրքիայի պատմությանը վերաբերող տեղեկությունները, որոնք լուսաբանում են թե՛ Սելջուկյան սուլթանատի և թե՛ Օսմանյան կայսրության քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր կողմերը:

Փաստացի շատ կարևոր տեղեկություններ կան բյուզանդական, արաբական, պարսկական, արևմտաեվրոպական, սլավոնյան և անգլերկովկասյան ժողովուրդների պատմագրության գրականության մեջ, որոնց հեղինակներն ականատես կամ անմիջական մասնակից են հղել զանազան իրադարձությունների: Թուրքիայի պատմության լիակատար ուսումնասիրության համար վերոհիշյալ աղբյուրներն ունեն բացառիկ կարևոր նշանակություն:

Օտար աղբյուրների հեղինակները մեծ մասը տարիներ շարունակ գտնվելով սելջուկ-թուրքական դաժան լծի տակ, ոչ միայն առանձին երկրներ են գրել Թուրքիայի պատմության վերաբերյալ, այլև իրենց ժողովրդի պատմությունը շարագրելիս հաճախ ամենայն մանրամասնու-

* Հեղինակներն են Ա. Ն. Փափազյանը (սելջուկ-թուրքերի և Օսմանյան կայսրության մասին (XI—XVIII դդ.)), Ե. Ղ. Սարգսյանը (սելջուկ-թուրքերի մասին XIX դարում և XX դարասկզբին), Ռ. Գ. Սահակյանը (սելջուկ-թուրքերի մասին 1908—1920 թթ.), Ռ. Պ. Կոնդակչյանը (սելջուկ-թուրքերի մասին 1920—1970 թթ.): Սովետական շրջանի հայ թուրքագիտության մասին տեղեկությունները կգետնվեն թուրքագիտական ժողովածուի հաջորդ հատորում:

թյամբ անդրադարձել են նաև Թուրքիայի միջնադարի պատմության առանձին իրադեպերին:

Սելջուկ-թուրքական պատմության մամնատարբեր հարցերի վերաբերյալ կարևոր տեղեկություններ կան նաև հայ պատմագիտական գրականության մեջ:

XI—XII դդ. սելջուկյան թիրապետության ժամանակաշրջանում ապրել և ստեղծագործել են մի շարք հայ պատմիչներ, որոնք նկարագրել են սելջուկյան սուլթան Տուղրիլի (1058—1063), Ալի Արսլանի (1063—1072) և նրանց հաջորդների արշավանքները դեպի Հայաստան և Փոքր Ասիա, սակայն նրանց աշխատությունների բնագրերը կորել են: Այդ մատենագիրներից հիշատակության արժանի են XI դ. ապրած Հովհաննես Կոզեռնը, Վահրամ պատմիչը, Հովհաննես Սարկավազը¹, ինչպես նաև XII—XIII դդ. ստեղծագործած Մխիթար Անեցին, Մխիթար Գոշը և Հովհաննես Վանականը²:

Անհրաժեշտ է նշել նաև, որ հայ ժողովրդի պատմագրության զարգացումը համաչափ չի ընթացել: Մասնավորապես, Հայաստանի թուրքական հորդանների նվաճման շրջանում (XIV—XVI դդ.) հայ պատմագրությունը չի տվել քիչ թե շատ կարևոր գործեր: Բարեբախտաբար, հիշյալ դարերի հայ ժողովրդի և հարևան ժողովուրդների պատմության զանազան հարցերի լուսաբանման համար պահպանվել են հսկայական թվով մանր տարեգրություններ և ձեռագիր հիշատակարաններ³:

¹ Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 89, 92: Հովհաննես Վ. Սարկավազի մասին տե՛ս նաև՝ Գ. Զաբլաճեան, Պատմութիւն հայերեն դպրութեան, հատ. Բ, Վենետիկ, 1905, էջ 590: Համազասպ Ոսկյան, Մատենագրական քննություններ, Վիեննա, 1926, էջ 1—64:

² Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 100, 101, 105: Գ. Զաբլաճեանյան, նշվ. աշխ., էջ 701, 714: Հովհաննես Վանականի մասին տե՛ս նաև՝ Հ. Ոսկյան, Հովհաննես Վանական և յուր գպրոցը, Վիեննա, 1922:

³ Վերջին տարիներին մանր ժամանակագրությունների և ձեռագիր հիշատակարանների հավաքման և հրապարակման գործում լուրջ աշխատանք է կատարված սովետահայ պատմագրության մեջ: Այսպես՝ Ժ. Դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950: Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, հատ. Ա, Երևան, 1955, հատ. Բ, Երևան, 1958, հատ. Գ, Երևան, 1967: Մանր ժամանակագրություններ XIII—XVII դդ., կազմեց Վ. Ա. Հակոբյան, հատ. Ա, Երևան, 1951, հատ. Բ, Երևան, 1956:

Առաջին հայ պատմիչը, որը խոսել է դեպի Հայաստան և Փոքր Ասիա կատարված սելջուկյան արշավանքի մասին՝ Արիստակես Լաստիվերտցին է։ Նրա «Պատմությունը», որն ընդգրկում է 1000—1072 թթ. իրադարձությունները, պատմագիտական արժեքավոր սկզբնաղբյուր է Հայաստանի քաղաքական պատմության, հայ-բյուզանդական հարաբերությունների և սելջուկ-թուրքական արշավանքների մասին։ Կ. Յուզբաշյանն իրավամբ նշում է, որ Արիստակես Լաստիվերտցին իր «Պատմությունը» պետք է որ շարադրած լիներ 1072—1087 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում։

Արիստակես Լաստիվերտցու պատմական երկի ամբողջական խորագիրն է՝ «Պատմություն Արիստակեսի Լաստիվերտցույ վարդապետի վասն անցիցն անցելոց ի յալասեռն ազգաց որ շուրջ զմեզ են»։

Սելջուկ-թուրքերի արշավանքի ողբալից նկարագրությունը սկսվում է 11-րդ դիմից։ Մանրամասն նկարագրվում են 1047 և հաջորդ թվականներին թուրքերի արշավանքները դեպի Հայաստան, նրանց զաղանույթյուններն ու կատարած ավերածությունները, որոնք ամայացրին երկիրը։ Աշխատության հաջորդ գլուխներում հեղինակը պատմում է Հայաստանի մի շարք բարգավաճ քաղաքների ավերման, 1049 թ. բյուզանդական բանակի պարտության, 1054 թ. Տուղրիլ բեգի գլխավորությամբ Մանազկերտ քաղաքի պաշարման, 1064 թ. սուլթան Ալի Արսլանի կողմից հռչակավոր Անի քաղաքի գրավման, և վերջապես 25-րդ գլխում՝ 1071 թ. սելջուկների և բյուզանդական բանակի միջև տեղի ունեցած Մանազկերտի խոշոր ճակատամարտի և Ռոմանոս IV Դիոգենես կայսեր գերեվարվելու մասին։

Արիստակես Լաստիվերտցին որպես վարդապետ, իհարկե, գտնվել է եկեղեցական դոգմաների ազդեցության տակ, սակայն պատմական դեպքերի նկարագրումը նրա մոտ ճշգրիտ է ու հավաստի։ Նրա երկի՝ սելջուկյան արշավանքը նկարագրող գլուխները պատմական շատ կարեւոր տեղեկություններ են բովանդակում սելջուկների արշավանքների երթուղու, մարտավարության և ռազմական տեխնիկայի մասին։

Արիստակես Լաստիվերտցու «Պատմությունը» առաջին անգամ հրատարակել է Վենետիկի Մխիթարյան միաբանությունը 1844 թ.⁴։ Այս

⁴ «Պատմություն Արիստակեսի վարդապետի Լաստիվերտցույ, Վենետիկ, Ս. Ղազար, 1844։

հրատարակության հիման վրա կատարվել են ֆրանսերեն⁵ և աշխարհաբար⁶ թարգմանություններ: Հետագայում բնագիրը երկու անգամ վերահրատարակվել է՝ 1901 թ. Վենետիկում և 1912 թ. Քիֆլիսում՝ «Ղուկասյան մատենադարան» շարքով:

1963 թ. հրատարակվեց *Լաստիվերտցու «Պատմության»* գիտաքննական տեքստը՝ Կ. Յուզբաշյանի աշխատասիրությամբ: 1968 թ. նա հրատարակել է նաև ուղեքնն թարգմանությունը⁷:

Սելջուկյան սուլթանների պատմության համար չափազանց կարեւոր սկզբնաղբյուր է նաև XII դ. պատմագիր Մաթթեոս Ուռայեցու երկը՝ «Պատմութիւն արարեալ Մատթեոսի մեծի քահանայի Ուռայեցույ վասն Բագրատունեաց թագավորոյն և ալլոց բազմաց ի ԴՃ թուականէն սկսեալ մինչ ի ՈԺԱ թիւն աւարտեալ»: Հարկ է նշել, որ այս վերնագիրը հեղինակը չի դրել, քանի որ Մատթեոս Ուռայեցին պատմության իրադարձությունների շարադրանքը սկսում է 952 թ. և հասցնում մինչև 1136 թ., որից հետո «Ժամանակագրությունը» շարունակում է Քեսունցի Գրիգոր անունով մի երեց, հասցնելով այն մինչև 1162 թ., գրեթե նույն ռժով և ավելի հստակ լեզվով: Աշխատությունը բաղկացած է երեք մասից. առաջինը բովանդակում է 952 թ. մինչև 1051 թ. դեպքերը, երկրորդ մասը՝ մինչև 1101, իսկ երրորդը՝ մինչև 1136 թ. ընկած դեպքերը:

Մատթեոս Ուռայեցին առաջին մասի դեպքերի շարադրման համար օգտագործել է X—XI դդ. պատմիչների երկերը, որոնք ականատեսն են եղել իրենց ժամանակի իրադարձություններին: Երկրորդ մասի վերջին տասնամյակների, ինչպես նաև երրորդ մասի մեջ պատմված դեպքերին ինքն է ժամանակակից և ականատես:

Մատթեոս Ուռայեցու պատմությունը կարևոր սկզբնաղբյուր է հիշյալ դարաշրջանի քաղաքական պատմության համար: Նա ամենայն

⁵ „Histoire d'Armenie comprenant la fin du royaume d'Anie et commencement de L'invasion des seljoukides par Arisdagues de Lastiverd“, traduite par M. E. Prud'homme, Paris, 1864.

⁶ Արիստակես Լաստիվերտցի վարդապետի «Հայոց պատմություն», թարգմանեց Մինաս քահանա Տեր-Պետրոսյանց, Աղեքսանդրապոլ, 1893:

⁷ «Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցու, աշխատասիրությամբ՝ Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963: 1971 թ. լույս տեսավ նաև «Պատմության» աշխարհաբար թարգմանությունը (Արիստակես Լաստիվերտցի, Պատմություն, թարգմանությունը Վ. Ա. Գևորգյանի, Երևան, 1971):

⁸ «Повествование вардапета Аристакаеса Ластивертци, перевод с древнеармянского, вступительная статья, комментарий и приложения К. Н. Юзбашяна, М., 1968.

մանրամասնությամբ և ճշգրիտ նկարագրություններով կանգ է առնում արարներին, բյուզանդացիներին, սելջուկ-թուրքերին, իսկ վերջին մասում՝ խաչակրաց արշավանքների և սելջուկ-թուրքերի փոխադարձ հարաբերությունների վրա։ Ուռհայեցու նկարագրած քաղաքական դեպքերը հիմնականում տեղի են ունեցել Փոքր Ասիայում, Հայաստանի հարավային շրջաններում, Սիրիայում և Միջագետքում։ Ի տարբերություն Արիստակես Լաստիվերտցու, Մատթեոս Ուռհայեցին խոսում է ոչ միայն սելջուկյան մեծ պետության սուլթանների և զորականների կատարած արշավանքների, ավերածությունների, հարկային կեղեքումների, այլև Քոնիայի սելջուկյան սուլթանատի և Հայաստանի սահմանամերձ շրջաններում առաջացած զանազան թուրքական էմիրությունների (դանիշ-մենդների, շահարմենների և այլն) ասպատակությունների մասին։ Նա կարևոր տեղեկություններ է տալիս Քոնիայի սելջուկյան սուլթան Սուլեյման Շահի, Կլըջ Արսլանի և բյուզանդացիների միջև տեղի ունեցած պատերազմների մասին⁹։

Ուռհայեցու երկում արժեքավոր տեղեկություններ կան տեղանունների, դորքերի թվի, սուլթանների և այլ զորականների անձի, բնության երևույթների մասին և այլն։ Հետաքրքրական է նաև Քոնիայի սելջուկյան սուլթանատի՝ Կիլիկիայի հայ իշխանների հետ մերթ թշնամական և մերթ բարեկամական հարաբերությունների նկարագրությունը։

Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը» առաջին անգամ հրատարակվել է Երուսաղեմում¹⁰ (1869), իսկ երկրորդ անգամ՝ Վաղարշապատում¹¹ (1898)։ 1973 թ. Հր. Բարթիկյանի աշխատասիրությամբ լույս տեսավ «Ժամանակագրության» աշխարհաբար հրատարակությունը¹²։ Գոյություն ունեն նաև ամբողջական և առանձին հատվածների ֆրանսերեն, գերմաներեն և թուրքերեն թարգմանություններ¹³։

⁹ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 224, 252։

¹⁰ «Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ», Երուսաղեմ, 1869։

¹¹ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898։

¹² Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթությունները Հր. Բարթիկյանի, Երևան, 1973։

¹³ Ed. Dulaurier, Chronique de Mathieu d'Edesse (952—1136) avec la continuation de Grégoire-le-Prêtre jusqu'en 1162, Paris, 1858. Նույնի՝ L'histoire des croisades, d'après les Chroniques arméniens, par Ed. Dulaurier, Paris, 1848. M. Chahan de Cirbied, Notice de deux manuscrits arméniens contenant l'histoire de Mathieu Eretz, et Extrait de cette histoire, relatif à la première Croisade, en arménien et en français, Paris, 1812. F. Nève, Les chefs Belges de la première Croisades d'après les historiens arméniens, Bruxelles, 1859. H. Petermann,

Մատթեոս Ուռհայեցուն ժամանակակից պատմագիրներից ուշադրութեան արժանի է նաև Սամվել Անեցի, որի աշխատութեան ամբողջական խորագիրն է՝ «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս Գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ»:

«Ժամանակագրութիւնը» սկսվում է Ադամից և հասնում մինչև 1180 թվականը, սակայն ուրիշները այն շարունակել են մինչև 1665 թ., պահպանելով նրա ոճը: Առավել արժեքավոր են ժամանակագրի ապրած շրջանին վերաբերող տեղեկությունները, քանի որ դրանց զգալի մասը շարադրված է ականատեսի կողմից և առնչվում է Հայաստանում կատարված սելջուկ-թուրքերի արշավանքների հետ:

Սամվել Անեցու պատմութեան հայերեն համեմատական բնագիրը առաջին անգամ հրատարակել է Արշակ Տեր-Մելիքյանը (1893): Նա տպագրել է նաև ձեռագրային տարբերակները շարունակողների գործերը և մի շարք հավելվածներ, որոնց մի մասը օգտակար է XVI—XVII դդ. թուրք-պարսկական պատերազմները և ջալալիական ապստամբություններն ուսումնասիրելու համար¹⁴:

Հավելվածում առանձնապես ուշագրավ է «Յոհանիսիկ (Մառնեցի) վարդապետի համառոտ պատմութիւնը» (էջ 185), որն ընդգրկում է 1572—1600 թթ. իրադարձությունները¹⁵: Հովհաննիսիկ Մառնեցու ժամանակագրության նկարագրած դեպքերը գլխավորապես տեղի են ունե-

Beitrage zu der Geschichte der Kreuzzüge aus armenischen Quellen Abhandlungen der Königl. Akademie der Wissenschaften zu Berlin, Berlin, 1860 - Reueil des Historiens des Croisade (Documents Armeniens, t. I, Paris, 1869. 1Մխիթար Գևորգյան (1860—1861) ve Papaz Grigorun zeyli (1136—1162) Türkçeye çeviren H. D. Andreasian, Ankara, 1962.

¹⁴ «Մատուլի քահանայի Անեցու Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ», աշխատասիրութեամբ Ա. Տեր-Մելիքյանի, Վաղարշապատ, 1893, էջ 161, 175, 185:

¹⁵ Դեռևս XVII դ. հանրաճանաչ հայ պատմագիր Առաքել Դավրիժեցիին այս ժամանակագրութեան ձեռագիրը կորստից փրկելու նպատակով զետեղել է իր պատմութեան մեջ, որպէս ինքնուրույն 58-րդ գլուխ՝ «Պատմութիւն Աղուանից աշխարհին արարեալ Մառնեցի Հովհաննէս վարդապետին խորագրով: Առաջին անգամ այն հրատարակել է Մ. Մսերյանը «Յոհանիսիկ վարդապետի համառոտ պատմութիւն» խորագրով («Ճոռքաղ», 1859, հատ. Գ և հատ. Դ, էջ 69—76, 105—112), որից և Ա. Տեր-Մելիքյանը արտատպել է իր հրատարակութեան հավելվածում:

Հովհաննէս Մառնեցու «Ժամանակագրութեան» բնագիրը ամբողջապես և մանրամասն ծանոթագրութիւններով, մինչև իսկ ժամանակ հիշխնալի մասին ստույգ տեղեկութիւններով հրատարակել է Վ. Ա. Հակոբյանը (Մանր ժամանակագրութիւններ, հատ. Բ, էջ 235):

ցել Ադրբեջանում և Վրաստանում: Հետաքրքիր տեղեկություններ կան Մուստաֆա Լալա փաշայի 1578 թ. Անդրկովկաս կատարած արշավանքի, սուլթան Մուրատ III-ի (1574—1594) կողմից Երևանի գրավման օսմանյան Թուրքիայի դեմ վրաց ժողովուրդի ազատագրական պայքարի մասին և այլն:

«Թարեխ տաճկաց» հավելվածում (էջ 200—204) անժանոթ հեղինակը նախ հաջորդաբար թվարկում է Օսմանյան կայսրության սուլթանների անունները՝ սկսած Օսման I-ից մինչև Սելիմ II-ը (1566—1574), իսկ այնուհետև պատմում ջալալիական պարագլուխ Կարայազիճիի ապստամբության մասին:

Միլանի մատենադարանի տեսուչ Մայր լատիններեն է թարգմանիչ Սամվել Անեցու «Ժամանակագրությունը» և հրատարակել երկու անգամ. Միլանում (1818) և Հոտմում (1839)¹⁶, իսկ Ֆրանսերեն թարգմանությունը Բրոսսեն հրատարակել է իր «Հայ պատմիչները» ժողովածուի մեջ¹⁷:

Սելջուկ-թուրքական տիրապետության մասին կարևոր տեղեկություններ կան նաև XIII դ. հայ նշանավոր պատմագիր Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» մեջ:

Կիրակոս Գանձակեցին իր պատմությունը սկսել է գրել 1241 թ.: Ամբողջական վերնագիրն է՝ «Կիրակոսի վարդապետի համառոտ պատմություն ժամանակաց ի սրբոյն Գրիգորէ մինչև ցյետին աւուրս թեացեալ»: Այն բաժանվում է երկու հիմնական մասի. 1) Գրիգոր Լուսավորչից, Տրդատից սկսած մինչև Կիլիկիայի հայկական թագավորության հիմնադրումը և 2) Լևոն Բ-ից մինչև Ապաշայի և Բերքեի պատերազմը (1266): Պատմության երկրորդ մասի մի շարք դեպքերին հեղինակը ժամանակակից է: Այն առաջնակարգ նշանակություն ունի ոչ միայն հայ, աղվան և վրաց ժողովուրդների, այլև սելջուկ-թաթար-մոնղոլական արշավանքների պատմության լուսաբանման համար: Փաստական կարևոր տեղեկություններ կան Հայաստանի սելջուկյան և մոնղոլական տիրապետության շրջանի, Կիլիկիայի հայկական թագավորության ու

¹⁶ Samuelis presbyteris Aniensis, Temporum usque ad suam aetatem ratio e liberis historicum summatis collecta. Opus ex Haecanis quique codicibus ab Joh. Zohrabo diligenter excerptum atque emendatum. Zohrabus et Ang. Majus nunc primum conjunctis curis latinitate donatum notisque illustratum ediderunt.

¹⁷ M. Brosset, Samuel d'Ani, Tables Chroniques, „Collectiones d'historiens Armeniens“, s. Petersbourg, 1876, t. 2, p. 340—383. Մի մասը հրատարակել է „Melanges Asiatique“-ի մեջ հետևյալ խորագրով՝ „Samuel d'Ani, Revue generale de sa Chronologie“.

սելջուկյան սուլթանատի և մոնղոլների փոխադարձ հարաբերությունների մասին: Գրքի վերջում Կիրակոս Գանձակեցին ավելի հանգամանորեն խոսում է մոնղոլական արշավանքների, ավերածությունների և նրանց տիրապետության ռազմավարական և սոցիալ-տնտեսական քաղաքականության մասին:

Կիրակոս Գանձակեցու «Պատմությունն» առաջին անգամ հրատարակվել է Մոսկվայում (1858)¹⁸, իսկ այնուհետև՝ 1865 թ. Վենետիկում՝ Մխիթարյան միաբանության կողմից¹⁹: Կիրակոս Գանձակեցու «Պատմության» գիտաքննական բնագիրը շահեկան առաջաբանով 1961 թ. հրատարակել է Կ. Մելիք-Օհանջանյանը²⁰:

Կիրակոս Գանձակեցու «Պատմությունն» ամբողջապես թարգմանվել է ֆրանսերեն²¹ և ռուսերեն²²: Գոյություն ունեն նաև տարբեր լեզուներով քաղվածաբար կատարված բազմաթիվ թարգմանություններ²³:

XIII դ. հայ պատմիչներից հիշատակության արժանի է նաև Վարդան Բագճարաբեղցին, որը հայտնի է իր «Պատմություն տիեզերական» երկով:

«Պատմություն տիեզերականը» սկսվում է աշխարհի ստեղծման պատմությունից և վերջանում է 1267 թ. կատարված դեպքերով: Առավել հետաքրքրական են «Պատմության» վերջին մասերը, որտեղ բազմաթիվ տեղեկություններ են տրվում արաբների, սելջուկ-թուրքերի, մոնղոլների և խաչակրաց արշավանքների մասին: Այդ երկն արժեքավոր է նրանով, որ Վարդան Բարձրաբեղցին օգտագործել է տվյալ ժամանակաշրջանում ստեղծագործած մի շարք հայ հեղինակների մեղհչասած գործերը:

Սելջուկ-թուրքերի նկարագրությունը նա սկսում է 1020 թ. Քիսկ

¹⁸ «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ», ի լուս ընծայեաց Ոսկան Տէր Գէորգեան Յովհաննիսեանց Երեսնեցի, Մոսկվա, 1858: Այս բնագիրը երկրորդ անգամ լինելով վերահրատարակվել է Քիֆլիսում 1909 թ.:

¹⁹ Կիրակոս վարդապետի Գանձակեցոյ Համառոտ պատմութիւն ի սրբոյ Գրիգորի Յաւուր իր լուսաբանեալ.—Պատմադիրք հայոց, Բ, Վենետիկ, 1865:

²⁰ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:

²¹ Histoire d'Arménie, par le vardapied Kirakos de Gantzac, „Deux historiens arméniens... traduits par M. Brosset“, I-re livraison, s. Petersbourg, 1870, p. I—194.

²² Киракос Гандзакечи, История Армении, перевод с древнеармянского, предисловие и комментарий Л. А. Ханларяна, М., 1976.

²³ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, էջ 217:

յառաջադէմն ի թուրքաց, որում անուն էր Մուէ փաշու՝ Սարչուքայ որդի, ունէր հինգ եղբորորդիս, որոց անուանքն՝ Աբուսսալիս, Դաւութ, Չաղը բէկ, Ափուղալիք, Տուլլիլ բէկ, որ էառ զիշխանութիւն սուլտանութեան և զամս հնգետասան ընդարձակեալ զաշխարհն՝ բաժանեաց զամենայն երկիրն հորասանայ» (էջ 129—130):

Այնուհետև Բարձրաբերդցին գրում է արշավանքների, սելջուկյան անկախ բնությունների՝ միմյանց նկատմամբ թշնամական վերաբերմունքի, Հայաստանում կատարված ավերածությունների և Կիլիկիայի հայկական թագավորության ու սելջուկյան սուլթանատի միջև գոյություն ունեցող հարաբերությունների մասին:

«Պատմություն տիեզերական»-ի բնագիրն առաջին անգամ լույս է տեսել հայերեն և ռուսերեն թարգմանությամբ 1861 թ. Մ. էմինի աշխատասիրությամբ²⁴: 1862 թ. հրատարակվել է նաև Վենետիկում Ղ. Ալիշանի կողմից²⁵: Առանձին հատվածներ թարգմանվել են ֆրանսերեն²⁶:

Հրանդ Անդրեասյանը թուրքերեն է թարգմանել սելջուկյան շրջանին վերաբերող նյութերը, որոնք ընդգրկում են Կիլիկյան հայկական թագավորության դարաշրջանը՝ մինչև Լևոն III-ը²⁷:

Միջնադարյան հայ գրականության մեջ ուրույն տեղ ունեն նաև Կիլիկյան թագավորության երկու պատմիչները, որոնք եղել են նաև ռազմական և քաղաքական ականավոր գործիչներ՝ Սմբատ Գունդստաբլը և Հեթում պաամիրը: Այս հեղինակները հանգամանքների բերումով սերտ շփման մեջ են գտնվել սելջուկների և մոնղոլների հետ ու ղեկավարի մեծ մասը շարադրել են իբրև ականատես:

Սմբատ Գունդստաբլի (1208—1275) գրական հարուստ ժառանգությունից, իհարկե, մեզ առավելապես հետաքրքրում է նրա «Պատմությունը», որը ժամանակագրություն է, ինչպես հեղինակն է շեշտել վերնագրի մեջ՝ «Պատմութիւն Հունաց ի Կոստանդնուպոլիս և Հայոց Մե-

²⁴ «Մեծին Վարդանայ Բարձրաբերդցու պատմութիւն տիեզերական», ի լոյս բնծ. Մկրտիչ էմին, Մոսկվա, 1861: „Всёобщая история Вардана В. лнхго“, М., 1861.

²⁵ «Հավաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի», Ղ. Ալիշան, Վենետիկ, 1862:

²⁶ M. Brosset, Addition et éclaircissements à l'histoire de la Géorgie, s. Petersbourg, 1851, Ed. Dulaurier, Les Mongols d'après les historiens arméniens, extrait de l'Histoire Universelle de Vartan. („Journal Asiatique“, 1860, octobre-novembre, pp. 273—322).

²⁷ Vardan, Cihan Tarihi, Istanbul, 1937, türkçeye çeviren Hrand D. Andriasyan.

ծաց ըստ կարգի ժամանակաց»։ Պատմիչը նկարագրել է 951—1331 թթ. դեպքերը։ Վերջին 60 տարվա պատմությունը շարադրվել է անանուն գրչի ձեռքով։ «Ժամանակագրություն» առավել արժեքավոր մասը վերջին շրջանում կատարված իրադարձությունների նկարագրությունն է, որտեղ կան հավաստի տեղեկություններ թե՛ սելջուկյան սուլթանատի և թե՛ Քոնիայի սուլթանատի արշավանքների մասին։ Դեպի Հայաստան սելջուկների ներխուժման նկարագրությունը սկսվում է 1016—1017 թվականներից։ Սմբատ Գունդատարի երկում հետաքրքիր տեղեկություններ կան սելջուկ-բյուզանդական պատերազմների, նրանց զորքերի թվի, մարտավարության և տեղաշարժերի ուղղության մասին։ Առանձնապես ուշագրավ են սելջուկյան սուլթանատի և Կիլիկիայի հայկական թագավորության միջև տեղի ունեցած դեպքերը։ Դժբախտաբար, պատմագիրը կանգ է առել հատկապես քաղաքական դեպքերի վրա, աչքաթող անելով տվյալ ժամանակի տնտեսական և կուլտուրական կյանքին վերաբերող հարցերը։

Սմբատ Գունդատարի «Ժամանակագրություն» բնագիրը հրատարակվել է երկու անգամ²⁸։ Այդ գիրքը բարձր է գնահատվել նաև Խլրոպական արևելագիտության մեջ, որի վկայությունը ֆրանսերեն առանձին հատվածների թարգմանությունն է²⁹։

Կիլիկյան Հայաստանի մյուս հանրահայտ հեղինակը Հեթում պատմիչն է, որն ապրել և ստեղծագործել է XIII դ. երկրորդ կեսին և XIV դ. սկզբին։ 1305 թ. նա հեռանում է քաղաքական ասպարեղից, թողնում աշխարհիկ կյանքը և մտնում վանք³⁰։ Հեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց» գիրքը, որը գրված է ֆրանսերեն, մեծ արժեք է ներկայացնում մոնղոլական շրջանի պատմության ուսումնասիրության համար։

²⁸ «Սմբատայ Սպարապետի եղբոր Հեթումյ առաջնոյ արքայի Հայոց Պատմութիւն Յունացի Կոստանդնուպոլիս և Հայոց մեծաց ըստ կարգի ժամանակաց», Մոսկվա, 1856։ «Տարեգիրք արարեալ Սմբատայ Սպարապետի Հայոց որդոյ Կոստանդնայ կոմսին Կոնկոնոյ», ի լոյս ընծայեաց Կ. Վ. Շահնազարեանց, Փարիզ, 1859։

²⁹ Extrait de la Chronique de Sempad, Seigneur de Babaron, connetable d'Arménie, suivie de celle de son continuateur..., traduite pour la première fois de l'arménien par V. Langlois, s. Pétersbourg, 1862. Observations sur une traduction d'un Extrait de la Chronique de connetable Sempad, par Ed. Dulaurier, Paris, Revue de l'Orient, 1867, 1868. Chronique du Royaume de la Petite-Arménie, par le connetable Sempad, Dulaurier, Recueil de historiens des Croisades, Documents, arméniens, pp. 610—680.

³⁰ Ա. Գալստյան, Հեթումի «Պատմութիւն թաթարաց» գրքի բնութագրման հարցի շուրջը, «Տեղեկագիր», 1958, № 9, էջ 63։

Այդտեղ կան նաև կարևոր տեղեկություններ Միջին Ասիայի թուրքական ժողովուրդների (զլ. Գ), ինչպես նաև Քոնիայի սելջուկյան սուլթանատի վերաբերյալ: «Յաղագս թագաւորութեան երկրին թուրքաց» (ԺԳ) գլխում հեղինակը համառոտակի նշում է նաև Քոնիայի թուրքական պետության սահմանները, գլխավոր քաղաքները, երկրի բնական հարստությունները:

Հեթում պատմիչի այս երկը բարձր է գնահատվել արևելագետների շրջանում և թարգմանվել է մի շարք լեզուներով: Առաջին անգամ հրատարակվել է 1517 թ. ֆրանսերեն բնագրով³¹, իսկ 1529 թ.՝ լատիներեն թարգմանությամբ³²: Լույս է տեսել նաև անգլերեն, իսպաներեն, գերմաներեն և այլ լեզուներով³³:

Հեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց» լատիներեն տեքստը հայագետ Մ. Ավդերյանը 1842 թ. թարգմանել է գրաբար³⁴: Դժբախտաբար, այս թարգմանությունը պարունակում է բավականին սխալներ և աղավաղումներ:



XIV—XVI դդ. ընթացքում Հայաստանը դարձավ մոնղոլների, թուրքմենների, ինչպես նաև թուրք և պարսիկ տիրակալների միջև պատերազմների թատերաբեմ:

Երկիրն ապրում էր քաղաքական փոթորկահույզ վիճակ, որը վերջի վերջո հասցրեց տնտեսական ու մշակութային կատարյալ անկման: Այս էր հիմնական պատճառը, որ XIV—XVI դդ. հայ պատմագրության մեջ համարյա ի հայտ չեկան պատմական լիարժեք աշխատություններ: XV դ. մեզ հասել է միայն Թովմա Մեծոփեցու «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և հաջորդաց իւրոց» երկը³⁵, որն ավելի մոտ է ժամանակագրության և պարունակում է պատմական կարևոր տեղեկություններ:

Թովմա Մեծոփեցին իր պատմության մեջ հաղորդում է 1387 թ. Հայաստանի տարբեր շրջաններում Լենկ-Թեմուրի գործած ավերածությունների մասին: Նա ականատես է եղել 1388 թ. Լենկ-Թեմուրի և Կարա-Կոյուն-

³¹ Նույն տեղում, էջ 64:

³² De Langdit I., „L'histoire merveilleuse du grand empereur de Tartarie, trad. du latin du M. Ayton, Seigneur du Caurcy par frere Jean Langdit, 1529.

³³ Ա. Գալստյան, նույն տեղում, էջ 64:

³⁴ «Հեթում պատմիչ թաթարաց», Վենետիկ, 1842:

³⁵ Գաբեգին վարդ. Յովսեփեան, Թովմա Մեծոփեցու կյանքը, Վաղարշապատ, 1914:

լու քոչվորական ցեղերի առաջնորդ Կարա-Մահմուդի միջև տեղի ունեցած ճակատամարտին ու վերջինիս պարտությանը: 1395 թ. Լենկ-Թեմուրը ջախջախում է Կարա-Յուսուֆին: 1402 թ. նա կոտորածներ է սկսում Սեբաստիայում, իսկ այնուհետև՝ Անկարայի ճակատամարտում հաղթում է սուլթան Բայազիդ I-ին և Վրաստանի վրայով վերադառնում Սամարղանդ:

Մեծոփեցին մանրամասն կանգ է առնում Լենկ-Թեմուրի հաջորդ Շահ-Ռուհի (1405—1447) և կարա-կոյունլու՝ Կարա-Յուսուֆի, սրա որդի Սկենդերի (1420—1437) և եղբոր՝ Ջահան-շահի օրոք կատարված պատերազմների ու ավերածությունների վրա: Գրքի վերջում նկարագրվում է Ջահան-շահի կողմից Շամշուտե և ապա Թիֆլիս քաղաքների գրավումն ու ավերումը:

Թովմա Մեծոփեցու պատմությունն առաջին անգամ հրատարակվել է 1860 թ. Փարիզում³⁶:

Ինչպես վերը նշեցինք, հայ և հարևան ժողովուրդների XV—XVII դդ. պատմության հարցերը լուսաբանելու համար կարևոր նշանակություն ունեն հայտնի և անհայտ հեղինակների բազմաթիվ ժամանակագրություններն ու հայերեն ձեռագրերի հիշատակարանները, որոնց հեղինակները գրի են առել անցյալի և հատկապես ժամանակի զանազան դեպքեր ու իրադարձություններ:

Հիշատակարանների և մանր ժամանակագրությունների արժեքն ավելի է մեծանում, քանի որ տվյալ ժամանակաշրջանի Օսմանյան կայսրության պատմության ուսումնասիրության համար թուրք պատմագրության մեջ աննշան տեղեկություններ կան: Թուրքիայի պատմության մասնագետները դրանցում կգտնեն հավաստի տեղեկություններ Լենկ-Թեմուրի արշավանքից հետո երկրում առաջացած քաղաքական իրավիճակի, հատկապես թուրքմենական քոչվոր ցեղեր ակ-կոյունլուների և կարա-կոյունլուների միջև տեղի ունեցած դեպքերի, ինչպես նաև Կ. Պոլսի գրավման, ջալալիական շարժման և ընդհանրապես թուրք-պարսկական երկարատև պատերազմների մասին:

Այստեղ, իհարկե, հնարավոր չէ մանրամասն անդրադառնալ առանձին ձեռագիր հիշատակարաններին և մանր ժամանակագրություններին, քանի որ դրանց թիվն անհամեմատա շատ է և բազմազան: Մենք կբավարարվենք հիշատակելով միայն մի շարք ժամանակագրություններ,

³⁶ «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց արարեալ Թովմա վարդապետի Մեծորեցոյ», ի լոյս ընծայեաց հանդերձ ժանթութեամբ Կարապետ վարդապետ Շահ-նազարեան, Փարիզ, 1860:

որոնք համեմատաբար արժեքավոր տեղեկություններ են հաղորդում տվյալ շրջանի Թուրքիայի պատմության վերաբերյալ: Խիստ ուշագրավ է Հակոբ Հիսուսիին վերագրված ժամանակագրությունը³⁷: Հատկապես երկրորդ հատվածում կարևոր նկարագրություններ կան ակ-կոյունլու Յաղուբ փադիշահի սպանությունից հետո տեղի ունեցած գահակալական կռիվների և ղանադան ասպատակությունների, 1476 թ. Հասան բեգի՝ Վրաստան արշավելու, ինչպես նաև 1500—1501 թթ. շահ Իսմայիլի և ակ-կոյունլուների վերջին ներկայացուցիչ Նուր Ալվանդի միջև տեղի ունեցած կռիվների մասին:

Անանուն Սեբաստացու (XVI դ.) ժամանակագրությունը, որի խորագիրն է «Եւ Հոռմայ Թագավորաց կարգն այս է, զոր օսմանցիք վերայ կոչեն նոցայ անուն: Այս է պորտ է պորտ ազգ նոցա մինչև ի մեզ, ի մերում ժամանակիս»³⁸, սկսվում է օսմանյան պետության հիմնադրումից և շարունակվում է (Թվարկելով օսմանյան սուլթաններին) մինչև Մուհամմեդ III-ը: Պատմիչը հիշում է Լենկ-Թեմուրի արշավանքները պեպի Անդրկովկաս ու Փոքր Ասիա և տալիս Օսմանյան կայսրության ամբողջ քաղաքական պատմությունը:

XVI դ. հեղինակներից հիշատակության արժանի է նաև Հովհաննես Արճիշեցու տարեգրությունը³⁹: Նա նկարագրել է Թուրքերի և պարսիկների 1531—1534 թթ. պատերազմները:

Օսմանյան պետության ծաղկման, սուլթանների գահակալության մասին գրել է նաև XVII դ. ժամանակագիր Վարդան Բաղիշեցին: Նրա «Տարեգրությունը» ընդգրկում է 1170—1657 թթ. Հայաստանում կատարված քաղաքական իրադարձությունները: Վարդան Բաղիշեցին մանրամասն կանգ է առել սուլթան Մեհմեդի օրոք (1654 թ.) տեղի ունեցած դեպքերի, հատկապես՝ Վանում Ավդալբեգի և Մալաթ փաշայի կռիվների վրա:

Օսմանյան կայսրության պետության վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ կան նաև Դավիթ Մերդինցու (XV դ.), Մովսես Արծկեցու (XV դ.), Գրիգոր Կամախեցու (XVII դ.), Դավիթ Բաղիշեցու (XVII), Գաբրիել Թոխաթեցու (XVII դ.), Մալաթիոս Դ-ի Առաքելի (XVIII դ.), Հակոբ Տիվրիկեցու (XVII դ.), Հակոբ Կարնեցու (XVII դ.) և այլոց ժա-

³⁷ «Մանր ժամանակագրություններ», հատ. Ա, էջ 189:

³⁸ Նույն տեղում, էջ 167:

³⁹ Նույն տեղում, հատ. Բ, էջ 227:

մանակագրություններում⁴⁰, ինչպես նաև XVI և XVII դդ. մի շարք անանուն հեղինակների գործերում⁴¹:

Կ. Պոլսի անկման մասին բավականին տեղեկություններ կան թե՛ ձեռագիր հիշատակարաններում և թե՛ մանր ժամանակագրությունների մեջ, սակայն այդ իրադարձության մանրամասն նկարագրությունը տվել են XV դ. նշանավոր հեղինակներ՝ Աբրահամ Անկյուրացին և Առաքել Բաղիշեցին, իսկ հետագայում՝ XVII դ. հայ ականավոր պատմագիր Երեմիա Չելեբի Քյոմուրեյանը, որն իր չափածո «Օսմանյան պատմության» մեջ մի առանձին գլուխ է նվիրել այդ դեպքերին:

Վերոհիշյալ երեք հեղինակների չափածո երկերի գիտաքննական բնագրերը, գոյություն ունեցող ձեռագիր օրինակների տարընթերցվածներով, հայերեն և ռուսերեն հրատարակել է Հ. Անասյանը⁴²:

Աբրահամ Անկյուրացին ականատես լինելով Կ. Պոլսի պաշարման, անկման ու ավերման բոլոր դեպքերին, բավական ճշգրիտ տեղեկություններ է տվել դրանց մասին: Կ. Պոլսի անկմանը ականատես է եղել նաև Առաքել Բաղիշեցին, որը թողել է մեծ թվով պատմական, ներքողական, վիպասանական, բարոյախոսական ու հոգևոր բնույթի չափածո աշխատություններ⁴³:

XVII դ. սկզբից հայ պատմագրությունը սկսում է նորից աշխուժանալ: Հայ պատմագիրները իրենց ավանդն են ներդրել նաև թուրքագի-

⁴⁰ «Մանր ժամանակագրություններ», հատ. Բ, էջ 209, 216, 256, 287, 402, 425, 447, 541:

⁴¹ Նույն տեղում, հատ. 1, էջ 140, 178, 317:

⁴² «Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին», Հ. Ս. Անասյան, Երևան, 1957: Բնագրի ռուսերեն թարգմանությունը՝ Հ. Անասյանը հրատարակել է դեռևս 1953 թ. «Византийский временник» պարբերականի 17-րդ հատորում, որը նվիրված է Կ. Պոլսի անկման 500-ամյակին: Այդ բնագրերը թարգմանվել են նաև ֆրանսերեն: Աբրահամ Անկյուրացու «Ողբ»-ը ֆրանսերեն հրատարակվել է երկու անգամ՝ 1) Eug. Bore, „Élégie sur la prise de Constantinople; poëme inedit et extrait du manuscrit 80 arménien de la Bibliothèque Royale“, „Nouveau Journal Asiatique“, t. XV, 1835, p. 271—298. 2) Melodie élégiaque sur la prise de Stamboul“, traduite de l'arménien par M. Brosset, հետևյալ հրատարակության մեջ՝ Lebeau, „Histoire du Bas-Empire, Nouvelle édition, revue entièrement, corrigée et augmentée d'après les historiens orientaux, par M. de Saint Martin“, t. XXI, Paris, chez Firmin Didot frères, 1836, p. 307—314: Առաքել Բաղիշեցու «Ողբ» թարգմանությունը՝ „Lamentation sur la prise de Constantinople» լույս է տեսել հետևյալ ժողովածուի մեջ՝ A. Tchobanian, La Roserie d'Arménie, t. III, Paris, Ernest Leroux, 1929, p. 109—118:

⁴³ «Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին», էջ 6:

տության ասպարեզում, գրելով նույնիսկ առանձին արժեքավոր մենագրություններ՝ նվիրված Օսմանյան կայսրության միջնադարի պատմությանը: Նրանցից առաջինը (ժամանակագրական կարգով) Հովհաննես Կավենացին է, որն իր «Պատմութիւն պատերազմին խոթինու» խորագրով աշխատության մեջ նկարագրել է 1621 թ. լեհ-թուրքական պատերազմները, որոնք տեղի են ունեցել խոտին քաղաքի և բերդի պարիսպների տակ: Կամենացու «Պատմութիւնը» բաղկացած է առաջաբանից, 18 գլխից և հիշատակարաններից: Վերջին գլուխը նվիրված է ենիլե-րիների խռովությանը և սուլթան Օսման II-ի սպանությանը, Կ. Պոլսում՝ 1622 թ.: Կամենացու երկում ուշագրավ տեղեկություններ կան տվյալ շրջանի լեհ-թուրքական ռազմական տեխնիկայի, զորքերի մատակարարության, դիվանագիտական հարաբերությունների, թաթարական ասպատակությունների և ընդհանրապես Մոլդավիայի ներքին իրադարձությունների վերաբերյալ:

Հովհաննես Կամենացին իր պատմությունը շարադրել է խոտինի պատերազմից վեց տարի հետո՝ 1627 թ.: Մի շարք մանրամասներ նա գրել է առել որպես անմիջական ականատես, իսկ մնացած դեպքերի համար հիմնականում օգտագործել է հայազգի Օքսենտ Կամենացու հայկոմաներեն (ղփշաղական) բարբառով գրված ժամանակագրությունը, որտեղ օրագրական մանրամասնություններով գրի են առնված խոտինի պատերազմի դեպքերը⁴⁴:

Հովհաննես Կամենացու պատմության մի ձեռագիր ընդօրինակությունը դեռևս 1953 թ. Հ. Անասյանը հայտնաբերել էր Մաշտոցի անվան Մատենադարանում (ձեռագիր № 2644, էջ 229ա—254ա) և նրա մասին որոշ տեղեկություններ հաղորդել Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման 300-ամյակի առթիվ 1954 թ. հրատարակված ժողովածուի մեջ⁴⁵: Հետագայում բնագրի ռուսերեն թարգմանությունը (թարգմանիչ Կ. Յուզբաշյան) հրատարակվեց 1958 թ.⁴⁶, իսկ 1964 թ. Հ. Անասյանը

⁴⁴ Օքսենտ Կամենացու «Ժամանակագրությունը» լեհական այլ հեղինակների հետ հրատարակել է Դ. Ալիշանը (Կամենից, «Տարեգիրք Հայոց լեհաստանի և Ռումինիոյ», Վենետիկ, 1896): Օքսենտի տարեգրությունը զբաղեցնում է այս հրատարակության 68—109 էջերը:

⁴⁵ А. С. Анасян, Отголоски битв при Хотине (1621 г.) в армянских источниках, «Великая дружба. Сборник, посвященный 300-летию воссоединения Украины с Россией», Ереван, 1954, стр. 225—238.

⁴⁶ «История Хотинской войны И. Каменецкого», «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 258—286:

հրատարակեց հայերեն բնագիրը, հանգամանալից վերլուծականով և մանրամասն ծանոթագրություններով:

Մյուս հայտնի պատմագիրը Սիմեոն Լեհացին է, որը տասնմեկամյա ճանապարհորդության ընթացքում տեսածները (1608—1618) գրի է առել իր «Ուղեգրության» մեջ: Նա հիմնականում գրում է իր շրջագայած վայրերի տեղագրության, ազգագրության և տնտեսության մասին: Մանրամասն նկարագրում է ճանապարհները, քաղաքների նշանավոր շինությունները, բնակչության զբաղմունքը, ժողովուրդների կենցաղն ու բարքերը: Այս տեսակետից ուշագրավ տեղեկություններ են պարունակում Կ. Պոլսին, Թոքատին, Դիարբեքիրին, Հալեբին, Կահիրեին, Երուսաղեմին և մի շարք այլ քաղաքների նվիրված էջերը: XVIII դ. առաջին կեսի Թուրքիայի պատմության համար կարևոր նշանակություն ունեն նաև «Ուղեգրության» վերջում ժամանակագրական կարգով շարադրված 1622—1635 թթ. քաղաքական դեպքերը:

Առավելապես կարևոր են «Արշավանք սուլտան Օսմանի ի վերայ լեհաց» (1622), «Ապաղայ փաշայ, կոտորած ենկիշարաց», «Ապաղա փաշայ արշավ է ի լեհս», «Արշավանք սուլտան Մուրատի ի վերայ լեհաց» (1635), «Արշավանք սուլտան Մուրատի ի վերայ Պարսից» և այլ գլուխները:

Սիմեոն Լեհացու «Ուղեգրության» ձեռագրի գոյության մասին առաջին անգամ ծանոթություն է տվել Ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Մակլիրը⁴⁷:

Հետագայում Ներսես Ակինյանը հատուկ հետազոտության առարկա է դարձրել այն և 1932 թ. սկսած պարբերաբար հրատարակել է «Հանդէս ամսօրեայ»-ի մեջ⁴⁸: 1936 թ. դարձյալ Ն. Ակինյանի աշխատասիրությամբ «Ուղեգրությունը» առանձին գրքով հրատարակվում է Վիեննայում: Այս հրատարակության մեջ տրված է նաև հեղինակի կյանքի և գործունեության մանրամասն վերլուծությունը⁴⁹: «Ուղեգրության» թուրքերեն լրիվ թարգմանությունը մանրամասն ծանոթագրու-

⁴⁷ „Revue des Etudes Arménienne“, t. 7, 1927.

⁴⁸ «Հանդէս ամսօրեայ», 1932, էջ 447—483, 677—690, 1933, էջ 115—128, 334—342, 479—495, 595—608, 701—713, 1934, էջ 59—69, 149—168, 283—306, 465—474, 547—570, 1935, էջ 79—96, 163—175.

⁴⁹ «Սիմեոն դպիր Լեհացու Ուղեգրութիւն», ուսումնասիրեց և հրատարակեց Զ. Ներսես Վ. Ակինյան, Վիեննա, 1936:

թյուններով հրատարակել է Հ. Անդրեասյանը⁵⁰, Հրատարակել է նաև ուսերին թարգմանությունը⁵¹:

Ժամանակագրական առումով հաջորդ պատմագիրը Գրիգոր Դարանաղցին (Կամախեցին) է (1576—1643):

Նրա գլխավոր հրկը «Ժամանակագրությունն» է, որը գրի է առնել 1634—40-ական թվականներին: Այն բաղկացած է երկու մասից: Առաջին մասում համառոտակի շարադրված են 1018—1539 թթ. իրադարձությունները, իսկ երկրորդում՝ 1595—1634 թթ. քաղաքական դեպքերը, որոնք հատկապես առնչվում են մեզ հետաքրքրող թեմայի հետ:

«Ժամանակագրությունը» չափազանց կարևոր նյութեր է պարունակում հատկապես XVI դ. վերջերին և XVII դ. սկզբներին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ներքին և արտաքին քաղաքական դեպքերի, այդ թվում թուրք-պարսկական պատերազմների և ջալալիական շարժման վերաբերյալ: Այդ դեպքերը և ընդհանրապես Թուրքիայի պատմությանը վերաբերող զանազան տեղեկություններ հիմնականում տրված են հետևյալ գլուխներում. «Վասն սուլթան Ահմատին» (2-րդ գլուխ), «Վասն սուրկունին ի ժամանակս Մուրատ փաշային և սուլտան Ահմատին, թե զի՞նչ եղին կամ ո՞րպես գործեցան, և ջալալեացն թէ զի՞հրդ իսպառ ջնջեցան և կորսն անհետ» (5), «Վասն սպանման սուլթան Օսմանին թէ որպէս եղև» (8), «Վասն տղայաժողովին» (9), «Վասն այս Յապաղայիս՝ թէ զի՞հրդ եղին կեանքն և կատարումն նորին» (11), ինչպես նաև 32-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ գլուխներում:

Գրիգոր Դարանաղցու նկարագրած դեպքերը հավաստի են, քանի որ նա ականատես է եղել դրանց մեծ մասին: Դարանաղցին սաույգ տեղեկություններ է տվել հատկապես ջալալիների շարժման վերաբերյալ⁵² և այդ կապակցությամբ անդրադարձել է գյուղերի ու քաղաքների ավերման, ինչպես նաև հայ ժողովրդի կրած տառապանքների ու աղետների նկարագրությանը: Հաճախ նա չի սահմանափակվում դեպքերի պարզ շարադրությամբ և մեկնաբանություններ է անում ջալալիական շարժման սոցիալական դրդապատճառների ու դրա ունեցած հետևանք-

⁵⁰ Polonyali Simeon'un seyahatnamesi (1608—1619). türkaeye çeviren Hrand D. Andreasyan, Istanboul, 19⁵⁴.

⁵¹ Симеон Лехацци, Путевые заметки. Перевод с армянского, предисловие, примечания и указатели М. О. Дарбинян, М., 1965.

⁵² Զալալիների շարժման մասին կարևոր սկզբնաղբյուր է նաև Ազարիա Սասնեցու «Ողբ ի վերայ հարուածոյ արեւելեան զավառացն և աշխարհին Հայոց ի ձեռաց Ենալի-եանց» աշխատությունը («Հանդէս մամուրեայ», 1937, էջ 326):

ների, ինչպես նաև կայսրության ներքին վիճակի ու կառավարության ապրած ձգնաժամային երևույթների մասին⁵³։

Գրիգոր Դարանաղցու «Ժամանակագրությունը» լույս է տեսել 1915 թ. Նրուսաղեմում՝ Մեսրոպ վարդապետ Նշանյանի աշխատասիրությամբ։

XVII դ. մյուս նշանավոր պատմագիրը Առաքել Դավրիժեցին է⁵⁴։ Նա գրել է հայ ժողովրդի 60 տարվա՝ 1602—1662 թթ. պատմությունը՝ «Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ» գիրքը բաղկացած է սեղմ առաջաբանից և 56 գլխից։ Պատմության բուն մասը վերաբերում է XVII դ. առաջին կեսի։ Թուրք-պարսկական պատերազմների երրորդ շրջանին, պատերազմներ, որոնք հիմնականում ծավալվեցին պատմական Հայաստանում։ Նա մանրամասն խոսում է Շահ-Աբբաս I-ի դեպի Հայաստան, մասամբ էլ Վրաստան կատարած արշավանքների և Օսմանյան կայսրության դեմ մղած նրա պատերազմների մասին։ Դավրիժեցին դառնությամբ նկարագրում է նաև հայերի բռնի զանգվածային տեղահանությունն իրենց հայրենիքից։ Նա ուշագրավ տեղեկություններ է հաղորդում XVII դ. սկզբում ծավալված ջալալիական շարժումների մասին, որոնց նվիրված է գրքի 7-րդ գլուխը «Յաղագս յայտնելոյ ջալալոցն և սաստիկ սովուն և մարդակեր գայլոցն, և այլ ևս աւարառութեանցն» որք ժամանեցին՝ ի վերայ աշխարհի» խորագրով։ Գրքի 51-րդ գլխում, որի խորագիրն է «Պատմութիւն օսմանցոց թագաւորաց, օսման օղլու կարգն այս է, որ կոչի խոնդբար», խոսվում է Օսմանյան կայսրության հիմնադիր Օսման I-ի և նրա հաջորդների, ինչպես նաև նրանց օրոք տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների մասին։

Դավրիժեցու «Պատմությունը» առաջին անգամ լույս է տեսել հեղինակի կենդանության օրոք՝ 1669 թ. Ամստերդամում, Ոսկան Երևանցու նախաձեռնությամբ⁵⁵։ Այնուհետև՝ 1884 և 1896 թթ. լույս է տեսել էջմիածնում⁵⁶։ Գոյություն ունի նաև Բրոսսեի ֆրանսերեն հրատարակությունը⁵⁷։ 1973 թ. տպագրվել է նաև ռուսերեն թարգմանությունը⁵⁸։

⁵³ Մ. Կ. Զալալյան, Զալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI—XVII դդ.), Երևան, 1966, էջ 31։

⁵⁴ Կենսագրության մասին տե՛ս Լ. Գ. Դանեղյան, Առաքել Դավրիժեցու պատմությունը, որպես Սեֆյան իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1978։

⁵⁵ «Գիրք պատմութեանց, շարադրեալ վարդապետին Առաքելոյ Դավրիժեցոյ», Ամստերդամ, 1669։

⁵⁶ «Պատմութիւն Առաքելոյ վարդապետի Դավրիժեցոյ», Վաղարշապատ, 1884, 1896։

⁵⁷ M. Brosset, Livre d'histoires, composé par le vartabéd Arakel de Tauriz, «Collections d'historiens arméniens», t. I, sPB, 1874.

Երեմիա Չելքի Քյոմուրճյանը (1637—1695) XVII դ. հայ մատենագրության խոշոր դեմքերից է⁵⁹։ Նրա աշխատությունները հարուստ նյութ են պարունակում սովյալ ժամանակաշրջանի Օսմանյան կայսրության պատմությունը և այլ ժողովուրդների սոցիալ-տնտեսական կյանքն ուսումնասիրելու համար։ Հատկապես պատմագիտական դործերում նա առանձնակի ուշադրություն է դարձրել թուրքական պետության ներքին վիճակի, պալատական երկպառակությունների, կենտրոնախույս ծրագրումներ ունեցող ֆեոդալների, ջալալիական շարժումների ու պատերազմների հետևանքով առաջացած ծանր հարկերի վրա և այլն։

Ե. Քյոմուրճյանի դրական հարուստ ժառանգությունը, մեծ մասամբ անտիպ, պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, Վենետիկի Մխիթարյանների մոսկովյան և Երուսաղեմի ս. Հակոբա վանքում։ Առանձին ձեռագրեր գտնվում են Նոր Զուղայի, Արմաշի, Ղալաթիո մատենադարաններում և բրիտանական թանգարանում, ինչպես նաև անհատական հավաքածուների մեջ։

Ստորև բերում ենք Ե. Չ. Քյոմուրճյանի՝ Թուրքիայի պատմության հետ առնչվող աշխատությունները։

1. «Պատմութիւն համառոտ ԴՃ տարւոյ օսմանցւոց թագաւորացն, որ ի սուլթան Օսմանէն մինչև այժմ սուլթան Մոհամէտ ԺԹ թագաւորք են»։ Այս չափածո աշխատությունը բովանդակում է կայսրության 400 տարվա պատմությունը, սկսած սուլթան Օսման I-ից մինչև սուլթան Մեհմետ IV-ի (1648—1687) գահակալության ժամանակաշրջանը։ Ե. Քյոմուրճյանը ժամանակագրական կարգով թվարկում է օսմանյան սուլթաններին՝ նշելով նրանց օրոք տեղի ունեցած պատերազմներն ու նվաճումները Բալկանյան թերակղզում, Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում։ Կարևոր տեղեկություններ կան նշված ժամանակաշրջանում Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականության, Թուրքիայում ապրող ժողովուրդների քաղաքական ու սոցիալ-տնտեսական դրության և կայսրության մեջ բռնկված ենիչերիական ապստամբությունների, ջալալիական շարժումների, ինչպես նաև օսմանյան լծի տակ հեծող ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի մասին։ Այս երկն անտիպ է։ Ձեռագիրը գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (№ 1675, էջ 174ա)։

⁵⁸ Аракел Даврижеци, Книга истории, перевод с армянского, предисловие и комментарий Л. Ханларяна, М., 1973.

⁵⁹ Քյոմուրճյանի կենսագրության մասին մանրամասն տե՛ս Հ. Ս. Սաճալյան, Երեմիա Քյոմուրճյան, Երևան, 1964, էջ 9—40։

2. «Թագավորութեան օսմանցւոյ համառօտիվ պատմութիւն»։ Այս ճրկը վերը նշված «Պատմութեան» արձակ համառօտագրութիւնն է։ Քաղաքական պատմութեանը ղուգընթաց Ե. Քյոմուրճեանը հանգամանորեն կանգ է առել նաև Թուրքիայում գոյութիւն ունեցող սոցիալական անհավասարութիւնների վրա և քննադատել է օսմանյան սուլթանների բռնակալական ռեժիմը։

Անտիպ է, պահպանված են հետեյալ ձեռագիր օրինակները՝ Երևանի Մատենադարանում՝ ձեռ. № 1786, էջ 1ա 81բ, Վիեննայի Միխիթարյանների մատենադարանում՝ ձեռ. № 786 և Երուսաղեմի ս. Հակոբա վանքի Մատենադարանում՝ ձեռ. № 464։

3. «Անուանք որդոյ Թագաւորաց Օսմանցւոց»։ Համառոտ պատմութիւն է, ուր հաջորդաբար թվարկվում են օսմանյան սուլթանները, նշվում են նրանց ծննդան, մահվան, գահակալութեան տարեթիւերը, ինչպես նաև տվյալ սուլթանի օրոք կատարված նվաճումներն ու իրադարձութիւնները։

Անտիպ է, պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (ձեռ. № 1786, էջ 88բ—95ա)։

4. «Ուտիւ շարագրեալ անուանք Թագաւորաց օսմանցւոց»։ Շատ սեղմ թվարկում է օսմանյան սուլթաններին և նրանց կատարած կարևոր գործերը։ Պահվում է Երևանի Մատենադարանում (ձեռ. № 1786, էջ 97ա—98)։

5. «Օրագրութիւն»։ Ամբողջական վերնագիրն է՝ «Հեղինակ օրագրութեան է Երեմիայ Զէլէպի, որդի տէր Մարտիրոս քահանայի», որտեղ մասնավորապես նկարագրված են նաև 1648 թ. հունիսի 11-ից մինչև 1663 թ. նոյեմբերի 11-ը Թուրքիայում կատարված մի շարք կարևոր քաղաքական իրադարձութիւնները, ինչպես նաև բնակչութեան կենցաղի և ծիսական սովորութիւնները։

Զեռագիրը պահվում է Երուսաղեմի ս. Հակոբա մատենադարանում (ձեռ. № 1893)։ Զեռագիրը հրատարակել է Մեսրոպ Նշանյանը⁶⁰։

6. «Պատմական բանք իւրոյ ժամանակին»։ 1682 թ. էջմիածնի Եղիազար կաթողիկոսին Ե. Քյոմուրճեանի առաքած թուղթն է, որտեղ նկարագրվում են Կ. Պոլսի կառավարող շրջաններին վերաբերող անցքերը, ինչպես նաև «Խորհուրդ ֆռանցոց արքայի ընդ կայսեր Հռոմայս, «Պատրաստութիւն Տաճկաց մարտի ընդ Մաճարս», «Վասն դեսպանին

⁶⁰ «Օրագրութիւն Երեմիայ Զէլէպի Քէօմիւրճեանի», հրատարակել Մ. Նշանյան, Երուսաղեմ, 1939։

Մոսկովաց» և հայ-իրանական կյանքին վերաբերող զանազան հարցեր: Ձեռագիրը գտնվում է Երուսաղեմի ս. Հակոբա մատենադարանում (ձեռ. № 1858, էջ 44ա—56բ):

7. «Համառոտ ստորագրութիւն Կ. Պոլսոյ նեղուցի»: Բնագիրը չի պահպանվել:

8. «Աշխարհագրութիւն»: Բնագիրը չի պահպանվել: Ն. Ակինյանը նշում է, որ այս աշխատությունից մնացել է միայն քարտեզը և առաջաբանի մի մասը, իսկ ձեռագրի տեղը առ այսօր հայտնի չէ⁶¹:

9. «Պատմութիւն հրակիզման Կ. Պոլսոյ»: Նկարագրվում է 1660 թ. հուլիսի 14-ին Կ. Պոլսում տեղի ունեցած հրդեհը: Այս կապակցությամբ Քյոմուրճյանն անդրադարձել է Թուրքիայի ներքին դրության ստվերոտ կողմերին: Ձեռագիրը գտնվում է Երուսաղեմի ս. Հակոբա մատենադարանում (ձեռ. № 892, էջ 172բ—270ա):

10. «Տարեգրական պատմութիւն»: Այս աշխատությունը բովանդակում է 1648—1690 թթ. Կ. Պոլսում և գավառներում եղած հրդեհների մանրամասն պատմությունը, ինչպես նաև երկրաշարժերի, հեղեղների և համաճարակների նկարագրություններ: Ուշագրավ են նաև XVII դ. տնդի ունեցած պատերազմները Օսմանյան կայսրության և Ավստրիայի, Հունգարիայի, Վենետիկի ու Պարսկաստանի միջև և այլն:

Այս երկը Քյոմուրճյանը շարագրել է 1692—1693 թթ.: Ձեռագիրն առ այսօր չի հրատարակված և գտնվում է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում (ձեռագիր № 509):

11. «Պատմութիւն Ստամպուլոյ»: Այս աշխատությունը կարևոր տեղեկություններ է պարունակում XVII դ. ոչ միայն Կ. Պոլսի, այլև Թուրքիայի պատմության համար: Քյոմուրճյանը մանրամասն նկարագրում է Կ. Պոլսի պալատները, հյուպատոսարանները, շենքերը, շուկաները, արհեստները, առևտուրը, ինչպես նաև խոսում է քաղաքամերձ գյուղերի գյուղատնտեսության զանազան ճյուղերի մասին: «Ստամպուլոյ պատմութիւնը» արժեքավոր աղբյուր է նաև տվյալ ժամանակաշրջանի Կ. Պոլսի բնակչության կենցաղային և սոցիալ-քաղաքական հարցերն ուսումնասիրելու համար:

Ինքնագիր ձեռագիրը պահվում է Երուսաղեմի ս. Հակոբա մատենադարանում (ձեռագիր № 1030): Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվել են նաև երկու ձեռագիր օրինակներ № 1345, № 1675: Գո-

⁶¹ Հ. Ս. Սահակյան, նշվ. աշխ., էջ 45:

յություն ունեն այս աշխատության հայերեն⁶² և թուրքերեն⁶³ հրատարակությունները:

12. «Կոնդակ Ս. Կարապետ եկեղեցւոյ ի Կրետե կղզւոյ»: Բովանդակում է 1669 թ. սեպտեմբերի 6-ին մեծ վեզիր Քյոփրլուլլուի կողմից Կրետեի Գանտիա քաղաքի գրավման և քրիստոնյաների հալածման նկարագրությունը: Ձեռագիրը գտնվում է Փարիզում՝ Հովհաննես Զավրյանի մոտ:

Ե. Զ. Քյոմուրճյանը հայերենից թուրքերեն է թարգմանել մի շարք կրոնական և պատմական երկեր:

1. «Թարգմանութիւն նոր կտակարանի և մասանց հին կտակարանի ի լեզու տաճկաց»։ Անտիպ է: Բնագիրը պահպանվում է Մատենադարանի № 1645 ձեռագրում, էջ 119ա—219ա:

2. «Սաղմոսք Դաւթի»: Թարգմանված է 1692 թ.: Անտիպ է: Պահպանված են հետևյալ ձեռագիր օրինակները. Մաշտոցի անվան Մատենադարանում ձեռագիր № 1644 (էջ 294ա, 303ա) և Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանում ձեռագիր № 85, № 988 (էջ 89ա—99ա և 101ա—104ա):

3. «Քարոզներ թուրքերեն լեզվով»: Անտիպ է: Պահպանվել է Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի № 408 ձեռագրում (էջ 9ա—21բ, 28ա—94ա):

4. «Յամառոտ Յայամաուրք ի լեզու տաճկաց»: Գրված է 1658 թ.: Բաժանված է 13 գլուխների և պարունակում է 175 վկայություն: Անտիպ է: Պահվում է Երուսաղեմի ս. Հակոբա վանքի մատենադարանում (№ 1076 ձեռագիր):

5. «Հիքեայէի Ֆարիս վէ վէնա» թերճէմէի Զէլէի Քէօմիւրճեանց»: Տպագրված է Կ. Պոլսում, 1871 թ.:

6. «Պատմութիւն մեծին Աղեքսանդրի»: Թուրքերեն թարգմանության ամբողջական խորագիրն է՝ «Քրիթապ Հէքիայէի ճիհանկիր Իսքէնտէր Գուրլ Գայնին. լիսան էրմէնեանտէն լիսան թուրքճէ թէրճումէի էսթ էլհագիր Իրէմեան»: Անտիպ է: Պահվում է Երուսաղեմի ս. Հակոբա վանքի մատենադարանում (ձեռագիր № 988, թղթ. 6ա, էջ 178ա):

⁶² Երեսմիա Զէլէյի Քէօմիւրճեանց, Ստամբուլ պատմութիւն, Հրատարակեց և ծանոթագրեց տեքստը Վահրամ Թորգոմյան, Վիեննա, հատ. Ա., 1913, հատ. Բ, 1932, հ. Գ, 1939:

⁶³ Eremya Çelebi Kömürcüyan, İstanbul tarihî, XVII asırda İstanbul, tercüme ve tahsiye eden Hrand D. Andreasyan, İstanbul, 1952.

Ե. Քյոմուրճյանի գրական ժառանգության մեջ կան նաև մի շարք թուրքերեն շարագրված թղթեր, տաղեր և զանազան ուղերձներ⁶⁴։

1) Տաճկաբարբառ թուղթ (առ Գրիգոր Զէլէբիին),

2) Տաճկաբարբառ թուղթ որ է Մուհապէթնամէ առ պուրսացիս ոմանս։

3) Առ տաճիկ ոմն հայազարմ թուղթ նաև արգմանէ նախագծօք։

4) Մի թուրքերեն ոտանավոր։

5) Տաղ ասացեալ ի յերեմիայէ վերայ Ս. Երուսաղէմայ թուրքերեն վերնագիրն է՝ «Մուճտէմ վարտր տօստլարիմէ»։ Հրատարակված է «Տաղարան փոքրիկ»-ում, էջ 41—43։

6) Տաղ ի վերայ ս. գերեզմանին Քրիստոսի, հրատարակված է «Տաղարան փոքրիկ»-ում, էջ 52—53։

Աբրահամ Երեանցիի XVIII դ. պատմագիր է։ Նրա պատմագիտական աշխատությունն ընդգրկում է 1721—1736 թթ. թուրքերի և պարսիկների միջև տեղի ունեցած պատերազմական դեպքերի, քաղաքների և գյուղերի ավերածությունների, սովի ու գերեվարության նկարագրությունը։ Աբրահամ Երեանցին, անկասկած, ականատես է եղել շարագրված դեպքերին, քանի որ նա խոսում է այդ իրադարձությունների մասին ամենայն մանրամասնությամբ։ Նրա հաղորդած տեղեկությունները արժեքավոր են նաև հայ և վրաց ժողովուրդների տվյալ ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրության համար։

Աբրահամ Երեանցու պատմությունը հրատարակվել է Երևանում՝ 1938 թ. «Պատմութիւն պատերազմացն, որք եղեն յօսմանցւոց ի վերայ քաղաքացն Հայաստանեայց և Պարսից՝ յետ գովարելոց Մահմուտ սուլտանին աղուանից ի վերայ արքային Պարսից Շահ-Սուլտան Հուսէինին» վերնագրով։ Պատմությունը բաժանված է 7 գլուխների։ Պատմության մեջ կարևոր տեղ են գրավում պարսիկ Թահմազ Դուլի խանի՝ Հայաստանի և Վրաստանի վրա կատարած արշավանքները, նրա մղած պատերազմներն ու հաղթանակներն ընդդեմ օսմանցիների։

Պատմության երկրորդ գլխում, որը կրում է «Թէ որպիսի մարտիւ պատերազմի առին օսմանցիք զԵրևան» վերնագիրը, մանրամասն նկարագրվում է թուրքական զորքի կողմից Երևանի բերդի գրավումը և հայ-թուրքական ընդհարումները։

Օսմանյան կայսրության պատմությանը վերաբերող հայկական աղբյուրներից անհրաժեշտ է հիշատակել նաև Մաշտոցի անվան Մա-

⁶⁴ Տե՛ս է. Ս. Սահակյան, նշվ. աշխ., էջ 171։

տենադարանի № 1496 ձեռագիրը, որն ունի «Պատմութիւն Օսմանցւոց» վերնագիրը⁶⁵։ Ձեռագիրը բաղկացած է 13 գլխից։ Հեղինակը առաջաբանում, ստուգաբանելով «թուրք» բառը, համառոտակի խոսել է թուրքերի էթնոգենեզի, նրանց տիրապետութեան սահմանների, կրոնի և ազգագրական որոշ նյութերի մասին։ Աշխատութեւնը սկսվում է Օսման I-ից՝ XIII դարի վերջից և հասնում Իրահիմ I-ի զահակալութեան 6-րդ տարին՝ 1646 թ.։ Հեղինակը մանրամասնորեն տվել է օսմանյան թուրքերի այս ժամանակաշրջանում վարած պատերազմների ամբողջական պատմութեւնը։ Ձեռագրում հետաքրքիր տեղեկութեւններ կան նաև Օսմանյան կայսրութեան ներքին իրադարձութեւնների մասին⁶⁶։

Այսպիսով, հայկական աղբյուրներում հատուկ ուշադրութեւն է դարձվել սելջուկ-թուրքերի և Օսմանյան կայսրութեան պատմութեան ամենատարբեր հարցերին և հաղորդվել չափազանց արժեքավոր տեղեկութեւններ։

Այդ տեղեկութեւններն էական նպաստ կարող են բերել խնդրո առարկա հարցերի քննութեան գործում։

XVIII դ. երկրորդ կեսին հայ պատմագրութեւնը, ոչի մեջ քիչ տեղ չի բռնում թուրքագիտութեւնը, հանդես եկավ որպես գիտական մտքի ինքնուրույն ճյուղ։ Դրա հիմնադիրն է բազմավաստակ գիտնական Միքայել Չամչյանը, որի գրչին են պատկանում թե՛ հայագիտական. և թե՛ կրոնադավանական բովանդակութեան զանազան աշխատութեւններ։ Դրանցից ամենաարժեքավորը «Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784» խորագրով ստվարածավալ աշխատութեւնն է, որի մեջ Մ. Չամչյանը առանձին ուշադրութեւն է դարձրել նաև հարևան ժողովուրդների և Հայաստանն ասպատակող զանազան բարբարոս ժողովուրդների պատմութեանը։

Մ. Չամչյանը առանձին էջեր է նվիրել նաև մեզ հետաքրքրող թուրքագիտութեան հարցերին, որոնք հիմնականում ընդգրկված են երկրորդ հատորում։ Այդ կապակցութեամբ արժե հիշել հետևյալ գլուխները. «Յաղագս զօրանալոյ ձինկիզ խանին թաթարաց և յարձակելոյ սարահաղաց և ջալալադինայ ի հայս» (էջ 197), «Յաղագս յարձակելոյ թաթարաց յաղուանիս ի վիրս, և ի հայս» (էջ 204), «Յաղագս յառնելոյ Լանկթա-

⁶⁵ Վ. Ա. Հակոբյան, Մաշտոցի անվան մատենադարանի № 1496 ձեռագրի ժամանակի և հեղինակի հարցի շուրջը (տե՛ս էջեր հայ ժողովրդի պատմութեան և բանասիրութեան», Երևան, 1971, էջ 137)։

⁶⁶ Վ. Ա. Հակոբյանի ենթադրութեամբ, այս ձեռագրի հեղինակը Իզնատիոս Մուրադա ղ' Օսոնի է (նույն տեղում, էջ 149)։

մուրայ և հարուածոց դորս գործեցաւ նա ի Հայաստան և յայլ տեղիս» (էջ 419), «Յաղագս յառնելոյ օսմանցւոց զԿոստանդնուպօլիս ի ձեռաց յունաց», «Յաղագս ելից ուղուն Հասանայ, և շահ Իսմայիլի արքային պարսից և մարտնչելոց նոցա առ օսմանցիս» (էջ 509) և այլն:

Մ. Զամչյանը մեկ հատորով գրել է նաև այս պատմության համառոտագրութիւնը թուրքերին լեզվով, որը հրատարակվել է Վենետիկում 1811 թ. «Գլուղար» խորագրով:

XVIII դ. պատմաբանների շարքին պիտք է դասել նաև հայ ահա-նալոր պատմաբան-դիվանագետ Իզնատիոս Մուրաշա դ'Օստենին (Հակոբ Հիսաթյան), որը առավելագուհի հայտնի է իր «Օսմանյան կայսրության ընդհանուր պատկերը» կոթողական աշխատութեամբ:

Աշխատութիւնը բաղկացած է յոթ հատորից: Չորրորդ հատորը լույս է տեսել երկու մասով: Առաջին շորս հատորների մեջ հեղինակը հիմնականում խոսել է մահմեդական օրենսդրության՝ այդ թվում, մահմեդական դավանաբանութեան, ժխականտարութեան և բարոյախոսութեան հարցերի շուրջ⁶⁷:

Հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ հատորներում հեղինակը մանրամասնորեն ուսումնասիրել է Օսմանյան կայսրության քաղաքական, ռազմական, իրավաբանական և քրեական օրենքները, ինչպես նաև Օսմանյան կայսրության վարչական կառուցվածքն ու օտար պետութունների հետ ունեցած նրա դիվանագիտական հարաբերութիւնները⁶⁸:

Օսմանյան կայսրության պատմութիւնն ուսումնասիրողները միշտ էլ կարող են արժեքավոր նյութեր քաղել դ'Օստենի այս աշխատութիւնից, քանի որ հեղինակը, երկար տարիներ ապրելով Կ. Պոլսում, անշուշտ է հղել զանազան իրադարձութիւնների և օգտագործել է հարուստ արխիվային նյութեր:

ՀԱՅ ԹՈՒՐԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

Հայաստանի մեծ մասը՝ Արևմտյան Հայաստանը, գտնվելով Թուրքիայի լծի տակ, միշտ եղել է հայ հեղինակների ուղադրության կենտրոնում: Վերջիններս Արևմտյան Հայաստանի մասին իրենց աշխատու-

⁶⁷ Tableau Général de l'Empire Othoman, par m. de M. D'Ohsson, Paris, tome premier et second 1788, tome troisième 1790, tome quatrième (première et second partie), 1791.

⁶⁸ Այս հատորները հրատարակել է որդին հեղինակի մահից հետո (տե՛ս Tableau Général de l'Empire Othoman, par m. de M. D'Ohsson, publié par M. C. D'Ohsson, fils de l'auteur, tome cinquième et sixième, Paris, 1824).

թյուններում, բնականաբար, չէին կարող շանդրադառնալ Օսմանյան կայսրության պատմության հարցերի լուսաբանմանը: Եվ պատահական չէ, որ XIX դ. ընթացքում Օսմանյան կայսրության մասին հայերեն լույս են տեսել բազմաթիվ ուսումնասիրություններ:

Այդ առումով հիշատակության արժանի են Վենետիկի Մխիթարյանների հրատարակած ստվարածավալ աշխատությունները: Չնայած դրանց մեծ մասը նվիրված է հայ ժողովրդի պատմությանը, Մխիթարյանների տեսադաշտից դուրս չեն մնացել նաև օսմանյան սուլթանության պրոբլեմները, որոնց հետ սերտորեն առնչվում են արևմտահայության խնդիրները:

Անցյալ դարասկզբի Մխիթարյան միաբանության ակադեմիկոս պատմաբաններից է Ղուկաս Իճեհնյանը (1768—1843), որի գրչին են պատկանում մի շարք ստվարածավալ հատորներ: Ինճիճյանի աշխատություններում բերված հարուստ փաստական նյութը քաղված է թուրք պատմիչների ձեռագրերից, հայկական աղբյուրներից, եվրոպական լեզուներով լույս տեսած գրականությունից, որոնց մեծ մասը մեզ չի հասել: Այդ իսկ պատճառով Օսմանյան կայսրության նոր շրջանի պատմության հարցերով զբաղվողի համար Ինճիճյանի գրքերը կարևոր սկզբնաղբյուր են:

Ուշագրավ է Ինճիճյանի՝ Կոստանդնուպոլսի և Բոսֆորի նեղուցի մասին ուսումնասիրությունը¹: Առաջաբանում հեղինակը նշել է Կոստանդնուպոլսի և Բոսֆորի վերաբերյալ աշխատությունները, նկարագրել նեղուցների աշխարհագրական դիրքը և տեղադրել նրանց քարտեզները: Գրքում չափածո տրված է քաղաքի թաղամասերի և շրջակայքի հնությունների, մզկիթների, պալատների նկարագրությունը: Ա. Կարինյանն իրավացիորեն գրում է, որ Ինճիճյանի աշխատությունը ուշագրավ տեղեկագրական մի պոեմ է, որն այսօր անգամ կարող է գրավել վաղեմի անցյալը ուսումնասիրող պատմաբանների ուշադրությունը²: Ղ. Ինճիճյանի այս գիրքը ժամանակին հրատարակվել է ֆրանսերեն և իտալերեն³:

¹ Ղ. Իճեհնյան, Ամրանոց Բիւզանդեան. Ի նեղուցին Կոստանդնուպոլսոյ կոչեցնալ ի տաճկաց Պօղազ Իշի, որում յավելեալ և հաւողութեան վէղիրի ազէմից, Վենետիկ, 1794:

² Ա. Կարինյան, Անկարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. 2, Երևան, 1960, էջ 79:

³ Ա. Ղ. Ղազիկյան, Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի, հատ. Ա, Վենետիկ, 1909—1912, էջ 893—894:

Հատկապես հիշատակման արժանի է Ինճիճյանի և նույն Մխիթարյան միաբանության վարդապետ Ստեփանոս Գյուվեր Ագոնցի «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի Եվրոպիո, Ափրիկո և Ամերիկո» բազմահատոր աշխատությունը (Վենետիկ, 1802—1806), որից Ինճիճյանի գրչին են պատկանում առաջին, հինգերորդ և վեցերորդ հատորները:

«Աշխարհագրությունը» շարադրված է ինչպես թուրքական, եվրոպական, այնպես էլ հայկական աղբյուրների և հրատարակված աշխատությունների հիման վրա: Առաջին հատորը նվիրված է Օսմանյան կայսրության, հատկապես Արևմտյան Հայաստանի նահանգներին: Հանգամանորեն խոսվում է Թուրքիայի արևելյան նահանգների աշխարհագրական դիրքի, կլիմայի, վարչական բաժանման, բնական հարստությունների, տնտեսության, առևտրի, ապրանքափոխանակության, մաքսային տուրքերի, տարբեր ազգությունների զբաղմունքի, հարկերի մասին: Տրված է նաև նահանգների ընդհանուր պատկերը, նրանց մեջ մտնող սանջակների, նահիենների, քաղաքների և գյուղերի նկարագրությունը:

«Աշխարհագրության» առաջին հատորում հեղինակը բազմաթիվ թվական տվյալներով ցույց է տալիս օսմանյան կառավարության վարած քաղաքականության աղետաբեր հետևանքները Թուրքիայի արևելյան նահանգներում: Բերենք միայն մեկ օրինակ. եթե Մանազկերտի սանջակում XVII—XVIII դդ. հայկական գյուղերի թիվը 350 էր, ապա XVIII դ. 60-ական թվականներին կազմում էր 100, իսկ նույն դարի վերջում՝ 20⁴:

Ղ. Ինճիճյանը բազմաթիվ փաստերի հիման վրա ցույց է տալիս, որ Թուրքիայի արևելյան նահանգներում սուլթանի իշխանությունը ձեռնարկած ռեֆորմ բեգերն էին: Սուլթանական կառավարության ձեռնարկած բոլոր միջոցառումները, շեշտում է Ինճիճյանը, ծնկի բերելու քուրդ բեգերին՝ ձախողվում էին:

Հեղինակը մանրամասն նկարագրում է սուլթանի պալատի վարքն ու բարքը, կառավարության անդամների, հատկապես մեծ վեզիրի գործնեությունը, որի իրավասության տակ էր գտնվում օրենսդրական և գործադիր իշխանությունը: Հոգեւորականության՝ ուլեմի, գլուխն էր

⁴ Հ. Ղ. Ինճիճյան, Աշխարհագրութիւն..., հատ. Ա, Վենետիկ, 1806, էջ 111:

շնխ ու իսլամը, որը, ըստ Ինճիճյանի, ոչ պակաս իրավունքներից էր օգտվում, քան մեծ վեղիրը⁵։

Ղ. Ինճիճյանի ծավալուն աշխատություններից է ութհատորյա «Դարապատումը», որը լույս է տեսել 1824—1828 թթ.։ Գրված է դուրամատչելի այն աշխարհաբար հայերենով, որը Թուրքիայի հայ վաճառականների և արհեստավորների խոսակցական լեզուն էր։ «Դարապատում»-ի մեջ լուսաբանված է համաշխարհային կենդարյա պատմությունը՝ սկսած 1750 թ. մինչև 1800 թ.։ Այդ ստվարածավալ հատորները շարադրված են բազմաթիվ եվրոպական ու թուրքական սկզբնաղբյուրների հիման վրա։ Հեղինակը՝ պատմական դեպքերը նկարագրելիս դրսևորում է իր մոտեցումը, տալիս իր մեկնաբանումը։

Մեծ տեղ է տրված Օսմանյան կայսրության կենդարյա պատմությանը՝ սկսած XVIII դ. 50-ական թվականներից մինչև XIX դ. սկիզբը։

Առաջին հատորում, լուսաբանելով կայսրության արտաքին և ներքին առևտրի հարցերը, հեղինակը շեշտում է, որ օսմանցին ճառատաձեռնութիւն մը կը ցըցընէ ուրիշ տերութեանց հետ. հոգ չէ որ՝ դուրսեցիք իր երկրէն ավելի վաստըկին, Ծվրոպիա տանին վաստըկնին, այլ ամմէն տերութեան առաջին բաց է օսմանհան երկիրը. ո՛վ որ ի՛նչ ուզէ՝ կրնայ բերել ծախել, իրմէ վաստըկիւ։

Ընթերցողը լրիվ պատկերացում է ստանում XVIII դ. երկրորդ կեսին և XIX դ. սկզբին Օսմանյան կայսրություն ներմուծվող և արտահանվող ապրանքների տեսակների և քանակի մասին։

Ղ. Ինճիճյանը, խոսելով արտահանվող հումքի որակի մասին, գրում է. «Օսմանեան երկրէն ելած նաև ուրիշ ապրանքները... մանավանդ Պուրսայի իփէկին առևտուրը, որ աշխըրհիս մէջ մէկ հատիկ է, մէյմը իր փայլունութեանը համար մէյմնալ իր ձիգնալուն ու երկըննալուն համար»⁶։ Հեղինակը ջանում է բացատրել, թե ինչու էր սովթանական կառավարությունը անշահավետ առևտուր անում. «Բարիքը օգուտը աս է որ՝ ան տերութիւնները միշտ իրեն պաշտպան կը կենան, անանկով առանց դաշնակցութիւն մը ընելու անոնց հետ՝ իբր թէ կատարեալ դաշնակից ըրած կունենայ զիրենք»⁷։ Նա փորձում է խորամուկս լինել Օսմանյան կայսրության դեմոգրաֆիայի, մշակութային և ներքին կյանքի այլ խնդիրների մեջ։

⁵ Ղ. Ինճիճյան, Աշխարհագրութիւն, հատ. Ծ, Վենետիկ, 1804, էջ 89։

⁶ Ղ. Ինճիճյան, Դարապատում (1750—1757), Վենետիկ, 1824, էջ 232—233։

⁷ Նույն տեղում։

«Դարապատում»-ի երկրորդ հատորը նվիրված է 1757—1768 թթ. դեպքերի լուսաբանմանը: Մանրամասնորեն նկարագրված է 1754 թ. ձմեռը Ստամբուլում. «Ան տարին սաստիկ եղավ ձմեռը, անշափ, որ Ստամպոլին նավահանգստին ներսի դիէրը սառեցավ ծովը...»⁸: Հաջորդ տարին՝ 1755 թ. հուլիսի 9-ին Ստամբուլում հրդեհ բռնկվեց, որի հետևանքով 4500 տան չափ երվեցան ու 200 ալ մարդ. իսկ հետևեալ տարին 1756 յունիսի 24 ավելի մեծ կրակ եղավ... ոմանց ըսածին պէս 100 ճամի երվեցան, 40 հազար տուն, 50 հազար խանութ. գետնի տակի եղած ջուրի ճամփայնէրուն դուրշինէրը հալեցան. հազար մարդու չափ ալ կորսեցան աս կրակէն»⁹:

Հանգամանորեն խոսվում է նաև կայսրութեան հանքային հարուստութիւնների մասին. «Օսմանցիի երկրին չիբանված հանքերուն համբանքը խիստ շատ են, ինչպէս ոմանք 400-ի կհասնեն ամմէնեն ավելի Մանիսային մեծ լեռանը վրայ է, որ Իզմիրին կոնակը կիյնայ—ասիկայ յունաց ատենը կըբանվէր...»:

Ղ. Ինճիճյանի ուշադրութիւնից չեն վրիպել XVIII դ. երկրորդ կեսին (Օսմանյան կայսրութեան անկման շրջանում) ինչպես խոշոր ֆեոդալների, բեգերի, փաշաների երկպառակշական կոիվները, այնպես էլ թուրք զավթիչների լծի տակ ընկած ժողովուրդների պայքարը: Այսպես, վերլուծելով Մուստաֆայի սուլթանութեան օրոք կայսրութեան ներքին դրութիւնը, Ինճիճյանն ընդգծում է, որ թեև նրա իշխանութեան տարիներին պատերազմներ համեմատաբար քիչ եղան՝ «Միայն թէ աս դին ան դին ապստամբնէրը շէին պակսէր, Կիւրճիի մէջէն, Մորայ մէջէն, որուն պէյէրը մեծ խռովուի հանեցին, Խըպըսի մէջէն, բայց ամմէնէն ավելի Ռումէլիի մէջ խարատաղցիք մեծ ապստամբութիւն հանեցին 1181 հիճըթթին՝ յամին 1767. որոնց վրայ զօրք խըրկեց սուլթան Մուստաֆան ու 1768 անոնք կոտրեց»¹⁰:

«Դարապատում»-ում բավականին նյութ կա ենիչերիական զորքի և նրա դերի մասին: Այդ զորքը ժամանակին մեծ ուժ էր ներկայացնում և շատ հաճախ սուլթանները ենթարկվում էին նրան: Սակայն, ինչպես նկատում է Ինճիճյանը, ենիչերիները սուլթան Ահմեդի (1703—1730) օրոք բարձրացրած ապստամբութիւնից ճետե տկարացած էին, առջի քաջասրտութիւնը չունեին»¹¹: Ենիչերիական զորքի մասին բերված

⁸ Հ. Ղ. Ինճիճյան, Դարապատում (1757—1768), Վեներիկ, 1825, էջ 246:

⁹ Նույն տեղում, էջ 246—247:

¹⁰ Նույն տեղում, էջ 259:

¹¹ Նույն տեղում, էջ 251:

փաստերը նոր լույս են սփռում նրա խաղացած դերի լուսարանման վրա:

Ղ. Ինճիճյանի ուսումնասիրության հրոգող հատորը նվիրված է 1768—1780-ական թթ. ինչպես Օսմանյան կայսրության, այնպես էլ հարևան մյուս պետությունների ներքին և արտաքին քաղաքականության, դիվանագիտական ու պատերազմական հարցերին: Հեղինակը փաստական հարուստ նյութերով ցույց է տալիս Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական կացությունը՝ շեշտը դնելով հատկապես ագրարային հարաբերությունների, հարկային սխտեմի, պետական պաշտոնյաների շարաշահումների և այլ խնդիրների վրա: Ինճիճյանը խորությամբ լուսաբանում է գյուղացիության ծանր վիճակը: Նա նշում է, որ երբ գյուղացիներն ի վիճակի չէին տուրքերը ժամանակին վճարելու, ռազմը վրան կոչեին, շահին շահը կպահանջէին: Անանկով առջի տրվածին 20—30 դուռուշ էր, շահը վրան զարնելով՝ քանի մը տարվան մէջ հազարներով պարտըկան կմնային. գեղացիք անոնց, ինչ ընելին շիտէին իրենց ամմէն ապրանքը ու երկիրը ան պարտատերերուն ձեռքը կանցնէր, գեղացիք միշտ ծանր պարտքի տակ ընկած էին, ու անոնց գերի եղած»¹²:

Ղ. Ինճիճյանը վառ գույներով պատկերում է էսնաֆությունները, էսնաֆների տեղային կազմակերպությունները, արհեստների տեսակները և այլն¹³:

Հեղինակը մանրամասն տալիս է նաև ռուս-թուրքական 1768—1774 թթ. պատերազմի նկարագրությունը:

Ղ. Ինճիճյանը նախքան պատերազմական գործողությունների նկարագրությանն անցնելը ներկայացնում է եվրոպական պետությունների բռնած դիրքը այդ պատերազմի նկատմամբ: Այնուհետև, խոսելով պատերազմող երկու պետությունների ռազմական ուժերի մասին, նշում է. «Առջի բերանը 200 հազար զօրք պատրաստեց տաճիկը, 30 միլիոն խաղնայէն դուրս հանելով մեծ և ահավոր պատրաստություն տեսնելով, հոքը շատանալով 400 հազարը կամ ըստ ոմանց 600 հազարը անցավ...»¹⁴:

Հեղինակը մանրամասն նկարագրում է բերդերի և քաղաքների համար տեղի ունեցած համառ մարտերը¹⁵: Այսպես, պատմելով Բենդեր

¹² Ղ. Ինճիճյան, Դարապատում (1768—1780), Վնեստիկ, 1826, էջ 4—5:

¹³ Նույն տեղում, էջ 10:

¹⁴ Նույն տեղում, էջ 29—30:

¹⁵ Նույն տեղում, էջ 55—56:

բերդաքաղաքի համար տեղի ունեցած արյունահեղ մարտերի մասին, նա ընդգծում է. «Երբոր հոս ասանկ արիւնահեղութիւն կըլլար, մէկալ դիացէնալ մոսկովնէրը ինչ ամրութիւն որ շինած կային՝ յարձըկելով առին, կշանային բերդին վրայ ելլալ, ուր որ պահմած էր էմին փաշան իրեն մնացած զօրքովը, որ յուսահատելով անձնատուր եղավ երկու ուրիշ փաշայնէրով: Ասանկով 12 ժամի շափ ծեծկըվելով՝ արիւն թափելով՝ շատը գիշեր ատեն՝ առնըվեցավ Պէնտէր 1184 հիճրէթին... Ասանկ շատ մարդ կորսնցընելով Մոսկովը կըցավ առնել... իրեք օր երեցավ քաղաքը, շատ մարդ ալ ան կրակին կորան. անանկ որ առաջ 60 հազար բնակիչ կային Պէնտէրին մէջը, աս ծեծիս մէջը մոխիր եղավ, ու մէկ ավերակ մը դարձավ»¹⁶: Նկարագրելով թուրքական զորքերի կրած պարտությունը պատերազմում և նրանց զգալի մասի գերեվարվելը, հեղինակը գրում է. «Ենիշէրինէրէն շատն ալ փախան անատօլու իրենց քաղքըները գացին, ճամփան շատ տաճկի քաղաք թալլելով, վնասէլով»¹⁷:

Նա հանգամանորեն լուսաբանում է նաև պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրության ներքին դրությունը: Նշվում է, որ պատերազմում պարտվելը այն հետևանքն ունեցավ, որ Ստամբուլում, Անատոլիայում և Բալկաններում բռնկվեցին ապստամբություններ¹⁸:

Հեղինակը մանրամասն նկարագրում է Օսմանյան կայսրության դրությունը 1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանում՝ ավարտելով շարադրանքը 1782 թվականով: Այդ տարիներին Ստամբուլի գլխավոր դեպքերն էին, ըստ հեղինակի, 1778 թ. ժանտախտը և 1782 թ. հրդեհը: «Անանկ սաստիկ եղավ ժանտախտը,—ընդգծում է Ինճիճյանը,—որ շատոնց անանկ չէր եղած, ասոր սաստկութիւնը 40 օր քշեց. բայց ան 40 օրվան մէջը թաղէր (մահալէնէր) տնէր պարպեց. օր կըլլար ինչվան 3—4 հազար հոգի կըմեռնէին... Բայց Ստանպօլ շատվորութիւնէ դիացէն անակ մէկ անհասկընալի քաղաք մընէ որ՝ ասշափ մարդ պակսելէն հտև ելլաս մէջը քալելու ըլլաս, տարբերութիւն մը չես տեսնար ան պակասութիւնը»¹⁹: «Ասոր վրայ,—շարունակում է հեղինակը,—մէկ սաստիկ կրակ մը եղավ. ան կրակը կտրեց ցավը. հտքնալ մէկ ցուրտ մը եկավ որ՝ էյեռուպին ու խաս-

¹⁶ Նույն տեղում, էջ 55—56:

¹⁷ Նույն տեղում, էջ 42: Բոլոր հատորներում թուրք պատմիչներից բերված մեջբերումները տրված են թուրքերեն՝ հայերեն տառերով:

¹⁸ Նույն տեղում, էջ 43:

¹⁹ Նույն տեղում, էջ 286—287:

գեղին մէջի եղած ծովը սառեցաւ (պուզ կըտրեցաւ): Ստանպօլէն դուրս հազարավոր ոշխար կոտորվեցան ցուրտէն, գեղացիներու տունէր փրլան ձիւնին շատութէն ծանրութիւնէն»²⁰:

Տալով 1782 թ. օգոստոսի 21-ին Ստամբուլում բռնկված հրդեհի մանրամասները, Ինճիճյանը գրում է, որ հրդեհը տարածվեց ողջ քաղաքով մեկ և տևեց 60 ժամ, «և որովհետև աս մէկ տարվան մէջ ուրիշ չորս կրակ ալ եղած էին առաջ՝ որոնց մէկը 11 ժամ քաշեց, մէկալը 25 ժամ, անակ եղավ, որ Ստանպօլին մէկ մասը միայն մնաց, մէկալ իրեք մասը երված մնացին»²¹:

«Դարապատում»-ի շորորող հատորում լուսաբանված են 1780—1789 թթ. Օսմանյան կայսրութիւն արտաքին և ներքին քաղաքականութեան հարցերը: Ինճիճյանը հանգամանորեն խոսում է Օսմանյան կայսրութեան միջազգային կապերի մասին: Նա հատկապես նշում է, որ Իսպանիան, օգտվելով Հյուսիսային Ամերիկայի՝ անկախութեան համար Անգլիայի դեմ մղած պատերազմից և վերջինիս առևտրական կապերի թուլացումից՝ Օսմանյան կայսրութեան հետ բանակցութիւնների միջոցով հասավ այն բանին, որ 1782 թ. սեպտեմբերի 14-ին Ստամբուլում ստորագրվեց առաջին դաշնագրութիւնն Իսպանիայի և Օսմանյան կայսրութեան միջև: «Ասանկով,—գրում է Ինճիճյանը,—մէկ մշտնջենավոր խաղաղութիւն ու բարեկամութիւն մը սահմանեցին Սպանիային ու տաճկին մէջը...»²²:

Այս հատորում հեղինակը նաև նկարագրում է, թե ինչպիսի Պարսկաստանը և ապա Թուրքիան կովկասյան ժողովուրդների տղաներին ու աղջիկներին վաճառքի էին հանում արևելյան շուկաներում: «Ծրբոր աս երկրներուն վրայ Մոսկովը խառնովիլ սկսավ,—ընդգծում է Ինճիճյանը,—ուղղակի կամ անուղղակի՝ մէջիննէրը յորդորելով արգելեց մարդ ծախելը. տաճիկ վաճառականները որ շատ վաստակ ունէին առուտուրեն՝ գանգատ վերուցին Ստամպօլ դուռը: Դառնալ աս տարիին հոսքերը Ախալցխայի փաշային ապսպրեց որ՝ լեզկիներուն հրաման խըրկէ՝ որպեսզի աս երկրները վազեն, ու աղաք աղջիկ քաշեն առնեն իրենց ծախելու համար...»²³:

Ռուսաստանի՝ Ղրիմին տիրանալը, Սև ծովում և նեղուցներում ազատ նավարկելը և Կովկասում նրա ազդեցութեան ուժեղանալը մեծ

²⁰ Նույն տեղում, էջ 287:

²¹ Նույն տեղում, էջ 287—288:

²² Դաշնագրութեան մասին մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 105—106:

²³ Նույն տեղում, էջ 254—255:

անհանգստություն պատճառեց Անգլիային: Վճարներն ավելի,— գրում է հեղինակը,—ինկլիզներում վաճառականները խիստ վախ ունեին որ՝ Մոսկովը ազատությունը ձեռք ձգելն հետևի իր նավերը համարձակ անցնելու Ստամբուլի ու Չանախ խալիսիի պողազեն, և երբեմին ու Դամասկոս վրայ տէր ըլլալն հետև, Հինտրիստանի առևտուր մը կբանայ ցամաքի ճամփով՝ որ ավելի կարճ կլլայ և ավելի անվտանգ՝ քան թէ իրենց ըրած օվկիանոսի ճամփան, ան ատեն իրենցը կգոցվեր՝ ինչպես որ Վենետիկցոց ճամփան գոցվեցավ երբօր փորթուկալցիք նոր ճամփայ գտան»²⁴:

Այնուհետև նկարագրված են 1785—1787 թթ. տաճկին մէջի եղած զանազան ապստամբությունները: «Պարսից սահմանակցության տէրերն ալ,—գրում է Ինճիճյանը,—ավելի խռովություն հանած էր արահ շինյա մը Դրիննյ անուն, որ Պասրան Խալա 1785, հոն գտնված տաճկին նավերը թալլեց»: Նույն տարում Ստամբուլում ապստամբեցին ենիչե-րիները: 1786 թ. ապստամբեցին ալբանացիները և դուրս քշեցին թուրք իշխանավորներին: Թուրքական զորքերը մեծ դժվարությամբ ի վերջո ճնշեցին ալբանացիներին:

«Մարայ 24 պէյերն ալ բացարձակ իշխել սկսեց էին, հոն եղած փաշան չէին ուզեր ճաննալ, տաճկին հնազանդությունէ բոլորովին դուրս ելլալ կընայէին, իրենց տուրքը որչափ որ կուզէին՝ անչափ կուտային տաճկին... 1786 յուլիսի մեջ ճէզայիլի գահողւան Հասան փաշան իր ամմէն նավերով Մըսըր գացած ըլլալով՝ պէյերը հալածեց... շատ տուրք ժողվեց Մըսըրէն միտքը ան էր որ՝ մէմէլուքներուն... տերությունը անկէց վերջացընէ, որ շատուցմընէ Մըսըր կիշխէին, միշտ ապստամբությամբ անհանգիստ կընէին...»²⁵:

Չորրորդ հատորի վերջին գլուխները նվիրված են 1787—1791 թթ. ռուս-թուրքական և 1788—1791 թթ. թուրք-ավստրիական պատերազմներին²⁶, Ինճիճյանը մանրամասն տալիս է պատերազմող կողմերի զորքերի թիվը, զենքերի ու հրետանու քանակը, բերդերի նկարագրությունը, բերում է պատերազմներից հետո կնքված պայմանագրերի ամբողջական տեքստերը:

Հեղինակը լուսաբանում է նաև Օսմանյան կայսրության ներքին դրությունը պատերազմների տարիներին: Այսպես, օրինակ, խոսելով

²⁴ Նույն տեղում, էջ 265:

²⁵ Նույն տեղում, էջ 284—285:

²⁶ Նույն տեղում, էջ 385—402:

1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմում Թուրքիայի կրած պարտության մասին, նա ընդգծում է. «Երբոր տաճիկը սկսեւ էր Մոսկովին ու նեմեցին հետ ծեծկվիլ՝ Մսրայ պեյերը իրենց համար ատեն գտնալով՝ նորեն Մըսըր մտած առած էին. Անատոլուն փաշանէրէն ալ ոմանք ապստամբած. առնալուտի փաշան սովորական տուրքը կտրած աճէմնալ 80 հազար զորքով տաճիկին երկիրը վազուց²⁷։ Այնուհետեւ գրում է, որ պատերազմի ավարտից հետո սովթանական կառավարութիւնը ամբողջ ուժը հանեց ապստամբների դեմ և նրանց կրկին հնազանդեցրեց։

Ղ. Ինճիճյանը բացահայտում է Օսմանյան կայսրության հարցում տարբեր պետութիւնների միջև եղած հակասութիւնները։ Հատկապես նշում է Անգլիայի պայքարը Ռուսաստանի տերիտորիալ նվաճումների դեմ՝ Սև ծովի ավազանում և Բալկաններում։ Հեղինակը, շարադրելով 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմական գործողութիւնները և Ռուսաստանի հաղթանակը, ընդգծում է, որ այդ հաղթանակը բավականին անհանգստացրեց անգլիական կառավարութիւնը և վերջինս հատուկ նոտայով դիմեց պետութիւններին, որ «իրեն նախատրմիղը Պալդիկ ծովը պիտոր խրէր, բռնադատելով Մոսկովը, որ հաշտութիւն ընէ ամմէն բան ետ տալով ինչպես որ առաջ էր, և ինչպես որ կուզեին ծովեզերայ տէրուիք»։ Սակայն Անգլիայի պառլամենտում Ռուսաստանին պատերազմ հայտարարելու դեմ դուրս եկան այն վաճառականները, որոնք «շատ առուտուր կընէին Մոսկովին հետ»²⁸։

Օսմանյան կայսրութիւնը XVIII դ. վերջին քառորդում ապրում էր խոր ճգնաժամ։ Ընդերքիական բանակը ավելի շատ զբաղված էր ներքին խառնակչութիւններով ու կողոպուտով, քան զինվորական ծառայութիւնը։ Սիպահական բանակը, որը կայսրութիւնը հիմնական ռազմական ուժն էր, նույնպես իրեն չէր արդարացնում։ Թիմարիոտները և զիամեթները, որոնք պատերազմի ժամանակ պետք է սահմանված քանակութիւնը զորք տրամադրեին սովթանին, մեծ մասամբ հրաժարվում էին։ Պալատական հսկայական ծախսերի հետեանքով պետական գանձարանը դատարկվել էր։ Խոշոր ֆեոդալները, փաշաները չէին ենթարկվում կենտրոնական իշխանութիւնը։ Նոր թափ էր ստացել ազգային-ազատագրական պայքարը։ Այդ բոլորը Թուրքիայի կառավարող շրջանների համար ստեղծել էին վտանգավոր կացութիւն, որից դուրս գալու

²⁷ Ղ. Ինճիճյան, Դարապատում (1799—1795), Վենետիկ, 1828, էջ 165։

²⁸ Նույն տեղում, էջ 166։

միակ ելքը նրանք համարեցին որոշ վերափոխութիւններ կատարելը:

«Դարապատում»-ի հինգերորդ հատորի՝ Օսմանյան կայսրութիւնը նվիրված հատվածում Ինձիճյանը որոշակի լույս է սփռում վերը նշված կարևոր իրադարձութիւնների վրա: Այսպես՝ մանրամասն խոսելով սուլթան Սալիմ III-ի (1785—1807) վերափոխութիւնների մասին, հեղինակը նշում է, որ նա սկզբից ցանկացավ կարգավորել զորքը, որն արդեն ի վիճակի չէր հին ձևով պատերազմել եվրոպացիների դեմ և «հոգ տարավ որ անոնց (եվրոպական երկրների—Ն. Ս.) կերպը կրթութիւնը իր տէրութեան մէջն ալ խօթէ»: Սուլթան Սելիմի նոր զորքը կոչվեց Նիզամի շեդիդ, որին մարզելու համար Ֆրանսիայից հրավիրեցին մասնադետներ՝ «թիֆէնկի ավելի թոփ նետելու կրթութիւն սովորեցնելու»²⁹: «Եվ որովհետեւ, —շարունակում է հեղինակը, —աս նոր կրթութիւն ճամփան բռնելու չէր ըլլար առանց մեծ եկամուտ ունենալու՝ անոր համար «Սելիմը» քրիստոնէից վրայ ալ ամմէն տեղ ըէսմի զիճրիէն եվելցուց, 2 փարայ մէկ օխայ գինիին վրայ ըրախիին վրայ. բամբակ առնողները առաջ օխային ըստակ մը կուտային, հիմա հրամմեց փարայ մը վճարել, իսկ մանածին 2 փարայ, բուրդին համար ալ ամմէն ոչխար ու այծ գլուխ մէյ մէկ փարայ վճարել ապսպուրեց. գիթորին ալ (սալը խըպը-զինալ) օխային 1 փարայ:

Ասոնցմէ եկածները համրեցան 1798 (1212) տեսան որ 64 հազար ըէսէ, 250 հազար դրուշ կըլար պետական սնդուկին»³⁰:

Զիամեթների և թիմարիոթների իրավունքների և պարտականութիւնների վերաբերյալ շեշտվում է, որ «հնուցմէ դրված էր, որ զիամէթի ու թիմարի տիրվրտանքը պարտեկան ըլլան, ծեծի (պատերազմի—Ն. Ս.) ատեն իրենց ձիով պատերազմ երթան. բայց ետքերէն՝ ոմանք մէյ մէկ պատրուակ (մահանայի) բերելով չէին երթալ. սուլթան Սելիմը պատերազմը լրմընցնէլեն ետեւ... 1790 ճիշտ ցանկ մը ընել տվավ ասոնց. ով որ ծէծի չէր գացած՝ յանցավոր սեպելով անոնց կալվածները պետական սոնտուկին առավ»³¹: Նա գրում է, որ Սելիմ III-ը Ստամբուլում վառողի տարեկան արտադրութիւնը հասցրեց 40 հազար ըվինդալի, «ասոր համար խափանվեցան մէկալ հին պարութխանաները որ Սելանիք ու Կէլիպօլու կային»³²:

«Դարապատում»-ի վեցերորդ հատորը նվիրված է 1795—1800 թթ..

²⁹ Նույն տեղում, էջ 413:

³⁰ Նույն տեղում, էջ 419:

³¹ Նույն տեղում, էջ 418—419:

³² Նույն տեղում, էջ 421:

խրադարձություններին: Յուլյց են տրված Ֆրանսիայի, Ռուսաստանի, Անգլիայի, Ավստրիայի և Պրուսիայի հակամարտությունները՝ Օսմանյան կայսրությունում իրենց դիրքն ուժեղացնելու համար: Նրանցից ամեն մեկը ձգտում էր Բարձր Դուռն ընդգրկել ազդեցության իր ոլորտում:

Ղ. Ինճիճյանը նշում է, որ նույն Սելիմի սուլթանության օրոք «երկու ապստամբներեն նեղություն ունեցավ տաճիկը. մէյմը՝ Իւսքիւտար փաշայէն սրան վրայ քանի հազար զօրք խրկեց՝ յաղթվեցան հալածվեցան. մէյմընալ բավզան օղլուէն որ Վիտինի փաշան էր. ասիկա Հոռմե դարձած ճարպիկ, հանրադէտ մարդ մը ըլլալով իրեն քովը ժողովեր էր. բազմություն լեհի զինվորներու և հազարապետներու, որ լեհաստանը բաժանվելէն ետե հոն փախեր եկեր էին. իրեն քովն էին նաև Ֆրանսիական հազարապետներ, միտքը դրավ ապստամբիլ, Ֆրանսիականներուն պէս ազատություն մըտցնել...»³³:

Նապոլեոն Բոնապարտի նվաճողական պլանների մեջ էր մտնում նաև Օսմանյան կայսրութիւնը, որին նա հրահրում էր Ավստրիայի և Ռուսաստանի դեմ: Այդ կապակցությամբ Ինճիճյանը գրում է, որ 1797 թ. Պավզան օղլու ապստամբութիւնը «Ֆրանսիական անանկ հասկեցուց տաճիկին, որ՝ Բալզան օղլուն նեմէջին ու Մոսկովին մարդն էր, անոնցմէ ըստակ կառնէր ապստամբելու համար. տաճիկը շէր գիտէր որին լսէ, որին հավատայ»³⁴: Այնուհետև նա շարադրում է նշված ապստամբութիւնների ընթացքը և պարտութիւնը:

Մանրամասն նկարագրվում է Նապոլեոնի եգիպտական արշավանքը, Եգիպտոսի գրավումը Ֆրանսիացիների կողմից: Հեղինակը վառ գույներով է պատկերում Անգլիայի և Ֆրանսիայի նավատորմերի բախումը Միջերկրական ծովում՝ Ալեքսանդրիա քաղաքի ծովածոցում. «Հոս ահա օգոստոսի 2 անանկ մեծ կռիվ մը հղավ... Ինկիլիզին նավերը 14 էին, իսկ Ֆրանսիացիները 13, բայց Նելսոնը անանկ բերավ որ Ֆրանսիացիները 7 նավը միայն կրնային ծեծկլվիլ. Ֆրանսիացիները խապուտանային նավը բռնկեցավ, անոր հետ ուրիշ նավ մըն ալ բռնկեցավ. անոնց 9 նավերնին առավ ինկիլիզը, 2 փախան. այնչափ գերի ընկան որ՝ Նելսոնը անոնց համար բավական ապրուստ չունենալով՝ ցամաքը հանեց ազատ թողուց խոստում առնելով իրենց բերնեն որ մէյմն ալ ծեծի մեջ չիմտնան. ինկիլիզը ամբողջ ճերմակ ծովին վրա տեր եղավ»³⁵: Թուր-

³³ Ղ. Ինճիճյան, Դարապատում (1795—1800), Վեհտիկ, էջ 295—297:

³⁴ Նույն տեղում, էջ 298:

³⁵ Նույն տեղում, էջ 407—408:

քական կառավարութիւնը, շարունակում է Ինճիճյանը, օգտվելով Նապոլեոնի պարտութիւնից, ճառանց ինկիլիզին ու Մոսկովին յորդորելու ծեծ բացավ Ֆրանսզին դէմ։ Ստանալով քանի Ֆրանսզ որ կային բռնեց բանտը դրավ³⁶։

«Տաճիկը,—այնուհետեւ գրում է Ինճիճյանը,—1799 Շամու փաշային հրամանեց պաշտպանել երկիրները, և թե որ կրնա Մըսըր նորէն առնել։ Պօնաբառէն 13 հազար մարդով ասոր դէմը գնաց, գազան ու հոֆան առավ աքեանալ պաշարեց, որուն պաշարումը 3 ամիս քեց... տաճիկը խիստ քաջությամբ դէմ կեցավ Ֆրանսզներուն, որոնք 11 անգամ քաղաքին վրայ վազեցին»³⁷ և ի վերջո ստիպված եղան հտ նահանջել։

Բերդի շուրջը և բերդում տեղի ունեցած մարտերի կապակցությամբ, ըստ հեղինակի, Նապոլեոնը ասել է հետևյալը. «Բաց տեղ մը ծեծկվելու ատենը տաճիկին հետ անոնց 100 հազարին դէմ մեր 20 հազար զորքը հերիք է. բայց բերդին մեջ կեցած ատենը՝ տաճիկին 20 հազարին դէմ մեր 100 հազար զորքը հերիք չէ»³⁸։

«Դարապատում»-ի ստվարածավալ հատորներից արված մեջբերումները վկայում են Ինճիճյանի լակոնիկ ոճի, խոսքի պատկերավորության, նկարագրութիւնների լիարժեքության մասին։ Բարդ իրադարձութիւններով լի պատմաշրջանը նա այնքան պարզորոշ ու կենդանի է դարձնում, որ ընթերցողը լրիվ պատկերացում է ստանում։

Օբյեկտիվորեն շարադրելով օսմանյան սուլթանների ներքին և արտաքին քաղաքականության հարցերը, հեղինակը բավականին էջեր է նվիրել նաև սոցիալ-քաղաքական և տնտեսական խնդիրների արծարծմանն ու մեկնաբանությանը։

Ղ. Ինճիճյանը բանիմացորեն լուսաբանել է Օսմանյան կայսրության XVIII դ. երկրորդ կեսի սոցիալ-տնտեսական ու պետական ամբողջ սիստեմի ճգնաժամը և կայսրութիւնն այդ վիճակից դուրս բերելու սուլթանական կառավարության անհաջող փորձերը։

Նա հանգամանորեն խոսել է պետութիւնում գոյութիւն ունեցող սոցիալական անհավասարութիւնների ու ներհակութիւնների մասին, քննադատել տիրող կարգերը, շարադրել է կենտրոնական սուլթանական իշխանության դէմ առանձին փաշաների ապստամբութիւնների պատմութիւնը և այլն։ Ութհատորյա «Դարապատում»-ի մեջ ոչ պակաս տեղ

³⁶ Նույն տեղում, էջ 409։

³⁷ Նույն տեղում, էջ 410։

³⁸ Նույն տեղում, էջ 411։

է հատկացված նաև թուրքական լծի տակ ընկած ժողովուրդների պայքարին:

Ղ. Ինճիճյանի այս երկին հաջորդեց Վենետիկի Մխիթարյան միաբանության ականավոր գործիչ Գաբրիել Այվազովսկու հեղինակած «Պատմութիւն օսմանեան պետութեան» երկհատոր աշխատութիւնը³⁹: Հեղինակն օգտագործել է, ինչպես ինքն է գրում, քաջահմուտ գերմանացի Համմերի «վաստակեալ» ի յօրինուած բազմահատոր պատմութեանն օսմանեանց» և «ամանավանդ» ի ժամանակակից մարդկանէն, որ պիտիք են Թովմա վարդապետ Մեծոփեայ, Առաքել վարդապետ Դավրիժեցի, Զաքարիա Վաղարշապատցի, Երեմիա Չէլչէպի, Մաղաքիա դպիր Ճեմահիւրճեան, Գէորգ դպիր Պալատեցի, Գէորգ Օղուլուզեան Տրապիզոնցի, և այլոց ոչ սակաւ յիշատակարանաց և ի թղթոց ականատես և ականջալուր պատմագրաց»⁴⁰:

Գ. Այվազովսկին օգտագործել է նաև օսմանյան պատմագիրների ինչպես ձեռագիր, այնպես էլ տպագիր աշխատութիւնները:

Առաջին հատորն ընդգրկում է Օսմանյան կայսրության սկզբնավորումից՝ Օսմանից մինչև XVII դ. 50-ական թվականները՝ սուլթան Իբրահիմ I-ի իշխանության ժամանակաշրջանն (1615—1648) ընկած պատմութիւնը:

Երկրորդ հատորը սկսվում է Մէհմէդ IV-ի (1642—1693) սուլթանութիւնից և շարունակվում մինչև Մահմուդ II-ի իշխանության վերջը (1808—1839): Երկու հատորն էլ շարադրված են գրաբարով: Գ. Այվազովսկին, լինելով կղերաֆեոդալական հոսանքի ներկայացուցիչ և միապետական կարգերի պաշտպան, պատմական պրոցեսը ներկայացնում է որպես միապետների՝ սուլթանների պատմութիւն: Այդուհանդերձ նրա աշխատութիւնում ընդգրկված են կայսրության ներքին կյանքի և արտաքին հարաբերութիւնների հիմնական, հանգուցային հարցերը: Միանգամայն ճիշտ է բնութագրել Գ. Այվազովսկու այս ուսումնասիրութիւնը Ա. Կարինյանը, ընդգծելով, որ նա «դեպքերը նկարագրելու ժամանակ բացահայտում է բավական օբյեկտիվ մոտեցում: Տարբեր պատմաշրջանների նկարագրութիւնը նվիրված էջերում նա աշխատում է հիշատակել իրական փաստեր, բնորոշ մանրամասներ, անգամ սոցիալական հնօրյա բռնկումները: Կան նշանակալից պատկերավոր էջեր: Ապստամբ ժողովուրդը, բողոքող ոչ տաճիկ կանայք, դերվիշական օր-

³⁹ Գ. Այվազովսկի, Պատմութիւն. օսմանեան պետութեան, հ. Ա, Բ, Վենետիկ, 1841:

⁴⁰ Նույն տեղում, հատ. Ա. («Յառաջաբան»):

դեններ, աղմկող ենիշերիներ, պալատական գործիչներ, ազգային հատվածներ, օտար պետություններ—այդ ամենը դժագրված է Այվազովսկու «Պատմության» մեջ այնքան դիպուկ գույներով, որ բռնակալ սովթանների շրջապատի իրական ֆոնի պատկերը դառնում է բավական պարզորոշ»⁴¹:

Հեղինակը թուրքերի նախնական պատմության մասին նշում է, որ նրանք տեղափոխվել են Թուրքեստանից, Միջին Ասիայից և Բյուզանդական կայսրության տարածքում ստեղծել են առաջին թուրքական իշխանությունները, որոնք կոչվել են իրենց ցեղապետների անուններով՝ «Ուղեանք, սելճուգեանք և օսմանեանք»: Այվազովսկին նկարագրում է այդ իշխանությունների տարածքային նվաճումները: «Իսկ սելճուգեանք,—գրում է նա,—զկնի տասներորդի դարուն հզօրացեալք տիրեցին 'ի Կասպից ծովէ մինչև 'ի Միջերկրականն, գրավեալ զՊարսո և զԴամասկոս, զԲերիա և զՓոքրն Ասիա...»⁴²:

Գ. Այվազովսկին համառոտակի նկարագրում է Զինգիզխանի արշավանքը ընդհուպ մինչև Նոգնկա և նրա վայրագությունները⁴³: Մանրամասնորեն ցույց է տալիս օսմանյան տոհմի տերությունների աստիճանաբար ընդարձակումը սելջուկյան կայսրության տրոհումից հետո. «Ալայէտտին Բ մեռավ, և տէրութիւն Սելճուգեանց 'ի տասն մասունս բաժանեցաւ, որոց ամենեցուն զավառապետք որպէս մի մի թագաւորք տիրեցին ինքնագլուխ...: Յայնժամ սկիզբն եղև և ինքնիշխան տիրապետութեանն Օսմանայ ի շրջակայս անդ Ուլմպեայ. հաստատեաց զաթոռ թագավորութեան իւրոյ 'ի քաղաքն Ենիշեհիր»⁴⁴:

Այնուհետև Այվազովսկին մեկ առ մեկ թվարկում է կայսրության նորանոր նվաճումները Բալկաններում, Փոքր Ասիայում և արաբական երկրներում:

Հեղինակն անդրադառնում է նաև օսմանյան սովթանների ներքին քաղաքականությանը, խոսում զիամեթների և թիմարիոթների, նրանց ստացած ուճիկի, նվաճված քրիստոնյա ժողովուրդներից վերցվող տուրքերի մասին⁴⁵ և այլն:

Գ. Այվազովսկու ուշադրությունից չի վրիպել նաև խաչակիրների և Օսմանյան կայսրության հարաբերությունների հարցը:

⁴¹ Ա. Կարինյան, նշվ. աշխ., հատ. 2, էջ 41:

⁴² Գ. Այվազովսկի, նշվ. աշխ., հատ. Ա, էջ 4:

⁴³ Նույն տեղում, էջ 5:

⁴⁴ Նույն տեղում, էջ 13—14:

⁴⁵ Նույն տեղում, էջ 29—30:

Նա վառ գույներով է նկարագրել Լենկ-Թիմուրի արշավանքները. «Քանզի ահեղ տիեզերակալն Լենկ-Թիմուր բռնացեալ հզոր զօրութեամբ ընդ արեւելս մինչև յաշխարհն Չնաց, յարեմտոս մինչև 'ի ծովափնեայս Միջերկրականին, ընդ հիւսիսի մինչև 'ի միջնաշխարհն Ռուսիոյ, և ընդ հարաւ մինչև 'ի սահմանս Եգիպտոսի, անհամար զօրօք և զարհուրելի պատերազմօք տիրապետեաց քսան և եօթն աշխարհաց և ապա դարձ արարեալ յաթոռ իւր 'ի Սմրղանդ մեծաւ յաղթանակաւ, խաղաց վերըստին 'ի Պարս և 'ի Հայս, և 'ի Վրաստան»⁴⁶։ Լենկ-Թիմուրի գաղանթյունների առիթով ընդգծում է, որ Սեբաստիա քաղաքը գրոհելու ժամանակ նա «Սեբաստիա զպարիսպն քանդեալ կործանեաց, զքնակիչսն 'ի սուր սուանրի կոտորեաց, և զքաջամարտիկսն Հայոց կենդանւոյն թաղեաց անհնարին տանջանօք խժոժութեան»⁴⁷։ Հեղինակը մասնավորապես նկարագրում է 1402 թ. Անկարայի ճակատամարտը։

Ավարտելով Անկարայի ճակատամարտի և թուրքական բանակի գլխավոր ջախջախման նկարագրությունը, սովթան Բայազիդի և նրա երկու տղաների գերի ընկնելը, Այվազովսկին գրում է. «Օսմանեանք փախուցեալ ճողպրեցան. և Թիմուր յանդիմանեալ զՊայէզիտ՝ խստիվ պատուիրաց իւրոցն զգուշագոյնս պահունել նմա, և զցայդ շղթայակապ պահել 'ի սենեկի միում, որոյ դուռն էր վանդակ երկաթի»⁴⁸։ Ծակատամարտից հետո Թիմուրը «Կողոպտեաց և հրդհհեաց զքաղաքն ողջոյն, զմզկիթս կարգեաց յախոռս երիվարաց և զկանայս և զգտտերս թագավորին հանդերձ ամենայն գանձին և ոսկէղէն և արծաթէղէն սպասուքն բարձեալ յուղտս՝ առաքեաց առ Թիմուր 'ի Կուտինա թմբկօք և պարուք, և ինքն ասպատակ սփռեաց ընդ ամենայն երկիրն օսմանեանց մինչև 'ի ծովեզերայս աշխարհին»։

Լենկ-Թիմուրին բնութագրելով որպես անձնավորություն, Այվազովսկին իր միտքն ավարտում է հետևյալ կերպ. «...Թողեալ յիշատակ շարութեան իւրոյ զամայացեալ աշխարհս, զքաղաքս խոպանացեալս, և զկարկառակոյտս մարդկան՝ կոտորելոց»⁴⁹։

Թիմուրի հասցրած ծանր հարվածները ամբողջ կես դար հետաձգեցին Կոստանդնուպոլսի նվաճումը թուրքերի կողմից։ Այվազովսկին բա-

⁴⁶ Նույն տեղում, էջ 56—57։

⁴⁷ Նույն տեղում, էջ 57։

⁴⁸ Նույն տեղում, էջ 56—57։

⁴⁹ Նույն տեղում, էջ 64—65։

վականին մեծ տեղ է հատկացրել թուրքական հորդանների կողմից Բյուզանդիայի մայրաքաղաքի գրավման նկարագրմանը⁵⁰:

Կոստանդնուպոլսի համար մղված համառ մարտերի մանրամասն շարադրանքից երևում է Ալվազովսկու համակրանքը դեպի քրիստոնյա հուլիները և նրա խոր ատելութունը թուրք վայրագ զավթիչների նկատմամբ: Պատմելով թուրքերի դեմ Կոստանդին Պալէոլոգ կայսրի դեկավարած անձնվեր պայքարի մասին, Ալվազովսկին գրում է. «Որոյ տեսնալ զանճողոպրելիս աղետս քաղաքին իւրոյ, լաւ է ինձ ասէր մեռունել, քան թէ իցեմ այլ ևս կենդանի»: Այնուհետև նկարագրում է կովի դաշտում կայսրի զոհվելը և եզրահանգում. «Այսպես զբաւեցաւ ՚ի կենաց Կոստանդին Պալէոլոգ վերջինն ՚ի կայսերս Յունաց»⁵¹:

Գ. Ալվազովսկին կսկիծով է նկարագրում քաղաքի գրավումը թուրք զավթիչների կողմից, որոնք այն վերածեցին սպանդանոցի: Մանրամասնությամբ շարադրում է թուրքական զորքերի վայրագությունները: Որպես օրինակ բերում է Այա Սոֆիայում պատսպարված հազարավոր կանանց և երեխաների նկատմամբ կատարած նրանց զաւանությունները⁵²:

Ուշագրավ են նաև աշխատության այն էջերը, որոնք նվիրված են հայերի և վրացիների համատեղ պայքարին թուրք զավթիչների դեմ: Ալվազովսկին հատկապես ակնածանքով է խոսում Սյունիքում Դավիթ-Բեկի հերոսական պայքարի մասին. «Ընդդեմ սօրին զորաց մարտ եղեալ կռուեցան քաջն Հալիճորոյ Դաւիթ իշխան Սիւնի, և նիզակակիցք նորին Մխիթար զօրավար և տէր Աւետիք, զորոց տեսցի ՚ի պատմութիւնս մերոյ ազգիս»⁵³:

Գ. Ալվազովսկու գրքի երկրորդ հատորի վերջում տված է բավականին ընդարձակ «Յանկ անուանց», որն ավելի է բարձրացնում գրքի գիտական արժեքը:

Այսպիսով, «Պատմութիւն Օսմանեան պետութեան» երկու հատորները պատկերավոր և հարուստ լեզվով լուսաբանում են Օսմանյան կայսրության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության հարցերը: Հեղինակը հանդես է գալիս ոչ թե պատմական փաստերը

⁵⁰ Նույն տեղում, էջ 137—144.

⁵¹ Նույն տեղում, էջ 145—146.

⁵² Նույն տեղում, էջ 147—148.

⁵³ Նույն տեղում, հ. Բ, էջ 173.

սոսկ նկարագրողի դերում, այլ դրանց համադրման և վերլուծման միջոցով անում է իր եզրահանգումները:

Գ. Այվազովսկու գրչին է պատկանում նաև «Հատընտիր պատմութիւնք վարուց Օսմանեան թագաւորաց եւ վէզիրաց» աշխարհաբարով հրատարակված գիրքը, որը գրվել և լույս է տեսել Ֆրանսիայում Թուրքիայի դեսպան Սուլեյման փաշայի պատվերով ու միջոցներով: Պարզ է, որ պատվիրված այս աշխատութեան հեղինակը, լինելով միապետական կարգերի կողմնակից, պետք է ինչ-որ չափով իդեալականացներ սուլթանական կարգերը, ցույց տար հայերի «հավատարմութունը» թուրք տիրապետողներին: Առաջաբանում այս մասին գրված է. «...Մեր ազգին աս մեծազօր տերութեանս (խոսքը օսմանյան տերութեան մասին է—Ե. Ս.) ավելի ալ աս տարիներս սիրելի ըլլալուն պատճառակ երեւնայ մեզի՝ որ յայտնապէս կը տեսնէ տէրութիւնը թէ իրեն աս հպատակներն ալ կարգէ դուրս ջանք մը սկսել են ցուցնել որ ուսմանց և արուեստից և քաղաքական՝ ու մարդավարական գիտութեանց հետէ ըլլալով, իրենք ալ իրենց կողմանէ գործակից ըլլան երկրին ծաղկելուն ու երջանկութեանը, և ձեռքներէն եկած ծառայութեանցը մէջ հավատարիմ և իմաստուն գտնուելով՝ թէ ազգին և թէ տէրութեան հաստատութիւն ըլլան»:

Աշխատութեանը ժամանակին դասագիրք է եղել հայկական կրթական հաստատութեաններում:

Քանի որ գիրքը, ինչպես ասվեց, գրված էր հատուկ պատվերով, և որով հայ աշակերտը պետք է սովորեր Օսմանյան կայսրութեան պատմութեանը, հեղինակը, ի տարբերութուն «Պատմութիւն Օսմանեան պետութեան» երկհատորյակի, մեծարում է թուրքական սուլթաններին ու պետական գործիչներին՝ նրանցից շատերին ներկայացնելով որպէս թուրքերի լծի տակ ընկած ժողովուրդների Քալբերարների» և «հոգատարների»:

Այսուհանդերձ Այվազովսկին ցույց է տալիս նաև սուլթանների դաշնութեաններն արշավանքների և քաղաքների գրավման ընթացքում:

Աշխատութեան մեջ բացահայտված են Օսմանյան կայսրութեան ներքին խռովութեանների և ապստամբութեանների պատճառները: Օրինակ, մանրամասն նկարագրելով սուլթան Մուրադ 3-րդի օրոք կայսրութեան հզորութեանը, նրա ազդեցութեան տարածումը և արքունիքի ճոխ տոնակատարութեանները (որոնք տեղում էին ամիսներ), Այվազովսկին ընդգծում է, որ խռովութեան պատճառը «մեծերուն չափազանց շահա-

սիրութիւնն եղաւ, որ ժողովուրդը կեղեքելով ու զորքին ոռճիկը կըտրելով՝ իրենց հարստութիւնը կը շատցընէին»⁵⁴:

Հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը բարձր է գնահատել իր գաղափարական հակառակորդ Գաբրիել Այվազովսկու պատմագիտական աշխատութիւնները, հատկապես նրա հայտնի «Պատմութիւն օսմանյան պետութեան» երկհատորյակի ընտիր հայախոսութիւնն ու պատկերավոր լեզուն⁵⁵:

Գ. Այվազովսկին որպէս խոշոր պատմաբան մեծ ազդեցություն է ունեցել ժամանակի կղերա-ֆեոդալական պատմագրության վրա: Նրա պատմագիտական կոնցեպցիայի հետեւորդներից էր նույն Մխիթարյան միաբանության վարդապետ Ամբրոսիոս Գալֆայանը, որի գրչին են պատկանում բազմաթիւ աշխատութիւններ: Գալֆայանը ջանացել է համակերպել «նոր» պատմական դարաշրջանի հետզհետե ուժեղացող բուրժուազիայի, հասարակական-գաղափարական միտումներին: Նա կերտել է «Երուդիտ-պատմաբանի հատուկ շնորհքով, հայ կղերական-հայրենասիրական իդեոլոգիայի հետ կապակցված պատմագրական շատ ուրույն կոնցեպցիա»⁵⁶: Գալֆայանի աշխատութիւններից մեզ համար ուշագրաւ են «Համառօտ պատմութիւն միջին դարու» և «Համառօտ պատմութիւն նոր ազգաց» գործերը: Աշխարհաբարով գրված ընդհանուր պատմության այս ձեռնարկներում, որոնք պոլսահայ դպրոցներին ծառայել են որպէս դասագրքեր, Օսմանյան կայսրությանը հատկացված է բավականին տեղ:

Միջին դարերին նվիրված դասագրքի վերջին գլխում հեղինակը կայսրութեան կազմավորման շրջանին անդադառնալիս նշում է, որ թուրքերը, ինչպես և բազմաթիւ այլ ցեղեր, տարածված էին «Վոլկա գետին ու Ալթայ լեռանց մէջտեղի ընդարձակ դաշտերուն մէջ... Թուրքաց անունը նախ եօթերորդ դարուն մէջ կը յիշուի. վասն զի Հերակլ կայսրը անոնցմէ օգնութիւն խնդրեց Պարսից դէմ»⁵⁷: Գալֆայանը սելջուկների կայսրության մասին գրում է. «... 1059-ին սելճուգեան թուրքերը Պաղդատը տիրեցին, և անկեց գրեթե բոլոր Փոքր Ասիա ալ իրենց իշխանութիւնը տարածեցին: Երեքտասներորդ դարուն մեջ անոնց ար-

⁵⁴ Գ. Այվազովսկի, Հատընտիր պատմութիւն վարուց Օսմանեան թագավորաց և վէ-գիրաց, Վենետիկ, 1848, էջ 52:

⁵⁵ Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա յամանակը, գիրք Ա, Երևան, 1955, էջ 261:

⁵⁶ Ա. Կարինյան, նշվ. աշխ., հատ. 2, էջ 46:

⁵⁷ Ա. Գալֆանե, Համառօտ պատմութիւն միջին դարու, Վենետիկ, 1850, էջ 476:

շաւանքը յանկարծակի դադրեցաւ, վասնզի անդին Մողոլները ձինկիզ խանին և անոր որդւոցը առաջնորդութեամբը հեղեղի պէս վազեցին Պաղդատը քանդեցին և Սելճուգեանց իշխանութիւնը կործանեցին»։ Յիսուս տարիէն ավելի,—շարունակում է Գալֆայանը,—աս վիճակիս մէջ մնալէն ետեւ, թուրք ազգին մէկ ցեղը այսինքն օսմանցի կամ Օսմանիան ըսուածը Ասիոյ արևմտեան կողմերը այնչափ զօրացավ որ քիչ տոննի մէջ զորաւոր տերութիւն մը ձևացավ»⁵⁸։

Նկարագրելով Կոստանդնուպոլսի համար մղված 57 օրվա արյունահեղ մարտերը, ուր 300 հազար թուրք հրոսակների գրոհին դիմագրավում էին ընդամենը հինգ հազար հույներ, ջենովացիներ և վենետիկցիներ, Գալֆայանը համակրանքով է խոսում մայրաքաղաքի քաջարի պաշտպանների մասին։

Ա. Գալֆայանը իր «Համառօտ պատմութիւն նոր ազգաց» դասագրքում նոր պատմութեան սկիզբը համարում է Կոստանդնուպոլսի գրավումը. «Նոր պատմութիւնը կը սկսի Կոստանդնուպօլսոյ առնէլէն, 1453-ին, ու կ'երթայ ինչուան գաղիացւոց ազգային ընդհանուր ժողովը կամ գաղիացւոց խռովութիւնը որ եղավ 1789-ին, և է բովանդակութիւն իրեք հարիւր երեսունվեց տարուան կամ իրեք ու կես դարու պատմութիւն»⁵⁹։

Արսուլուտիզմի պաշտպան Գալֆայանը չէր պաշտպանում տիրող կարգերի դեմ բռնկված ապստամբութիւնները և հեղափոխական հեղաշրջումները։ Ուստի պատահական չէ, որ նոր դարաշրջանի սկիզբը հռչակող 1789 թ. ֆրանսիական բուրժուական հեղափոխութիւնը նա անվանում է «խռովութիւն»։ Այդպես է նա որակավորում նաև սուլթանական բռնապետութեան դեմ հույների, սերբերի, ալբանացիների ապստամբութիւնները։ Նկարագրելով այդ ժողովրդների պայքարը թուրք բռնակալների դեմ, Գալֆայանը, այնուամենայնիւ, զգուշութեամբ իր համակրանքն է արտահայտում նրանց նկատմամբ։ Նրանց պայքարի մասին խոսելիս հաճախ է օգտագործում «յարձակվեցան քաջութեամբ», «քաջարի», «անձնազոհ» արտահայտութիւնները։ Թուրք զավթիչների դեմ հունգարների պայքարի կապակցութեամբ գրում է, որ սուլթան Սուլեյմանը «նորէն Մաճառստանի վրայ պատերազմի երթալով, հարիւր յիսուն հազար հոգով Սիկէթ քաղաքը պաշարեց»։ Քաղաքի պաշտպանները երդվեցին՝ ավելի լավ է մեռնել, քան անձնատուր լինել թշնա-

⁵⁸ Նույն տեղում, էջ 477։

⁵⁹ Ա. Գալֆանե, Համառօտ պատմութիւն նոր ազգաց, Վենետիկ, 1851, էջ 9։

մուն» «...Այնպես, որ սուլթան Սիւլէյման քսան հազար մարդ կորսըն-
ցուց ան պաշարման ատեն. բայց վերջապես քաղաքը առնուեցավ: Եր-
կու հարիւր քաջ պատերազմողներ միայն մնացեր էին բերդի մեջ որ
անձնատուր ըլլալ շուգելով դուրս յարձական քաջությամբ ու ամէնքն
ալ ընկան մեռան»⁶⁰:

Երբ խոսքը վերաբերում է թուրք հրոսակների պարտությանը, Գալ-
ֆայանը ոգևորությամբ է պատմում այդ մասին: Այսպես՝ նկարագրե-
լով սուլթան Սելիմ 2-րդի զորքերի և ավստրիացիների միջև տեղի ունե-
ցած մարտերը, նա ընդգծում է, որ օսմանցիները Կիպրոս կղզին Վե-
նետիկից զավթելու պահին Կառլոս 5-րդի որդի Յովհաննես Ավստրիացին
եերեք հարիւր նաւով օսմանցուց դէմ ելաւ ու սաստիկ պատերազմ մը
ըրաւ Մորալի քով էյնէ պախթիի կամ Հէփանթոյի ծոցին մէջ: Յաղթուե-
ցան օսմանցիք, երեսուն հազար մարդ կորսընցուցին, երկու հարիւր
նաւ, վեց հարիւր ալ թնդանոթ: Ան առթով տասներհինգ հազար քրիս-
տոնեայ գերութէնէ ազատեցան»⁶¹:

Մի ալ էջում, որտեղ խոսվում է Վիեննայի համար մղված դաժան
մարտերի մասին, ասված է. «Օսմանցիք Պուտա քաղաքն ալ առին
1529-ին, ետքը Վեննա քաղաքը պաշարեցին ու քսան անգամի շափ
վրան յարձըկեւէն ետքը, պէտք եղաւ որ զօրաց պաշարը չգտնալով՝ պա-
շարումը վերցնեն»⁶²:

Հեղինակի ուշադրությունից չի վրիպել նաև 1683 թ. թուրքական
զորքերին ավստրիացիների հասցրած ծանր պարտությունը: «...Երբոր
աւստրիացիք,—գրում է Գալֆայանը,—Եւգինէոս իշխանին առաջնոր-
դութեամբը Վարատինի քով մեծ յաղթութիւն մը ըրին օսմանցոց դէմ,
ժողովուրդը սկսավ թագաւորին դէմ գանգատիլ, ետքն ալ յայտնապէս
ապստամբեցան, հարիւր յիսուն հազար հոգով պալատը պաշարեցին ու
ստիպեցին թագաւորին որ իրեն ուրիշ յաջորդ մը ընտրէ»⁶³:

Ա. Գալֆայանը օրյեկտիվորեն է նկարագրում թուրքական սուլ-
թանների գազանային արարքներն ու վայրագությունները: Սուլթան
Մուրադ IV-ի մասին նա գրում է, որ Մուրադը «պարսից դէմ պատե-
րազմ քացաւ ու Պաղտատ քաղաքին տիրեց. ինքը անձամբ պարսպին
վրայ յարձըկեցաւ, ու ետքը իր առջևը երեսուն հազար պարսիկ գէրիներ
սպաննել տուաւ: Բնութեամբ շատ կրակոտ և անգութ էր Մուրատ. մեռ-

⁶⁰ Նույն տեղում, էջ 330:

⁶¹ Նույն տեղում, էջ 331:

⁶² Նույն տեղում, էջ 329:

⁶³ Նույն տեղում, էջ 338:

նելու ատենը մահ կը սպառնար բժիշկներուն թէ որ զինքը չկարենան առողջացնել, տասներեօթը տարուան թագավորութեան ատենը հարիւր հազարէն աւելի մարդ մեռցընել տուաւ, և իրեն յարմար առած մըն ալ ունեւոր որ կ'ըսէր. «Վրէժխնդրութիւնը կ'ալւորի, բայց ոչ երբէք կը ծանայ»⁶⁴:

Լուսաբանելով Հունգարիայի նվաճումը սուլթան Բայազեդի հրոսակների կողմից, Գալֆայանը շեշտում է, որ հարյուրերեսուն հազարանոց հունգարական զորքից կենդանի մնաց միայն Սիգիզմունդ թագավորը: Բայազեդը «տաս հազար՝ գերի աչքին առջևը սպաննել տուաւ»⁶⁵:

Ա. Գալֆայանը Օսմանյան կայսրության նվաճումների գագաթնակետը համարում է սուլթան Մուրադ III-ի տիրապետության ժամանակաշրջանը (1574—1595 թթ.)⁶⁶:

Ա. Գալֆայանի վերահիշյալ աշխատություններում Օսմանյան կայսրության պատմությանը նվիրված բաժիններից երկուսն է, որ նա խորատեսությամբ էր լցված դեպի թուրք նվաճողները և ձայնակցում էր թուրքերի լծի տակ ընկած ժողովուրդների ազատագրական պայքարին: Պատահական չէր, որ 1883 թ. լուսավորության մինիստրության հատուկ հրամանով արգելվեց հայկական դպրոցներում դասավանդել Գալֆայանի գրքերով:

Այսպիսով, XIX դ. առաջին կեսի կղերա-ֆեոդալական պատմագրության երեք խոշոր ներկայացուցիչների՝ Ղ. Ինճիճյանի, Գ. Այվազովսկու և Ա. Գալֆայանի, պատմագիտական հայացքներն ընդհանուր գծերով նույնն են:

Նրանք էլ միապետական կարգերի պաշտպան էին և դեմ ամեն տեսակի դասակարգային պայքարի: Նրանց աշխատություններում առկա են խորատեսություն դեպի թուրք զավթիչներն ու ջարդարարները և ջերմ համակրանք՝ ոչ թուրք ժողովուրդների ազատագրական պայքարի նկատմամբ:

XIX դ. երկրորդ կեսի հեղինակներից հիշատակության արժանի է Մկրտիչ Տատյան բեյը: Նա 1867 թ. ֆրանսերեն հրատարակել է «Ժամանակակից հայկական հասարակությունը: Հայերը Օտոմանյան կայսրությունում» խորագրով աշխատությունը, որը 1878-ին ռուսերեն լույս է տեսել Թիֆլիսում⁶⁷: Մկրտիչ բեյ Տատյանի տոհմը սուլթանական ար-

⁶⁴ Նույն տեղում, էջ 335:

⁶⁵ Ա. Գալֆայան, Համառոտ պատմություն միջին դարու, էջ 481:

⁶⁶ Ա. Գալֆայան, Համառոտ պատմություն նոր ազգաց, էջ 332—333:

⁶⁷ Дадян Мкртич-Бей, Армяне Османской империи, Тифлис, 1878.

քունիքում զբաղեցրել է բարձր պաշտոններ և դրանով էլ բացատրվում է Տատյանի գրքի որոշ էջերում Թուրքիայի վերաբերյալ եղած գովեստները:

Առաջաբանում նկարագրելով Միջին Ասիայից Թուրքերի Փոքր Ասիա կատարած արշավանքը, շեշտվում է Իրանի, Հայաստանի, Թրակիայի և Կոստանդնուպոլսի նվաճումը: Նրանք, նշում է Տատյանը, զավթած երկրների քաղաքացիական և քաղաքական կառուցվածքում գրեթե ոչ մի փոփոխություն չեն մտցնում՝ բնակչությունից զանձնելով միայն խարաջ (զլխահարկ):

Տատյանը գրում է, որ Օսմանյան կայսրությունը Եվրոպայի համար ներկայացնում էր մեծ վտանգ, քանի որ վերջինս կազմված էր առանձին ֆեոդալական պետություններից, որոնք գտնվում էին իրար հետ մշտական պայքարի մեջ: Հետագայում՝ ֆեոդալիզմի քայքայման և արսուլյուտիզմի թևակոխման շրջանում, Եվրոպան վերածվեց լայնածավալ մի ֆեոդերացիայի, որն ընդհանուր թշնամու՝ Օսմանյան կայսրության դեմ ուժեղ բռնեցք էր: Եվրոպան ի վիճակի էր նախկին անկանոն, չվարժված զորքերի փոխարեն օսմանցիների դեմ դուրս բերել մշտական կանոնավոր բանակներ, որոնք տիրապետում էին ռազմական արվեստին և տակտիկային: Այնինչ Թուրքիան, հավատարիմ մնալով հին սովորություններին, չփոխեց իր զորքի կառուցվածքը և անզոր էր դիմադրել առաջավոր եվրոպական պետություններին:

Այնուհետև, խոսելով սուլթան Մահմուդ II-ի ռեֆորմների մասին, Տատյանը նշում է հատկապես հնդեբրինների ֆիզիկապես ոչնչացնելու փաստը և եվրոպական տիպի ռազմական սիստեմ ստեղծելու փորձերը:

Նա տալիս է կայսրության ընդհանուր նկարագիրը, ուշագրավ փաստեր է հաղորդում արքունիքի ներքին կյանքի, վարք ու բարքի մասին: Աշխատությունն ուշագրավ է նաև այն տեսակետից, որ ցույց է տրված Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդների և հատկապես հայերի խաղաղած դերը կայսրության տնտեսական ու մշակութային կյանքում: Թուրքական կառավարության կողմից, գրում է հեղինակը, նկատի էր առնված, որ քրիստոնյաներն արդյունաբերության և առևտրի ասպարեզում ծավալված գործունեությամբ կնպաստեն կայսրության բարեկեցությանը: Տատյանը նշում է նաև, որ հայերն իրենց ընդունակությունների և նախաձեռնող խելքի շնորհիվ տնտեսության ու ֆինանսների ղեկավարման գործում բավականին աչքի ընկան: Այդ բոլորը ստիպեցին օսմաններին՝ զնահատել հայերին և վստահել նրանց: Հայերն

ունեին մեծ ազդեցություն: Նրանցից շատերը ծառայում էին տարբեր վարչություններում:

Տատյանի աշխատության մյուս էջերը նվիրված են հայերի սոցիալ-քաղաքական, ժողովրդական կրթության, պարբերական մամուլի, գրականության, գիտության և արվեստի հարցերին:

XIX դ. երկրորդ կեսի պատմաբաններից է Ավետիս Պերպերյանը (1802—1870). որի «Պատմություն հայոց» աշխատությունը լույս տեսավ նրա մահից մեկ տարի հետո՝ 1871 թ. Կ. Պոլսում:

Շարադրելով հայ ժողովրդի պատմությունը՝ սկսած XVIII դ. վերջին քառորդից, հեղինակը միաժամանակ լուսաբանում է Օսմանյան կայսրության այն հարցերը, որոնք ինչ-որ չափով առնչվում էին հայ ժողովրդի պատմության այս կամ այն խնդրի հետ: Հատուկ գլուխ է նվիրված 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի պատմությանը, որին հայերը ակտիվորեն մասնակցել են: Անատոլիայի և Բալկանյան ճակատներում ռուսական զորքերի հաղթարշավի մասին խոսելիս Պերպերյանն ընդգծում է, որ եթե չլիներ Անգլիայի և Ֆրանսիայի միջամտությունը, ռուսական զորքերը գրավելու էին մայրաքաղաքը՝ Կոստանդնուպոլիսը: Նա բերում է նաև Ադրիանապոլսում կնքված պայմանագրի լրիվ տեքստը: Պերպերյանը նշում է, որ Արևմտյան Հայաստանից ռուսական զորքերի հեռանալուց անմիջապես հետո Կարինի հոգևոր առաջնորդ Կարապետ եպիսկոպոսի գլխավորությամբ մեծ քանակությամբ հայեր զգուհալ գոյով յանարժան գործոց տաճկաց և ի բնութենէ փաշայից, յորդորեալ զքաղաքացիսն՝ էառ ընդ իւր, և զնացին ի Ռուսաստան, ի Թիփիս, ՅԱխալցխա, և յայլ քաղաքս Ռուսաց»⁶⁸:

Գրքում բերված են արխիվային փաստաթղթեր ու վավերագրեր ինչպես թուրքերեն, այնպես էլ հայերեն: Օսմանյան կայսրության XIX դ. պատմությամբ զբաղվող մասնագետի համար Պերպերյանի աշխատությունը սկզբնաղբյուրի դեր կարող է խաղալ: Բազմաթիվ սկզբնաղբյուրներից հնելով հեղինակն օբյեկտիվորեն է շարադրել իր աշխատությունը, որն արևմտահայ դպրոցներում օգտագործվել է որպես դասագիրք: Գրքին կցված է կարևոր դեպքերի և հայտնի դեմքերի ընդարձակ ժամանակագրություն, որն ավելի է բարձրացնում աշխատության արժեքը:

⁶⁸ Պէրպերեան Ավետիս, Պատմութիւն հայոց: Սկսեալ ի 1772 ԱՄԷ փրկչին մինչեից ԱՄՆ 1860 հանդերձ կարևոր տեղեկութեամբ և ժամանակագրութեամբ երեսնի իրաց, Կոստանդնուպոլիս, 1871, էջ 212:

Թուրքիայի պատմության հարցերին անդրադարձել է նաև վաստակաշատ պատմաբան Ալեքսանդր Երիցյանը (1841—1902): Նրա «Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում» երկ-հատոր ծավալուն աշխատությունը գրված է էջմիածնի կաթողիկոսական դիվանի և պետական արխիվների հարուստ փաստական նյութերի ու վավերագրերի հիման վրա և առատ նյութ է պարունակում Օսմանյան կայսրության XIX դ. պատմության ուսումնասիրության համար:

Ա. Երիցյանն իր գրքի առաջաբանում նշում է, որ խնդիր է դրել ցույց տալ, թե «Հայոց ազգը, յանուն իւր դավանած սկզբունքների, անարատ սրտով և անկեղծությամբ գրկախառնվում էր դրացի քրիստոնեական հզոր պետության հետ, հայեցելով նորա եղբայրասիրությունը և բարեկամական պաշտպանությունը... Ներկայ դարուս սկզբին՝ մահմետական լծի տակ հեծող մեր պապերն էլ յուրեանց յոյսն ու ապավենը դառն Ռուսիոյ դահակալների մեծահամբավ հովանավորության մեջ»: Սա, ինչպես շեշտում է Երիցյանը, հայոց ազգի պատմության մեջ մի նշանավոր դարագլուխ է կազմում և արժանի է մանրակրկիտ ուսումնասիրության⁶⁹:

Երկհատորյակում Օսմանյան կայսրության XIX դ. պատմության հարցերից լուսաբանվում է այն, ինչ կապված էր արևմտահայության հետ: Հանգամանորեն են շարադրված հետևյալ հարցերը՝ տաճկահայատակ հայոց դրությունը, ռուս-թուրքական պատերազմը, պատերազմական պատրաստությունները 1829 թ. համար, 1829 թ. պատերազմը, էրզրումի նվաճումը, Բայազետի պաշարումը, Բաբերդի և էրզրումի անցքերը, Ադրիանապոլսի դաշնագրությունը, արևմտահայերի գաղթը, պատերազմի ազդեցությունը ժողովրդի բարոյականության վրա, Հովհաննես կաթողիկոսի հարաբերություններն արևմտահայերի հետ և այլն:

Հեղինակը ի վկայություն հայերի ուսական կողմնորոշման՝ բերում է ուսական բանակի սպանների կարծիքները: Այսպես, նկարագրելով էրզրումի նվաճումը 1829 թ. հունիսի 27-ին ուսական զորքերի կողմից, վկայակոչում է մի սպայի այն խոսքերը, թե Պասկևիչի զորքի առաջխաղացման ընթացքում Բասենի հայ գյուղացիները «յուրանց ունեցած-չունեցածը անկեղծ սիրով ընծայ էին բերում ուսաց զորքին»⁷⁰: Իսկ Բայազետի համար մղված համառ մարտերը ներկայացնե-

⁶⁹ Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա, (1800—1832), Թիֆլիս, 1894, էջ 7:

⁷⁰ Նույն տեղում, էջ 418:

լիս մեջ է բերում գեներալ Պոպովի հետևյալ խոսքերը. «Մեծ արիության մեջ պատերազմում էին հայք։ Սոքա կոպում էին և մեռնում որպես հերոսներ. սոցա գլխավորները միշտ առաջ էին, գրեթէ բոլորն էլ վիրավորվեցան»⁷¹։

Օսմանյան կայսրության պատմության մի շարք հարցեր են լուսաբանվել Ստեփանոս Պալասանյանի «Պատմություն հայոց։ Սկզբից մինչև մեր օրերը» աշխատության մեջ։ Պալասանյանը նյութի շարադրանքը սկսել է հայ ժողովրդի պատմության սկզբից և հասցրել է մինչև XIX դ. 80-ական թվականները։ Մեծածավալ այս գրքում բավականին էջեր են նվիրվել մոնղոլների արշավանքներին ու նրանց տիրապետության հաստատմանը Հայաստանում, օսմանցիների և պարսից պատերազմներին՝ Հայաստանը նվաճելու համար, Արևմտյան Հայաստանին և այլ հարցերի։

Աշխատության առաջին բաժնում հեղինակը լուսաբանել է՝ «Օսմանցոց ծագումը, օսմանցոց և պարսից պատերազմների սկիզբը, սուլթան Մեհմեդ II-ի և Ուլու-Հասան (1473), Շահ Իսմայիլի և Սելիմ Ա-ի պատերազմը և օսմանցոց Արևմտյան Հայաստանին տիրելը (1514), Թահմասպի և Սուլեյման Ա-ի պատերազմները (1533—1555), լալա Մուստաֆա փաշայի արշավանքը և բովանդակ Հայաստանի օսմանցոց իշխանութեան տակ մտնելը (1575—1585)»։

Երկրորդ բաժնում արժարժված են հետևյալ հարցերը՝ «Թուրքիայի հայոց վիճակը անցյալ հրեք դարերում, Կոստանդնուպոլսի պատրիարքության հաստատությունը (1461), ամիրաները և նոցա նշանակությունը, պատրիարքարանի գործած զեղումները աթոռակալության համար» և այլն։

Ս. Պալասանյանն այս հարցերը քննել է փաստական նյութի խոր իմացությամբ ու վերլուծությամբ։ Հեղինակն ատելությամբ է լցված դեպի թուրք զավթիչները, որոնք գրաված երկրները դարձրին կողոպուտի և հարստություն դիզելու աղբյուր՝ նվաճված ժողովուրդներին գրկելով ամենատարրական իրավունքներից։ Ինչպես Օսմանյան կայսրության լծի տակ ընկած բոլոր քրիստոնյա ժողովուրդները, այնպես էլ հայերը, գրում է հեղինակը, «քաղաքական իրավունքների կոզմից շատ էին տարբերվում տիրապետող մահմեդական տարրից, որ անարգական աչքով էր նայում նոցա վրա՝ իբրև անհավատների (զավուր) ու ստրուկների վրա։ Հայք մինչև անգամ հագուստով պարտավոր էին դանազան-

⁷¹ Նույն տեղում, էջ 423։

վիլ բուն օսմանցիներից և ոչ միայն զենք կրելու իրավունք շունեին, այլև ստիպված էին որոշյալ գույնի ու ձևի զգեստներ հագնել, և ով որ այս կանոնից շեղվում էր, տուգանքի և նույնիսկ մահվան էր ենթարկվում... ոչ ոք ապահով չէր լուր կյանքի ու սեպհականությունից համար»⁷²:

Հարկերի գանձման եղանակների մասին կարդում ենք. «Հարկերը սովորական կերպով չէին հավաքում, այլ կապալով էին տրվում այն մենավաճառներին, որոնք խոստանում էին ավելի վճարել տերությունն. պաշտոնյաներին, որով ժողովուրդը չափից ավելի կեղեքվում էր»։ Բավական էր, շարունակում է հեղինակը, որ մի հայ քիչ-շատ հարստության տեր լիներ, թուրքերը անմիջապես զանազան մեղադրանքներ էին բարդում նրա վրա, աքսորում կամ մահվան էին դատապարտում, և նրա գույքը գրավում էր պետությունը:

Ս. Պալասանյանը գրում է նաև դեվշիրմեի մասին. «Ոչ պակաս աղետաբեր էր մանկաժողովի սովորությունը, որով ամենայն տարի հարյուրավոր քրիստոնյա մանուկներ խլվում էին ծնողաց գրկից և մահմեդականության մեջ մեծանալով՝ ենիշեի ասած զորք էին կազմում»⁷³: Պալասանյանի բերած հարուստ փաստական նյութը, որը նա քաղել է մեզ հասած սկզբնաղբյուրներից, Թուրքիայի պատմության մասնագետների համար ունի նաև սկզբնաղբյուրի նշանակություն:

*
*
*

XIX դ. նշանավոր հայ գրողներից և հասարակական-քաղաքական գործիչներից ոմանք ևս անդրադարձել են Արևմտյան Հայաստանի ցավոտ խնդիրներին, արևմտահայության անասելի ծանր, իրավազուրկ վիճակին և պայքարի կոչ են արել ընդդեմ թուրքական տիրապետության: Նրանք միաժամանակ լուսաբանել են Օսմանյան կայսրության ներքին և արտաքին քաղաքականության մի շարք հարցեր: Այս իմաստով, առաջին հերթին պետք է հիշատակել Բաֆֆուն, Վրթանես Փափազյանին, Գրիգոր Արծրունուն և ուրիշներին:

Բաֆֆու ուշադրության կենտրոնում է եղել օսմանյան բռնապետության լծի տակ հեծող արևմտահայությունը: Նա հրատարակել է Թուրքիային, Արևմտյան Հայաստանին և արևմտահայությունը նվիրված մի-

⁷² Ս. Պալասանյան, Պատմություն հայոց: Սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1895, էջ 704—705:

⁷³ Նույն տեղում, էջ 705—706:

շարք հողվածներ և ուսումնասիրություններ՝ «Թուրքիա», «Տեղեկագիրք գավառական հարստահարությանց», «Խ՞նչ վերանորոգություններ պետք են տաճկական Հայաստանին», «Հայդուկներ», «Խ՞նչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ» և այլն⁷⁴:

«Թուրքիա» հողվածում Բաֆֆին գրում է. «Փոքր Ասիո սովը տակավին սարսափելի կոտորածներ է անում, ձմեռվա վրա հասնելը մի երկրորդ դժբախտության պատճառ եղավ ժողովրդին, ճանապարհների հաղորդակցությունները դժվարացան և խեղճ սովատանջները զրկվեցան դրսից շուտափույթ պաշարներ ստանալուց»⁷⁵: Պարզաբանելով Թուրքիայում սովի հաճախակի կրկնման պատճառները, նա շեշտում է, որ փոխանակ ժողովրդի հարկերը թեթևացնելու, բարվոքելու նրա տրնտեսական դրությունը, փոխանակ միջոցներ տրամադրելու երկրագործությանը, կառավարությունն իր պարտքերը մարելու համար «մինչ այն աստիճան հարստահարում է նրանց, որ ժողովուրդը շատ չէ ցանում, տրովհետև արդյունքը չէ կարողանում լրացնել այն հարկերը, որ պետք է վճարե՝ կառավարությանը: Այստեղից հասկանալի է, թե ինչու սովը հաճախ կրկնվում է նույն երկրներում»⁷⁶:

Բաֆֆին իր «Տեղեկագիրք գավառական հարստահարությանց» աշխատասիրության մեջ մանրամասնորեն վերլուծում է 1876 թ. Կ. Պոլսի հայկական պատրիարքարանի հրատարակած հիշյալ վերնագրով փաստաթղթերի ժողովածուն: «Հիշյալ «Տեղեկագիրքը»,—գրում է Բաֆֆին,—տալիս է մեզ թեև շատ տխուր, բայց հետաքրքրական տեղեկություններ»⁷⁷: «Տեղեկագրի» փաստաթղթերը դուրս են բերված պատրիարքարանի քսան տարվա արձանագրություններից և հասնում են մինչև 1872 թ. ապրիլը: Երկրորդ «Տեղեկագիրքը» վերնագրված է «Երկրորդ տեղեկագիրք գավառական հարստահարությանց ի խորհրդարանական հանձնախմբի առ ազգային ժողովն»: «Դա,—գրում է Բաֆֆին,—պարունակում է իր մեջ 1872 թվից սկսյալ մինչև 1876 սեպտեմբերի 1-ը, այսինքն՝ հինգ տարվա ընթացքում կատարված հարստահարությունների արձանագրությունները: Ասել է, թե ամբողջ «Տեղեկագիրքը» ներկայացնում է պատրիարքարանի քսանհինգ տարվա գործունեությունը»⁷⁸: «Տեղեկագրքում» զետեղված նյութերը վերաբերվում են թուր-

⁷⁴ Բաֆֆին, Երկրի ժողովածու, հատ. 9, Երևան, 1904:

⁷⁵ Նույն տեղում, էջ 89:

⁷⁶ Նույն տեղում, էջ 90:

⁷⁷ Նույն տեղում, էջ 221:

⁷⁸ Նույն տեղում:

քական կառավարութիւն վարած քաղաքականութիւնը ոչ միայն արեւմըտահայութիւն, այլև մյուս ոչ թուրք ժողովուրդներին նկատմամբ:

Բաֆֆին, մանրամասն շննելով «Տեղեկագրքի» փաստերը, պարզաբանում է թուրքական կառավարող շրջանների ազդարարային քաղաքականութիւնը և այդ կապակցութեամբ՝ նրանց հետապնդած նպատակները քրդական, հատկապես դերերեթիւթիւն հարցում: «Հողերը,—գրում է Բաֆֆին,—հայերի ձեռքում էին գտնվում, պապերից և հայրերից մնացել էին նրանց որպես ժառանգութիւն: Քրդերին դժվար էր փողով հալից հող զնել, որովհետև նա սովորած էր ամեն ինչ բռնութեամբ խլել հայից, ինչ որ իրեն պետք էր: Այսպես էլ արեց: Այստեղից առաջ եկավ հարստահարութիւն մի նոր խնդիր, այն է՝ հողային կամ կալվածական խնդիր» (ընդգծումը հեղինակինն է—Ե. Ս.):

«Պատրիարքարանի առաջին «Տեղեկագրքի» արձանագրութիւնց մեջ,—շարունակում է Բաֆֆին,—այսինքն՝ մինչև 1872 թվականը հողային կամ կալվածական խնդիրների մասին ամենևին հիշատակութիւններ չկան: Կնշանակե, մինչև վերոհիշյալ թվականը հայերն իրենց հողերի և այլ կալվածքների տերն էին: Դա այն ժամանակին է վերաբերում, երբ քրդերը բոլորովին չվական կյանք էին վարում և տակավին հողի հետ գործ չունեին: Բայց երբ կառավարութիւն հրամանով նրանք սկսեցին փոքր առ փոքր հաստատ կացութիւն հիմնել, շատ բնական էր, որ պետք է ծագեր հողային խնդիր: Քրդերը զգանազան գավառներում հայերից հափշտակում են մինչև 263 գյուղորայք իրանց պատկանած հողերով: Գավառների և գյուղերի, նաև հափշտակողների անունները մի ըստ միոջն գրված են «Տեղեկագրքի» մեջ: Հիշյալ գյուղերից շատերի հայ բնակիչներին քրդերը բոլորովին արտաքսում են և կալվածները սեփականացնում: Բայց գյուղերի մեկ մասի հայ բնակիչներին իրանց տեղն են թողնում, միայն հողերը նրանց ձեռքից խլելով, իրանք դառնում են կալվածատեր: Եվ այսպես հպատակեցնելով հայերին՝ քրդերը նրանց մշակել են տալիս հայրենական հողը, տուրք և տասնորդ են առնում և մինչև անգամ բերքի կես մասն իրանք են տանում»⁷⁶:

Բաֆֆին փաստերի համակողմանի վերլուծութիւնից հանգում է այն անխախտ եզրակացութիւն, որ հափշտակութիւնների մեջ խառն են՝ ոչ միայն քրդերի հասարակ ժողովուրդը, այլ գլխավորապես նրանց քեզերը, հոգևոր շեյխերն ու մուֆթիները և թուրք աղաները, բացի

⁷⁶ Նույն տեղում, էջ 252:

դրանցից և զանազան պաշտոնակալներ, որոնք իրանց բռնակալության հետ միացրած ունեն և ապահովություն կառավարության կողմից»⁷⁹:

Բացահայտելով կալվածագրի (թափուի) բուն էությունը, Բաֆֆին շեշտում է. «Հայերին պատկանող կալվածների մեծ մասն ինքն կառավարությունը հափշտակելով, տալիս է մահմեդականներին: Եվ որպեսզի յուր անիրավությանը մի օրինական ձև տա, նա հնարում է թափուի խաբեական օրենքը», որով «շատ շնչին զնով արձանագրում է մահմեդականների վրա և նրանց անունով արքունի կալվածագիր է տալիս»⁸⁰:

Բաֆֆին. ինչպես այստեղ, այնպես էլ «Խնչ վերանորոգություններ պետք են տաճկական Հայաստանին» ուսումնասիրության մեջ խոսում է նաև քրդական դերբեջությունների, գյուղացիների ճորտ վիճակի, մահմեդականների և ոչ-մահմեդականների իրավունքների, թուրքական դատարանների, թանգիմաթի, տուրքերի, կաթոլիկ և բողոքական միսիոներների և այլ հարցերի մասին⁸¹:

Մեծ գրողը ճշտորեն է պարզաբանում արևելյան հարցի էությունը, նշելով, որ դա Տաճկաստանի հարստահարված քրիստոնյաների ազատագրման հարցն է⁸²:

Այսպիսով, Բաֆֆին, լինելով ջերմ հայրենասեր և ազգային-դեմոկրատական հայացքների տեր, իր գեղարվեստական և պատմագիտական երկերում, ինչպես նաև հրապարակախոսական հոդվածներում խստորեն ու անզիջում քննադատում է Օսմանյան կայսրության ֆեոդալական-բռնապետական կարգերը՝ միաժամանակ ակտիվորեն պրոպագանդելով արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարի վեհ գաղափարը:

Բաֆֆու գաղափարակիցներից էր Վրթանես Փափազյանը, որն իր «Ենիշերիներ» աշխատության մեջ (1889, Թիֆլիս) խոսում է ենիշերիների գաղանձությունների և կամայականությունների մասին: «Այնչափ արհամիրքներ,—գրում է Փափազյանը,—ձգեց իր ժամանակին այս գունդը, նրա յուրաքանչյուր զինվորը այնպիսի սոսկալի բարբարոսություններ արավ, ժողովուրդը նրա ձեռքից այնչափ տաժանելի շարիքներ կրեց, որ մինչև այսօր էլ, երբ կամենում են նկարագրել մի արյունարբու, անօրեն, բարբարոս, կատաղի հրեշ՝ ասում են «ենիշերի»:

Ենիշերիներին 1826 թ. Ստամբուլում ֆիզիկապես ոչնչացնելուց հե-

⁷⁹ Նույն տեղում, էջ 253 (ընդգծումները հեղինակինն են—Ն. Ս.):

⁸⁰ Նույն տեղում:

⁸¹ Նույն տեղում, էջ 306—316:

⁸² Նույն տեղում, էջ 267:

տո էլ նրանց մնացորդները կայսրութեան ժայռամասերում շարունակում էին իրենց վայրագութեանները: Այդ մասին է պատմում Վ. Փափազյանը իր «Ենիշերիններ» երկում: Գրող Վ. Փափազյանը պատմաբանին հուշում է այն մրտը, որ թեկուզ ենիշերիններ 1826 թվականին սուլթան Մահմուդ II-ի կողմից սրի քաշվեցին մայրաքաղաքում՝ նրան չհնազանդվելու և սուլթանի գահին միշտ երկյուղ հանդիսանալու պատճառով, ապա նույն Մահմուդ II-ը և նրան հաջորդողներն այդ մաքրագարողումը շարեցին կայսրութեան ժայռամասերում՝ ցանկանալով ենիշերինների ահ ու սարսափի տակ պահել քրիստոնյա ժողովուրդներին:

Վ. Փափազյանը 1887—1889 թթ. շրջագայել է Թուրքիայի արևելյան վիլայեթներում, հատկապես Արևմտյան Հայաստանի նահանգներում, կատարել է հետազոտություններ, գրի է առել տեսածն ու լսածը և այդ բոլորը նամակների ձևով տպագրել Թիֆլիսում լույս տեսնող հայ լիբրալ բուրժուազիայի օրգան «Մշակ» թերթի 1889—1891 թթ. համարներում: Այդ նամակները ղեկավարած են Վ. Փափազյանի երկերի 5-րդ հատորում⁸³ և հարուստ նյութ են պարունակում հողատիրության, հողօգտագործման, տուրքերի, գյուղացիների շահագործման ձևերի մասին: Վ. Փափազյանը, ուսումնասիրելով Վանի վիլայեթի հողատիրության ձևերը, նշում է «...Քիչ չէ պատահում, որ քուրդ աղաներից մեկը կաշառեր «խափու դայիրեսի» կոչվող հողային վարչության անդամներին և սեփականացներ մի քանի գյուղի հողերն ու հանկարծ ամբողջ գյուղացիներին, որոնք տերեր էին, մաւաբաների փոխեր»: «Պիտի գիտենալ,—շարունակում է նա,—որ այստեղ համայնական հողեր գոյություն չունեն, ամեն ոք իր ունեցած հողի կատարյալ տերն է մշտապես, կարող է ծախել, կարող է ուրիշից գնել: Այս անել կարող է թե՛ գյուղացին և թե՛ քաղաքացի հողատերը, և հենց այդ է պատճառը, որ մի քանի ոսկու համար գյուղացու հողը հանկարծ դառնում է սեփականություն մի վաշխառուի, մի տաճկի և կամ մի որևիցե քուրդ աղա, հանկարծ «քափու դայիրեսի» մի թուղթ ձեռքը՝ կգա վճռելու գյուղացիներին իրանց հողերից և թե՛ գուրթ ունենա՝ գոնե հողատիրոջ մաւաբա կշինե»⁸⁴ (ընդգծումները հեղինակինն են—Ն. Ս.):

Փափազյանը բացահայտում է մարաբայության էությունը. «...Վասպուրականի հողերի 3/4 մասը պատկանում է քաղաքացիներին՝ տաճիկներին և քուրդ աղաներին, որոնց մշակող մարաբաներն են գյուղի

⁸³ Վ. Փափազյան, Երկերի ժողովածու, հատ. 5, Երևան, 1959, էջ 357—657:

⁸⁴ Նույն տեղում, էջ 422:

բնակիչները այն պայմանով, որ բերքի տասնորդը կառավարութեան տալուց հետո՝ մնացյալը կիսվի տիրոջ և մարաբայի մեջ: Այս երկուսից առաջինը տալիս է հողը, իսկ երկրորդը գործիքները, եզն ու աշխատանքը: Ահա գյուղացիների այդ դրությունը կոչվում է մարաբայութուն»⁸⁵:

Անդրադառնալով հարկերին, հեղինակը նշում է. «...հողային հարկը եղած բերքից 10%-ն են առնում, իսկ հայերից հաճախ 15%, իսկ եթե հաշվենք հարկապահանջների և բեգերի առած նվերները, այն ժամանակ 30% հասնում է տուրքի քանակությունը և հայ գյուղացի հողատերին, հայ գյուղի մարաբային այդ տուրքը թողնում է ոչ միայն անոթի, այլևս զրկում է հողից և ունեցած տավարներից, որոնցով նա գոնե մարաբայութուն կարող էր անել»⁸⁶:

Վ. Փափազյանը թուրք և քուրդ բեգերի, աղաների կամայականությունների առիթով շեշտում է, որ Վասպուրականում և մյուս հայկական նահանգներում հայ գյուղացին, հաճախ նաև թուրք գյուղացին, թեև սեփական հողեր են ունենում, սակայն միևնույն է, դրանք հետզհետե խլվում են բեգերի և աղաների դրած ծանր հարկերի հետևանքով: «Հայ գյուղացին,—եզրահանգում է Վ. Փափազյանը,—այնչափ ձանձրացել է իր քրտինքը ձրիապես ուրիշին տալուց, որ, եթե ճար ունենար, ետ կկենար իր սովորական զբաղմունքներից անգամ»⁸⁷:

Վ. Փափազյանը մանրամասնորեն է տալիս էրզրումի և Վանի վիլայեթների ազգաբնակչության տոկոսային հարաբերությունները, հայաբնակ, քրդաբնակ և թուրքաբնակ գյուղերի քանակը, ազգաբնակչության զբաղմունքը, կենցաղը, նկարագրում է քաղաքները, արհեստները, առևտուրը, եկեղեցիները, մզկիթները, հոգևորականության վարքն ու բարքը, դպրոցները, քաղաքացիների սովորությունները և այլն: Շատ հետաքրքիր փաստեր է բերում մահմեդական քրդերի, եզդիների, կզըլբաշների և ասորիների մասին: Մանրամասնորեն ներկայացնում է կաթոլիկ-բողոքական միսիոներների գործունեությունը և նրանց հետապնդած նպատակները: Հեղինակի ուշադրությունից չեն վրիպել նաև Արևմտյան Հայաստանի հանքային հարստությունները⁸⁸:

⁸⁵ Նույն տեղում:

⁸⁶ Նույն տեղում, էջ 423:

⁸⁷ Նույն տեղում, էջ 469:

⁸⁸ Վ. Փափազյանը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի մասին գրել է մի աշխատություն, որը հիշատակվում է նրա երկերի 5-րդ հատորի 609 էջում, սակայն մեզ չհաջողվեց գտնել այդ գիրքը:

Թուրքական բռնապետության դեմ էր ուղղված նաև նշանավոր հրապարակախոս, «Մշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունու բեղմնավոր գրիչը։ «Մշակում» տպագրված նրա բազմաթիվ հոդվածներում արծարծված են Թուրքիայի ֆեոդալական տնտեսության, ազգային քաղաքականության, սովթանիզմի լծի տակ կքած ժողովուրդների անասելի իրավադուրկ վիճակի, ներքին և արտաքին քաղաքականության, ինչպես նաև արևելյան, հայկական, քրդական հարցերի հետ առնչվող զանազան խնդիրներ։ Արծրունին շատ է անդրադարձել հատկապես արևելեկան հարցին։

«Արևելյան հարցը» գրքովկում Արծրունին, մեր կարծիքով, ճիշտ է բացատրում նրա բովանդակությունը։ Արևելյան հարց ասելով, նա հասկանում է Թուրքիայի լծի տակ ընկած ժողովուրդների պայքարը՝ իրենց ազատագրման համար և քննադատում է նրանց, ովքեր կարծում են, որ թուրքերին նվրոպայից քշելով արևելյան հարցը կլուծվի։ Արծրունին նշում է, որ դրանով արևելյան հարցը չի լուծվի, քանի որ Թուրքիայի տիրապետության տակ կշարունակեն մնալ հայերը, քրդերը, հույները և ասորիները։ Նա կոչ է անում եվրոպական պետություններին, որ նրանք թուրքերին զրկեն պետականությունից, քանի որ վերջիններս ինչպես ազդարնակության թվով են փոքրամասնություն կազմում, այնպես էլ մշակույթով են ետ մնում իրենց հպատակ ժողովուրդներից։ Արծրունին ընդգծում է, որ նման ժողովուրդն ի վիճակի չէ իր լծի տակ եղած ժողովուրդներին հավասար իրավունքներ տալու, նրանց կառավարելու։ Հետևապես, նվրոպայի խնդիրն է՝ օգնել Թուրքիայի տիրապետության տակ ընկած ժողովուրդներին՝ տապալելու թուրքական լուծը։ «Պատմությունը,—գրում է Արծրունին,—զրկում է պետականություն ունենալու իրավունքից այն բոլոր ժողովուրդներին, որոնք ցույց են տվել պետական կյանքով ապրելու իրենց անընդունակությունը»⁸⁹։

Գ. Արծրունին 1879 թ. մարտի 25-ին Թիֆլիսում հանդես եկավ «Թուրքաց հայերի տնտեսական դրությունը» հրապարակային դասախոսությամբ, որը հետագայում լույս տեսավ առանձին գրքովկով։ Դասախոսության մեջ նա կանգ է առնում այնպիսի հարցերի վրա, ինչպիսիք են՝ Հայաստանի աշխարհագրական դիրքը, Կիլիկիան, վարչական բաժանումը, հանքային հարստությունները, երկրագործությունը, անասնապահությունը, ազգաբնակչության կազմը՝ թուրքերը, հայերը և քրդերը, հայերի թվի պակասելու պատճառները, թուրքացման քաղաքակա-

⁸⁹ Г. Ариуни, Восточный вопрос, Тифлис, 1876, стр. 8.

նությունը, քրդերի և թուրքերի հարաբերությունները, հարկերը և հողա-
յին հարաբերությունները, հողային սեփականության ձևերը, դերբե-
յությունները, թուրքաց օրենքները և կամայականությունները, Բեռլինի
կոնգրեսը, եվրոպական քաղաքականության սկզբունքը, օսմանյան լծի
տակ ընկած ազգերի վերածնունդն ու ապստամբությունները և այլն:

Արծաթովող հարցերի լուսաբանումը հիմնավորելու համար բեր-
վում են կոնկրետ փաստեր: Այսպես, օրինակ, Արևմտյան Հայաստանի
ազգաբնակչության կազմի համար վկայակոչվում են պատրիարքարա-
նի հետևյալ տվյալները. Վանի, էրզրումի և Դիարբեքիի վիլայեթների
ազգաբնակչության ընդհանուր թիվը կազմում է 2,062,300 մարդ, որից
հայերը 1,330,000 են, թուրքերը 539,000 են միայն, քրդերը 120,000 և
ուրիշ մանր ազգություններ միասին 82,300 են: Ուրեմն թվով էլ հայերը
գերազանցում են ուրիշ ազգությունների թվից իրանց հայրենիքում:
Դեռ այս թվերի մեջ հիշված չեն բազմաթիվ մահմեդական հայերը⁹⁰:



XIX դ. 80-ական թվականներին հայերի նկատմամբ թուրքական կառա-
վարության վարած քաղաքականությունը արտացոլվեց հայերի տնտե-
սական անլուր հալածանքների, հարստահարությունների և ֆիզիկական
բնաջնջման հակամարդկային ծրագրի մշակման մեջ: Թուրքական կա-
ռավարող շրջանները, հետամուտ իրենց հայատյաց քաղաքականությա-
նը, հայկական դպրոցներում արգելեցին հայ ժողովրդի պատմության
ու գրականության ուսուցումը և պարտադրեցին միայն օսմանյան պե-
տության պատմության դասավանդումը:

Հայկական Ազգային կենտրոնական վարչության ուսումնական
խորհուրդը պատմաբան Միքայել Աշնյանին հանձնարարեց կառավա-
րության հաստատած ծրագրի համաձայն հայերեն լեզվով կազմել Օս-
մանյան կայսրության պատմությունը՝ «Պատմություն օսմանյան պե-
տության», որի Ա մասը լույս տեսավ Կ. Պոլսում 1889 թ. (152 էջ), Բ.
մասը՝ 1890 թ. (136 էջ):

Դասագրքում համառոտակի տրված է կայսրության պատմությունը՝
սկսած սելջուկներից մինչև Աբդուլ Համիդ 2-րդի սուլթանության սկիզ-
բը (XI դ. մինչև XIX դ. 70-ական թվականները): Շարադրված են միայն
սուլթանների պատմությունը և նրանց մղած պատերազմական գործո-

⁹⁰ Գ. Արծրունի, Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894, էջ 25—26:

ղությունները: Բոլորովին անտեսված են սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմութիւնը, ժողովրդական մասսաների, հատկապես թուրքական բարբարոս լծի տակ տառապող ժողովուրդների ծանր վիճակը, ապստամբութիւնները և բազմաթիւ այլ հարցեր: Դասագիրքը գրված է օսմանյան ռազմաֆեոդալական կայսրութիւն գոլերգման ոգով: Փառաբանվում են սուլթանների նվաճումները և արդարացվում է ժողովուրդների ստրկացումը: Ամեն կերպ գովերգվում են թուրք նվաճողները և օրինականացվում է նրանց տիրապետութիւնը՝ այլ երկրների և ժողովուրդների նկատմամբ: Դասագրքի հեղինակը երկինքն է հանում սուլթաններին, որակելով նրանց՝ առաջադեմ, քաղաքակիրթ, հանճարեղ, ընդհանուր համակրանքով է խոսում պետական գործիչների մասին և այլն: Բավական է բերենք Աշճյանի խոսքերը արյունոտ սուլթան Աբդուլ-Համիդի մասին, և անմիջապես հասկանալի կդառնա այդ դասագիրք կոչվածի ամբողջ իմաստը: Ահա. «Սուլթան Համիդ Գազի խան երկրորդը, որն անզուգական իմաստութիւնամբ և փառք կը տնօրինէ օսմանյան մեծազօր պետութիւն բաղդն, և իր հայրենական գորովագութ խնամքն անխտիր կը տարածէ իր ամեն կարգի հպատակաց վրա: Մաղթենք ի տեառնէ, որ երկար կեանք և անսասան բարօրութիւն պարգեւէ մեր այս ամենասիրելի վեհապետին» (էջ 282—283):

Ահա թե հայ մատաղ սերնդին ինչ ոգով էին դաստիարակում աշխարհային նման ծախված հայ մտավորականները:



1895 թ. Զեյթունի հերոսական ապստամբութիւնը շատ աշխատութիւններ են նվիրված, որոնց մեջ տրվում է նաև սուլթանական կառավարութիւն քաղաքականութիւնը ոչ-թուրք ժողովուրդների, մասնավորապես հայերի նկատմամբ: Ընթերցողն այդտեղ կգտնի բազմաթիւ փաստեր թուրքական կառավարող շրջանների ագրարային, հողային և հարկային քաղաքականութիւն, թուրքիայի դինված ուժերի, ներքին և արտաքին քաղաքականութիւն հարցերի վերաբերյալ: Այդ իսկ պատճառով այն գործերը, որոնք վերաբերում են արևմտահայութիւն այս կամ այն խնդրին, չեն կարող չդասվել հայ թուրքագիտական գրականութիւն շարքերը:

Այդպիսին է, օրինակ, Աղասու (Կարապետ Թուր-Սարգսյանի) «Զեյ-

թում և իր շրջականները...» ուսումնասիրությունը⁹¹։ Հեղինակն ակտիվորեն մասնակցել է 1895 թ. Զեյթունի ապստամբության նախապատրաստմանը և եղել է հերոսական դիմադրության ղեկավարը, ուստի նրա գիրքն ինքնատիպ վավերաթղթի և պատմական վկայության բնույթ ունի։ Գրքում տրված է ապստամբության ամբողջական և մանրամասն պատմությունը։

Զեյթունի 1862 և 1895 թթ. ապստամբությունների ուսումնասիրողներից է նաև Զեյթունցին (Մնացական Սեմերճյանը), որը գրել է «Զեյթունի անցեալին և ներկայէն» երկհատոր աշխատությունը⁹², որում շարադրված է Զեյթունի ողջ պատմությունը՝ սկսած հին ժամանակներից մինչև 1900 թվականը։

Առաջին հատորում նկարագրվում են Զեյթունի հերոսական մարտերը, իր կիսանկախ դիրքը պահպանելու համար զեյթունցիների գործադրած ճիգերը։ Հանգամանորեն լուսաբանված է Զեյթունի 1862 թ. հերոսամարտը, որին հեղինակն անձամբ մասնակցել է։

Աշխատությունում ցույց է տրված, որ Զեյթունի կռիվները ստանում են քիչ թե շատ ազգային երանգ։ «Զեյթունցին,—գրում է հեղինակը,— իր կղզիացած վիճակին մէջ ալլեա անտարբեր չհանդիսանար ազգային ճակատագրին և Հայաստանի անցողարձին, ան ականջ կը դնէ հեռավոր արձագանքներուն և իրերու անողոք բերումով կը մտնէ ազգային ընդհանուր շարժման ալիքներու մէջ, միշտ պահելով սակայն հատուկ պատերազմողի մասնավոր դրոշմը»։

Հեղինակը, որպես 1895—1896 թթ. ապստամբության ականատես և մասնակից, մանրամասն նկարագրում է 6000 զեյթունցիների 45-օրյա հերոսական դիմադրությունը հիսուն հազարանոց օսմանյան բանակին։ Այդ պատերազմի ընթացքում թուրքերը կորցրին 20 հազար մարդ։ Հեղինակը մեկ առ մեկ թվարկում է պատերազմի հասցրած վնասները ինչպես թուրքերին, այնպես էլ զեյթունցիներին։

Հայ հեղինակներից ոմանք էլ զբաղվել են իսլամի պատմության հարցերով։ XIX դ. երկրորդ կեսին քրիստոնյա Նվրոպան իր իշխանու-

⁹¹ Աղասի, Զեյթունը և իր շրջականները, Նկարագրություն աշխարհագրական, պատմական և պատերազմական ուղբինեան թագավորութեան անկումէն մինչև մեր օրերը, Պեյրութ, 1968։

⁹² Զեյթունցի, Զեյթունի անցեալէն և ներկայէն, մաս Ա, Վիեննա, 1900, մաս Բ, Փարիզ, 1903։

Թյունն էր հաստատել կամ ազդեցությունը տարածել մահմեդական շատ երկրներում, այդ թվում նաև իսլամի խալիֆության կենտրոն Օսմանյան կայսրությունում: Ինչպես եվրոպական, այնպես էլ հայ հեղինակները Օսմանյան կայսրության երբեմնի հզորության անկման և հետամնացության պատճառները բացատրում են իսլամի հետադիմական դոգմաներով:

Հայ հետազոտողներից իսլամի հարցերով զբաղվել է Ե. Թոփչյանը, որը 1899 թ. Թիֆլիսում հրատարակել է «Իսլամի պատմական տեսություն» գրքույկը: Հեղինակը հակիրճ լուսաբանում է հետևյալ հարցերը՝ իսլամի հայրենիքը, Մուհամմեդի կյանքը և գործունեությունը, ի՞նչ է քարոզում Ղուրանը, ճշմարիտ կամ սրբազան պատերազմ, իսլամի աղանդավորները, իսլամ և գիտությունը: Ըստ հեղինակի, նա աշխատել է «Գեթ մի համառոտ ժանոթություն տալ իսլամի մասին, բաց թողնելով մանրամասնությունները, մասնագիտական բացատրությունները»: Ե. Թոփչյանի կարծիքով, «Արաբական ցեղերին միացնող օղակը դարձավ Մուհամմեդի քարոզած նոր կրոնը՝ իսլամը»: Հեղինակն իսլամական երկրների նկարագրության համար ընտրել է Թուրքիան, ուր բազմաթիվ իսլամի խալիֆը:

Թուրքական սովթանները, գրում է Թոփչյանը, հասկանալով այն մեծ նշանակությունը, որ ունի իսլամի խալիֆը, ամեն կերպ աշխատեցին ձեռք բերել այդ կոչումը և վերջապես հասան իրենց նպատակին: «Այժմ ամբողջ մահմեդական աշխարհը, բացի շիաներից, de jure թուրքաց սովթանին խալիֆ է համարում: Սովթանը իր նշանակությունն ու ազդեցությունը ուժեղ պահելու համար արքունիքում խիստ հսկողությամբ պահպանում է մահմեդականների ամենամեծ սրբությունները՝ այծի բրդից գործած «Սանջակի շերիֆը» (նվիրական դրոշակը), որով Մուհամմեդն առաջին անգամ ամբողջին առաջնորդեց դեպի Մեքքա, Օմարի հաղթական դրոշակը, «Խըրխալի շերիֆը», այսինքն՝ Մուհամմեդի վերարկուն»: «Սովթանները աշխատել են նաև արտաքին գրավչություն տալ իրենց բնակավայրին՝ Կ. Պոլսին, հազգին գումարներ ծախսելով նորանոր մզկիթներ շինելու, հները շքեղացնելու վրա: Այդտեղ մզկիթների թիվը 8 հարյուրից ավելի է, բայց իր հույակապությամբ առաջին տեղն է բռնում Ալա-Սոֆիայի հույակավոր մզկիթը, որը կարող է տեղավորել 23000 մարդ: Չնայած այդ միջոցներին, սովթանները չունեին այն ազդեցությունն ու իրավունքները, որոնցով օգտվում էին նախկին խալիֆները: Սովթանը կրոնական ոչ մի վճիռ չի կարող տալ: Նույնիսկ Թուրքիայում նրա իրավունքները սահմանափակ են. այդտեղ

կրոնական բոլոր գործերը կառավարում է Շեյխ ուլ Իսլամը, որ իր ստորադրյալ ուլեմների, միվֆթիների (վիճակային վերահսկիչ), իմամների (մզկիթների կառավարիչ), ղադիների (վիճակային դատավոր) և այլ պաշտոնյաների միջոցով հարկավոր դեպքում կարող է մահմեդականներին գրգռել սուլթանի դեմ»⁹³:

Խոսելով պատերազմներում Թուրքիայի պարտությունների մասին, Թուփչյանը նշում է, որ Վիսլամի ուժը հետզհետե թուլացել է և այժմ կրոնական պատերազմը այնքան օարսափելի չէ, ինչպես Սուլեյման Մեծի ժամանակներում: Թուրքիայի անցյալն արդեն հաստատել է Ավետարանի այն խոսքերը, թե «Սուր հանողը սրով կընկնի»: Այդ պետությունն օրեցօր ընկճվում, քայքայվում է: Նրա հողերի մեծ մասը՝ Անգլիայի, Ավստրիայի, Ռուսիայի ձեռքն է անցել, մի մասն էլ բռնության լծից ազատվելով կազմել է Ռումինիա, Բուլղարիա, Սերբիա, Չեռնոգորիա և Հունաստան փոքրիկ պետությունները: Այժմ սուլթանի կեղծքված, ստրկացած հպատակների մնացորդը գլուխ է բարձրացրել և կյանքի ու գործի ապահովություն է պահանջում»⁹⁴:

Ե. Թուփչյանը խոսում է նաև իսլամի աղանդների, դրանց առաջաման և տարածման մասին⁹⁵:

XX դարասկզբի Օսմանյան կայսրության պատմությամբ զբաղվող հայ հեղինակներից պետք է նշել նաև «Պատմություն Արևելյան խնդրո և առաջնորդ հայկական հարցի» երկհատոր ուսումնասիրության հեղինակ Կ. Թումայանին (1852—1939):

Նա առաջին պատմաբաններից է, որ հայկական հարցը դիտել է որպես արևելյան հարցի բաղկացուցիչ մասը: Ուսումնասիրությունն սկսվում է հնագույն շրջանից և հասնում մինչև XIX դ. վերջը: «Արևելյան խնդիրը,—գրում է հեղինակը,—իր ընդարձագույն նշանակությամբ՝ արևելքի և արևմուտքի հակառակությունէն կը ծագի: Հետևաբար այդ խնդրո ծագման թուականը կը համապատասխանէ այն թուականին որում արևելք և արևմուտք իրար հանդիպէցան և այս երկու տարբեր քաղաքակրթության իրարու ազդելով հաղթանակել կամ բարոյական և քաղաքական գերիշխանություն ունենալ ճգնեցան»⁹⁶: Արևելյան հարցը նեղ իմաստով Թումայանը կապում է Ռուսաստանի և Թուրքիայի հա-

⁹³ Ե. Թուփչյան, *Իսլամի պատմական տեսություն*, Թիֆլիս, 1899, էջ 53:

⁹⁴ Նույն տեղում, էջ 54:

⁹⁵ Նույն տեղում, էջ 54—76:

⁹⁶ Կ. Թումայան, *Պատմություն Արևելյան խնդրո և առաջնորդ հայկական հարցի*, հատ. Ա, Լոնդոն, 1905, էջ 1:

կամարտության հետ: Նա ընդգծում է, որ Ռուսաստանը նպատակադրվել էր «Պալքանյան թերակղզու կրոնակից և ցեղակիցներին ալ... թրքաց պղծութենէն ազատել... Այս շրջանը Արեւելյան խնդրոյ, արդի առմամբ, ամենէն ավելի սաստկութեամբ մղուած ժամանակն է: Հոս կսկսի բուն Արեւելյան խնդիրը կրնանք ըսել»⁹⁷:

Կ. Թումայանի աշխատութեան առաջին հատորում բավականին տեղ է հատկացված սելջուկների, մոնղոլների և թուրք-օսմանների նվաճումներին: Հատկապես ընդգծված են նրանց վայրագութիւնները գրավված երկրներում: Զգալի տեղ է տրված նաև օսմանյան շրջանի պատմութեան հարցերի լուսաբանմանը: Շարադրելով սուլթանների նվաճումները Փոքր Ասիայում, Բալկաններում, Արաբական թերակղզում, հեղինակը մասնավորապես կանգ է առնում Թուրքիայի և եվրոպական պետութիւնների ու Ռուսաստանի փոխհարաբերութիւնների վերլուծման վրա: Արժեքավոր են վավերագրերից արված մեջբերումները:

Երկրորդ հատորը սկսվում է «Եվրոպական ազդեցութիւն» բաժնով: Այստեղ լուսաբանվում են ֆրանս-թուրքական մերձեցումը, կապիտուլյացիաների նշանակութիւնը և բնիկներին պատճառած վնասը: Աշխատութեան մեջ արժարժվում են նաև հետևյալ հարցերը՝ Անգլիայի երևան գալը Արեւելքում, Վիեննայի մոտ թուրքերի կրած պարտութիւնը (1683), Կառլովիցի 1699 թ. խաղաղութեան պայմանագիրը, Ռուսաստանի գերիշխանութիւնը Արեւելքում, 1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Քյուլուկ-կայնարջի 1774 թ. պայմանագիրը, Ղրիմի գրավումը, թուրք-ռուսական պատերազմը և Յասայի 1792 թ. պայմանագիրը, Ֆրանսիայի ազդեցութիւնը Թուրքիայի վրա Նապոլեոնի ժամանակ, Ռուսաստանի ազդեցութեան ուժեղացումը, հունական ապստամբութիւնը, 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Ադրիանոպոլսի պայմանագիրը, Անգլիայի ազդեցութիւնը, Եգիպտոսի առաջին և երկրորդ պատերազմներն ու եվրոպական պետութիւնների քաղաքականութիւնը և այլն: Շարադրանքը հագեցած է արժեքավոր դիվանագիտական փաստաթղթերով:

«Արեւելյան խնդրոյն ներկա շրջանը» բաժնում Թումայանը քննում է այսպիսի խնդիրներ՝ Ղրիմի պատերազմը և Փարիզի դաշնագիրը, Լիբանանի ռեֆուժացիան, Գերմանիայի ներթափանցումը Թուրքիա, Բոսնիայի և Հերցեգովինայի 1876 թ. ապստամբութիւնները, Պոլսի դեպքերը և 1876 թ. կոնֆերանսը, սահմանադրութեան հռչակումը,

⁹⁷ Նույն տեղում, էջ 228—229:

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, Սան-Ստեֆանոյի պայմանագիրը և նրա 16-րդ հոդվածը, Բեռլինի դաշնագրությունը և նրա հայկական հոդվածները, Կիպրոսի 1878 թ. հունիսի 4-ի դաշինքը, եվրոպական պետությունների նոտաները թուրքական կառավարութեան⁹⁷ արեւելյան վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու մասին և այլն:

Մանրամասն քննութեան առնելով Սան-Ստեֆանոյի և հատկապես Բեռլինի կոնգրեսի նիստերի արձանագրություններն ու որոշումները, հեղինակը ցույց է տալիս մեծ պետությունների շահագրիտական քաղաքականութեանը Օսմանյան կայսրութեան քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ: Նա հանգամանորեն վերլուծում է Անգլիայի քաղաքականութեանը Բեռլինի կոնգրեսում և ընդգծում, որ «Պէրլին Ստեֆանոյի ընդարձակորեն գծած ազատագրութեանը կը սահմանափակէ: Մեծ Պոլսարիան կը պղծիկցնէ, Մակեդոնիան Թուրքիո կհանձնէ, և Ասիո կողմեն ալ Հայաստանը կը թողու Թուրքիո կամքին, և այս ամենը շնորհիւ Անգլիոն»⁹⁸:

Կ. Թումայանը իրավացիորեն Բեռլինի կոնգրեսի հրավիրման ամբողջ պատասխանատվութեանը դնում է Անգլիայի վրա: «Առանց Անգլիո,—գրում է նա,—Պեռլինի ժողովը տեղի չէր ունենար, ժողովին մէջ ալ թէև Պիզմարք կը նախագահեր, բայց Սուլպլերին էր գլխավոր դերակատարը»⁹⁹:

Հեղինակը հատուկ անդրադառնում է հայկական հարցի ճգնաժամին: «Սասունի ջարդը և քննիչ հանձնաժողովը» ենթազգլխում գրում է. «Թուրքիո կառավարութեան բռնած ընթացքը ապուշութեան, հիմարութեան գործ չէ, այլ քաղաքականութեան մը արդյունքը: Հայերը տկարցընելու, Հայաստանի մէջ նվազեցնելու այս քաղաքականութեան շատ նպաստավոր սեպուեցեալ քյուրտերը ձեռք առնելը: Կազմվեցաւ քյուրտ համիտիլէ հեծելազունդը և անոնց արտոնութեան շնորհուեցաւ հայերը վանել Հայաստանէն և անոնց տեղը գրավել: Թէ հին թիւրքերը թէ երիտասարդ թյուրքերը Ասիո մեջ Թիւրքիո ամբողջութեանը պահելու միակ ճարը հայերը իրենց երկրին մէջ տկարացնելը գտած են»¹⁰⁰:

Աշխատութեան մեջ հանգամանորեն լուսաբանված է Անգլիայի քաղաքականութեանը Թուրքիայի նկատմամբ: Հեղինակը սուր քննա-

⁹⁸ Նույն տեղում, հատ. Բ, Լոնդոն, 1905, էջ 522:

⁹⁹ Նույն տեղում, էջ 527:

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 551—552:

դատության է ենթարկում ինչպես Անգլիայի, այնպես էլ Գերմանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի քաղաքականութիւնը արեւելյան և հայկական հարցում: Ի վերջո, սակայն, Թումայանը հանգում է միամիտ, սխալ եզրակացութեան, որ իբրեւ լուր մնար Անգլիա մինակը որ անկեղծորեն կը փափաքէր հայոց համար բան մը ձեռք բերել, բայց շատ թույլ ու երկշոտ վարուելով ամեն ինչ վիժեցուց¹⁰¹: Մինչդեռ հենց իր շարադրանքի ընթացքից և բերված բազմաթիվ փաստերից պարզորոշ երևում է, որ Անգլիան էր հայկական հարցի ամենամեծ թշնամին:

Երկրորդ հատորի հավելվածում բերված են շատ կարևոր փաստաթղթեր (էջ 613—678):

Հնչակյան կուսակցութեան ակտիվ գաղափարախոսներից Ս. Սապան-Գուլյանը «Հնչակ» թերթի 1900 թ. № 7-ի և 1901-ի 1, 2, 3 համարներում տպագրել է մի հոդվածաշար, որը հետագայում՝ 1908 թ. «Երիտասարդ Թուրքիա» խորագրով հրատարակվեց Փարիզում:

Հեղինակը տալիս է «Երիտասարդ Թուրքիա»-ի ծագման պատճառները, շեշտելով, որ ինչքան էլ իսլամը դարերի ընթացքում ջանացել է ամեն տեսակ արգելք դնել և թույլ չտալ, որ եվրոպական մտքի արտահայտությունները թափանցեն Թուրքիա, այնուամենայնիվ, թե՛ կրոնական և թե՛ քաղաքական բոլոր արգելքներն անզոր եղան պատենշել լուսավորութեան առաջընթացը, անանցանելի պատվար ստեղծել քաղաքակրթության ծավալման առջև:

Ս. Սապան-Գուլյանը, հանգամանորեն խոսելով «Երիտասարդ Թուրքիա»-ի ըմբռնումների ու ծրագրերի մասին, շեշտում է, որ նրա գաղափարախոսները, սկսած Բեշիդ փաշայից՝ Թանզիմաթի հեղինակից, ջանում էին Թուրքիան վերակազմել այնպիսի հիմունքներով, որ նրա մեջ ապրող զանազան ալլակրոն ժողովուրդներ ու ցեղեր կազմեին մի զանգված, մի մարմին, մի ժողովուրդ, մի ազգություն՝ օսմանյան ազգություն, որի մեջ ալլահ գոյություն չպիտի ունենային ներքին, ցեղային թշնամություններ, հակամարտ ձգտումներ: Այդ բանին հասնելու համար երիտասարդ թուրքերը արդարացուցիչ և շահեկան էին համարում օտար համայնքների ամբողջական բռնի կռնափոխությունը կամ ամբողջական կոտորածները: «Այդ բոլորը,—գրում է Սապան-Գուլյանը,—նրանք մեղմացուցիչ անհրաժեշտություն էին համարում ապագայի, սկզբունքի տեսակետից»¹⁰²:

¹⁰¹ Նույն տեղում, էջ 556—557:

¹⁰² Ս. Սապան-Գուլյան, Երիտասարդ Թուրքիա, Փարիզ, 1908, էջ 11 (ընդգծումները հեղինակին են—Ս.):

Հեղինակը կանգ է առնում արտասահմանում երիտթուրքերի գործունեության վերլուծության վրա: Նշում է, որ այնտեղ ևս երիտթուրքերը մենում էին հավատարիմ իրենց հիմնական սկզբունքին: Ըստ նրանց, Թուրքիայում միակ իշխող տարրը պետք է լինի թուրքը, և բոլոր փոփոխությունները պիտի կատարվեն հոգուտ տիրապետող օսման տարրի: Հենց այդ պատճառով էլ նրանք դեմ էին հեղափոխական շարժումներին՝ համարելով այն անօգուտ և վնասակար, քանի որ կարող էր տեղիք տալ արաբին միջամտության և խնդիրը վճռել հոգուտ քրիստոնյաների:

«Ծերունի թուրքերից»,—գրում է Սապահ-Գուլյանը,—ոչ նվազ թափով նրանք (եբրիտասարդ թուրքերը—Ն. Ս.) պայքար մղեցին հայկական, մակեդոնական, կրետական, արաբական, ալբանական շարժումների ու այդ շարժումներին արտահայտություն և ուղղություն տվող կուսակցությունների դեմ, ասելով, որ այդ բոլորը վտանգում էին կայսրության ամբողջությունը, միությունը, անկախությունը և կարող էին արտաքին միջամտություն հրավիրել ու պետությունը, անդամահատել»¹⁰³:

Օսմանյան կայսրության փրկության և պահպանման միակ միջոցը երիտթուրքերը համարում էին ոչ թուրք ժողովուրդների բռնի օսմանացումը՝ թուրքացումը: Սապահ-Գուլյանը, քննադատելով այդ սխալ ուղին և համարելով կործանարար հենց Օսմանյան կայսրության համար, միակ փրկությունը գտնում է ոչ թուրք ժողովուրդներին ինֆեուրմիզացիայի տալու մեջ. «Ազգերը իրենց գոյությունը կարող են ապահովել, պահպանել ոչ միայն անջատակաճությամբ և կամ առանձին անկախությամբ, այլ նրանք այդ նպատակին կարող են հասնել և ինքնավարական ձևով...»:

Ազգերի ինքնավարական սիստեմը այն միակ միջոցը և ձևն է, որով կարելի է Թուրքիային ճոր կազմ տալ, ճոր հիմնարկների վրա դնել, պահել, նրա ամբողջությունը և վանել անջատողական ոգին. հակառակ ճանապարհը կտանի դեպի անջատումն, դեպի պետական ընդհանուր քայքայումն,—դա է իրականությունը»¹⁰⁴:

Առաջին թուրքական սահմանադրության և երիտթուրքերի բնութագրմանն է նվիրված նաև Տ. Զավենի «Թուրք սահմանադրությունը և երիտասարդ թուրք կուսակցությունները» գրքույկը: Այստեղ թուրքերենից թարգմանաբար ղեկավարված է Արդուլ Համիդ II-ի 1878 թ. կայսե-

¹⁰³ Նույն տեղում, էջ 19:

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 63—64 (ընդգծումները հեղինակին են—Ն. Ս.):

րական հրովարտակը (Շէաթթը հումայունը) առաջին թուրքական սահմանադրութիւնն հռչակման մասին: Այնուհետեւ բերված է տեքստը, որը շատ կարեւոր է ուսումնասիրողների համար:

«Միթհահեան սահմանադրութեան» մասին իր «Երկու խոսքում» Զավենը, մեր կարծիքով, ճիշտ է տալիս այդ սահմանադրութիւնն զնահատականը, ընդգծելով, որ «նա ծնունդ չէր ամենեկին երկրում գոյութիւն ունեցող իրական ուժերի հարաբերութեան, այսինքն Միթհահեան սահմանադրութիւնը չէր գալիս սահման գծելու տիրող ֆեոդալական, ավատական դասակարգի և նրա շահերի պաշտպան բռնակալութիւնն կամայականութիւնների առաջ»: Զավենը նշելով դրա պատճառը, ընդգծում է, որ «թուրքական բուրժուազիան ուժ չունէր, երկրի ուժերի իրական հարաբերութիւնն մեջ նշանակալից տարր չէր կազմում: Միթհահեան սահմանադրութիւնը ոչ թէ առաջադեմ բուրժուազիայի համառ ու գիտակից կովի զավակն էր, այլ մի խումբ անձերի մեքենայութիւնն պտուղը: Եվ, որովհետեւ նրա անվթար պահպանման համար կովելու և մեռնելու պատրաստ ժողովրդական բանակ չկար, բնական է, որ տապալվէր առաջին քամուց: Ձախ ձեռքով սահմանադրութիւնն բաշխող վեհապետը աջով հափշտակեց իր շնորհը»¹⁰⁵:

Այնուհետեւ Զավենը տալիս է «երիտասարդ թուրքերի կուսակցութեան» հիմնադիրներից և գաղափարախոսներից Ահմեդ Ռիզայի կյանքի և գործունեութեան ակնարկը: Արժեքավոր է նաեւ «Միութիւն և առաջադիմութիւն» օսմանյան կուսակցութեան շէյմնական կանոնադրութիւն» թուրքերենից թարգմանված փաստաթուղթը:

Բերվում է նաեւ իշխան Սաբահէդդինի կազմած «Ապակենտրոնացման և անհատական նախաձեռնութեան» կուսակցութեան ծրագիրը ու դոկտ. Աբդուլլա Ջէվդեթի կողմից ստեղծված «Օսմանյան սահմանադրութեան միութեան» կանոնադրութիւնը:

Այսպիսով, XIX դարի և XX դարասկզբի հայ թուրքագիտութիւնը, չնայած հեղինակների՝ հասարակական-քաղաքական տարբեր հոսանքների պատկանելուն և օբյեկտիվիստական մոտեցմանը, նոր լույս է սփռում Թուրքիայի XIX դ. պատմութեան շատ հարցերի լուսաբանման վրա: Այդ շրջանով զբաղվող թուրքագետների համար հայ հետազոտողների ուսումնասիրութիւնների մեծ մասը, ինչպէս առիթ ունեցանք վերը մի քանի անգամ նշելու, ունի սկզբնաղբյուրի արժեք:

¹⁰⁵ Տ. Զավեն, Թուրք սահմանադրութիւնը և երիտասարդ թուրք կուսակցութիւնները, Թիֆլիս, 1908, էջ 39—40:

Հայ հեղինակների ուշադրության կենտրոնում են հղել Օսմանյան կայսրության պատմության հարցերը նաև երիտթուրքերի իշխանության օրոք:

1908 թ. հուլիսին կատարված երիտթուրքական վերնախավային բուրժուական հեղափոխությունը ստիպեց սուլթան Աբդուլ Համիդին վերականգնել այսպես կոչված «միդհադյան» սահմանադրությունը, իսկ փոքր վերջինս 1909 թ. մարտին փորձեց պատժել երիտթուրքերին և վերադառնալ միահեծան կառավարման, նա գահընկեց արվեց և հեռացվեց իշխանությունից: Երիտթուրքական «Իթթիհատ վե թերաքը» կուսակցությունը ստացավ իր բաղձալի իշխանությունը:

Երիտթուրքական այս կարճատև ու անարյուն հեղափոխությունը, ավելի ճիշտ՝ զինվորական հեղաշրջումը, մեծ արձագանք գտավ Եվրոպայում, որտեղ լույս տեսան «ազատամիտ» «ժեռն թուրքերի» «փայլուն» խաղին նվիրված բազմաթիվ ու բազմապիսի գրքեր, հետազոտություններ:

Ի տարբերություն արդուհամիդյան «զուլումի ժամանակաշրջանի», Թուրքիայում, մեծ մասամբ Կ. Պոլսում, ուր սկզբնական շրջանում, հատկապես 1908—1910 թթ., գոյություն ունեին մամուլի և տպագրության նկատելի ազատություններ, սկսեցին առատորեն լույս տեսնել երիտթուրքական հեղափոխության, ներքին ու արտաքին քաղաքականության, ընդհանրապես Օսմանյան կայսրության պատմությանն ու ներքին կյանքին նվիրված գրքեր: Թուրքագիտական զգալի գրականություն տպագրվեց այդ տարիներին նաև Ռուսական կայսրությունում, հատկապես ծայրամասերից՝ Անդրկովկասում:

Երիտթուրքական հեղափոխությանը առաջիններից մեկը արձագանքեցին Կովկասում գործող հայ մարքսիստ-լենինյանները, որոնց զնահատականները այսօր էլ ուշադրություն են դրավում իրենց գիտական խորաթափանցությամբ ու բազմակողմանիությամբ: Այդ տեսակետից քնորոշ է Բազդաև Կնունյանցի «Թուրքիայի իրադարձությունների շուրջը» հոդվածը¹, որտեղ նա, վերլուծելով հեղափոխության նախօրյակին

¹ «Бакинские вести», 1909, № 4, № 5: Հոդվածի ամբողջական հայերեն տեքստը տե՛ս Հ. Ինճիկյան, Բ. Կնունյանցը երիտասարդ թուրքերի հեղափոխության մասին (ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, Հասարակական գիտություններ, 1963, № 8, էջ 93—100):

երկրում ստեղծված վիճակը, բացահայտում է երիտթուրքերի հաջողութ-
յան պատճառները:

«Թուրքիայի հասարակական կյանքում ամենալուրջ հակասություն-
ները մինչև այժմ առաջ են եկել ազգային բախումներից,—գրում է
Կնունյանցը: Հին ռեֆիմը, բորբոքելով ստրկացված ազգերի ատելություն-
ներ, թուլացրել էր պետությունը, որի պահպանմամբ հատկապես շահա-
գրգռված էին թուրքերը: Պետության թուլացումը առաջ էր բերել պե-
տությունների միջամտությունը կայսրության ներքին գործերին: Թուրք
ազգի ամենակոտորակա մասը, որ կազմում էին բարձրագույն աս-
տիճանավորությունն ու սպայությունը, որոնք կանգնած էին ազգի միակ
կազմակերպված ուժի՝ զորքի գլուխը, չէին կարող անտարբեր վերաբեր-
վել կայսրության քայքայմանը: Նրանք դարձան հեղաշրջման ակտիվ
ուժը, նպատակ ունենալով Թուրքիան ասիական բռնապետությունից
վերածել եվրոպական քաղաքական ռեֆիմ ունեցող կոնստիտուցիոն
երկրի: Զուտ քաղաքական բնույթի ռեֆորմները հեղաշրջման գլխավոր
խնդիրն էին: Ժողովրդական լայն մասսաների «պահանջները» չխանգա-
րեցին իրականացնելու քաղաքական այդ ռեֆորմները: Եթե որևէ բան
մոայլում է հորիզոնը, ապա դա առանձին ազգությունների քաղաքա-
կան շփազանց մեծ պահանջներն են:

Հասարակական կյանքի շնորհավորված վիճակի շնորհիվ սոցիա-
լական հակասությունների այդ բացակայության մեջ էլ հենց թաքնված
է բանակի վրա հենվող երիտասարդ թուրքերի կոմիտեի քաղաքական
պահանջների հաջողության գաղտնիքը»²,—եզրակացնում է Կնունյան-
ցը: Այնուհետև նա վեր է հանում սոցիալական խիստ նեղ ու սահմա-
նափակ հիմք ունեցող երիտթուրքական հեղափոխության էական արատ-
ները. «Թուրքական հեղափոխությունը երկիրը հասցրեց զորքի գերիշ-
խանության, քաղաքական այնպիսի կարգի, երբ ազգը ենթարկվում է
զինվորի հրամանին»³:

Հետագա իրադարձությունները հավաստեցին Կնունյանցի այս եզ-
րահանգման ճշմարտացիությունը:

Երիտթուրքական հեղափոխության արձագանք պետք է համարել Ե.
Թոփչյանի «Երիտասարդ Թուրքիան և հայերը»⁴ գիրքը, որտեղ հեղինա-
կը, օգտագործելով հիմնականում եվրոպական արևելագետների տվյալ-

² Նույն տեղում, էջ 99:

³ Նույն տեղում, էջ 100:

⁴ Ե. Թոփչյան, Երիտասարդ Թուրքիան և հայերը, մասն Ա, Թիֆլիս, 1909:

ները, քննում է գլխավորապես Արևմտյան Հայաստանում տիրող վիճակը, տարբեր ազգութիւնների փոխհարաբերութիւնները, սովորական կառավարութեան հարկային քաղաքականութիւնը՝ դրանց նկատմամբ դրսևորելով իր գնահատողական վերաբերմունքը: Նա, օրինակ, գրում է. «Թուրքիան յուրաքանչյուր ազգութեան համար իր առանձին քաղաքականութիւնն ունի և հենց այդ քաղաքականութեան համեմատ էլ փոխվում են թվերն ու փաստերը: Այն օրից, երբ Բեռլինի դաշնագրով թուրքահայկական ցավերը Եվրոպայի ուշադրութեան առարկա դարձան «հայկական հարց» անունով, Թուրքիան ամենամեծ եռանդով աշխատեց նվազեցնել հայերի թիվը: Սակայն նույն բանը ձեռնտու չէ ներքին քաղաքականութեան տեսակետից, որովհետև նրանցից կառավարութիւնը դանձում է բեղելաք ասկերիե (զինվորական ծառայութիւնից ազատվելու հարկ—Ռ. Ս.): Ուստի թիվը մեծացնում է, իսկ երբ որ պետք է՝ նորից նվազեցնում է»⁵:

Ինչպես հայտնի է, երիտթուրքերի ազգայնամոլ քաղաքականութեան առաջին դրսևորումը ի հայտ եկավ 1909 թ. ապրիլ-մայիսին, Ադանայի դեպքերի ժամանակ, երբ իթթիհատական կանոնավոր բանակը ըստ էութեան մասնակցեց կիլիկիահայութեան զարհուրելի կոտորածին, որին զոհ գնաց շուրջ 30 հազար հայ: Կիլիկիան «ժամերգութեան» անմիջական արձագանքներից էր դեպքերի ակնատես Մուշեղ Եպիսկոպոսի ոչ մեծ, սակայն վերլուծութիւն ու գնահատականներ պարունակող գիրքը⁶: Այստեղ հեղինակը բազմաթիվ փաստերով ցույց է տալիս, որ Ադանայի ջարդը Արդուլ-Համիդի կողմից վաղուց էր նախապատրաստվում, իսկ 1909 թ. հենց սկզբից թուրքական իշխանութիւնների խրախուսանքի պայմաններում մահմեդական ազգաբնակչութիւնը հրահրվում ու զինվում էր: «... Եվ խորհիլ, թե ներքին գործոց խորհրդական Ատիլ պեյ ջարդի պահուն սա հեռագիրը կը փութացներ կիլիկիան բոլոր պաշտոնեւթեանց. «Մեծագուն ուշադրութեամբ հոգ տարիլ, որ վնաս չհասնի օտար կրօնային հաստատութեանց և հյուպատոսութիւններուն», հեռագիր, որ հայերը ջարդելու հրաման մըն էր, համիդյան բնադրոշմով մը խմբագրված»⁷: Երիտթուրքերի պատասխանատվութեան հարցը թողնելով ապագա ուսումնասիրողին, հեղինակն այն կար-

⁵ Նույն տեղում, էջ 215—216:

⁶ Մուշեղ Եպիսկոպոս, Ատանայի ջարդը և պատասխանատուները (նախընթաց պարագաներ), Գահիրե, 1909 (S.E. նաև Ֆրանսերեն թարգմանութիւնը Monseigneur Mouchegh, Les Vêpres ciliciennes, Le Caire, 1909).

⁷ Նույն տեղում, էջ 4:

ծիրն է հայտնում, թե Ադանայի շարդի հիմնական շարժառիթը «հայերին տնտեսապես փնագնելն էր», իսկ պատրվակն այն էր, որ նրանք, իբր, պատրաստվում էին զինված ապստամբություն:

Կիլիկիայի արյունոտ դեպքերի քննությանն է նվիրված նաև 1909 թ. Կահիրեում լույս տեսած Ա. Արսլանյանի Ֆրանսերեն գրքույկը «Ինչպես արդարությունը դատապարտվեց Ադանայում» վերնագրով⁹:

Նույն թվին Կ. Պոլսում հրատարակվեց Ս. Գաթամեյանի գիրքը⁹, որը Թուրքագիտության առումով որոշ հետաքրքրություն է ներկայացնում, թեև այն զրվել է ոչ թե հեղինակի շրջագայության ժամանակ ձեռք բերած նյութերի ու անձնական ասպվորությունների, այլ տարբեր ճանապարհորդների հուշագրությունների ու գաղափարական թղթակցությունների հիման վրա: Բնութագրվում են Արևմտյան Հայաստանի և ամբողջ Արևելյան Անատոլիայի նահանգների առանձնահատկությունները, կան նաև առանձին քաղաքների ու գյուղերի բնակչության վերաբերյալ թվականի տվյալներ, ազգագրական բնույթի նյութեր, առանձին շրջանների աշխարհագրական պայմանների բնութագրումներ, ինչպես նաև տեղեկություններ Կիլիկիայի քաղաքների ու գյուղերի մասին: Դիրքը կարելի է դասել նկարագրական-ճանաչողական բնույթի գործերի շարքը:

Թուրքագիտական մի շարք աշխատություններ լույս տեսան առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ 1910—1914 թթ.: Դրանք գրեթե ամբողջովին նվիրված էին Օսմանյան կայսրության ներքին խնդիրներին, հողային հարցին, Կիլիկիայի 1909 թ. դեպքերի թրե-նությունը և այլն:

Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների նկատմամբ սուլթանական և երիտթուրքական կառավարության քաղաքականությունը և, մասնավորապես, հայերի իրավական ու տնտեսական վիճակը ուսումնասիրելու համար արժեքավոր է 1908—1912 թթ. Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի հրատարակած «Հայերի վիճակը Թուրքիայում ըստ վավերագրերի» քաղաքագետ ժողովածուն¹⁰, որտեղ ընդգրկված հարյուրավոր փաստաթղթերը համադրել կերպով վկայում են, որ կեղեքված ժողովուրդների, հատկապես հայերի վիճակը իթթիհատական ռեժիմի

⁹ A. Arslanian, Comment la justice a été condamnée à Adana, Le Caire, 1909.

⁹ Սիմոն Գաթամեյան, Գամեր, Փոքրիկ ճանապարհորդը Արևելքի մեջ: Համառոտ տեղեկություններ Առիֆյան Քուրթի վրա և պատկեր գիտելիքներ, Կ. Պոլիս, 1909:

¹⁰ La situation des Arméniens en Turquie exposée par des documents, I. I—X, Constantinople 1908—1912.

պայմաններում ոչ միայն շարեւիվվեց, այլ ընդհակառակը, առավել վատթարացավ, մասնավոր դավառներում, ուր կատարյալ անիշխանությունն ու կամայականությունն էր թագավորում:

Ժողովածուում ըստ վիլայեթների բերված են Արեւմտյան Հայաստանում հայ գյուղացիության հողային բռնագրավումների, հարստահարությունների, թալանի ու սպանությունների բազմաթիվ փաստեր, որոնք, միաժամանակ, հաստատում են տեղի իշխանությունների հանցավոր մեղսակցությունը:

Ավելին, թուրքական իշխանություններն իրենք էին խրախուսում այդ բռնությունները՝ զենք բաժանելով մահմեդական ազգաբնակչությանը¹¹, թույլ տալով, որ կառավարական զորքերը շաբաթներով և նույնիսկ ամիսներով տեղավորվեն հայ ընտանիքներում¹² և այլն: Հատորների վերջում բերված են քրիստոնյա ազգաբնակչության նկատմամբ Վանի, Խարբերդի, Էրզրումի, Բիթլիսի, Սըվազի, Տրապիզոնի և Դիարբեքիի վիլայեթներում կատարված հանցագործությունների վերաբերյալ տվյալներ և աղյուսակներ, իսկ IX հատորի վերջում տրվում է ամեն կարգի բռնագրավումների ու հափշտակումների ընդհանուր պատկերը¹³:

Թուրքագիտական որոշակի արժեք է ներկայացնում Օսմանյան կայսրության, մասնավորապես արեւելյան շրջանների պատմության քաջ գիտակ Ա.—ԴՕ-ի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) աշխատությունը¹⁴, որտեղ վերլուծվում է հայկական երեք վիլայեթներում իշխող հողատիրական կարգը, տրվում է ազարալային հարաբերությունների պատկերը, հարկային սիստեմը, մերկացվում սուլթանական ու երիտթուրքական ազարալային քաղաքականությունը Արեւմտյան Հայաստանում: Հեղինակը բազմաթիվ փաստերով ցույց է տալիս, որ սահմանադրության հռչակումից հետո էլ այդ վիլայեթներում (ինչպես և մյուս նահանգներում) գյուղացիության վիճակը չթեթևացավ. միայն թե, գրում է Ա.—ԴՕ-ն, այն անկարգությունները, որոնք Համիդի օրոք կատարվում էին բացահայտ, երիտասարդ թուրքերի իշխանության սկզբնական շրջանում տեղի էին ունենում քողարկված, անուղղակի ձևով՝ թաքնված սպանություններ, բռնություններ, անհայտացումներ և այլն¹⁵, Հեղինակը

¹¹ Նույն տեղում, հատ. VIII, էջ 24:

¹² Նույն տեղում, էջ 18:

¹³ Նույն տեղում, հատ. IX, էջ 132—133:

¹⁴ Ա.—ԴՕ, Վանի, Բիթլիսի, և Էրզրումի վիլայեթները. Երևան, 1912:

¹⁵ Նույն տեղում, էջ 355:

մերկացնում է քուրդ ֆեոդալների ու բեգերի ձեռքով արևմտահայերի ընդլզումները մնշելու, արյան մեջ խեղդելու թուրքական խարդախ քաղաքականությունը:

Քուրդ բեգերն ու աղաները, ըստ հեղինակի, երեք տեսակ էին.

«... Առաջին տեսակի բեգերը նրանք են, որոնք կեղեքում են միայն զենքի ուժով... և երբ կառավարությունը փորձում է շափ դնել նրանց վարչագրություններին, նրանք ըմբոստանում են և բացարձակ ավազակություն դիմում:

Երկրորդ տեսակի բեգերը կեղեքում ու կողոպտում են շարունակ, բայց զենքի են դիմում, ջարդեր կազմակերպում և գյուղեր ավերում այն ժամանակ, երբ բարձրից թելադրություն կա, երբ կառավարությունն է այդ պահանջում:

Երրորդ տեսակի բեգերը զենքի չեն դիմում, ջարդեր չեն կազմակերպում և հաճախ պաշտպանում են իրենց ազդեցության սահմաններում գտնվող հայերին արշավող քրդերից, և հայերին կեղեքում ու կողոպտում են խաղաղ ճանապարհով, որի համար էլ նրանք հայերի կողմից համարվում են բարերարներ...»¹⁶:

Վանին, էրզրումին և Բիթլիսին է նվիրված նաև Ատրպետի «Ճիվաղը» վերնագրով գրքուկը¹⁷, որտեղ նկարագրվում են հայ հողագործի, նստակյաց քրդերի ու թուրքերի նկատմամբ կիրառվող կողոպուտն ու շարագործությունները: Ում դիմե հողագործի, քաղցած և տանջված ժողովուրդը,—հարցնում է հեղինակը,—երբ Կ. Պոլսի կենտրոնական վարչիչները չեն ցանկանում գավառական կեղծարար, գող, հափշտակող, կեղեքող, հարստահարող և ժողովրդի արյունը ծծող պաշտոնականներին իրենց բարձից հեռացնել և արժանավոր գործիչներին տալ¹⁸:

Նույն 1911 թ. Կ. Պոլսում լույս տեսավ Գեղամ Տեր-Կարապետյանի «Հողային հարցը հայաբնակ նահանգներում մեջ» արժեքավոր գիրքը¹⁹ նվիրված Արևմտյան Հայաստանում XIX վերջին և XX սկզբին իշխող հողատիրության ձևերի, գյուղացիությունից գանձվող բազմաթիվ և բազմապիսի հարկերի ու տուրքերի հանգամանալից հետազոտությանը: Իր տեսակի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում «Ջերիդեի շար-

¹⁶ Նույն տեղում, էջ 355—356:

¹⁷ Ատրպետ, Ճիվաղը: Քեօր-Հիտաեյն փաշա քուրդը, անսահման իշխան: Թրքահայերի ներկա վիճակը, Թիֆլիս, 1911:

¹⁸ Նույն տեղում, էջ 41:

¹⁹ Գ. Տեր-Կարապետյան, Հողային հարցը հայաբնակ նահանգներում մեջ, Կ. Պոլիս, 1911:

քի» հայատառ թուրքերեն թերթի տնօրեն Ա. Զիվելեգյանի ֆրանսերեն հրատարակած գիրքը՝ «Մամուլի ռեժիմը Թուրքիայում»²⁰։ Հեղինակը շարադրում է տպագրական գործի սկզբնավորման պատմությունը, հրատարակչական գործի զարգացումը, վերլուծում այն փոփոխությունները, որ սկսած 1722 թ. կատարվել են թուրքական տպագրության մեջ, մասնավորապես՝ մամուլի իրավունքներն ու լիազորությունները. և այդ մասին ընդունված օրենսդրական ակտերը, քննում դրանց առանձին հոդվածները՝ միշտ համեմատելով ֆրանսիական տպագրության ու մամուլի ռեժիմի հետ։ Հատուկ տեղ է տրված Աբդուլ Համիդի օրոք մամուլի համար ստեղծված ժանրագույն պայմանների նկարագրությանը։ «Չնայած գահ բարձրանալու ժամանակ արած իր կեղծ հայտարարությանը, — գրում է Ա. Զիվելեգյանը, — նա դաժանորեն հալածեց մամուլը, մասնավորապես երիտթուրքական «İstikbal» և «Vakit» թերթերը»²¹։ Հեղինակն անդադառնում է մամուլի ռեժիմի վերաբերյալ 1888 և 1894 թթ. ընդունված օրենքներին, նշում, որ Համիդը խստիվ արգելել էր իր գեթ մեկ լուսանկարը զետեղել թերթերում։ Գրքում վերլուծված է «արյունոտ սուլթանի» սահմանած գրաքննությունը, ինչպես նաև այդ շրջանի արտասահմանյան հայ պարբերականների նկատմամբ տարվող քաղաքականությունը։ Մահվան սպառնալիքի տակ Համիդն արգելում էր, որ հայկական թերթերը ներթափանցեն կայսրության սահմանները և ընթերցվեն։ Ա. Զիվելեգյանը քննում է նաև երիտթուրքական հեղաշրջումից հետո, 1909 թ. մամուլի վերաբերյալ ընդունված օրենքը և գալիս այն եզրակացության, որ «Թուրքիայի քաղաքական ու տնտեսական լուսավորության համար անհրաժեշտ է ունենալ ազատ ու անկախ մամուլ։ Քանի որ մամուլի ազատությունը մյուս բոլոր ազատությունների բնական պսակն է»²²։

Այդ տարիներին հայ հեղինակների լույս տեսած գործերում շարունակում են գերիշխել Թուրքիայի ներքին կյանքին, առանձին իրադարձություններին նվիրված հարցերը։ Արժեքավոր է Հ. Թերզյանի «Կիլիկիոյ աղետը»²³ ընդարձակ ուսումնասիրությունը, որտեղ բերված են 1909 թ. Ադանայի շարդի վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր, օտարականատեսների վկայություններ, քաղվածքներ եվրոպական հյուպա-

²⁰ A. Djivelégui, Le régime de la presse en Turquie. Comparaison avec le régime français, Paris, 1912.

²¹ Նույն տեղում, էջ 39։

²² Նույն տեղում, էջ 230։

²³ Հակոբ Թերզյան, Կիլիկիոյ աղետը. Կ. Պոլիս, 1913։

տոսների, թղթակիցների, միսիոներների տեղեկագրերից ու օրագրերից, ինչպես նաև թուրքական մամուլից: Այսպես՝ ամբողջությամբ բերված է «Իթիդալ» թերթի 1909 թ. ապրիլի 7-ի համարում տպագրված գրգռիչ հոդվածը, որն ըստ էության կիլիկիահայերին բնաջնջելու կոչ էր²⁴:

Հեղինակի ուսումնասիրած ողջ նյութը հանգեցնում է այն եզրակացության, որ կիլիկիայի շարդերը ոչ թե պատահական, այլ օրինաչափ ու կանխամտածված բնույթ են կրել ու անմիջականորեն առնչվել են իշխանության գլուխ անցած իթթիհատական ղեկավարների քաղաքական վարքագծի, նրանց ազգայնամուլ ծրագրերի հետ:

Երիտասարդ թուրքերի ազգայնական, ասիմիլյատորական ձգտումներին անդրադառնում է նաև Ատոմը (Հարություն Շահրիկյան), իր «Օսմանյան կայսրության անկման պատմությունը»²⁵ գրքում, որը նվիրված է հայտնի գործիչ Ջելալ Նուրիի «Օսմանյան կայսրության անկման պատմությունը» («Tarih-i Tedeniyati Osmaniye») խորագրով աշխատության վերլուծությանն ու արժեքավորմանը: Հեղինակը բազմաթիվ մեջբերումներ է անում Ջելալ Նուրիի գրքից՝ վերհանելով նրա աշխատության բացասական, խոցելի կողմերը: «Ջելալ Նուրին,—գրում է Ատոմը,—չկրնալով ժեռն թրքության շովինիստական նախապաշարումներին ազատվիլ, ինկած է հակասութեանց մեջ և կարծած է, թե վերածնությունը կարելի է գլուխ բերել զինվորական քաղաքականությամբ և հպատակ ազգերի ձուլման քաղաքականությամբ»²⁶: Անդրադառնալով երիտթուրքերի որոշ շրջաններում պրոպագանդիզոլ օսմանիզմի տեսությանը և Ջելալ Նուրիի մոտեցմանն այդ հարցին, Ատոմը մատնանշում է, որ «...օսմանցիությունը հեղինակին համար՝ ինչպես և բոլոր երիտասարդ թուրքերուն կամ անոնց դպրոցին համար, հոմանիշ է թուրքի»: «Կարելի է ըսել,—ավելացնում է նա,—որ մահմեդական այլ ցեղերն ալ կը մնան օսմանցիության իմաստեն դուրս»²⁷:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ 1912—1914 թվականներին, ինչպես հայտնի է, երիտթուրքական կառավարողներն արդեն հրաժարվել էին օսմանցիության հեղհեղուկ տեսությունից և իրենց գաղափարախոսության զենքը դարձրել պանթուրքիզմն ու պանթուրանիզմը: Օսմանյան կայսրության սահմաններում և առաջին հեր-

²⁴ Նույն տեղում, էջ 64—70:

²⁵ Ատոմ, Օսմանեան կայսրության անկման պատմությունը: Երիտասարդ թուրքերու վերանորոգող դպրոցը, Կ. Պոլիս, 1913:

²⁶ Նույն տեղում, էջ 5:

²⁷ Նույն տեղում, էջ 20—21:

Թին իր բնօրրան Արևմտյան Հայաստանում բնակվող հայ ժողովուրդը վերստին ենթարկվում էր հալածանքի ու բռնություն՝ ապրելով մոտավորապես ջարդի ու զանգվածային կոտորածների սարսափի մթնոլորտում: Տազնապալի այս վիճակը չէր կարող շանհանգստացնել հայ առաջադեմ մտավորականներին, որոնք փորձում էին բացատրություն գտնել, թե ինչու «ժեռոն թուրքերը» Արդու Համիդին տապալելուց շատ շանցած ազգային հարցում հետևեցին արդուհամիդյան քաղաքականությանը և ավելի խորացրին այն:

Այդ շրջանի հրապարակումների մեջ առանձնանում են մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի մի շարք հոդվածները, որոնք աչքի են ընկնում թուրքական իրականության խոր ըմբռնումով, հիմնավոր վերլուծությամբ, անաչառ գնահատականներով, ինչպես նաև հրապարակախոսական կրթությունով:

«Ինչու է Տաճկաստանը, համիդյան թե ժյոն թուրքական, բռնապետական թե սահմանադրական, հալածում ու կոտորում հայերին...», — հարցնում է Թումանյանը 1912 թ. գրած «Ահա թե ինչու» հոդվածում: «Էս մի հարցին մի քանի պատասխան են տալի: Ասում են՝ ...որովհետև տնտեսական խնդիր կա... որովհետև հեղափոխականներ կան... որովհետև վրեժ կա... որովհետև անկարգ կառավարություն է, խավար է...»

Էդ ամեն որովհետևներն էլ կարող են լինել և կան. սակայն մի որովհետև կա, որ ինձ թվում է, թե ամենալուրջ պատճառն է հայկական կոտորածների:

Վերցրեք Թուրքիայի քարտեզն ու մտիկ արեք: Դա մի նոր պետություն է, որ դրսից եկել է ու կոպիտ ուժով նստել հին կուլտուրական ազգերի ու նրանց հայրենիքների վրա: Եվ էդ երկիրներից մինը թե կա, որ նա համարում է ու դարձրել է իր հայրենիքը, ոչ Բալկանյան թերակղզին է, ոչ Աֆրիկայի հյուսիսը, այլ Անատոլիան, Փոքր Ասիան, էն երկիրը, ուր հայ ժողովուրդն էլ հնագույն ժամանակներից նստած պաշտում է իր Մեծ Հայաստանը, իր ազգային նվիրական վայրերն ու սրբությունները ու էն հողի վրա էլ հարուցանում ու դարգացնում է հայկական հարցը: Էս տեսակետից էլ հայկական հարցը Տաճկաստանը հուզող ամենածանր ցավերից միին է, և հետզհետե թերևս դառնա ավելի ու ավելի ծանր, քանի թուրքն ստիպված լինի սեղմվել դեպի էս կողմերը: Եվ ահա էս հարցից ազատվելու հնարը էսպես է վճռել թուրքի պետական հանճարը. հայերին կոտորել կամ հալածել, քշել, գաղթեցնել: Այո, վայ-

րագ ու անօրենն է էս ճանապարհը, այլև խելագար, սակայն հաս-
տատ...»²⁸։

Մեկ այլ հոգվածում («Հայկական հարցն ու իր լուծումը») Թու-
մանյանը քննում է հմլրոպական մեծ տերությունների և Ռուսաստանի
հակամարտությունները, դրանց հետ կապված՝ վերլուծում հայկական
հարցի պատմական զարգացումը XIX դարում, հատկապես 1856 թ.
Փարիզի կոնգրեսից հետո, երբ Քառաշին անգամ Տաճկաստանն ընդուն-
վեց հմլրոպական քաղաքակիրթ մեծ պետությունների շարքը, միջազ-
գային երաշխավորությամբ (ապահովեց նրա հողային անձեռնմխելիու-
թյունը), իսկ սուլթանի անկախության սկզբունքը, նրա՝ իր հպատակ
քրիստոնյա ազգերին հռչակելու խնդիրն անվանվեց Տաճկաստանի ներ-
քին գործ և նրանց բարօրության համար միանգամայն բավարար նկատ-
վեց սուլթանի հատուր-հումայունը»²⁹։

«Էստեղ, Փարիզում ստեղծվեց էն ամենը, ինչով որ սուլթանն իրեն
զգում էր ուժեղ ու ապրում էր նրա բարբարոսական կառավարությունը,
իսկ նրա հպատակ քրիստոնյա ժողովուրդները դժբախտ տառապում
էին՝ օրհասական մաքառումներով, ցույց տալով իրենց կենդանությունն
ու վերածնվելու ձգտումը»³⁰։

«...Տաճկահայ ժողովուրդն իր հարցով,—հզրակացնում է Թուման-
յանը,—նույնպես եղել է հմլրոպական պետությունների հակամարտու-
թյան դժբախտ զոհերից մինը, և անպայման ամենադժբախտը։

Ամենադժբախտը, որովհետև գտնվում էր Թուրքիայի սրտում, ամե-
նազօվար ու ամենավտանգավոր տեղում, և Թուրքիան նրան բաց պի-
տի թողներ միայն իր վերջին շնչի հետ»³¹։

Հիշատակության է արժանի Սմբատ Բյուրատի գիրքը³², որը գրվել
է 1913 թ., սակայն լույս է տեսել 1919-ին։ Այստեղ հայկական հարցը
քննության է առնվում արևելյան հարցի առնչությամբ՝ որպես դրա բաղ-
կացուցիչ մասը։ Շարադրանքը տարվում է քննական դիտողություննե-
րով, երբեմն վիճելի կամ սխալ, բայց ինքնուրույն գնահատականներով։
Նշելով, որ արևելյան հարցը ներքին և արտաքին ազդակներ է ունեցել,
նա ներքին ազդակներից առաջինն ու գլխավորը համարում է «պարտ-

²⁸ Հովն. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1969, էջ 149—150։

²⁹ Նույն տեղում, էջ 171։

³⁰ Նույն տեղում։

³¹ Նույն տեղում, էջ 171—172։

³² Սմբատ Բյուրատ, Արևելյան խնդիր և հայկական հարց, Պատմական ուսումնա-
սիրություն, Կ. Պոլիս, 1919։

ված և սակայն դեռ չընկճված ազգերուն» բնազդային ձգտումը դեպի եթե ոչ ազգային ինքնավարութիւն կամ անկախութիւն մը, այլ դեպի համասար իրավունքներու վայելում՝ տիրող տարրին հանդեպ: Հեղինակը ուշադրութիւն է դարձնում այն հանգամանքին, որ Օսմանյան կայսրութիւն ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական ընդ-վըզումները խթանվեցին ֆրանսիական մեծ հեղափոխութիւն ազդեցու-թյունից. «Մեկ կողմէ, անոնք զուրկ էին այդ տարրական իրավունքնե-րեն, մյուս կողմէ արեւմուտքի զանազան կենդրոններուն, մասնավո-րապէս Ֆրանսիայի մեջ երեւան եկած քաղաքակրթութիւնն ու հեղափո-խական շարժումներն ու նոր առաջադիմական ձգտումները պիտի ան-խուսափելիորեն ներգործեին արեւելքի այս հարստահարված ազգերուն վրա և անոնք հետեապէս պիտի չի կրնային տեականորեն տանել իրենցմէ ստորին մտավորական ու բարոյական մակարդակի վրա գըտ-նըվող և լոկ բիրտ ուժին կռթնած ցեղի մը տիրապետութիւնը... Արդ, հուսահատութիւն մղած հոգիներուն համար ուրիշ միջոց մը չէր մնար փրկութեան, բայց միայն պարզել ապստամբութիւն սրբազան դո-շը...»³³: Անդրադառնալով եվրոպական տերութիւններին քաղաքակա-նութիւնն այս հարցում, հեղինակը հակասական ու իրարամերժ գնա-հատականներ է տալիս: Այսպէս, օրինակ, իրավացիորեն նշելով, որ «Բովանդակ Եվրոպան, իր սեփական շահերուն հատուկ գիտակցութե-նեն թելադրված, պիտի ստիպվեր միջամտել Արեւելքի քրիստոնեաներու պաշտպանութեան պատրվակով» Նավարինի ճակատամարտի (1827 թ.) առնչութեամբ, միաժամանակ գրում է, թե իբր «Անգլիան ու Ֆրանսիան Հունաստանի ազատագրութիւն միակ նպատակէն առաջնորդված, իրենց մասնակցութիւնը բերելով այդ ճակատամարտին՝ ծառայած եղան ռու-սական քաղաքականութեան»³⁴ (ընդգծումը մերն է—Ռ. Ս.):

Սուլթանական կառավարութիւն ազգային քաղաքականութիւն վեր-լուծութիւնն է տրվում Գրիգոր Զոհրապի՝ Մարսել Լեար ժաժկանունով ֆրանսերեն հրատարակած արժեքավոր գրքովում³⁵, որտեղ հեղինակը եվրոպական աղբյուրների ու Կ. Պոլսի հայ պատրիարքարանի տվյալ-ների հիման վրա քննելով թուրքահայտակ ժողովուրդների իրավական ու սոցիալական վիճակը, գալիս է այն եզրակացութիւն, որ «Օսման-յան կայսրութիւնը միշտ էլ ցույց է տվել իր անընդունակութիւնը՝

³³ Նույն տեղում, էջ 9—10:

³⁴ Նույն տեղում, էջ 11—13:

³⁵ Marsel Léart, La question arménienne à la lumière des documents. Pa-
ris, 1913.

ապահովելու իր հպատակ մահմեդականներին և քրիստոնյաներին, առանց բացառության, այն, ինչ որ կարելի է անվանել լավ կառավարման միևիմուտ՝ անվտանգություն և արդարադատություն»³⁶։

Նվրդապական դիվանագիտության քայլերը զնահատելիս, հեղինակը սխալվում է, գրելով, թե «Ֆրանսիան, Գերմանիան և Մեծ Բրիտանիան, անկասկած, անկեղծորեն ցանկանում են բարենորոգումների անցկացումը Թուրքահայաստանում»³⁷։ Զգալի արժեք ունեն գրքույկի վերջում բերված վիճակագրական տվյալները, որոնք ներկայացնում են ինչպես հայերի, այնպես էլ Արևմտյան Հայաստանի վիլայիթներում բնակվող մյուս ազգությունների թվական կազմը և այլն։

Արևմտյան Հայաստանի երկու խոշոր վիլայիթների (Վան, էրզրում) և նրանց մեջ մտնող առանձին գավառների, քաղաքների ու գյուղերի, ինչպես նաև գավառի նկարագրությանն է նվիրված քահ. Ռ. Բեկգուլյանցի «Թուրքահայաստանով» գիրքը³⁸։ Թեև հեղինակն իր գիրքը գիտում է սոսկ որպես «տուրիստի տպավորություններ», սակայն ընդհանուր նկարագրական շարադրանքի կողքին ընթերցողը հանդիպում է առանձին դիպուկ զնահատականների ու դիտողությունների՝ նրա այցելած վայրերում տիրող վիճակի և ազգամիջյան փոխհարաբերությունների մասին։ Որոշակի արժեք ունեն հողային հարցին ու ազգաբնակչությանը նվիրված բաժինները, որտեղ Բեկգուլյանցը քննության է առնում, այսպես կոչված, քաֆիրության երևույթը՝ որպես «բուրդ ֆեոդալների ու բեգերի կողմից անպաշտպան հայ ազգաբնակչության նկատմամբ կիրառվող բիրտ կամայականություն ու բռնություն»³⁹։ Հեղինակն անդրադառնում է նաև այն հարցին, թե ինչու՞ երիտթուրքական կառավարությունը, քաֆիրությունից վնաս կրելով հանդերձ (քանի որ նրա կիրառումով հնարավոր չէր դառնում պետական հարկերը գանձել), չէր պայքարում դրա դեմ։ «Երիտթուրքական կառավարությունը,— գրում է Բեկգուլյանցը,— պարզապես չէր ուզում հայերի պատճառով գժտվել քրդական շեյխերի հետ, առավել ևս, որ նա ակնկալում էր քրդերի լուրջ օգնությունը հյուսիսային տերություն՝ Ռուսաստանի դեմ պատերազմի դեպքում»⁴⁰։

³⁶ Նույն տեղում, էջ 15։

³⁷ Նույն տեղում, էջ 24։

³⁸ Свящ. Р. Бекгулянци, По Турецкой Армении. Впечатления от поездки летом в 1914 году, Ростов-на-Дону, 1914.

³⁹ Նույն տեղում, էջ 74—75։

⁴⁰ Նույն տեղում, էջ 76։

1914 թ. օգոստոսի 3-ին բռնկվեց առաջին համաշխարհային պատերազմը: Մի քանի ամիս անց (հոկտեմբերի 29-ին) Օսմանյան կայսրությունը հանդես եկավ առավել ուժեղացնել խմբավորման՝ Եռյակ դաշինքի կազմում՝ վերջինիս հովանավորությամբ ու օգնությամբ իր պանթուրքական զավթողական ծրագրերն իրականացնելու ակնկալությամբ: Պատերազմի տարիներին Թուրքիայի քաղաքականության շուրջ զգալի գրականություն լույս տեսավ ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անտանտի մյուս երկրներում: Թուրքիայում 1914—1918 թթ. տեղի ունեցող իրադարձություններին արձագանքեցին նաև հայ հեղինակները՝ Թուրքիայի սահմաններից դուրս (պոլսահայ մտավորականությունն ապրում էր մոտավորապես նույն պայմաններում): 1914—1916 թթ. գլխավորապես Թիֆլիսում և Բաքվում, ինչպես նաև Փարիզում, Բոստոնում և այլուր տպագրվեցին մի շարք գրքեր, որոնցում 1915 թ. ահավոր հղեհների նկարագրության, լացի ու ողբի պատկերների հետ մեկտեղ քաղաքական տարբեր ուղղությունների պատկանող հայ հեղինակները տալիս են երիտթուրքական կառավարողների ներքին ու արտաքին քաղաքականության որոշ կողմերի քննական վերլուծությունը: Այսպես՝ 1914 թ. վերջին լույս տեսած «Պատերազմող Թուրքիան» վերնագրով գրքույկում⁴¹ Ա. Վանցյանը փորձ էր անում բնորոշել Թուրքիայի դերը պատերազմող կողմերի քաղաքականության մեջ: Նա ընդգծում է, որ «Տաճկահայաստանով տնտեսապես, ուրեմն և քաղաքականապես շահագրգռված են եվրոպական բոլոր տերությունները», և որ «Թուրքիայում խիստ կերպով բախվում են այդ պետությունների հակամարտ շահերը»: Հեղինակը, սակայն, չի կարողանում բացահայտել Գերմանիայի հետ Թուրքիայի հանդես գալու բուն դրդապատճառները և ամբողջ «գծբախտությունը» տեսնում է նրանում, որ «Թուրքիայի արկածախնդիր ղեկավարները, թողած գործունեության միակ բանական ուղին, իրենց ողորմելիության, կաշառված գերմանական ոսկիներից, ասպարեզ նետվեցին և կռիվ դաշտ կանչեցին Ռուսաստանին, Անգլիային ու Ֆրանսիային, որոնց ստվերից անգամ առաջներում սարսափում էր Տաճկաստանը... Այդ կուսակցության (Իթթիհատ վե Թերաքքը—Ռ. Ս.) ներկայացուցիչները,— ավելացնում է նա,— ավելի շուտ գերմանական գործակալներ են, քան Թուրքիայի բալթորությունը նախանձախնդիր պետական գործիչներ»⁴²: Իր գրքույկի վերջում հեղինակը եզրակացնում է, որ «Գեր-

⁴¹ Ա. Վանցյան, Պատերազմող Թուրքիան, Բազու, 1914:

⁴² Նույն տեղում, էջ 15—17:

մանիայի բարեկամութիւնը Թուրքիային շահագնաց թանկ է նստե-
լու⁴³։

Հայ Թուրքագիտության զարգացման գործում նշանակալից ավանդ-
ուների կեռն (Առաքել Բաբախանյան)։ Հայ ժողովրդի պատմությանը, հայ-
կական հարցին, արեւմտահայ ազատագրական շարժումներին նվիրված
նրա աշխատութիւնները⁴⁴ փաստական զգալի նյութ են պարունակում
նաեւ բուն Թուրքիայի պատմության ուսումնասիրության համար։ Իհար-
կեւ, Թուրքիայի վերաբերյալ նրա ոչ բոլոր տեսակետներն ու գնահա-
տականներն են ընդունելի։ Դրանց մի մասը միակողմանի, աշառու ու
հակասական է, սակայն կան նաեւ պատմական դեպքերի ու դրվագների
մի շարք դիպուկ, ճշմարտացի մեկնաբանութիւններ ու բնութագրում-
ներ, Օսմանյան կայսրության ներքին կյանքի, այնտեղ ապրող ժողո-
վուրդների իրավիճակի զգաստ ու լուրջ վերլուծութիւններ։ 1915 թ.
կեռն հրատարակեց «Հայոց հարցի վավերագրերը» ստվարածավալ ժո-
ղովածու, որտեղ ի մի է բերված այդ կապակցութեամբ տարբեր լեզու-
ներով առկա փաստաթղթերի մի զգալի մասը (1878 թ. սկսած)՝ Կ. Պոլ-
սի հայ պատրիարքի և էջմիածնի կաթողիկոսի աղբսագրերը, մեծ տե-
րութիւնների դեսպանների զեկուցագրերն ու մասնամուր նամակները և
այլն։

«Որքան հեռանում էին սահմանադրական ազատության առաջին
օրերի հանդեսները,—գրում էր կեռն երիտթուրքական հեղափոխության
մասին,— այնքան ավելի ու ավելի պարզվում էր, որ համիդյան ռեժի-
մը բոլորովին չէ անցել և նրա ավանդութիւններից շատերն ընդգրկել
են և երիտասարդ թուրքերը։

Այս հանգամանքը շատ պարզ արտահայտվեց մանավանդ Հայաս-
տանի գործերի մեջ։ Սահմանադրութիւնը, պառլամենտը, ազատու-
թիւնները համարյա ոչինչ փոփոխութիւն չէին մտցրել այն հարաբերու-
թիւնների մեջ, որոնք տիրում էին այդտեղ»⁴⁵։

1915 թ. լույս տեսավ նաեւ «Դիվան հայոց պատմության» XIII
հատորը⁴⁶, որն ամփոփում է XIX դ. ընթացքում սուլթանական Թուր-

⁴³ Նույն տեղում, էջ 31։

⁴⁴ Անդ, Հայոց պատմութիւն. հատ. 1—3, Թիֆլիս, 1917։ Նույնի՝ Հայոց հարցի վա-
վերագրերը, Թիֆլիս, 1915։

⁴⁵ Նույն տեղում, էջ 298։

⁴⁶ «Դիվան հայոց պատմության», Գիրք ԺԳ, Հարստահարութիւններ Տաճկահայաս-
տանում (վավերագրեր 1801—1888) հավելվածներով, ժանթագրութիւններով և բառա-
գրքով հրատարակեց Ա. Թահ. Գիւտ Աղանեանց, Թիֆլիս, 1915։

քիայում հայ ժողովրդի նկատմամբ գործադրված բռնությունների վա-
վերագրերը: Հիշյալ փաստաթղթերը վերստին հաստատում են այն ճշ-
մարտությունը, որ հայերի հետապնդումն Օսմանյան կայսրությունում...
«կատարվել է դարեր շարունակ ոչ թե պատահական ավազակների ձեռ-
քով, այլ իր իսկ՝ կառավարության նախամտածված գիտությունամբ, նրա
գործակալների միջոցով և սրանց թելադրությամբ ու խրախուսան-
քով...»: «Այսպես, ուրեմն, Տաճկաստանի ձեռքով կատարվող հայերի
ներկա կոտորածը,—առաջաբանում գրում է Գյուտ քահանա Աղանյան-
ցը,—միայն վերջաբանն է դարավոր, մտածված, սխտեմատիկ հայա-
ջնջման»⁴⁷:

1917 թ. Թիֆլիսում հրատարակվեց Գ. Մելիք-Կարակոզովի գրք-
քույկը «Գերմանիայի հանդես գալը Թուրքիայում 1895—97 թթ. հայ-
կական մեծ ջարդերից հետո» վերնագրով⁴⁸: Հեղինակը ցույց է տալիս,
որ առաջին անգամ կայգերական Գերմանիան իր ռազմաստրատեգիա-
կան ծրագրով Թուրքիայում հանդես է եկել 1893—1896 թթ. հայկական
ջարդերից հետո, օգտագործելով այն աշակցությունը, որ Վիլհելմ 2-րդը
ցույց էր տալիս Արդուլ Համիդին՝ արյունալի ջարդի օրերին: Մասնա-
վորապես գերմանական իմպերիալիզմի ջատագույնների գրքերի վերլու-
ծությամբ Մելիք-Կարակոզովը բացահայտում է այն իրողությունը, որ
պաշտպանելով Օսմանյան կայսրության ընդդեմ Անգլիայի ու Ռուսաս-
տանի, Գերմանիան հետապնդում էր նաև ֆինանսական նպատակներ՝
Փոքր Ասիայում գերմանական շուկայի ընդլայնում, երկաթուղային կոն-
ցեսիաների ձեռքբերում և այլն: Գրքի տպագրությունը 1917 թ. ըստ
երևույթին նպատակ էր հետապնդում ցույց տալ, որ Գերմանիան տա-
կավին XIX դ. վերջից ձգտում էր մերձենալ Թուրքիային և նրան դարձը-
նել իր դաշնակիցը ապագա պատերազմում և՛ որ նրա հակահայկական
քաղաքականությունն ուներ քաղաքական ու տնտեսական խոր դրդա-
պատճառներ:

Պատերազմի տարիներին լույս տեսած գրականության մեջ⁴⁹ Թուր-

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ Г. Мелик-Каракозов, Выступление Германии в Турции после великих ар-
мянских погромов 1895—97 годов, Тифлис, 1917.

⁴⁹ Հր. Աճառյան, Տաճկահայոց հարցի պատմությունը, Նոր Նախիճան, 1915:
Տ. Անդրեսայան, Զեյթունի անձնատվությունը և Սուլտիո ինքնապաշտպանությունը, Գա-
հիրե, 1915: Եղիշե Գեղամեանց, Հայերի ազատագրական շարժումները XX դարում կամ
հայկական հարցի եռթնհորդ շրջանը, Բաքու, 1916, Ա-ԴՕ, Մեծ դեպքերը Վասպուրակա-
նում 1914—1915 թվականներին, Երևան, 1917: Bertha Papazian, The Tragedy
of Armenia, Boston-Chicago, 1918.

քաղհտական առումով հետաքրքրական են Մուշեղ եպիսկոպոսի «Հայկական մղձավանջը» (էջ 381) և Հովհ. Հակոբյանի (էջ 382) «Թիւրքիա դերման ճանկերուն մեջ» խորագիրը կրող գրքերը: Առաջին հեղինակը հանգամանորեն քննության է առնում երիտթուրքական կառավարողների աղգանամով քաղաքականության ակունքները, ցույց տալիս, որ «Իթթիհատ վե թերաբը» կուսակցությունն իր ստեղծման իսկ օրից և դրանից էլ առաջ՝ երիտթուրքական շարժման սկզբնավորման ժամանակներից, անհանդուրժողական վերաբերմունք ու մեծապետական ատելություն է ունեցել կայսրության այլազգի ժողովուրդների նկատմամբ: «Այսօրվան մեզի ծանոթ Իթթիհատը 1888-ին կազմված Իթթիհատին շարունակություն է գրեթե,—գրում է նա:—Այսօրվանները քալեցին իրենց առաջնորդներու ճամբեն, միևնույն ուղղությամբ, միևնույն թրքական հակումներով, բայց ավելի հառաջացած՝ ավելի խիզախ ոչ թուրք ցեղերուն դեմ իրենց ատելություններուն մեջ»⁵⁰:

Հեղինակը փորձում է նաև վեր հանել թուրքական կառավարող շրջանների հայատյաց ու շարդարարական քաղաքականության դրդապատճառները: Իհարկե Մուշեղ եպիսկոպոսը, ինչպես նախահեղափոխական շրջանի հայ մյուս հեղինակները, հետև է այդ հարցին գիտական պատասխան տալուց, սակայն նրա գնահատականները ինքնին ուշագրավ են: «Ջարդերու պատճառները» գլխում նա, օրինակ, հանդում է այն եզրակացության, որ «հայկական սիսթեմաթիկ ջարդերը կըսկըսին հայկական ինքնագիտակցության զարթնումին հետ, այսինքն այն օրեն, երբ հայը զգաց, թե ինք խուզվելիք ոչխար մը, կթվելիք կով մը չէ թուրքին ձեռքին տակ... Կարելի չէ ամբողջ ժողովուրդը դարերով կեղեքել առանց անոր մեջ արթնցնելու ընդվզումի և ինքնապաշտպանութեան բնազդն ու ոգին»⁵¹: Մյուս պատճառը տնտեսական է, որին հեղինակը միակողմանիորեն վճռական նշանակություն է տալիս՝ այն կապիլով հիլոպական մեծ տերությունների շահերի հետ. «Հայկական ջարդերու պատճառները տնտեսական տեսակետով կը բացատրվին ամբողջ պատմության շրջանին: Կրոնական մոլեռանդությունը և թուրք ազգային զգացումը տնտեսական ձեռքը զինող ուժեր են եղած: Այդ ուժերուն եկավ միանալու 1878-ին Բեռլինի վեհաժողովեն սկսեալ ուրիշ ուժ մը, որուն սխալմամբ միայն պատճառ անունը կուտան, և որ է

⁵⁰ Մուշեղ արքեպիսկոպոս, Հայկական մղձավանջը: Փննական վերլուծումներ, Պոստոն, 1916, էջ 31:

⁵¹ Նույն տեղում, էջ 51, 121:

Ծվրապական մեծ պետութեանց քաղաքականութիւնը: Հեղինակը գրտնում է, որ Թուրքիան իր հայաշինչ քաղաքականութիւնը չէր կարողանա իրականացնել, եթէ Սան-Ստեֆանոյի պայմանագիրն ուժի մեջ մնար, հանձնվեր միայն Ռուսաստանին հսկողութեանը և ոչ թէ եվրոպական մեծ տերութիւններին. «Մենք ջարդվեցանք թուրքին ձեռով, քայց եվրոպական դիվանագիտութեան երեսնէն»⁵²,—գրում է հեղինակը՝ հակասելով ինքնագիտակցութեան արթնացման և ինքնապաշտպանութեան իրավունքի մասին վերը բերված իր իսկ գնահատականին: Հակորյանի գործովկում փորձ է արվում պատասխանել այն հարցին, թէ ինչու՞ Օսմանյան կայսրութեան կառավարիչները թեքվեցին դեպի գերմանա-ալստրիական դաշինքի կողմը և հանդես եկան որպես Գերմանիայի մոլեռանդ դաշնակիցներ: Հեղինակը վերլուծում է Գերմանիայի քաղաքական ու տնտեսական շահերը Թուրքիայում և, միաժամանակ, վերջինիս ակնկալութիւնները՝ համաշխարհային պատերազմում որպես Գերմանիայի դաշնակից հանդես դալու հարցում: Ճույց տալով գերմանական զինվորականութեան ներթափանցումը Թուրքիա և երկրի ներքին կյանքի վերահսկումը գերմանացիների կողմից, հեղինակը հեռու է, սակայն, հարցի գիտական պատասխանից: Նա բացահայտորեն գերազնահատում է Գերմանիայի դերն ու ազդեցութիւնը երիտթուրքերի արտաքին քաղաքական ձեռնարկումներում: Միաժամանակ նա անտեսում է Անտանտի տերութիւնների նվաճողական ծրագրերը, ինչպես նաև երիտթուրքերի նվաճողական պանթուրքական ծրագրերի ինքնուրույն բնույթը: Այսպես, օրինակ, նա պնդում է, թէ իբր 1914 թվականի աշնան համաձայնութեան (Անտանտի—Ռ. Ս.) պետութեանց դեսպանները գրաւորապես կը խոստանային Թուրքիո անկախութիւնը և անձեռնմխելիութիւնը երաշխավորել, եթէ միայն ան հրաժարեր պատերազմի մասնակցութենէն: Երիտասարդ թուրքերու կառավարութիւնը անմտորեն մերժեց այս առաջարկը և ամբողջ պետութիւնն իր այլազան ցեղերովը առաջնորդեց դեպի կործանումը...

Երիտասարդ թուրքերը, համաթուրք գաղափարին ծնունդ տալով, հրք ընդարձակ կայսրութիւն մը ստեղծել կուզէին, պարզորեն համագերման ծրագրին իրագործման գործիքները դարձան»⁵³: Գրքում հանգամանորեն քննվում են երիտթուրքական շարժումը, համաթուրանականութեան տեսութիւնը և այլն: Այստեղ էլ հեղինակը չափազանցում

⁵² Նույն տեղում, էջ 64—65:

⁵³ Հովն. Հակոբեան, Թուրքիա գերման ճանկերուն մեջ, Թիֆլիս, 1918, էջ 3—4:

է գերմանական ազդեցութիւնը երիտթուրքական շարժման վրա, նսեմացնում «Իթթիհատ»-ի ինքնուրույն գործելակերպը. «...Նթի երիտասարդ թուրք շարժումը իր սկզբնական շրջանին ֆրանսական գաղափարներով տոգորված էր և մականդոնական գործելակերպով առաջնորդված, վերջին, շատ մոտիկ անցյալի ազգայնացման շարժումը գերման դավին ստեղծագործումն էր և իր մեթոդը այնքան քանդիչ, այնքան ավերիչ, այնքան արնաթաթաւ, որքան գերմանականն էր»⁵⁴:

Թուրքագիտական բնույթի մի շարք աշխատութիւններ հրապարակ եկան առաջին համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապէս հետո:

Թուրքագիտական առումով առավել արժեքավոր են 1919—1920 թթ. Փարիզում ու ժնևում լույս տեսած գործերը, որոնք ինչ-որ չափով պատասխանում էին ժնևում հաստատված թուրք մտավորականութեան այն ելույթներին, որոնց նպատակն էր՝ խեղաթյուրելով իրականութիւնը, պատմական դէպքերն ու փաստերը, արդարացնել թուրք կառավարողների ազգայնամոլ, ցեղասպան քաղաքականութիւնը: Առանձին գործեր, ինչպես, օրինակ, Լ. Բարոնյանի գիրքը, ամբողջովին նվիրված էր ֆրանսիացի հայտնի գրող, մոլի թուրքասեր Պիեռ Լոտիի պատմական կոպիտ նենգափոխումների մերկացմանը⁵⁵: Եվրոպական հեղինակների գործերից բերված անառակելի փաստերով (Յ. Լեպսիուս, Հ. Շտյուրմեր, Ա. Մանդելշտամ և այլն) Բարոնյանը բացահայտում է Պիեռ Լոտիի հակահայկական պնդումների ողջ սնանկութիւնը, հերքում Օսմանյան կայսրութեան ճնշված ժողովուրդների ազատագրական ջանքերը որպէս «դավաճանական», հանցավոր գործողութիւններ դիտելու նրա մեղադրանքները: Իսկ Կ. Թահմազյանի գիրքը⁵⁶ ուղղված էր «Թուրքերը և հայկական պահանջները» գրքույկի դեմ, որտեղ փորձ էր արվում ապակողմնորոշել գերմանական հասարակական կարծիքը: Թահմազյանը մերկացնում է ինչպես սովթանական, այնպես էլ երիտթուրքական ազդալին քաղաքականութեան բնորոշ կողմերից մեկը՝ վիճակագրական տվյալների կեղծումը, փաստերի հարմարեցումն իրենց նպատակներին, ցույց տալիս, որ թուրքական կառավարողներին միշտ էլ հատկանշական է եղել կայսրութեան այլազգի ժողովուրդների, մասնավորապէս ոչ

⁵⁴ Նույն տեղում, էջ 14:

⁵⁵ L. Baronian, Pierre Loti.... Politicien et les massacres d'Arménie, Genève, 1919.

⁵⁶ K. Tahmazian, Turcs et Arméniens. Plaidoyer et Réquisitoire, Paris, 1919.

մահմեդականների, ինքնուրույն գոյության բացասումը, նրանց բոլորին (քրդերին և այլն) որպես թուրք ներկայացնելու միտումը: Անդրադառնալով արևելյան հարցին, հեղինակը ցույց է տալիս, որ «հայկական հարցը նույնքան հին է, որքան արևելյան հարցը»⁵⁷: Սակայն միակողմանիորեն մեկնաբանելով թուրքական կառավարողների դիրքորոշումն արևելյան հարցում, նա վստահություն է հայտնում արևմտյան մեծ տերությունների դիվանագիտական քայլերին, չի բացահայտում Անտանտի պետությունների խարդախ քաղաքականությունը հայկական հարցի ծագման ու զարգացման ողջ ժամանակաշրջանում, մի թերություն, որը հատուկ է նախախորհրդային շրջանի հայ թուրքագետներին: Արժեքավոր է իրաճանում թուրքական կառավարության վարած քաղաքականության քննական վերլուծությունը Թահմազյանի կողմից: Նա մերկացնում է իրաճանի քրիստոնյա բնակչության նկատմամբ օսմանյան կեղեքիչների վարած դաժան քաղաքականությունը⁵⁸: Թահմազյանն առաջիններից մեկը բարձրացրեց իրենց հանցավոր արարքների համար երիտթուրքական ղեկավար գործիչների միջազգային պատասխանատվության հարցը:

Ինչպես ասվեց, սփյուռքահայ հեղինակների՝ առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո լույս տեսած գործերում գերիշխում էին լացակամած տոնը, մեծ եղեռնի սարսափների հանգամանալից նկարագրությունները: Նշանակալից թիվ կազմող այդ գրականության մեջ առանձնանում են մի քանի աշխատություններ, որոնցում արժանահավատ փաստաթղթերի հիման վրա փորձ էր արվում վերլուծել և գնահատել իթթիհատական կառավարող շրջանների ազգային քաղաքականության բուն էությունը, մասնավորապես արևմտահայության դեմ ձեռնարկած ցեղասպան քայլերի կանխամտածված ու նախապատրաստված բնույթը: Հատկապես պետք է նշել ճանաչված մտավորական Արամ Անտոնյանի ծառայությունը, որը 1920 թ. Փարիզում հրատարակեց Թուրքիայի ներքին գործերի մինիստր և իթթիհատական կուսակցության առաջնորդ արյունարբու Թալեաթ փաշայի գաղտնի հեռագրերը՝ հայերին Միջագետքի անապատներն աքսորելու և այնտեղ ոչնչացնելու վերաբերյալ⁵⁹: Նույն թվին այդ գիրքը որոշ կրճատումներով լույս տեսավ

⁵⁷ Նույն տեղում, էջ 49:

⁵⁸ Նույն տեղում, էջ 108:

⁵⁹ Aram Andonian, Documents officiels concernant les massacres arméniens, Paris, 1920.

Լոնդոնում՝ «Նայիմ բեյի հուշերը» խորագրով⁶⁰, ինչպես նաև հրատարակվեց ու վերահրատարակվեց հայերեն⁶¹։

Այս շրջանում լույս տեսավ նաև Հակովբոս Տաշյանի աշխատությունը⁶², որն աչքի է ընկնում աղբյուրների վավերականությամբ ու հմտալից վերլուծություններով։ Լստ էության, նա առաջին հեղինակն է, որը լայնորեն օգտագործելով պաշտոնական փաստաթղթերը՝ Յ. Լեպսիուսի հրատարակած «Deutschland und Armenien» հայտնի ժողովածուն, ինչպես նաև նրա «Անկուցագիրը հայ ժողովրդի վիճակի վերաբերյալ Թուրքիայում», Շվեյցարիայում տպագրված փաստաթղթերը («Quelques documents sur le sort des Arméniens en 1915—1916» և այլն), հանգամանորեն լուսաբանում է արևմտահայերի տարագրության պատմությունը և ցույց տալիս, որ Թուրք կառավարողների կանխամտածված ձեռնարկումների նպատակն էր իսպառ բնաջնջել հայ ժողովրդին Օսմանյան կայսրության սահմաններում։

Թուրքիայի պատմության ներքին հարցերն ուսումնասիրողի համար ուշագրավ է նաև Գրիգորիս Պալաքյանի գիրքը՝ «Հայ գողգոթան»⁶³, որն ականատեսի հուշեր է, հավաստի փաստերով, նաև առանձին զնահատականներով, մասնավորապես իթիհատական կուսակցության պարագլուխների գործունեության վերաբերյալ։ Հեղինակը փորձում է նաև որոշ սխտեմի բերել 1915 թ. բռնի տեղահանության պատկերը, ճշտել դիվային այդ ծրագրի գործադրության ներքին օրինաչափությունները և այլն։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Թուրքիայում ծավալված ազգային պատերազմի կամ, այսպես կոչված, քեմալական շարժման բնույթին և զարգացման ծավալման միտումների զնահատմանը անդրադարձել են նաև հայ մարքսիստ-լենինյանները։ Սարգիս Կասյանն իր աշխատություններում հիմնավորապես քննել է Արևմուտքի իմպերիալիստական մեծ պետությունների քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ, բացահայտել քեմալական շարժման սկզբնավորման և Անտանտի պետությունների կողմից այն խրախուսելու բուն գրգռ-

⁶⁰ "The Memoirs of Naim Bey", London, 1920.

⁶¹ Ա. Անտոնյան, Մեծ ոճրագործությունը, Կ. Պոլիս, 1920։ Նույնի՝ Մեծ ոճիրը, հայկական վերջին կտորածները, Բոստոն, 1921։

⁶² Հ. Հակովբոս Վ. Տաշյան, Հայ ազգի տարագրությունը գերմանական վավերագրերու համեմատ, Վիեննա, 1921։

⁶³ Գրիգորիս Մ. Վաղդ. Պալաքյան, Հայ գողգոթան։ Դրուագներ հայ մարտիրոսագրութեան, Պեոլինեն գեպի Զոր., 1914—1920, Ա հատոր, Վիեննա, 1922։

պատճառները: «Ազգայնական-փաշայական, ավազակային-տիրապետական այդ շարժումը,—գրում է Կասյանը 1919 թ. վերջին,—որ առաջ է եկել իշխելու սովորությունից, գերազանցորեն քաջալերվում է շահագրգռված իմպերիալիստների կողմից: Եթե մի ձեռքով նրանք հրահրում են փաշաներին պատրաստ լինել իրենց իրավունքների մաքսիմումը պահանջելու, իսկ մյուս ձեռքով ապտակում են նրանց և բաժինը խլում, ապա դա ոչինչ՝ այդպես է թելադրում իմպերիալիստական քաղաքականությունը...»⁶⁴: Կասյանը առաջիններից մեկը տվեց քեմալական շարժման մարքսիստական գնահատականը. «Մուստաֆա-քեմալյան շարժումը, որին քեմալականները անվանում են «ազգային»... դա տաճիկ պորտաբույծ փաշաների, տզրուկ պաշտոնյաների և զանազան թալանիչների ձգտումն է՝ պահպանել իրենց անբաժան գերիշխանությունը այսպես կոչված Տաճկաստանում, նրանց շարժումն է դեպի Անդրկովկաս»⁶⁵:

«Իիպլոմատիական պայքարը Թուրքիո շուրջը» հոդվածում Կասյանը բացահայտում է Անտանտի տերությունների «նեբրոդամիտ» ու «վեհանձն» վարմունքի բուն պատճառները՝ «Թուրքիայի նշանակությունը մահմեդական աշխարհում»⁶⁶, իսկ «Անգլիան ու Ֆրանսիան» խորագիրը կրող հոդվածում նա պարզաբանում է իմպերիալիստական այդ տերությունների հակամարտության արմատները Մերձավոր Արևելքում 1921 թ. Անկարայի պայմանագրի կնքումից հետո⁶⁷:

1919—1921 թթ. սփյուռքում լույս տեսած գրականությունը զգալի նյութ է պարունակում Թուրքիայի առանձին շրջաններում ծավալված իրադարձությունների վերաբերյալ: Մի շարք հեղինակներ հանգամանորեն շարադրում են 1919—1921 թթ. դեպքերը Կիլիկիայում, նրա հայաշատ քաղաքներում՝ Ադանայում, Մարաշում, Սիսում, Հաճընում, Զեյթունում և այլուր տեղի ունեցած ինքնապաշտպանական կռիվները⁶⁸:

Սակայն այդ աշխատանքները, գրեթե առանց բացառության, պարունակելով հանդերձ փաստական հարուստ նյութ Կիլիկիայում ֆրանս-

⁶⁴ Մարգիս Կասյան, Ընտիր երկեր, Երևան, 1967, էջ 152:

⁶⁵ Նույն տեղում, էջ 153:

⁶⁶ Նույն տեղում, էջ 229:

⁶⁷ «Կարմիր աստղ», 1922:

⁶⁸ Սուրեն Պարթևյան, Արաբա-հայկական լեզուներ, Իզմիր, 1919: Վ. Մ. Բյուրեճեան, Հայկական Կիլիկիա, Նիւ-Եորք, 1919: Դավիթ Մ. Աղալեան, Կիլիկիան դրվազներ, Փարիզ, 1921: Նազարեթ Զեյրալեյան, Զեյթունի վերջին դեպքերը (1919—1921), Ալեքսանդրիա, 1922: Վադդ-Մեխակ, Զեյթունի նահանջը, Կ. Պոլիս, 1922:

Թուրքական քաղաքականություն, Կիլիկիայի տնտեսական դրության, Կիլիկահայերի հերոսական ինքնապաշտպանական կռիվների, քեմալական գործակալների քայքայիչ ու հրահրիչ աշխատանքի և շատ այլ հարցերի վերաբերյալ, զուրկ են գիտական հետալսյուններից ու ընդհանրացումներից կամ չեն տալիս հարցերի կապակցված ու համակողմանի շարադրանքը:

ՄՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ ԹՈՒՐԲԻԱՅԻ ՄԱՍԻՆ (1920—1970 թթ.)

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական գործիչներն ու պատմաբանները, ինչպես նաև առանձին հեղինակներ՝ ուսումնասիրել են օսմանյան և հանրապետական Թուրքիայի, այնպես էլ Թուրքական լծի տակ ընկած Արևմտյան Հայաստանի տնտեսության ու պատմության բազմաթիվ հարցեր: Նրանց հուշագրություններում ու ուսումնասիրություններում վերլուծվել են Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականությունը, հայ ժողովրդի արևմտյան հատվածի ու նաև առանձին հայաբնակ նահանգների պատմությունը, հայերի դերը Օսմանյան կայսրության հասարակական-քաղաքական կյանքում, Թուրքական իշխանությունների հայահալած քաղաքականությունը մինչև առաջին համաշխարհային պատերազմը, նրա տարիներին և հետո, հայ ժողովրդի ազատագրական ու ինքնապաշտպանական պայքարը Թուրքական ռազմաֆեոդալական բռնապետության դեմ, արևելյան հարցը, այդ թվում նրա բաղկացուցիչ մասը կազմող հայկական հարցն ու միջազգային դիվանագիտությունը, հայերի մասնակցությունը առաջին համաշխարհային պատերազմին և այլն:

Օսմանյան Թուրքիայի պատմության ներքին ծալքերը բացահայտելու առումով խիստ շահեկան է Նրվաճը Աղաթոնի «Կյանքիս հիշատակները» ինքնակենսագրականը¹: Հեղինակը օսմանյան կառավարության XIX դ. երկրորդ կեսի փոստի ու հեռագրի մինիստր Գրիգոր Աղաթոնի որդին է: Նրա հայրը մոտ էր կանգնած արքունիքին, ուստի լավատեղյակ էր այն ամենին, ինչ տեղի էր ունենում կայսրության սահմաններում: Ծ. Աղաթոնը, լինելով մասնագիտությամբ գյուղատնտես, հետաքրքիր տվյալներ է բերում Աբդուլ Համիդ II-ի օրոք երկրի գյուղատնտեսությունից վիճակի մասին: Նա լուսաբանել է նաև կայսրության

¹ Ծ. Գ. Աղաթոն, Կյանքիս հիշատակները, Ժնև, 1931:

ֆինանսական ծանր դրութիւնը: Գրքում նկարագրված է Թուրքական բարձր աստիճանավորների պաշտոնավարութեան բնույթը, նրանց կաշառակերութիւնը և այլն: Միաժամանակ Աղաթոնը նկարագրում է հայ պաշտոնյաների ազնիվ ծառայութիւնը, որին սուլթանական իշխանութիւնը, որպէս հատուցում, պատասխանում էր հալածանքներով և հարստահարութիւններով: Հստ Աղաթոնի, նույնիսկ սուլթանական բարձր աստիճանավորներից ոմանք՝ Ահմեդ Վեֆիք փաշան, Ռյուշտու փաշան և Կադրի բեյը, գտնում էին, որ հայ ժողովրդի դժգոհութեան պատճառը հետևանք է սուլթանական հոռի վարչութեան (էջ 125, 132 և 149): Ե. Աղաթոնը բազմաթիվ փաստերով նկարագրում է Արդու Համիդ II-ի «գլուխի» ժամանակաշրջանը, Գերմանիայի կայսր Վիլհելմ II-ի թշնամական վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ:

Հետաքրքիր են նրա գրքում բերված այն փաստերը, որոնք վերաբերում են Զեյթունի 1862 թ. ապստամբութեան ճնշման հանգամանքներին: Պետք է, սակայն, նշել, որ այս գրքում տեղ գտած հարուստ փաստական նյութը դեռևս չի օգտագործվել հայ արևելագիտութեան կողմից:

Կ. Արապյանի սովորածավալ մենագրութիւնը նվիրված է Թուրքիայի XIX դ. առաջին կեսի հասարակական-քաղաքական կյանքի բնութագրմանը: Գիրքը լույս է տեսել հայերեն և թուրքերեն²:

Օսմանյան Թուրքիայի սոցիալ-քաղաքական կառուցվածքը ուսումնասիրվել է նաև Գ. Գյուզալյանի³, Խ. Գաբիկյանի⁴ և Մ. Տեր-Հակոբյանի⁵ գրքերում: Ա. Անտոնյանի գրչին է պատկանում բալկանյան առաջին պատերազմի մասին եռահատոր աշխատութիւնը⁶: Մինչև պատերազմի ընթացքի շարադրմանն անցնելը, հեղինակը տալիս է Բալկանյան թերակղզու պետութիւնների և ժողովուրդների պատմութիւնը, Սան-Ստեֆանոյի ու Բեռլինի պայմանագրերի, ինչպէս նաև պատերազմին նախորդող իրադարձութիւնների մանրամասն վերլուծութիւնը: Հեղինակն ու-

² Kalost Arapyan, Rusçuk Ayânı Mustafa paşanın hayatı ve kahramanlıkları, Ankara, 1943 (çeviren Esat Uras Şirvanizade).

³ Գ. Գյուզալյան, Խրիմյան Հայրիկ, Բեյրութ, 1954:

⁴ Խ. Գաբիկյան, Հայկական հարցը արևելյան հարցի մեջ 1860—1880, Բեյրութ, 1962:

⁵ Մ. Տեր-Հակոբյան, Թրքահայաստանի կորուստը և արտասահմանի հայոց ապագան, Բեյրութ, 1967:

⁶ Ա. Անտոնյան, Ընդարձակ պատմութիւն բալկանյան պատերազմի, հատ 1—3, Բեյրութ, 1940—1944:

սումնասիրել է նաև Բալկանյան թերակղզու արևելյան հատվածի՝ Արեւելյան Թրակիայի ազգային կազմը, Հունաստանի և Բուլղարիայի պայքարն իրենց ազատության ու ազգային անկախության համար, Բուլղարիայի, Ռումինիայի, Հունաստանի և Սերբիայի փոխհարաբերությունները մինչև բալկանյան պատերազմների սկիզբը։ Անտոնյանը հատուկ ուշադրություն է դարձրել Թուրքիայի ու բալկանյան պետությունների փոխհարաբերություններին, Ռուսաստանի և Գերմանիայի կայսրերի 1907 թ. Ռեկիի տեսակցությունը և Ալբանիայի դրությունը։

Աշխատության երկրորդ հատորում մանրամասն լուսաբանվել են բալկանյան առաջին պատերազմի ծագման պատճառները, ռազմական գործողությունների ընթացքը և հետևանքները։

Սփյուռքահայ պատմագրության ուշադրությունից չի վրիպել նաև առաջին համաշխարհային պատերազմին Թուրքիայի և նրա տիրապետության տակ գտնվող ժողովուրդների մասնակցության հարցը։

Վերջինս համառոտակի շարադրված է Կ. Գաբրիլյանի⁷, Գ. եպ. Պալաքյանի⁸, Ժ. Նազլըյանի հիշողությունների⁹ մեջ, ինչպես նաև Լ. Սարգսյանի «1915 թ.-ի նախօրյակին և հետո»¹⁰ և Ռուբենի¹¹ գրքերում։

Բ. Կետիկյանի¹² գիրքը ևս նվիրված է այդ հարցին։ Հեղինակն, իբրև թուրքական բանակի սպա, Մուստաֆա Քեմալի վաշտի կազմում մասնակցել է Չանաքկալեի (Անաֆարտալար) կռիվներին և մանրամասն շարադրել դրանց ընթացքը։ Ինչպես հայտնի է, Չանաքկալեի կռիվները թուրքական պատմագրությունը բնութագրում է որպես մեծ հաղթանակ Անտանտի նկատմամբ և Մ. Քեմալի զինվորական տաղանդի դրսևորում։ Այնինչ Կետիկյանի՝ ականատեսի և անմիջական մասնակցի, հուշերը լրիվ հերքում են վերոհիշյալ վարկածը։

Ա. Թեքեյանն իր աշխատության մեջ բերում է կարևոր փաստեր այն մասին, թե ինչպիսի ուժեղ պայքար ծավալվեց օսմանյան պառլամենտում Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելու հարցի շուրջը¹³։

Թուրքիայի կողմից արևմտահայերի մասնակցությունը պատերազ-

⁷ Կ. Գաբրիլյան, Եղեռնապատում, Պոսթոն, 1924։

⁸ Գր. եպ. Պալաքյան, Հայ գողգոթան, 2-րդ հրատ., Փարիզ, 1959։

⁹ J. Naslian, Les memoires de Mgr. Jean Naslian, v. 1—2, Beyrouth, 1955

¹⁰ L. Sarkisian, 1915 Before and after, Boston, 1965.

¹¹ Ռուբեն, Հայ-թրքական կռիվը, Կահիրե, 1924։

¹² Բ. Կետիկյան, Հուշամատյան, Բեյրութ, 1961։

¹³ Ա. Գ. Թեքեյան, Դրվագներ ապրիլյան մեծ եղեռնին, Բեյրութ, 1957, էջ 8։

մին ցույց է տրված Ն. Գաբրիկյանի, Կ. Գալստյանի¹⁴ և Ս. Թորոսյանի¹⁵ գրքերում:

Այդ հարցը հատուկ ուսումնասիրության առարկա է դարձրել նաև Գ. Սյուրմենյանը¹⁶: Նա մանրամասն քննել է երիտթուրքերի միջոցառումները բանակի վերակազմակերպման ուղղությամբ, Թուրքիայի մասնակցությունը պատերազմին և պարտությունը: Գ. Սյուրմենյանի այս աշխատությունը նրա «Երզնկա» գրքի մի մասն է՝ լրացված որոշ նոր նյութերով:

Ա. Երկանյանը¹⁷ և Վ. Մինախորյանը¹⁸ իրենց գրքերում շարադրել են իթթիհատական մտարանդիներին՝ էնվերի, Թալեաթի, Բեհհեդդին Շաքիրի, Զեմալ Ազմիի գործունեությունը Բեռլինում, որտեղից նրանք ջանում էին զենքով և զինամթերքով օգնել Մ. Քեմալին: Այդ մասին են գրում նաև Ա. Շիրակյանը¹⁹ և Գ. Լազյանը²⁰:

Քեմալական շարժման լուսաբանումը տրված է Պ. Հայկունու²¹, Ա. Աթանասյանի²², Ս. Սաղըրյանի²³, Գ. Սյուրմենյանի²⁴, Գ. Հ. Սիմոնյանի²⁵, Հ. Հ. Հովակիմյանի²⁶, Պ. Սիմոնյանի, Լ. Վ. Ավագյանի «Խաչ և կիսալուսին», Ժ. Միսակյանի «Հայկական հարցի լուսաբանումը», Ա. Պիպերյանի, Վ. Եղիշյանի և Մ. Քելեշյանի գրքերում²⁷: Զարեանդի (Զա-

¹⁴ Ն. Գաբրիկյան, Կ. Գալստյան, Ազտադի քառամյալ գոյամարտը, Մարտի, 1932:

¹⁵ S. C. Torossian, From Dardanelles to Palestine, Boston, 1947 (Գարդանելից մինչև Պաղեստին):

¹⁶ Գ. Սյուրմենյան, Տաճկահայ զինվորը և զինվորականությունը նախ տաճկական, ապա հայկական բանակներում մեջ, Բեյրութ, 1967:

¹⁷ Ա. Երկանյան, Գիրք մատուցման և հատուցման, Պոսթոն, 1949:

¹⁸ Վ. Մինախորյան, Սողոմոն Թելլիբյան, Կահիրե, 1953:

¹⁹ Ա. Շիրակյան, Կտակն էր նահատակներուն, Բեյրութ, 1965:

²⁰ Գ. Լազյան, Հայաստան և հայ դատը հայ և ռուս հարաբերությունների լույսի տակ, Կահիրե, 1957:

²¹ Պ. Հայկունի, Թուփալ Օսման և զեպքերը Մարզվանի մեջ, Աթենք, 1924:

²² Ա. Աթանասյան, Կիլիկիոյ մոտավոր անցյալին, 1937:

²³ Ս. Սաղըրյան, Կիսադարյան հուշամատյան, Փարիզ, 1948:

²⁴ Գ. Սյուրմենյան, Երզնկա, Կահիրե, 1947:

²⁵ Գ. Հ. Սիմոնյան, Հուշամատյան Պոստական Ամասիո, Վենետիկ, 1966:

²⁶ Յ. Յովակիմյան, Պատմություն հայկական Պոստոսի, Բեյրութ, 1967:

²⁷ Պ. Սիմոնյան, Մեր Իզմիրը և շրջակա քաղաքները, Նյու-Յորք, 1966: Ա. Պիպերյան, Վ. Եղիշյան, Պատմագիրք Ազապազարի, Փարիզ, 1960: Մ. Քելեշյան, Սիս-մատեան, Բեյրութ, 1949: Կարևոր մեթոդաբաններ Իթթիհատի ներքին ծալքերին և Մուստաֆա Քեմալ փաշայի ամուսնությունը, Բեյրութ, 1927: Լ. Գույումչյան, Գորշ գայլը կատղեր էր, Կահիրե, 1953: L. Avakian, The Cross and the Crescent, 50 th memorial

վեն և Վարդուհի Նալբանդյաններ)²⁸ գրքում փաստական հարուստ նյութի հիման վրա մանրամասն նկարագրված է պանթուրանիզմի (իմա՝ պանթուրքիզմի) գաղափարախոսությունն ծագումը, էությունը, ու նպատակները։ Տրված է պանթուրքիզմի գաղափարախոսության տարածումը թուրքիայում՝ երիտթուրքերի իշխանության օրոք, գաղափարախոսություն, որը դարձավ նրանց արկածախնդրական ներքին և արտաքին քաղաքականության, մեծ թուրքական պետություն ստեղծելու խորհրդանիշը։ Նրանք նաև վերլուծել են պանթուրքիզմի գաղափարախոսությունը ու գործելակերպը առաջին համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանում։ Հատկապես շեշտված է, թե ինչպես այդ գաղափարախոսության անցյալի աչքի ընկնող բոլոր տեսաբանները՝ Յ. Աքչուրան, Ա. Աղաօղլուն, Զ. Գյուկալիբ, Լ. Սուբհին, Ֆ. Քյուրյուլյուն և մյուսները, համախմբվել էին Մ. Քեմալի ստեղծած կառավարող ժողովրդահանրապետական կոսակցության շուրջը և ղեկավարում էին նրա գաղափարական աշխատանքը։ Գրքում հատուկ ուշադրություն է դարձվել Արևելքի ժողովուրդների I համագումարի (Բաքու, 1920, սեպտեմբեր) աշխատանքներին, քեմալական շարժման սկզբնավորման մանրամասնություններին, Սովետական Ռուսաստանի հետ քեմալական կառավարության կապերին մինչև նրանց միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվելը և այլն։ Զարևանդի գիրքը թարգմանվել է ռուսերեն, ֆրանսերեն և անգլերեն²⁹։

Այդ նույն հարցին է նվիրված նաև Շահանի գիրքը³⁰, որը գրված է գլխավորապես վերոհիշյալ աշխատության հիման վրա։ Շահանի գիրքը փաստորեն Զարևանդի մտքերի ու եզրակացությունների կրկնությունն է, ավելացրած մի այնպիսի հետաքրքիր պրոբլեմ, ինչպիսին է մուսուլմանական սպիտակ վտարանդիության գործունեությունը թուրքիայում և Արևմտյան Եվրոպայում։ Ռ. Տոնապետյանը և Ռուբենը իրենց գրք-

of the Turkish genocide of the Armenians in 1915. Los Angeles, 1965. J. M'ssakan, A Searchlight on the Armenian question (1878—1950), Boston, 1950.

²⁸ Զաբևանդ, *Ինչ կծրագրեն թուրքերը Միացյալ անկախ թուրանիա, Բոստոն, 1926*։

²⁹ Зареванд, Турания свободная и независимая, Париж, 1930. *Երկրորդ հրատարակության առաջարանը գրել է Ա. Մանդելշտամը։ Տե՛ս գրախոսականը* („Новый Восток“, № 29, 1930) *գրված հավանաբար Սրբ. Արշարունու կողմից։* Zarevand, Turania Libre et Independante, Boston, 1926; Zarevand, United and Independent Turania, Leiden, 1971.

³⁰ Շահան, *Թուրքիզմը Անգարային Բազու և Բրքական օրենստախոն, Աթենք, 1928*։

քում³¹, Օսմանյան կայսրության կազմավորումը քննելուց հետո, հանգում են այն եզրակացության, որ բոլոր տեսակետներից վերցրած՝ Թուրքիան ընթանում է դեպի ինքնակործանում, քանի որ, ըստ նրանց, օսմանյան տիրապետությունը արմատներ չկարողացավ գցել գրավված երկրներում:

Ոչ թե ազգային փոքրամասնությունների՝ կենտրոնախույս ուժերի՝ Թուրքիայից բաժանվելու ձգտումն էր կայսրության փլուզման պատճառը, գրում են նրանք, այլ կառավարման բնույթը: Այնուհետև նրանք շարադրում են հանրապետական Թուրքիայում իրագործվող բուրժուական վերափոխումների մակերեսային բնույթը, քանի որ վերջիններս, ինչպես պնդում են նրանք, ներքին կենսունակությունից զուրկ են:

Թուրքիայի տնտեսական աշխարհագրությանն է նվիրված Զ. Խանզադյանի «Թուրքիայի տնտեսական աշխարհագրության ատլասը»³²:

Թուրքական հանրապետության մասին հետաքրքրական աշխատանք է Թ. Ազատյանի և Մ. Գոշունյանի «Արմաղանը»³³, որ լույս է ընծայվել Թուրքական հանրապետության հռչակման 15-ամյակի առթիվ: Ի մի են բերված Թուրքիայի համառոտ պատմությունը, տնտեսությունը, մշակույթը, կրթությունը, ինչպես նաև հանրապետության հռչակման հետ կապված իրադարձությունները:

Ա. Բաղդդիկյանի գրքույկը՝ նվիրված է երկրորդ համաշխարհային պատերազմի տարիների Թուրք-ամերիկյան հարաբերություններին: Գրված է նամակի ձևով՝ ուղղված ԱՄՆ-ի պրեզիդենտ Ֆ. Ռուզվելտին³⁴: Վկայակոչելով այն հանգամանքը, որ Թուրքիան ֆաշիստական Գերմանիայի փաստական դաշնակիցն է, հեղինակը բողոքում է նրան լենդ-լիզի օրենքի համաձայն օգնություն տրամադրելու դեմ: Այս կապակցությամբ նա շեշտում է այն փաստը, որ Թուրքիան բազմիցս կազմակերպել է խաղաղ աշխատավոր ժողովուրդների, այդ թվում հայերի կոտորածը:

Ինչպես վերևում նշվեց, մի շարք գրքեր և մենագրություններ նվիրված են Արևմտյան Հայաստանի պատմությանը՝ Թուրքիայի գերիշխանության ներքո: Այդ ժամանակից սկսած՝ հայ ժողովրդի պատմություն-

³¹ Ռ. Տեհպետյան և Ռաբեն, Թուրքիոյ անդամահատությունը, ուր կերթայ Թուրքիան, Կահիրե, 1952:

³² Z. Khanzadian, Atlas de Géographie économique de Turquie, Paris, 1925.

³³ Թ. Ազատյան, Մ. Գոշունյան, Արմաղան, Իսթանպուլ, 1938:

³⁴ A. T. Bagdikian, An open Letter to F. D. Roosevelt, N. Y., 1944 (բաց նամակ Ռուզվելտին):

նը կազմում է Թուրքիայի և վերջինիս գերիշխանության տակ գտնվող ժողովուրդների պատմության մասը: Այդ կարգի աշխատություններից են Դ. Սիմոնյանի, Պ. Կարապետյանի, Տ. Գևորգյանի, Մ. Քելեշյանի, Հ. Հովակիմյանի գրքերը³⁵⁻³⁷ և այլն:

Գ. Սիմոնյանի գրքում մանրամասն վերլուծված է Հայաստանի գրավման պատմությունը Թուրք-սելջուկների կողմից: Նա շարադրել է նաև Ամասիայում սելջուկյան և մոնղոլական տիրակալությունների պատմությունը: Պ. Կարապետյանը լուսաբանել է հայ ժողովրդի դրությունը Թուրքիայում³⁸ Կ. Պոլսի գրավումից հետո:

Վերոհիշյալ հարցերը քննված են նաև այն գրքերում, որոնց մեջ ընդհանուր գծերով արծարծված է հայ ժողովրդի պատմությունը: Նմանօրինակ աշխատություններից են Վ. Հայկունու «Հայերը ողբերգական ժողովուրդ»³⁷, Հ. Աստուրյանի, Ռուբենի, Ս. Ադամյանի «Հայկական հասարակություն, հասարակական և գաղափարային պայքարի պատմական զարգացումը», Ժ. Մեսերյանի «Հայկական սփյուռքի քարտեզը», Հ. Թորոսյանի «Հայաստանի և հայ ժողովրդի պատմություն» (ամենահին ժամանակներից մինչև մեր օրերը), Ա. Ս. Զարդարյանի «Հայ ազատագրական շարժման պատմության դրվագները» և Կ. Իզմիրլյանի գրքերը³⁸:

Վ. Քյուրքյանի «Հայաստանի պատմություն»³⁹ գրքում ևս շարադրված է Արևմտյան Հայաստանի գրավումը Թուրքների կողմից և հայ ժողովրդի վիճակը Թուրքական գերիշխանության ներքո:

Հայերը որոշակի դրական դեր են կատարել Թուրքիայի տնտեսության, հասարակական-քաղաքական զարգացման, գիտության և մշա-

³⁵⁻³⁶ Գ. Հ. Սիմոնյան, Հուշամատյան Պոնտական Ամասիո, Վենետիկ, 1966: Պ. Կարապետյան, Հնգադարյան հիշատակարան, Ստամբուլ, 1935: Տ. Գևորգյան, Պատմություն Զեյթունի, հ. 1, Փարիզ, 1945—49: Մ. Քելեշյան, Սիս-մատյան, Բեյրութ, 1949: Յ. Յովակիմյան, Պատմություն հայկական Պոնտոսի, Բեյրութ, 1967:

³⁷ V. Aykouni, Arméniens, peuple tragique, Beyrouth. 1945.

³⁸ Հ. Աստուրյան, Պատմություն հայոց, Բուենոս-Այրես, 1947: Ռուբեն, Հայաստանը միջամաքային ուղիներու վրա, Բեյրութ, 1948: Տ. Atamian, The Armentan Cony muity (the historical development of a social and ideological konflikt), N. Y., 1955. C. Атамян, Армянское общество, М., 1956. J. Megerian, Un tab eau de la diaspora Arménienne, Paris, 1956, 1961. т. 1—2: H. Thorossian, Histoire de L'Armenie et du peuple Arménien, Paris, 1957 A. S. Zartarian, An outline history of the Armentan liberation movement, N. Y., 1959. Կ. Իզմիրլյան, Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցյալին և ներկային, Բեյրութ, 1964:

³⁹ V. Kurkjian, History of Armenia, N. Y. 1959.

կուլթի բնագավառներում: Դ. Փոլադյանի «Հայաստանի դերը պատմության մեջ» և Վ. Թոթոմյանցի «Հայերի դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ»⁴⁰ գրքերում ընդհանուր գծերով նկարագրված է հայերի մասնակցությունը համաշխարհային պատմությանը և քաղաքակրթությանը, ինչպես նաև նրանց ավանդն օսմանյան Թուրքիայի պատմության և մշակուլթի մեջ: Նշվում են Պեղճյան Հարություն Ամիրայի և Գրիգոր Էֆենդի Օտյանի մատուցած մեծ ծառայությունները Թուրքիայի հասարակական-քաղաքական առաջադիմության գործին:

Պատմական իրադարձությունների բերումով Թուրքիայի առաջընթացին առավել մեծ մասնակցություն են ունեցել Ակն քաղաքի բնակիչները: Թ. Ազատյանը և Ա. Քեչյանը իրենց գրքերում⁴¹ հատուկ ուշադրանք են այդ հարցը: Օսմանյան Թուրքիային մատուցած իրենց ծառայություններով հատկապես աչքի են ընկել Տատյան գերդաստանի անդամները, որոնք ևս ծնունդով Ակնցի էին: Տատյան գերդաստանի գործունեության ուշադրանքներով տրված է ինչպես Թ. Ազատյանի «Տատյան գերդաստանը և իր ականավոր դեմքերը», այնպես էլ մեծավաստակ պատմաբան Արշակ Ալպոյաճյանի «Տատյանները» և Եփր. Պողոսյանի «Տատյան գերդաստանը» գրքերում⁴²:

Հայերի ավանդն օսմանյան պետության հասարակական-քաղաքական և գիտության ու մշակուլթի զարգացման բնագավառում հատուկ ուշադրանք է Ե. Զարբի «Հայերը թուրքական պետության ծառայության մեջ (1453—1953)» գրքում⁴³: Հեղինակը տալիս է այն հայ գործիչների կենսագրականները, որոնք նպաստել են թուրքական պետության վերելքին, մեծ ծառայություններ մատուցել Թուրքիայում գիտության, արվեստի և մշակուլթի զարգացմանը:

⁴⁰ D. Poladian, The Role of Armenia in History, Jerusalem, 1959; V. Totomianz, Le role des Arméniens dans la civilisation mondiale, Belgrade, 1938.

⁴¹ Թ. Ազատյան, Ակն և ակնեցիք (ազգագրական և կենսագրական հիշատակարան), Իսթանբուլ, 1943; Ա. Քեչյան, Ակն և ակնեցիք, Փարիզ, 1952:

⁴² Թ. Ազատյան, Տատյան գերդաստանը և իր ականավոր դեմքերը, Իսթանբուլ, 1952; Եփր. Պողոսյան, Դադյան գերդաստանը, Բեյրութ, 1969; Այդ հարցին է նվիրված նաև Լ. Խյուրյունջյան, Հարություն ամիրա Պեղճյան և իր ժամանակները, Կահիրե, 1971, Վ. Զարդարյան, Թրքահայ լրագրություն, 1832—1922, Կահիրե, 1932: «Հուշամատեն Իսթամբուլահայ վաստակավոր ուսուցիչների», Իսթանբուլ, 1968; A. Alboyadjian, Les Dadian, Ca'ire, 1965.

⁴³ Çark, Türk devlet hizmetinde Ermeniler, 1453—1953 İstanbul, 1953. Այդ մասին տե՛ս նաև Եփր. Պողոսյան, Կարապետ Արթին փաշա Տավուդյան՝ կուսակալ և ընդհանուր կառավարիչ Լիթանանի (1816—1873), Վիեննա, 1949:

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական գործիչները և պատմաբանները բազում աշխատություններ են նվիրել Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի ու Թուրքիայի համարյա բոլոր հայաբնակ նահանգների և գավառների պատմությանը: Այդ աշխատություններում արժարժված են նաև տնտեսական, կրթական ու ազգագրական բնույթի հարցեր, ուստի դրանք կարևոր լրացուցիչ աղբյուրներ են Թուրքիայի ընդհանուր պատմության ուսումնասիրման համար: Այդ հարցերը լուսաբանված են Ա. Մակարյանի, «Զմյուռնահայ կյանքը զինադադարեն հետո (Ահավոր փլուզումը)», Պ. Միմոնյանի «Մեր Իզմիրը և շրջակա քաղաքները», ինչպես նաև Հ. Սիրունու, Հ. Պերպերյանի, Բ. Թևյանի գրքերում⁴⁴:

Թուրքիայի հայաբնակ նահանգների ու գավառների տնտեսությունը, պատմությունը և մշակութային-կրթական հարցերն ուսումնասիրված են նաև Թ. Ազատյանի⁴⁵, Ա. Քեչյանի⁴⁶, Ա. Պիպերյանի, Վ. Նդիշյանի⁴⁷ և Գ. Մխալյանի⁴⁸, Հ. Պողոսյանի, Ն. Փիլիպոսյանի, Ն. Զորթյանի, Հ. Արզումանյանի, Ս. Գրիգորյանի, Ս. Կարադուլյանի, Գ. Տեր-Հովհաննիսյանի, Մ. Հիմայանի, Գ. Սարաֆյանի, Գ. Պարսամյանի, Ա. Ալպոյաճյանի և Ա. Քեչյանի աշխատություններում⁴⁹: Նրանցում վերլուծված են ինչպես հայ համայնքի տնտեսության և պատմության հարցեր, այնպես էլ Թուրքիայի ընդհանուր պատմության հետ առնչվող շատ խնդիրներ:

Ուշագրավ են նաև այն հրատարակությունները, որոնք վերաբերում են Զեյթունի և Կիլիկիայի հայերի պատմությանը: Այդ տեսակետից

⁴⁴ Ա. Մակարյան, Հուշագիրք Թրակիոյ և Մակեդոնիոյ հայ գաղութների, Սեւանիկ, 1929; Պ. Միմոնյան, Հուշամատեն հայկական Զմյուռնիոյ, Փարիզ, 1936; Հ. Սիրունի, Պոլիսը և իր զերը, Բեյրութ, 1965; Գ. 1; Հ. Պերպերյան, Նյութեր Կ. Պոլսոյ հայոց պատմության համար, Վիեննա, 1965; Բ. Թևյան, Նրշանիկ տարեգիրք, Իսթանբուլ, 1951—1961:

⁴⁵ Թ. Ազատյան, Ակն և Ակնեցիք (ազգագրական և կենսագրական հիշատակարան):

⁴⁶ Ա. Քեչյան, Ակն և ակնեցիք, Փարիզ, 1952:

⁴⁷ Ա. Պերպերյան և Վ. Նդիշյան, Պատմագիրք Ադապազարի, Փարիզ, 1960:

⁴⁸ Գ. Մխալյան, Պարտիզակն ու պարտիշակցին, Կահիրե, 1938:

⁴⁹ Հ. Պողոսյան, Պարտիզակը անգուղական, Փարիզ, 1967; Ն. Փիլիպոսյան, Հուշարձան եղգագրիներու Ն. Պ. Զորթյան, Կուտինահայ ժամանակագրություն, Վիեննա, 1960; Ա. Ալպոյաճյան, Պատմություն Նվդոկիոյ հայերի, Կահիրե, 1952; Հ. Արզումանյան, Էվերեկի պատմությունը, Գ. 1, Կահիրե, 1935; Կան նաև մյուս հատորները: Ս. Գրիգորյան և Ս. Կարադուլյան, Հիշատակարան Էվերեկ-Ֆենեսեհի, Փարիզ, 1963; Aghassi, Zeltoun, Paris, 1997.

շահեկան են Տ. Գևորգյանի «Պատմություն Զեյթունի» գիրքը և «Զեյթունի պատմագիրքը»՝ տպագրված զեյթունցիների հայրենակցական միության կողմից: Տ. Գևորգյանը հիմնականում օգտվել է Աղասու, Սեմերջյանի և Տեր-Հակոբյանի աշխատություններից Զեյթունի մասին, այն լրացնելով իր հիշողություններով:

«Զեյթունի պատմագրքում» մանրամասնորեն շարադրված են Զեյթունի և այստեղ քրիստոնեության մուսուլմանական պատմությունը, Անգլիայի և Ֆրանսիայի հակասությունները Օսմանյան կայսրությունում: Զեյթունին և Կիլիկիային են նվիրված նաև Գ. Գալստյանի, Հ. Պողոսյանի, Տեր-Ղազարյանի⁵⁰, ինչպես նաև Ս. Սաղըրյանի և Մ. Քելեշյանի գրքերը:

Տարոնը լուսաբանված է Գ. Կարապետյանի գրքով⁵¹, որտեղ բացի ընդհանուր հարցերի շարադրումից, տրված են ռուս-թուրքական պատերազմները, հայ խաղաղ բնակչության նկատմամբ քուրդ շեյխերի ու բեգերի վայրագությունները, ինչպես նաև Տարոնում սահմանադրության վերականգնման արձագանքները:

Տարոնի անցյալի հարցերի նկարագրմանն է նվիրված նաև Ս. Բդեյանի գիրքը⁵²:

Ուսումնասիրված է նաև էրզրումի պատմությունը՝ Հ. Ոսկյանի և Ղ. Չարբգի կողմից⁵³: Վերջինս այն շարադրել է շեշտը դնելով հատկապես 1908—1915 թթ. ժամանակաշրջանի վրա:

Երզնկան և նրա մերձակա շրջանները ուսումնասիրված են Գ. Սյուրմենյանի «Երզնկա» գրքում: Նրանում տրված է քաղաքի և գավառի պատմությունը հին ժամանակներից մինչև առաջին համաշխարհային պատերազմը, կրթության վիճակը թուրք ազգաբնակչության մեջ, սահմանադրության վերականգնման արձագանքները և դրությունը երզնկայում՝ ռուսական զորքերի գրավումից հետո:

Տրապիզոնի և նրա գավառի հայոց պատմությունը վերլուծված է Հ. Հովակիմյանի գրքում: Հեղինակը փաստական հարուստ նյութի հիման վրա վերլուծել է տեղի բնակչության ազգային կազմը, հարկային

⁵⁰ Գ. Գալստյան, Մարաշ կամ Գերմանիկ հերոս Զեյթուն, Նյու-Ցորք, 1934: Հ. Պողոսյան, Հաճնի ընդհանուր պատմությունը, Լոս-Անջելոս, 1942: Տեր-Ղազարյան, Հայկական Կիլիկիան, Անթիպաս, 1966:

⁵¹ Գ. Կարապետյան, Տարոնի աշխարհ, Փարիզ, 1931:

⁵² Ս. Հ. Բդեյան, Հարազատ պատմություն Տարոնոյ, Կահիրե, 1962:

⁵³ Հ. Ոսկյան, Կարին և Կարենցի, Վիեննա, 1950: Ղ. Չարբգ, Հուշամատեն քարձք Հայքի. Կարինապատում, Բեյրութ, 1957:

քաղաքականությունը, Տրապիզոնի դերը Թուրքիայի ներքին և արտաքին առևտրի մեջ, հայերի և հուլիների բռնի թուրքացումը, ինչպես նաև օսմանյան սահմանադրության վերականգնումը: Հեղինակը լուսաբանել է նաև դրությունը Տրապիզոնում, այն ուսական գործերի կողմից գրավելուց հետո: Գրքում բերված են փաստեր՝ փետրվարյան հեղափոխությունից հետո ընկած շրջանում Ղրիմի թաթար ազգայնականների և Թուրքիայի կառավարող շրջանների գործակցության մասին:

Արևմտյան Հայաստանի մյուս նահանգների և շրջանների պատմությանն են նվիրված Ս. Բախտիկյանի⁵⁴, Թ. Սևհոնքյանի⁵⁵, Մ. Արսլանյանի⁵⁶ և Գ. Սիմոնյանի վերոհիշյալ և ուրիշ գրքերը⁵⁷: Գ. Սիմոնյանը, բացի ընդհանուր կարգի հարցերի շարադրումից, համառոտակի տվել է Ամասիայում գերմանական համայնքի և Թուրքիայում կայսերական Գերմանիայի քաղաքականության, ինչպես նաև քաղաքի պատմությունը մինչև հանրապետության հռչակումը և դրանից հետո:

Սփյուռքահայ թուրքագիտության մեջ կարևոր տեղ է գրավում ազգային փոքրամասնությունների նկատմամբ օսմանյան և հանրապետական Թուրքիայի վարած քաղաքականության ուսումնասիրությունը, քանի որ հայ ժողովրդի արևմտյան հատվածը ավելի քան երեք դար իր վրա կրել է վերջինիս ծանր լուծը:

Այդ հարցի կապակցությամբ սփյուռքահայ հասարակական-քաղաքական գործիչներն ու պատմաբաններն անդրադարձել են ինչպես ամբողջ Արևմտյան Հայաստանին, Կիլիկիային և Զեյթունին, այնպես էլ առանձին-առանձին՝ Թուրքիայի հայաշատ նահանգներին ու գավառներին: Եթե վերոհիշյալ քաղաքականության վերլուծությունը մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը տրվում էր մեծ մասամբ հուշագրականության մեջ, ապա պատերազմից հետո սկսվեց այդ հարցի պատմության գիտական մշակումը:

Հայ ժողովրդի իրավազուրկ վիճակը XIX դ. երրորդ քառորդում արծարծված է Խ. Գաբիկյանի գրքում⁵⁸: Օգտագործված են «Տեղեկագիր

⁵⁴ Ս. Բախտիկյան, Օսկեգետակ, հատ. 1, 2, 3, Բեյրութ, 1948: Արաբկիր և շրջակա դուղերը, պատմագրական համառոտ տեսություն, Բեյրութ, 1934:

⁵⁵ Թ. Սևհոնքյան, Կիրասոն, Կահիրե, 1947:

⁵⁶ Մ. Արսլանյան, Բաբերդ և շրջակայքը, Փարիզ, 1954:

⁵⁷ Մ. Փաշալյան, Հուշամատեան Ռոտոսթոյի հայերուն (1806—1922), Սոֆիա, 1971:

⁵⁸ Խ. Գաբիկյան, Հայկական հարցը արևելյան հարցի մեջ, 1860—1880, Բեյրութ,

գավառական հարստահարությունների» փաստաթղթերի ժողովածուի և ուրիշ աղբյուրների նյութերը:

Ինչպես հայտնի է, 1894—1896 թթ. ընթացքում Արևմտյան Հայաստանի մի շարք նահանգներում, հատկապես Սասունում և Տրապիզոնում թուրքական իշխանությունները կազմակերպեցին ջարդեր, որոնց զոհ գնաց մոտ 300 հազար հայ: Այդ կոտորածներին անդրադարձել են Հ. Հովակիմյանը, Արամ Հայկազը⁵⁹, Ս. Բախտիկյանը, Ա. Քեչյանը, Գ. Սիմոնյանը, Ս. Քելեշյանը, Ա. Ալպոյաճյանը, Գ. Երևանյանը, Ս. Գրիգորյանը և Ս. Կարազյուզյանը, Ե. Հազարապետյանը, Պ. Օհանյանը⁶⁰, Լ. Սարգսյանը, Հ. Բարությունը, Տ. Փափազյանը, Գ. Սյուրմենյանը, Ա. Բախտիկյանը, Զ. Վրթանեսը, Ա. Կեթրիկյանը, Ռ. Գ. Հովհաննիսյանը, Ա. Ա. Թեմիրյանը, Հ. Շապուհյանը, Բ. Կ. Ժամկոչյանը, Հ. Աստուրյանը, Հ. Թորոսյանը և ուրիշներ⁶¹:

1909 թ. ապրիլին երիտթուրքական իշխանությունները կազմակերպեցին Ադանայի հայերի սոսկալի կոտորածը, որին զոհ գնաց մոտ 30 հազար հայ: Ինչպես ցույց են տալիս անհերքելի փաստերը և պաշտոնական գեկուցագրերը, դա լայնորեն ծրագրված ցեղասպանության ուժի էր, առաջինը սահմանադրական Թուրքիայում: Ադանայի եղեռնը ուսումնասիրված է Ռ. Դոնիկյանի, Ժ. Նազարյանի և Վ. Սողակյանի «Հայ ազգային սուգը», է. Սիրվարդի, Արամ Ասպետի և ուրիշների գրքերում⁶²:

⁵⁹ Հայկազ Արամ, Շապին-Կարահիսարը և իր հերոսամարտը, Նյու-Յորք, 1957:

⁶⁰ Ե. Հազարապետյան, Ինչպես ապրեցանք, Բեյրութ, 1968: Այդ մասին տե՛ս նաև՝ Pascual C. Ohanian, La question Armentia y las relations internationales, tomo I, 1839—1896, Buenos-Aires, 1975.

⁶¹ Յ. Յովակիմյան, Պատմություն հայկական Պոնտոսի, Ա. Բախտիկյան, Օսկեզետակ, Ա. Քեչյան, Ակն ու Ակնեցիք, Գ. Հ. Սիմոնյան, Հուլամատյան Պոնտական Ամասիոյ, Մ. Քելեշյան, Սիս-Մատեն, Ա. Ալպոյաճյան, Պատմություն Եվդոկիոյ հայոց, Գ. Ա. Երեվանյան, Պատմություն Զարսանճանգի հայոց, Ս. Գրիգորյան և Ս. Կարազյուզյան, Հիշատակարան էվերեկ-Ֆենեսահի, Լ. Սարգսյան, 1915 թ-ի նախօրյակին և հետո: Գ. Սյուրմենյան, Երզնկա, Ա. Տ. Բախտիկյան, Բաց նամակ Յ. Դ. Ռուզվելտին, Զ. Ա. Վերանես, Հայկական հարցի պատմական ընթացքը (The Armentian question in its historical perspective), Ա. Ա. Կեթրիկյան, Վասպուրականի հերոսամարտը, Բեյրութ, 1963: Ռ. Դ. Հովհաննիսյան, Հայաստանը անկախության ճանապարհին 1918 (Armentia on the Road Independence 1918, Los Angeles, 1967. Ա. Ա. Թեմիրյան, Պեսաթ (1909—1946), Բեյրութ, 1956:

⁶² R. Donkian, J. Nazir et V. Silexian Le deuil national Armentien, Le Coud Gardanne (Bouche de Rhone), 1964. Ե. Սիրվարդ, Փարամազ, Փրավդեհես, 1954: Ա. Ասպետ, Դրվագներ Հաճնոյ հերոսամարտին և հերոսին ողբականը, Բեյրութ, 1961: «Հայկական գյուղի պատմությունը», Բոստոն, 1963: «Հուլամատյան քղի, Խուփս

Այսպես, օրինակ, Ե. Սիրվարդի գրքում բերված են երիտթուրքական եռապետության հրահանգները կիլիկահայերի կոտորածը կազմակերպելու մասին:

Հ. Աշլյանը ևս շարադրել է Կիլիկիայի 1909 թ. ջարդի մանրամասներ⁶³: Նա բերել է բարձր պաշտոնական մարմիններին ուղղված մի շարք բողոքագրեր, որոնք հերքում են իշխանությունների զրպարտություններն այն մասին, թե իբր հայերի ապստամբական շարժումն էր ջարդի պատճառը: Բերված է նաև Հ. Պապիկյանի գլխավորությամբ գործող կառավարական քննիչ հանձնաժողովի՝ հայերի անմեղ լինելու մասին եզրահանգումը: Հայերի անմեղությունն ընդունվեց ինչպես օսմանյան պառլամենտի, այնպես էլ մեծ վեզիր Հյուսեյն Հիլմի փաշայի կողմից: Դրքում բերված են նաև Ադանայում գտնվող հյուպատոսների հիշողությունները:

1915 թ. Մեծ եղեռնի մասին հրատարակվել են բազմաթիվ հուշագրություններ, որոնցում տրված է եղեռնի ընդհանուր նկարագրությունը ամբողջ երկրի տարածքով և ըստ առանձին նահանգների ու գավառների⁶⁴: Հետաքրքրական է «Թրքահայաստանի 1915-ի տարեգրությունը և ջարդը» փոքրածավալ գիրքը⁶⁴ : Վերջինում բերված է երիտթուրքերի պարագլուխներից Նազըմ բեյի ճառը իթթիհատականների Սալոնիկի

գյուղի, Ֆրեզո, 1968: Կ. Խալան, Մոսկ-Կենտրոն, Մարսել, 1927: Հ. Շապուհյան, Պատմություն Քոստան կամ Քեոքեի գյուղին, Լոլել, 1958: Բ. Կ. Ժամկոչյան, Հայնի, Բեյրութ, 1951: Յ. Պարույրյան, Ցուշեր Թոմարզայի անցեալն, Պեյրութ, 1960:

⁶³ Հ. Աշլյան, Ատանայի եղեռնը և Կոնիայի հուշեր, Նյու-Յորք, 1950: «Համառոտ տեղեկություն համաշխարհային հայկական կոնգրեսի», Նյու-Յորք, 1947, էջ 5:

⁶⁴ Ս. Զարեանդ, Անցորդի տպավորություններ (Տեղահանության և ջարդի արատներ Պոլսն գեպի էնկուրիո և Զանկերը), Նյու-Յորք, 1924: Թեոդիկ, Հուշարձան 1915 ապրիլ 24-ի, Ալեքսանդրիա, 1939: Հ. Թաւարյան, Դավաճներ հայկական եղեռնն, Փարիզ, 1946: Արմեն Անույժ, Այրված քաղաքի մը պատմությունը, Հալեպ, 1948: Վ. Միլախուրյան, 1915 թվականը, արհամիրքի օրեր, Վենետիկ, 1949: Մ. Էսմերյան, Աքսորի և պատերազմի կրակներում միջին, Բոսթոն, 1952: Մ. Նիցյան, Երբ վրեժը չի հագնար, Փարիզ, 1953: Մ. Պեպեյրյան, Խային ճանփան, դավաճներ 1915—1925 թթ., Փարիզ, 1955: Ս. Առամյան, Հայկական հասարակությունը. սոցիալական և գաղափարային պայքարի պատմական դարգացումը, Օ. Գ. ՆԱԶ—(Յազմաշյան), Ճգնադանգ ահազանգ, Բեյրութ, 1956: «Թրքահայաստանի 1915-ի տարեգրությունը և ջարդը», Նյու-Յորք, 1956: Ս. Միլախյան, Վերքեր և ցավեր, Անթիլիաս, 1960: Ա. Քեշիշյան, Տառապանքի և պայծառ էջեր, Հալեպ, 1963: Հ. Արծրունի, Մահվան ձորին մեջ, Բեյրութ, 1965: Մ. Շառտալյան, Հայ մտքի հարկը եղեռնին, Անթիլիաս, 1965: Կ. Խալան, Արյունի ճանապարհին, Սոֆիա, 1936: Մ. Քեշիշյան, Սիւ-մատեան, և այլն:

⁶⁴ «Թրքահայաստանի 1915-ի տարեգրությունը և ջարդը», Նյու-Յորք, 1956:

համաժողովում (1910 թ. հոկտեմբեր), ուր նա առաջարկում է հայկական հարցի արմատական լուծում՝ հայերի բնաջնջման միջոցով: Տրված է նաև Թուրքիայում բնակվող ազգային փոքրամասնությունների կոտորածների ժամանակագրությունը 1822 թ. մինչև 1922 թ., այսինքն՝ Քիոս կղզում հույների ջարդից մինչև 1922 թ. Իզմիրի հույների և հայերի կոտորածը: Ինչպես երևում է գրքույկում բերված փաստերից, հարյուր տարվա ընթացքում օսմանյան Թուրքիայում կոտորվել է մոտ 2,5 մլն. մարդ:

Հարուստ բովանդակությամբ աչքի է ընկնում սփյուռքահայ գրող և հրապարակախոս Լևոն Մեսրոպի երկհատորյակը, նվիրված մեծ եղեռնին⁶⁵:

Եղեռնի կազմակերպմանն ու ընթացքին է նվիրված նաև Ժ. Նազլըյանի վերոհիշյալ երկհատորյակը: Հեղինակը մանրամասն ուսումնասիրել է հայերի ցեղասպանության գործադրությունը և մեթոդները ինչպես ամբողջ երկրի մասշտաբով, այնպես էլ ըստ առանձին նահանգների:

Ռ. Դոնիկյանի, Ժ. Նազարյանի և Վ. Սուլակյանի «Հայ ազգային սուգը» գիրքը ևս նկարագրում է 1915 թ. հայկական կոտորածներն ինչպես ընդհանուր առմամբ, այնպես էլ ըստ առանձին նահանգների:

Բացի եղեռնի մանրամասներից, վերոհիշյալ գրքերում վերլուծվում են նաև այնպիսի հարցեր, որոնք դալիս են լրացնելու Թուրքիայի պատմության տարբեր կողմերը, այդ թվում՝ Թուրքիայի մասնակցությունն առաջին համաշխարհային պատերազմին, հայ-թրքական հարաբերությունները, գերմանական զինվորականների մասնակցությունը հայերի կոտորածին, կացությունը Թուրքիայում զինադադարից հետո և հայերի վիճակը ժամանակակից Թուրքիայում:

⁶⁵ Լևոն Մեսրոպ, 1915 աղետ և վերածնունդ, Փարիզ, 1952: Նույնի՝ Տեր Զոր, Փարիզ, 1955: Հայկական ջարդերի մասին տե՛ս նաև «Կիլիկիայի կոկիծներ» (վավերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիվանեն), Բեյրութ, 1927: Ս. Սաղբյաճ, Կիսադարյան հուշամատյան, Փարիզ, 1948: Կ. Գաբրիելյան, Եղեռնապատում, Բոսթոն, 1924: Բ. Սևեռեմյան, Կիրասոն, Կահիրե, 1947: Գ. Սյուսմենյան, Երզնկա, Կահիրե, 1947: Օ. Հ. Հեֆիմյան, Սամսոնի հայության տխուր բաժինը, Փարիզ, 1961: Մ. Թալլյան, Սև հուշեր մղձավանջային յոթ տարիներու (1915—1922), Բեյրութ, 1952: Գ. Թազվարյան, Հույսերի և տառապանքների տարիներ 1908—1915, Կահիրե, 1961: Զավեն աբխալիսկոպոս, Պատրիարքի հիշողությունները, փաստաթղթեր և վկայություններ, Կահիրե, 1947: Դ. Հ. Բոյաժյան, Հայաստան (մոռացված ցեղասպանությունը): D. H. Boyajian, Armenia (The case for a forgotten genocide), Westwood, N. Y., 1972.

Հայերի կոտորածը Թուրքիայում չի սահմանափակվել միայն առաջին համաշխարհային պատերազմի տարիներով: Այն շարունակվել է նաև քեմալական շարժման տարիներին: Հատկապես պետք է նշել Կիլիկիայի, Իզմիրի ու Սև ծովի առափնյա հայ բնակչության ջարդերը: Այդ հարցը շարադրված է Ա. Դարբինյանի, Ս. Թերզյանի «Զմյուռնիահայ կյանքը զինադադարեն հետո (Ահապոր փլուզումը)», Պ. Սիմոնյանի «Մեր Իզմիրը և շրջակա քաղաքները», Ս. Սաղրյանի, Հ. Հովակիմյանի ու Մ. Թողաքյանի «Օրերուս հետ» գրքերում⁶⁶: Վերոհիշյալ մի բանի գրքերում նույնիսկ կան նաև Սև ծովի առափնյա շրջանների և Իզմիրի հույների մասին:

Հայկական կոտորածների մասին մի շարք գրքեր լույս են տեսել նաև 1965 թ., հայկական Մեծ եղեռնի 50-ամյակի կապակցությամբ, որոնք ունեն ինչպես հուշագրական, այնպես էլ հետազոտական բնույթ: Դրանց թվին են պատկանում Լ. Սրապյանի, Ա. Տեր-Գուրգենյանի, Ե. Սիմոնյանի, Բ. Ճամպազյանի, Մ. Տեղմենճյանի, Մ. Սևակի, Գ. Ահարոնյանի, Ս. Միսքյանի, Հ. Գալսյանի, Մ. Տեր-Հակոբյանի, Ս. Քաշի, «Սահման չունեցող ոճրագործություն», «Պատմության մեջ առաջին ցեղասպանությունը», «Զոհատապարտված ցեղասպանություն՝ հայաստանություն», Ս. Հ. Հարությունյանի «Եվ ծիծաղ և լաց», Լ. Սարգսյանի «Հայերը վերհիշում են 1915 թվականի ցեղասպանության 50-ամյակը», Ժ. Մեծերյանի «Հայ ժողովրդի ցեղասպանությունը» և Դ. Բոյաջյանի «Արմենիա» և ուրիշ գրքեր⁶⁷:

⁶⁶ Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերին, Փարիզ, 1947: Ա. Թերզյան, Հաճընի ութամյա դուցադնամաբուր, Աթենք, 1937, ք հրատարակություն, Բուենոս-Այրես, 1956: Մ. Թողաքյան, Օրերուս հետ, Լոս-Անջելոս, 1953: Տե՛ս նաև M. Houssepian, The Smyrna Affair, N. Y., 1971: Գիրքը լույս է տեսել նաև Անգլիայում ու չեխոստանում:

⁶⁷ Լ. Սրապյան, Քեղի, Անթիլիաս: Ա. Տեր-Գուրգենյան, Կյանքիս ու էլը, Անթիլիաս, 1960: Ե. Սիմոնյան, Իմ գողգոթան, Անթիլիաս, 1960: Բ. Ճամպազյան, Պատանի կյանքի մը պատմությունը, Անթիլիաս, 1960: Մ. Տեղմենյան, Արյան հետքերով: Մ. Սևակ, Հայկական մեծ եղեռնը և մենք, Ն. Զ., 1964: Գ. Ահարոնյան, Ցուլամատյան մեծ եղեռնի 1915—1965, Բելրուս, 1965: Նույնի «Երեսն հինամյակի ավարտին», Բելրուս, 1966: Է. Խաթաբասյան, Հայոց թիվը, Բուստոն, 1965: Ս. Միսքյան, Ես Տեր Զորի դժողբեն փախած եմ, Փարիզ, 1965: Կ. Մատուցի, Ապրիլյան եղեռնը քննական ակնոցով, Բելրուս, 1931, 1965: Նույնի՝ Թուրքահայաստանը Ա. Աշխարհամարտի ընթացքին: Ս. Գալսեյան. Մեծ զոհուածին հիսնամյակը, հուշեր և վերհուշեր Արևմտահայաստանի մեր պապենական հողային հարցի մասին, Ալեքսանդրիա, 1965: Մ. Տեր-Հակոբյան, Թրքահայաստանի կորուստը և արտասահմանի հայոց ապագան S. H. Kash, Crime Unlimited, Wis-

Վերոհիշյալ գրքերում տրված են նաև իթթիհատականների եռապետություն և Մ. Քեմալ Աթաթուրքի քաղաքական կենսագրականները, հայերի սեփականության բռնագրավումը, «Լքյալ գույքերի» օրենքը, կայսերական Գերմանիայի քաղաքականությունը Թուրքիայում, հայերի արտագաղթն Օսմանյան կայսրությունից, Թալեաթի սպանությունը ու Մ. Թեյլիբյանի դատավարությունը և այլն:

Նդեռնի 50-ամյակին լույս են տեսել նաև մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ, որոնցում փաստական հարուստ նյութի հիման վրա լուսաբանվում է սուլթանական և հանրապետական Թուրքիայի հայաջինջ քաղաքականությունը: Այդ տեսակետից բնորոշ են Ն. Խաթանասյանի «Հայոց թիվը», Զ. Թաշլյանի «Թուրքիան ցեղասպանության սկսնակ, Թուրքիայի 1822—1922 հարյուրամյա տարեգիր», Հ. Ղազարյանի «Թուրքերի կողմից կազմակերպված հայերի ցեղասպանության գաղտնի խորհրդածոլովի արձանագրությունները» և «Ցեղասպան թուրք» գրքերը և ինչպես նաև «Հայերի ցեղասպանությունը թուրքերի կողմից» փաստաթղթերի ժողովածուն⁶⁸:

Ըստ Թաշլյանի բերած փաստերի, սուլթանական և հանրապետական Թուրքիայում ֆիզիկական բնաջնջման են ենթարկվել հույները (1822 թ., Քիոս կղզի), հայերը և նեստորականները (1850 թ.), մարոնիտները և սիրիացիները (1860 թ., Դամասկոս), բուլղարները (1870 թ.), հայերը (1877 թ.), եզդի քրդերը (1829 թ., Մոսուլ), հայերը (1893, Սասուն), Տրապիզոնում, Էրզրումում, Վանում, Բիթլիսում, Խարբերդում, Դիարբեքիրում, Սվադում, Հալեպում և Անկարայում (1894—1896 թթ.), հույները (1896—1897 թթ., Կրետե), հայերը (1909 թ., Ադանա), ասորիները (1915—1920 թթ.), հայերը (1915—1920—1921 թթ.), հույները (1922 թ.) և ասորիները (1924 թ.): Հեղինակի հաշվումներով, հարյուր տարվա ընթացքում թուրքական իշխանությունների կազմակերպած

conslin, 1965; «First genocide in history», 1965; A. H. Hartunian, Melther to laugh or to Weep. A memoir of the Armenian genocide, Boston, 1968; L. Sarkisian Les Arméniens se souviennent 1915 le cinquantenaire d'un génocide, Beyrouth, 1965; J. Megerian, Le génocide du peuple Arménien, Beyrouth, 1965; D. H. Boyajian, Armenia...: «Une génocide Impouni. L'Arménocide», Beyrouth, Paris, 1967.

⁶⁸ J. H. Tasjian, Turkey author of the genocide, the centenary record of Turkey 1822—1922, Boston, 1965. H. K. Kazarian, Minutes of secret meeting organizing the Turkish genocide of the Armenians, Boston, 1965; «The Turkish Armenocide», Pennsylvania, 1965. Hagop-Krikor, Les Arméniens connus et Inconnus, Paris, 1974; Sh. Torigian, The Armenian question and International Law, Beirut, 1973; Jean Marie Garzou, Une génocide exemplaire Arménie, Paris, 1975,

շարդերին ընդհանուր առմամբ դո՛ւ է գնացել 2,6 մլն. մարդ: Թաշլյանն այնուհետև վերլուծել է հանրապետական Թուրքիայի քաղաքականությունն ազգային հարցում:

Գ. Ահարոնյանի «Յուշամատեան մեծ եղեռնի 1915—1965» գրքում մանրամասն նկարագրված են XIX դ. վերջերի և 1915 թ. հայկական կոտորածները, բացահայտված է Գերմանիայի մեղսակցությունը հայկական կոտորածների կազմակերպմանը, ցույց է տրված ժողովուրդների եղբայրությունը եղեռնի ընթացքում, հայերի կոտորածը քեմալականների կողմից և այլն: Աշխատության մեջ բերված են փաստաթղթեր, ինչպես նաև օգտագործված են արևմտաեվրոպական հեղինակների գործերը եղեռնի մասին:

Հ. Ղազարյանի գրքում ևս շարադրված է Թուրքական իշխանությունների հայաջինջ քաղաքականությունը՝ սկսած երիտթուրքերի իշխանության ժամանակաշրջանից: Թարգմանություններ են բերված Մեվլան Զադեի վերոհիշյալ և «Նայիմ բեյի հիշողությունները» գրքերից, որտեղ բացահայտված է երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության նախապատրաստումը և իրականացումը: Գրքում նաև տրված է արևմբյուտահայության կոտորածը Տրապիզոնի, Սեբաստիայի, Շապին-Կարահիսարի, Խարբեհդի, Անկարայի, Բուրսայի, Ադանայի, Դիարբեքրի և մյուս վիլայեթներում: Նա նույնպես շեշտել է կայսերական Գերմանիայի և Ստամբուլում գերմանական դեսպանության մեղսակցությունը հայերի ջարդի կազմակերպմանը: Լուրջ ուշադրության են արժանացել նաև հայ հոգևորականների և պետական գործիչների նկատմամբ գործադրված վայրագությունները, եկեղեցիների ավերումը, հայերի սեփականության յուրացումը Թուրքական իշխանությունների կողմից⁹⁹:

Հ. Գ. Ղազարյանի աշխատության մեջ բերված փաստաթղթերը հետազայում շարադրվել են «Յեղասպան թուրքը» գրքում:

«Հայերի ցեղասպանությունը Թուրքերի կողմից» ժողովածուն կազմված է Զ. Գուտմանի «Յեղասպանության սկիզբը» և Ա. Անտոնյանի Թարգմանած «Նայիմ բեյի հիշողությունները» գրքերի փաստաթղթերից:

Ազգային փոքրամասնությունների (հույների, քրդերի, հայերի) նկատմամբ գործադրված հալածանքները չեն դադարել նաև հանրապետական Թուրքիայում: Այդ քաղաքականությունն իր գագաթնակետին

⁹⁹ Այդ մասին մանրամասն տե՛ս Առն Վադան, Հայկական տասնհինգը և հայերու լքեալ գույքերը, Պեյրուք, 1970:

հասավ երկրորդ համաշխարհային պատերազմի օրերին, երբ 1942 թ. նոյեմբերի 11-ին Թուրքական մեջլիսն «Ունևորության մասին» օրենք ընդունեց:

Սփյուռքահայ պատմաբանները թեև չեն տվել 1942 թ. ունևորության հարկի ամբողջական ուսումնասիրությունը, բայց որոշ չափով անդրադարձել են այդ հարցին՝ Զ. Թաշլյանը, Մ. Ճիզմեշյանը, Մ. Քելեշյանը, Հ. Ղազարյանը, Վ. Կալենդերյանը, Թ. Մինասյանը, Լ. Ավագյանը, Ժ. Մեսերյանը և Զ. Վրթանեսը:

Վերջինս «Հայկական հարցի պատմական ընթացքը» վերահիշյալ գրքույկում գտնում է, որ ունևորության հարկը վերացվեց դաշնակից պետությունների՝ Անգլիայի և ԱՄՆ-ի միջամտությունից հետո:

Վ. Կալենդերյանը «Թուրքական նացիոնալիզմի բնույթի վերլուծությունը» գրքում⁷⁰ շոշափում է ազգային փոքրամասնությունների հարցը երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, վերլուծում է ունևորության հարկի մասին օրենքը և նրա գործադրման մեթոդները: Հեղինակը մեջբերում է հետաքրքիր փաստեր այն մասին, թե ինչպիսի մեծ տարբերություն գոյություն ուներ Թուրք և հույն, հրեա և հայ առևտրականների հարկադրման միջև: Այսպես, օրինակ, եթե Թուրք առևտրականները և վաճառականները հարկադրվում էին իրենց ունեցվածքի մոտ 5%-ի շափով, ապա հույները՝ 156, հրեաները՝ 179, իսկ հայերը՝ 232%-ի շափով (էջ 13): Բացի այդ, եթե Թուրքական իշխանությունները, որոնք այդ հարկով հարկադրում էին նույնիսկ հիվանդանոցները, Ստամբուլի ամերիկյան հիվանդանոցը հարկադրել էին ընդամենը 2500 Թուրքական լիրայով, ապա հայկական աղքատիկ հիվանդանոցը՝ 39000 Թուրքական լիրայով (էջ 14):

Օսմանյան Թուրքիայի կառավարող շրջանների՝ ազգային փոքրամասնությունների ճնշման քաղաքականությունը, բնականաբար, առաջ էր բերում ցասում և դժգոհություն: Ազգային շահագործման ճիրաններից ազատվելու միակ ելքը պայքարն էր՝ ազգային ազատության և անկախության համար:

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական գործիչները և պատմաբաններն առանձնահատուկ տեղ են հատկացրել հայ ժողովրդի ազատագրական պայքարի վերլուծությանը և հայկական քաղաքական կուսակցությունների մասնակցությանը այդ պայքարին:

⁷⁰ V. H. Kalendarian, An inquiry into the Pattern of Turkish nationalism. N. Y., 1945.

Այդ մասին հուշագրութիւններ են թողել Ա. Երկանյանը, Մ. Ավետ-
յանը, Մ. Տեր-Հակոբյանը, Ա. Թյուրապյանը, Ա. Շիրակյանը և ուրիշ-
ներ⁷¹:

Վերոհիշյալ հարցի շուրջը լույս տեսած գրքերից են նաև Ա. Զար-
տարյանի «Հայկական ազատագրական շարժման պատմութիւնն ուրվա-
գծերը», Հ. Թյուրաբյանի «Հայաստանը և հայ ժողովուրդը», Լ. Նալ-
բանդյանի «Հայկական հեղափոխական շարժումը»⁷² և ուրիշ գրքեր⁷³:

Զեյթունի ապստամբութիւնների մանրամասն շարադրանքը տրված
է Հ. Թյուրաբյանի և Ա. Զարտարյանի գրքերում:

Արամ Ասպետի «Դրվագներ Հաճնոյ հերոսամարտին և հերոսին
ոգիսականը» գրքով⁷⁴ լուսաբանված է Զեյթունի 1895 թ. ապստամբու-
թիւնը:

Ա. Տարոնեցու գրքով⁷⁵ շարադրված է Սասունի հայութիւնն ազա-
տագրական պայքարը:

Սասունի 1895 թ. ապստամբութիւնն պատմութիւնը տրված է նաև
Ա. Օ. Սարգսյանի «Եվրոպական դիվանագիտութիւնը և հայերը 1890—
1897 թթ.»⁷⁶ գրքում:

Ս. Փաշալյանի, Ա. Մակարյանի, Գ. Մխալյանի, Հ. Պողոսյանի, Գ.
Պարսամյանի, Գ. Երեանյանի, Ղ. Զարրգի, Մ. Արսլանյանի, Գ. Սյուր-
մենյանի, Հ. Հովակիմյանի գրքերում շարադրված են Ռոդոսթոյի, Թրա-
կիայի և Մակեդոնիայի, Պարտիզակի, Ալեքսաի, Զարսանճագի, Երզ-
րումի, Բաբերդի (Բալբուրդ), Երզնկայի և Պոնտոսի հայութիւնն ազա-
տագրական պայքարի դրվագները:

⁷¹ Ա. Երկանյան, Գիրք մատուցման և հատուցման, Բոսթոն, 1945: Մ. Ավետյան,
Հայ ազատագրական ազգային հիսնամյա հուշամատոյան, Փարիզ, 1954: Ա. Տեր-Հակոբ-
յան, Թրքահայաստանի կորուստը և արտասահմանի հայոց ապագան, Ա. Թյուրապյան,
Հայ ժողովրդի դատաստանին առջև 1914—1924, Մարտիկ, 1925: Ա. Շիրակյան, Առաջին
էր նահատակներուն, Բեյրութ, 1965:

⁷² L. Nalbandian, The Armenian Revolutionary Movement (The Develop-
ment of Armenian Political Parties through the Nineteenth Century), Los Ange-
les, 1963.

⁷³ Գ. Գալստյան, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու-Յորք, 1934:
Տ. Կեռզյան, Պատմութիւն Զեյթունի, հատ. 1—3, Փարիզ, 1945—1949: Մ. Գուշադը-
յան, Պ. Մատուլյան, Հուշամատեն Մուսա լեռան, Բեյրութ, 1971: Ի. Տերմերյան, Հա-
յերի պայքարը գոյութիւն համար, հատ. 1, Քեհերան, 1953:

⁷⁴ Ա. Ասպետ, Դրվագներ Հաճնոյ հերոսամարտին և հերոսին ոգիսականը:

⁷⁵ Աղան Տարոնեցի, Պատասխանատուները Տարոնի եղեռնի, Ս. Ֆրանցիսկո, 1966:

⁷⁶ A. O. Sarkisian, Concert diplomacy and the Armenians 1890—1897, Lon-
don, 1961.

Արևմտահայերի պայքարը հանուն իրենց ազգային ազատության և անկախության հատվածաբար վերլուծված է նաև Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի հայաշատ նահանգներին ու գավառներին նվիրված գրքերում:

Նրանք, բացի ազգային-ազատագրական պայքարից, մղել են նաև ինքնապաշտպանական հերոսամարտեր, հատկապես առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, երբ Թուրքական իշխանությունները կազմակերպեցին հայ ժողովրդի զանգվածային ցեղասպանությունը: Հայերի ինքնապաշտպանական կռիվները իրենց վրա են հրավիրել Թուրքական բանակի որոշակի ուղադրությունը ու աջակցել նրա պարտությունը պատերազմում: Այս փաստը ընդունել է նաև Խալիլ փաշան՝ էնվերի հորեղբայրը:

Թուրքական իշխանությունների վարագոյությունների դեմ հայ ժողովրդի ինքնապաշտպանական մարտերը լուսարանվել են ինչպես ընդհանուր առմամբ, այնպես էլ ըստ առանձին հերոսամարտերի:

Ընդհանուր բնույթի աշխատություններից են Ժ. Նազլլյանի, Գ. Ահարոնյանի «Հուշամատյան մեծ եղեռնի 1915—1965», Մ. Տեր-Հակոբյանի «Թրքահայաստանի կորուստը և արտասահմանի հայոց ապագան», Ս. Զելթլյանի «Հայ կնոջ դերը հեղափոխական շարժման մեջ»⁷⁷, Ս. Ատամյանի «Հայկական հասարակությունը», Ռ. Գ. Հովհաննիսյանի և Հ. Գ. Ղազարյանի գրքերը:

Մի շարք հուշագրություններ նվիրված են Վանի 1915 թ. ինքնապաշտպանությանը: Դրանցից են՝ Հ. Երեմյանի «Հուշամատյան Վան-Վասպուրականի», Օն. Մխիթարյանի⁷⁸ «Վասպուրական» Վան-Վասպուրականի ապրիլյան հերոսամարտի 15-ամյակի առթիվ», «Վասպուրականը և իր տարագիր գավակները», Լ. Գազանճյանի, Ե. Մկրտչյանի, Ա. Կեոքլիզյանի, Հ. Կոստյանի, Ե. Տեր-Մկրտչյանի «Գանձեր Վասպուրականի» գրքերը⁷⁹:

Ուշագրավ են Շապին-Կարահիսարի ինքնապաշտպանական մարտերը նկարագրող աշխատությունները: Դրանցից են Մ. Տեովլեթյանի

⁷⁷ Ս. Այրլյան, Հայ կնոջ դերը հեղափոխական շարժման մեջ, Անթիլիաս, 1968:

⁷⁸ ՕՆ. Մխիթարյան, Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930:

⁷⁹ «Վասպուրական», Վան-Վասպուրականի ապրիլյան հերոսամարտի 15-ամյակի առթիվ, Վենետիկ, 1930: Լ. Գազանճյան, Վերածնունդ Վան-Վասպուրականի, 1850—1950, Է. Գ. Մկրտչյան, Գրական-պատմական հանրագիտարան Վասպուրական աշխարհի, 1958: Ա. Ա. Կեոքլիզյան, Վասպուրականի հերոսամարտը, Բելյուսթ, 1965: Հ. Կոստյան, Վան-Վասպուրականի ժողովրդային հերոսապատմը, Թեհրան, 1966:

«Հուշեր Շապին-Կարահիսարեն»⁸⁰ և Արամ Հայկազի «Շապին-Կարահիսարը և իր հերոսամարտը» գրքերը:

Բազմաթիվ հուշագրությունների է արժանացել Տարոնի ինքնապաշտպանությունը: Այս հարցը մանրամասնորեն շարադրված է Գ. Կարապետյանի «Տարոնի աշխարհ», Ս. Հ. Բոքյանի «Հարազատ պատմություն Տարոնու», Ե. Շարաֆյանի «Երվանդ Շարաֆյան կապտմե Տարոնի եղեռնը», Ա. Տարոնեցու «Տարոնապատում, պատասխանատուները Տարոնի եղեռնի» գրքերում և Ռուբենի հիշողություններում:

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական գործիչները և պատմաբանները վերլուծել են նաև Հաճընի, Այնթապի, Մուսա լեռան, Ուրֆայի, Մալաթիայի, Ագ-տաղի (Յոզգատի նահանգ): Բայրուրդի, Տրապիզոնի, Երզնկայի, Խարբերդի հայության ինքնապաշտպանական կռիվները⁸¹:

Հատուկ ուշադրության առարկա են հանդիսացել Կիլիկիայի 1918—1922 թթ. ինքնապաշտպանական գոյամարտերը: Այդ հարցին են նվիրված Ա. Թյուրապյանի, Պ. Տեփոյանի, Գ. Գալստյանի, Արամ Ասպետի, Ս. Սաղրյանի, Մ. Քելեշյանի և Ե. Սիրվարդի գրքերը: Այսպես, օրինակ, բացի բուն նյութի շարադրումից, Ա. Աթանասյանը տվել է նաև անգլոֆոնանսիական մրցակցությունը պատերազմի ընթացքում, Ֆրանսիայի ու Մ. Քեմալի գործակցությունը Կիլիկիայի հայության դեմ (մասնավորապես զինքի վաճառք Մ. Քեմալին):

Դրքում տրված է նաև Կիլիկիայի ինքնապաշտպանության ղեկավարների գործունեության քննադատությունը:

Հայ ժողովուրդը Թուրքական զորքերի դեմ ինքնապաշտպանական կռիվներ է մղել 1918 և 1920 թթ. նրանց Հայաստան կատարած արշավանքների ժամանակ:

⁸⁰ Ս. Տնվլիբյան, Հուշեր Շապին-Կարահիսարեն, Փարիզ, 1954:

⁸¹ Հ. Պողոսյան, Հաճընի ընդհանուր պատմությունը, Ս. Քերզյան, Հաճընի ութամյա դուրացանամարտը: Արամ Ասպետ, Դրվագներ Հաճնու հերոսամարտին և հերոսին ողբասկանը: Հ. Հ. Յափաջյան, Հիշատակարան Ռումեկիեի: Ա. Կեսառ, Այնթապի գոյամարտը, Բոսթոն, 1945: Գ. Սարաֆյան, Պատմություն Այնթապի հայոց: Գ. Պարսամյան, Պատմություն Այնթապի: Հ. Յ. Դաշնակցության, 1898—1922: Վ. Ն. Կյուլեսերյան, Հուշամատեն Ա. Մ. Գալամբերյանի: Հ. Գ. Պուրսալյան, Մուսա լեռան հերոսամարտը: Հ. Հիսայան, Դյուցազնական հայուրդին, Մկրտիչ Եոթնեղբայրյան, Աթենք, 1937: Ա. Սահակյան, Դյուցազնական Ուրֆան և իր հայուրդիները, Բեյրութ, 1955: Գ. Մելիտենցի, Նախնիքներ (1915—1918), Մ. Քաշլյան, Սև Հուշեր մղծավանդային յոթը տարիներու (1915—1922), Ն. Գաբիկյան, Կ. Դալուսյան, Ագ-տաղի քառամեա՛ գոյամարտը: Ն. Փիլիպոսյան, Հուշարձան եղզատցիներու, և այլն:

Այդ կոնվենսիան են նվիրված Ա. Գյուլխանդանյանի «Հայ-թաթարական ընդհարումները» գրքի 2-րդ հատորը, Մ. Ավետյանի «Հայ ազատագրական ազգային հիմնամյա հուշամատյան և զոր. Անդրանիկ», Օ. Գ. Նազի (Նազմաճյան) «Ըձգնազանգ ահազանգ» և Ավ. Յափուջյանի⁸²⁻⁸³, Ժան Մեսերյանի «Հայկական սփյուռքի քարտեզը» գրքերը: Ավ. Յափուջյանը լուսաբանել է Սարդարապատի ճակատամարտի պատմությունը, հիմնականում օգտվելով Հ. Թուրքյանի «Սարդարապատի հերոսամարտը» գրքի նյութերից (Երևան, 1966):

1918—1920 թթ. Թուրքական զորքերի՝ Հայաստանի վրա կատարած արշավանքի պատմությունը մասնակիորեն լուսաբանված է նաև Մ. Նսմերյանի, Իրազեկի և Ա. Թերզյանի գրքերում⁸⁴:

Սփյուռքահայ պատմաբաններն ու հասարակական-քաղաքական գործիչները զբաղվել են նաև Հայաստանի հանրապետության ու Թուրքիայի փոխհարաբերությունների հարցով⁸⁵: Վերջինս վերլուծվել է նաև Ռ. Գ. Հովհաննիսյանի աշխատությունում, ուր մանրամասնորեն խոսվում է Անդրկովկասի քաղաքական իրավիճակի մասին փետրվարյան հեղափոխությունից հետո: Հեղինակը բացահայտում է Գերմանիայի ու Թուրքիայի հակասությունները, լուսաբանում Հայաստանի հանրապետության և Թուրքիայի փոխհարաբերությունները⁸⁶:

Սփյուռքահայ Թուրքագիտության մեջ կարևոր տեղ է գրավում նաև «Հայկական հարցի» և Արևմտյան Հայաստանի ու Թուրքիայի հայաշատ նահանգների բարեփոխումների ուսումնասիրությունը⁸⁷:

⁸²⁻⁸³ Ավ. Յափուջյան, Հայ ժողովրդի մեծ գոյամարտը և Հայաստանի հանրապետության ստրկացնողները, Կապիթ, 1968:

⁸⁴ Մ. Էսմերյան, Աքսորի և պատերազմի կրակներին մեջեն, Բոսֆոն, 1952: Իրազեկ, Մոտիկ անցյալին (1917—1922), Պեյրուֆ, 1956: Ա. Թերզյան, Հայկական արմատախախտ, Փարիզ, 1969:

⁸⁵ Զառևանդ, Կրնանք հաշտվիլ Թուրքերի հետ, 1926:

⁸⁶ R. G. Hovann's an, Armenia on the Road to Independence 1918, Los Angeles, 1967:

⁸⁷ Այդ մասին տե՛ս Ա. Ղազարյան, Ազատության ուղին և հայի քաղաքական վարքագիծը, Քեհրան, 1924: Մ. Չերազ, Ազգային խեղդիներ, Փարիզ, 1927: Ա. Թյուրքյան, Նվրոպական դիվանագիտության մշտական զոհը, Ն. Սերոբյան, Հայկական հարց, Բեյրութ, 1937, Գ. Լազյան, Հալաստան և հայ դատը, վավերագրեր, Ն. Տեր-Հակոբյան, Մարտահրավեր քաղաքակրթությանը (A Challenge to Civilization, Los Angeles, 1964): Ս. Ատամյան, Հայկական հասարակություն, Հ. Թորոսյան, Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունը, Ա. Օ. Սարգսյան, Հայկական հարցի պատմությունը մինչև 1885 թ. (History of the Armenian question to 1885, Urbana, 1938): և «Նվրոպական դիվա-

Այսպիսով, սփյուռքահայ հեղինակների աշխատությունները, ընալած շարադրված են բուրժուական օրյեկտիվիզմի դիրքերից, բավականաչափ հարուստ և հետաքրքիր նյութ են տալիս ինչպես օսմանյան, այնպես էլ հանրապետական Թուրքիայի շատ հարցերի լուսաբանման համար:

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ ТУРКОЛОГИИ

Резюме

АРМЯНСКИЕ ИСТОРИОГРАФЫ О ТУРКАХ-СЕЛЬДЖУКАХ И
ОСМАНСКОЙ ИМПЕРИИ (XI—XVIII ВВ.)

Ценные сведения по истории Турции содержатся в работах армянских средневековых авторов. Армянские историографы оставили многочисленные труды, содержащие ценнейший фактический материал по истории народов сопредельных стран, в том числе и Османской империи.

Для истории Сельджукского султаната весьма важными первоисточниками являются труды Аристакеса Ластивертци, Матеоса Урхаеци, Самуэля Анеци, Киракоса Гандзакеци, Вардана Барцрабертци, Смбата Гундстабля, Хетума Патмича и др.

В трудах армянских историографов последующего периода также содержится ценный материал по средневековой истории Османской империи. В хронологическом порядке излагается содержание трудов авторов XVII—XVIII вв., в том числе «История Хотинской войны» Иоаннеса Каменеци, «Путевые записи» Симеона Леаци, «Краткая история османских султанов», а также «Исто-

նագիտությունը ու հայերը 1890—1897 թթ.», Խ. Գաբրիլյան, Հայկական հարցը արևելյան հարցի մեջ 1860—1880, Ա. Բեղգիբաշյան, Նուբար, Փարիզ, 1939, Նմմենս, Թուրքերը և մենք, Վ. Լ. Խաչիցիսյան, Օրագրություն ուղևորության Նվրոպա Սահակ Բ կաթողիկոսին Կիլիկիոյ, Հալեպ, 1928: «Հայ ազգային դպրոց, Բրթական Հայաստանի ազատագրման հարցին վերաբերող փաստաթղթեր», Փարիզ, 1945: «Հայկական հարցի մեմոռանդումը, ներկայացված արտաքին գործերի մինիստրների խորհրդին», 1947 թ. Մարտին, «Համաշխարհային հայկական կոնգրես» (Նյու-Յորք, 1947): Զ. Ա. Վրթանես, Հայկական հարցը այսօր (The Armenian question today, N. Y., 1945). Հայկական հարցի պատմական ընթացքը (The Armenian question in its historical perspective, N. Y., 1946). Հ. Ղազարյան, Ուլիսեյան: Հայաստան, Բոսթոն, 1945: Հ. Զախարյան, Կարս, Երուսաղեմ, 1946: Լ. Կյուրեղյան, Ղարս և Արդահան, պատմական հավաստիք և հայրենավանդ իրավունք, Վենետիկ, 1949: Անդր. Անդրեասյան, Հայկական դատին Նոր հանգրվանը, Բեյրութ, 1967: Ս. Մխիթարյան, Հայկական հարցը արևելամային պրպտումների վերլուծումներով, Փարիզ, 1963 և ուրիշ գրքեր:

рия Стамбула» Еремия Челеби Кёмюрджяна и других, которые имеют важное значение для изучения средневековой истории Турции.

АРМЯНСКАЯ ТУРКОЛОГИЯ В XIX—НАЧАЛЕ XX ВВ.

В течение XIX в. армянские авторы создали немало исследований об Османской империи. Важнейшими из них являются фундаментальные многотомные работы крупных историков из конгрегации мхитаристов в Венеции Гукаса Инчичяна, Степаноса Агонца, Габриела Айвазовского, Амбросиоса Галфаяна и др.

Труды этих авторов написаны на основе рукописных и изданных работ турецких летописцев и историков, армянских источников и изданных на европейских языках книг, давно ставших библиографической редкостью. Исследования армянских авторов в первой половине XIX в. содержат богатый фактический материал, являются тем самым ценными источниками для исследования истории Турции.

Армянские авторы во второй половине XIX—начале XX вв. издали много работ, посвященных истории Османской империи, восточному и армянскому вопросам, национально-освободительной борьбе западных армян против турецкого ига, истории ислама, аграрных отношений, налоговой системы и другим проблемам. К числу этих историков относятся Мкртыч Дадян, Аветис Перперян, Александр Ерицян, Агаси (Карапет Тер-Саргсян), Зейтунци (Мнацакан Семерджян), Степанос Паласаян, Микаел Асчян, Е. Топчян, К. Тумаян, Сапах Гулян и др.

Крупные армянские писатели (Раффи, Вртанес Папазян, Рафаэл Патканян и др.) и общественно-политические деятели (Григор Арцруни и др.) в своих произведениях, касаясь вопросов Западной Армении, армянского вопроса, одновременно освещали многие стороны внутренней и внешней политики Османской империи.

АРМЯНСКАЯ ТУРКОЛОГИЯ В 1908—1920 ГГ.

В центре внимания армянских авторов были, в частности, проблемы истории Османской империи в период правления младотурок (1909—1918 гг.). В книгах армянских туркологов этого периода исследована проблема внутренней жизни Османской империи, положение угнетенных народов страны, а также отдельные стороны внешней политики Турции.

ЗАРУБЕЖНЫЕ АРМЯНСКИЕ АВТОРЫ О ТУРЦИИ
(1920—1970 гг.)

Работы зарубежных армянских авторов, изданные в 1920—1970 гг., представляют собой главным образом мемуарную литературу. Определенная часть этой литературы является воспоминаниями зарубежных армянских политических и общественных деятелей.

В этих работах исследованы различные вопросы истории, экономики и культуры османской и республиканской Турции.

За последние годы за рубежом опубликованы работы нового поколения ученых-историков. Правда, их работы далеки от марксистско-ленинского изучения исторических явлений, однако дают богатый фактический материал по исследуемым проблемам.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Հ. Մ. Մարտիրոսյան, Օտարերկրյա կապիտալի Թուրքիա ներթափանցման եղանակներն ու ձևերը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո	7
Հ. Հ. Գալստյան, Թուրքիայի արևելյան վիլայեթների դեմոգրաֆիայի և տնտեսության մի քանի հարցեր (առաջին համաշխարհային պատերազմից հետո)	35
Ն. Ղ. Սարգսյան, Թուրքական ազրեսիան Հայաստանի դեմ 1920 թ. աշնանը և Սովետական Ռուսաստանի դիրքը	71
Ջ. Ս. Կիրակոսյան, Հայկական հարցի շուրջը ծավալված դիվանագիտական պայքարը 1878 թ.	90
Ռ. Ս. Դանիելյան, XIX դարի երկրորդ կեսի հայկական դպրոցը և օսմանյան կառավարության քաղաքականությունը	111
Հ. Գ. Ինճիկյան, Օսմանյան կայսրության տնտեսական հետամնացության հարցի շուրջը	135
Ա. Ա. Հաջյան, Մ. Կ. Զուլալյան, Ստամբուլի արհեստագործական արտադրությունը XVII դարի առաջին կեսին	163

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ժ. Մ. Ավետիսյան, Փյաթիբ Զեյեբիի «Ֆեզլեբե»-ն Երեմիա Փյոմուրճյանի «Պատմութիւն համառօտ ՂՃ (460) տարույ շամանցոց թաղաւորաց»-ի աղբյուր	201
---	-----

ՀԱՅ ԹՈՒՐԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Հ. Փափազյան, Հայ պատմիչները սելջուկ-թուրքերի և Օսմանյան կայսրության մասին (XI—XVIII դդ.)	217
Ն. Ղ. Սարգսյան, Հայ թուրքագիտությունը XIX դարում և XX դարասկզբին	241
Ռ. Գ. Սահակյան, Հայ թուրքագիտությունը 1908—1920 թթ.	254
Ռ. Պ. Կոնդակչյան, Սփյուռքահայ հեղինակները Թուրքիայի մասին (1920—1970 թթ.)	305

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

А. М. Мартиросян. Способы и формы проникновения иностранного капитала в Турцию после второй мировой войны	7
А. А. Галстян. Некоторые вопросы демографии и экономики восточных вилайетов Турции (после первой мировой войны)	35.
Е. К. Саркисян. Турецкая агрессия в Армении осенью 1920 г. и позиция Советской России.	71
Дж. С. Киракосян. Дипломатическая борьба вокруг армянского вопроса в 1878 г.	90.
Р. С. Даниелян. Армянская школа во второй половине XIX века и политика Османского правительства	111
О. Г. Инджикян. К вопросу об экономическом отставании Османской империи	136.
А. А. Аджян, М. К. Зулалян. Ремесленное производство в Стамбуле в первой половине XVII века	163.

СООБЩЕНИЯ

Ж. М. Аветисян. «Фезлеке» Кятиба Челеби—один из источников «Краткой четырехсотлетней истории османских царей» Еремия Кемурджяна	201
---	-----

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ ТУРКОЛОГИИ

А. А. Папазян. Армянские историографы о турках-сельджуках и Османской империи (XI—XVIII вв.)	217
Е. К. Саркисян. Армянская туркология в XIX—начале XX вв.	241
Р. Г. Саакян. Армянская туркология в 1908—1920 гг.	284
Р. П. Кондакчян. Зарубежные армянские авторы о Турции (1920—1970 гг.).	305.



ՄԵՐԶԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ
ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

X
ԹՈՒՐՔԻԱ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիրներ
Ռ. Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, Հ. Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Նկարիչ

ՅՈՒ. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գեղարվեստական խմբագիր

Հ. Ն. ԳՈՐՄԱԿԱՆՅԱՆ

Տեխնիկական խմբագիր

Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սրբագրիչներ

Մ. Վ. ՀԱԿՈԲՅԱՆ, Մ. Բ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՎՅ 04576

Պատվեր 59

Հրատ. 5014

Տպարանակ 3000

Հանձնված է շարվածքի 18.01 1979 թ.: Ստորագրված է տպագրության 20.8 1979 թ.:
Տպագր. 20,75 մամուլ, հրատ. 17,28 մամուլ, պայման. 19,30 մամուլ Բուդժ Ն 1,
60×84¹/₁₆: Տառատեսակը՝ գրքի սովորական տպագրությունը՝ հարթ: Գինը 2 ռ. 60 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 19, Բարեկամության 24 գ.
Издательство АН Армянской ССР. 375019. Ереван, Барекамутян, 24-г.
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության էջմիածնի տպարան
Типография Издательства АН Армянской ССР, г. Эчмиадзин

